891.99
9 - 89

783
01 JAN 200
891.9
8969-57

ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ

# ԳՐԻԳՈՐԻ

## ՆԱՐԵԿԱՑ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

## ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

---

**ՏՊԱԳՐԵԱԼ**

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍԻ
ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Տ. ԵՍԱՅԵԱՅ
ՆՈՐԸՆՏԻՐ ԾՆՈՐՀԱՓԱՅԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ Տ. ՊՕՂՈՍԻ
ԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

---

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ [illegible]

1864—ՌՅԺԳ

18.04.2013

...88 [illegible] 1 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible] 1890 [illegible] 10 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ի 1847 ին Ապր 18 ին։

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

ի 1880 ամի 22 [illegible]

[illegible]

ի 1882 [illegible] ամի 17 [illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]



Կարդեա ինձ սահման նետոց բարու-
թեան առ. Ելս կենացդ ԲԱՆ. ՃԲ:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍԽ—Арм. ССР



# ՚Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ:

## ԲԱՆ. Ա

Զայն հառաչանաց հեծութեան սրտի՝ ողբոց աղաղակի՝ քեզ վերընծայեմ անօգն գաղտնեաց. և մատուցեալ եղեալ ՚ի հուր թախծութեան անձին տաժանման՝ զգացող ըղձից ձնձներոյ սասանեալ մտացս՝ բարբառ կամաց տարեալ առ քեզ: Եւ հառաչեցից հայեցից զթած քան ՚ի սպասարանն բոլորապտուղ մատուցեալ ծխոյն բարդուն: Ընկալ զախտաւանանեաց բանիցս յօդուած քեզ ՚ի հաճոյ, և մի ՚ի բարկութի. եղէ ՚ի խորոց սրտի զգայութեանց խորհրդակից սենեկիս՝ փաղփաղուկ ժամանել առ քեզ՝ կամաւորական նուէր բանական զոհիս, ողջակիզեալ զօրութեամբ ճարպոյ՝ որ յիմն է պարարտութի: Եւ ՚ի գնալս իմ՝ ընդ քեզ զառ՝ խառնեալ աղերսիւ հզօր, մի խրես զհամբերութ ձեռաց

ամբարշտական յակորս , ըստ բաղձելոյն նաւա-
կաց , և զանխռովութին բարելաւի , տաղտկալի
քեզ երևեցի . զոր առակ եօթանասներորդի
երկրորդի սաղմոսին ասէ . այլ երբ զբուրեալ
խունկն հաճոյական 'ի խորանին սեղանոյ , զոր
զուխտն կանգնեալ նորոգեաց տապանակին հան-
դանեան 'ի գերութենէն դարձելոյ , որ 'ի վերա-
ոյն գիտ կորուսեալս հողւոյ առակի , ընդու-
նելի կամաց քոյ լիցի :

Ա. Բայց քանզի ձայնդ ահաւոր դատաստա-
նիդ հատուցման՝ ուժգին հնչեցեալ 'ի ձորն
վրէժխնդրութե՝ կրկին ինձ երկնէ մարտից յար-
ուցմունս . այժմէն գուշակեալ շարժմունս յուզ-
մանց ներհակականաց , որ յիմում անձին ցու-
ցանի , խռովութս ամբոխից . հարեալք ընդ միմ-
եանս զէն առ առեալ՝ խորհրդոյն հոյլք , չար-
եացն՝ ընդ բարեաւն , և դիմեալ զեւ 'ի մահ բա
հին զխպուածոյն՝ որ նախ քան զշնորհին ժա-
մանել առ իս . զոր ընտրեալն առաքելականացն
դասուց պօղոս՝ առօրինակեալ զմովսէս , զքր-
խառոսի փրկութի յաղթօղ ցուցանէ : Վասն զի
թէ մերձ է օր սեան , որպէս զիր ասէ , 'ի-
հովիան անձուկ աստպարհին յոխամիութու և
հեղեղատին կեցընի , փոքր հանդիպարանացն
իրաւանց ժամանդրութեանց , որ կենցաղակա-
նաւ այսր յուխանինս՝ զհանդերձելոյն ինձ կեր-
պարանեն , աղա եւ յուէտ մերձեցաւ 'ի վերա

իմ արքայութիւն աստուծոյ՝ մարմին եղեալ , մեծապէս դառնալ զնա առիթ փառաց՝ բաղմանց տոկոսեաց զանազան մասանց յանդիմանողաց ճշմարտապատմից , քան զեձոյն նորին վերակացութեան ամէ ուրեմն երբեմն 'ի հարուածս եզովմայեցւոց և փղշտացւոց , և այլոց բարբարոս ազգաց : Քանզի այն ընտրութիւն՝ ամօք չափեցաւ , իսկ պատուհաս խմանս պարտուց՝ առանց աւարտման ունի զպահման : Եհ դուր և որոգայթ անձողոպրելի , ըստ մարգարէին և առաքելին , տագնապաւ մեծաւ առ դուրս իմէ հասեալ՝ զամօթն մշտնջենաւոր ասէն գծագրել : Օ՜, որ միայն քո է հրաշագործել պատուագեղդ՝ 'ի հնարս կենաց՝ ամենափրկան տարակուսանաց հոգւոց փառնդեից , քաւիչ ամենայնի՝ դովեալ 'ի փառս անճառս անհասանելի բարձրութե , յաւիտեանս յաւիտենից :

---

Մերոյն յաւելուած էջին հեթանոսեան՝ նոյն
հոլովէ , առ նոյն արձէրս ձեռնմանց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ձայն :

## ԳԼՍ · Բ

Ր · ւ արդ՝ քանզի առ բարձեալն աստուած յօդուածական շրթամբք կարդաս , որ գործով միայն դրաւի , և ոչ առեղծարանութեամբ կա-

քան թէ տարերաց ապականացեալ ։ Դու ըն-
տեղծիչ՝ և ես կաւ, բայց տարակուսելոյս ՚ի մու-
տըս մաղթանաց այսր հեծումն՝ կամս քաղց-
րումն՝ զօրանալ առատէն. զի մի ՚ի բանալ վեր-
նայինն երկնի՝ անըմպելի գտեալ կրթումն վայ-
ելման լուսոյ, իբր զնիւթ մոմոյ՝ սպառեցայց
ջնջեալ ՚ի միջոյ։ Այլ զի զրկելոյս, ըստ մաղ-
թանաց գոչման ասողին, և ոյժ թալկացելոյս, և
կեանք մաշելոյս՝ մնացս խղճիւ, այլ ոչ սա-
ժանման կրից՝ աշխատութիւ զքեզ խնդրելոյ.
առ զաւանդ մաղթանացս, և տուր զողորմութի
քո շնորհացդ. ընկալ զփոքրս՝ ՚ի տկարէս, և
շնորհեա զմեծդ՝ առ ՚ի հզօրէդ. զօրացո զբանս
զըղջման, առաքեալ ՚ի մեզ հոգի ՚ի բարձանց՝
ածաշունչ պատգամօքս ՚ի սմա երգելոյս։ Պար-
գևեա բարերար՝ զասողն եասյեալ, լուսաւոր-
եալ առ ճշմարտութին, մատուցանելով մահու-
արժանոյս՝ ընդ պղնձոյս դոյի անարգս ձայնի՝
զոսկի քո շնորհի. ընդ անպարգուն երկաթոյս՝
սեւութեան գունոյս՝ պղինձ պճնեալ, ցոյցք ա-
ռաքինուն, հրաշեկ լերանանու։ Ընդէ՞ր կարծ-
բացուցանես զմիտ եղկելոյս՝ չերկնչել ՚ի քէն
անձամբ և ահաւոր։ Մի եղէց անպտուղ ՚ի փո-
քրս վաստակոյս՝ իբր տապաջան սերմանող ան-
բերրի երկրի։ Մի լիցի ինձ երկնել, և ոչ ծըն-
անել. ողբալ, և ոչ արտասուել. խորհել, և
ոչ հառաչել. ամպել, և ոչ անձրևել. ընթա-

նալ, և ոչ հատանել. ինձ ձայնել, և քեզ ոչ
լսել. պաղատել, և անտես մնալ կոչկոչել, և
ոչ ողորմել. աղաչել, և ոչ ինչ օգտել. գոչել,
և ոչ ձենձերել. գթել տեսանել, և դատապարտ
ելանել: Լաւ ինձ նախ քան զխարդաւ իմ առ
քեզ միայնդ հզօր. մի զանխձար տանջանացն
տայժմ՝ ընդ թուով աւուրց մերոց կեցելոյս չար-
աշխարհիս ինձ՝ հատուցանել: Այլ դու զիս զերթ-
ած. լուր ինձ ողորմած. մարդասիրեալ նե-
րող. խնայեալ երկայնամիտ. պաշտպանեալ ապ-
աւէն. բարերարեալ հզօր. պատուեալ ամենակալ.
կենդանարարեալ նորոգող. վերականգնեալ աշխա-
ւոր. լուսաւորեալ երկնային. բժշկեալ հնարա-
ւոր. քաւեալ անքննին. պարգևատուեալ առատ.
շնորհազարդեալ անհնարին. հաշտեալ անոխ-
ակիր. ընկալեալ անոխակալ. սրբեալ ՚ի պատուոց
օծնեալ: Եթէ յաւեցից զաչս իմ, նայեցեալ
՚ի հայեցուածս երկուց փառաւորից յաւուր թըշ-
ուառութեան զքոյդ, առաջինի փրկութ յոյս և խնա-
մակալ. եթէ նկատեալ զխաչեցից ՚ի վեր յամե-
նադրաս ուղղին սակայն, հրեշտակ քո խաղա-
ղութ քաղցրութ ինձ պատահեսցէ: Յորց ինձ
տէր ՚ի յետին աւուր շնչոյս արձակման՝ մաք-
րութ ոգի, լուսով ամփոփեալ ՚ի յերկնաւորա-
ցըն երջանիկս՝ պարգևօք ախորժ քո եկեալ հա-
նել: ՚Ի յարդարոյն կատարելոյ՝ կոչեա ինձ
կցորդ ժառանգութեան. զանապական բարիս՝ ա-

րիս 'ի յուսահատութենէ աւուր շնորհեսցես : Փա՛ռ լիցի քեզ բարերանեալ՝ որ փրկութիւդ ես ամենայնի , եթէ ախտացեալս քո ոչխարի՝ զաղան զժնդակ տացես ուղեկից . մեղօք մեռե-լոյս՝ անմահ կեանք . կործանելոյս պարտեօք՝

փրկութիւն :

Դ. Արդեօք մոռասցի՞ս զբարերարեդ՝ անհ-կալութի . անտեսեսցե՞ս զգթածիրեդ՝ խղճա-մօղ . այլայլեսցե՞ս զմարդասիրեդ՝ անփոփոխ . նհանջեսցե՞ս զկենագործեդ՝ անխախտան . Թող-ուցո՞ւս զողորմութիդ՝ երջանիկ պտուղ . Եղա-ալեսցե՞ս զքաղցրութեդ բարեշնորհ ծաղկեդ . անպտղեսցե՞ս զնիւթ պանծանաց քումդ ծո-խութե . յեղանակեսցե՞ս զփառս հերաց քումդ բարձրութե . ո՞չ պահեսցես զվայելչական զարդ պայծառութե քումդ պատկի : Եթէ ողորմածա-ցըն է երանութի , իսկ դու բնաւ իսկ արքայութի լցեալ փափաքմամբ , ո՞չ զբոլորն պարգեւեսցես փրկութի . ո՞չ մատուցանիցես զեղ վիրացս . ո՞չ ապեղանիս՝ խոցուածոյս . ո՞չ դարման՝ ախտաւո-թեանս . ո՞չ ծագեսցես լոյս 'ի խաւարի՝ յուսա-ցելոյս 'ի քո զօրութիդ՝ կենաց պարգեւդ տիեզե-րաց : Որ միայնդ ունիս փառս ինքնութի իսկութի եւ յարակայ մշտնջենաւորութի . վկայեալ 'ի բըն-ութից . օրհնեալ եւ փառաւորեալ յերկս յաւ-իտեանս . եւ անդր քան զպայման սահմանի խմա-

նալեացն յաւիտենից . ամէն :

Մերոյին յաւելուած եղիցի հեծութեան՝ նորին հոգւոյ. առ նոյն [illegible] մաքրութեան բանին:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

## ԲԱՆ. Գ

Ա. Տէր իմ տէր, տուիչ պարգեւաց. ինքն-աբուն բարի. ամենից տիրող համատարածես. միայն արարիչ զինաւս յոչէից. փառաւորեալ. անքննելի. ահեղ. ահարկու. սոսկալի. հզօր. սաստիկ. անտանելի. անմերձենալի. անմրցնելի. անիմանալի. անճառելի. անսահմանելի. անզննելի. անշօշափելի. անորսնելի. անսկիզբն. անժամանակ: Անշամանդաղ դիտուի. աներկեան տեսուի. Ճշմարիտ էականութի. բարձր՝ և խոնարհ օրհնաբանեալ գոյութի. անստուեր ծագումն. ամենափայլ ճառագայթ. խոստովանեալ լոյս. անապականոյս փառահութի. անտարատամ հանդիստ. անյեղլի հնէք. անսահմանելի տեսիլ. վկայեալ անուն. ծնշակ քաղցրութե. բաժակ բերկրութե. հատուիչ հոգւոց հաց. օտար մթութեանց սէր. աներկբայ խոստումն. ծածկոյթ ցանկալի. զգեստ անկապուստ. օթոց բաղձալի. վարդ փառաց. ձեռնկալու մեծ. ապաւէն գովեալ. անմոռացելի նորհ. անպակասելի դանձ. անսպառելի ան-մն. արփիացընցուղ ցօղ. ամենատեսակ դեղ.

ձրի բժշկութիւն. կրկնածիր առողջութիւն. վեհագոյն խրախոյս. անպատիր կոչումն. համօրէն աւետիս. սրկամեծար թագաւոր. աղքատաց պաշտպան. մշտահարուստ տուիչ. անխափան զխմեցումն. աննահանջելի հրաման անհամառօտ յոյս. երկար տեսողութիւն. անզղջական սէր. ամենաբաշխ աջ. արդարակշիռ ձեռն. անաչառատես ակն: Մխիթարու ձայն. սփոփանաց լուր. բերկրութիւն բերումն անուն կենդանի. նախախնամօղ մատն. անդայթագղելի ելք. անխարդախ ընթացք. կենդանարար կամք. աննենգելի խրատ. աննախանձ պատիւ. լայնական հնարք. անձկակապայման. անդառնալի հետք. աներեւոյթք շաւիղ. անչափադիր պատկեր. որքանութիւն անսահման. անմանական ափի. անզուգական գութ. ողորմածք բարիմաղեղ. խոնարհուի տենելի. համբոյր փրկական: Եւ եւս քան զայարդմունք վայելչականք՝ աստուածունդ նուիրելք, օրհնեալ. գովեալ. բարեբանեալ. քարոզեալ. աւետարանեալ. հռչակեալ. հրնչեցեալ. պատմեալ. անխարդախ կամօք ասացեալ. եւ որ ինչ առ մեզ բերին առ 'ի քէն՝ համուռք քաղցրութեան, զոր հանդերձելոցն ճաշիլուսարանեան կերպատորումք. որով զուարթ ցուցանես 'ի փրկութիւն իմ՝ երանութիւն, եւր 'ի պատրաստել, խմբել՝ ախորժ անմաշնոց լցեալ

զի ոչ խմոյս ինչ մնոտխապատուաստ փառաստա-
րիս երգով, այլ զի պատճառ լինի տացես ըղ-
ձօքրս ալներս՝ մեծիդ փրկանաց:

ի. Ես. քանզի առ ամենայն հասակ անկեց-
եալ յերկրի ազգ բանականաց՝ այս պատուէր
նկարագրական նորոգ մատենի ողոց Նուաքի,
որ զամենեցունց ունի զկրից պատահմանց՝ ներշ-
ուականեալ յիւրում պատկերի, երբ կցորդ մեծ-
գիտականն կարևաց համայնից, առ բոլոր գու-
մարս բազմահօլով տիեզերականոյթ քրիստոնէից:
Առ նախնի ժամն ժամանողաց, և առ երկրորդ
կոչեցեալ չափու արբունն. առ որ 'ի կատարած
ուուրն կալեալ՝ սախուածեան ծերութեանն.
առ պարտաւորս, և արդարս. առ ինքնարդոյ
բարձրայօնն, և սխալեալ անձնադատ դառեալն.
առ բարիսն, և եղեռնագործս. առ նկունս, և
առ արիս. առ աղքատս և ներքնայնկեալս, առ
սնպուհս և գերաշխարհիկս: Մնջականաց՝ և
պայազատաց. շինականաց՝ և տոհմականաց.
արուաց՝ և իգաց. հրամայողաց՝ և հնազանդե-
լոց. գերելոց՝ և նուաստից. մեծից՝ և փոքունց.
պատուականաց՝ և ռամկաց. ձիաւարժից՝ և սու-
կականաց. քաղաքականաց՝ և դեղջկաց. ապրայից
գուողուեց՝ 'ի սանձս ահաւորին ըմբռնեցելոց:
Մխայնացելոց՝ մեղմականացն խոտակցաց. մար-
բականաց՝ տխրանուէր զգաստութեանց. քահա-
նայական՝ երջանկակրօն ընդրութեանց. ազգեցու-

թեանց՝ բարեզգեստից գիտողութեց. աթոռա-
կալութեց նախագահից՝ սրբանուէր ատեանց.
որոց ոմանց ազդարս աղաչանաց, և ոմանց կարաւ
բարեաց՝ առ դէմս աղօթից այսու մատենիս
մատակարարեցի, ձեռնարկեալ հողւոյդ զօրուք՝
կարգել ինձ մաղթանս բազմագլխիս, և ամե-
նեցուն սոյին խնդրուածս՝ դթութեան մեծի
յանդիման լինել սովաւ հանապազ:

Գ. Աւ ; աղաչեմ զսոյն ընթերցողացն 'ի սիր-
տես յատակս բժշկութի հոգւոց, և մաքրութի
յանցանաց. թողուի պարտուց, և արձակուր
մեղաց կապանաց: Եղիցի բղխումն արտաս-
ուաց՝ սովաւ փարթելոյն, և պարգևեալ տացի
'ի ձեռն սոյին աղաչաւ ըղձից: Շնորհեսցի
ամէր և ինձ ընդ նոսին առ 'ի քէն՝ զղջումն կա-
մաց. և նոցա խմախ ձայնիւ շունչս բարեհամ-
բոյրս. նուիրեսցի վասն իմ այսու մատենիւ
պաղատանօք նոցին, և բանիւս այսու հեծութք
նոցին ընդ իմ խնկեսցին: Ընդ համբոյր ճաշակ-
ման այսր ողբերգութե, շնորհ լուսոյ քոյ մըտ-
եալ ընակեսցէ. եթէ եղեն ինձ բարեպաշտօք
ընծայիլ սովաւ, ընկալ կենդանեօքն վասն քոյ
գըթած՝ և զիս ընդ նոսին. եթէ ախտ ինչ
սրբանուէրս կաթուածոյ աչաց սովիմ բերեցի,
եղիցի 'ի քէն խոստովանեալ՝ և յիս անձրևեալ.
եթէ գրեսցի և 'ի փրկութի կարգեսցի՝ հաղոր-
դելոյն յայս կեր կենաց, աղաչեմ կամաւ քո

օրհնեալ՝ և ինձ հաւանեալ . եթէ հեծութիւն ածահաճոյս 'ի ձեռն այսր բանի՝ 'ի գազանեաց ուրուք յառաջ եկեսցէ , օգնեցայց քեւ բժշկեալ՝ և ես ընդ նմին . եթէ ձեռն մարդոյ՝ խնկով հանդերձեալ՝ առ քեզ համբարձցի , հասցէ միացի ընդ իմն ձայնի և աղաչողացն աղէրս՝ յառաջ մատուցեալ : Եթէ պաղատանս բազմաղխիս ընդ իմն երկնեսցի , լիցի և ինձ քեւ՝ փառն՝ սոյին կրկին նուիրեալ : Եթէ յօրդեսցի այս անձին բանի պատարագ՝ քեզ 'ի հաճութիւն, նախայլոյն՝ ընդ իս քեւ ընծայեսցի : Եթէ 'ի-տխրանաց ինչ ձանձրութէ որ նուաղեսցի , կանգնեսցի վերստին հաստատութեան այս հառաչանաց՝ 'ի քեզ յուսացեալ . եթէ համբերութիւն վատահութեան մեղօք յատակի , այսու արձանօք պատկանեցելովք աջով քո պաշտպան՝ դարձեալ կառուսցի : Եթէ յուսոյն ձգտման՝ սուսերն յանցանաց հատեալ կորիսցի , կցեսցի դարձեալ միասնական կամօք ամենակալին՝ բարւոք պատուաստեալ . եթէ փառաց մահու՝ անձնական ցաւոյ՝ դրօք պաշարեսցէ , դացէ փրկութիւն սովաւ առ 'ի յոյս կենաց՝ յաղօթելն առ քեզ կեցուցիչ . եթէ սաստկապատ որ սատակեալ՝ 'ի-մերս խոցեսցի , քաղցրութիւն քո՝ սովաւ ամոքեալ ողջասցի : Եթէ անքաւելի կորստեան պարտեաց յանդունդս որ խորոց կոչէ ընդլուզեալ , եկեսցէ 'ի լոյս՝ կարթիւ այս հեծիկ՝ քեւ պատ-

սպառել. եթէ թմրրութի՛ խարից՝ խաւարին գործոց՝ իցէ որ վնասեալ, զօրասցի անդրէն վասն քո միայն ապաւէն՝ 'ի քեզ ապաստան եղեալ: Եթէ պաշտպանակին փառաւորութե՛ զանձն ուրուք լքցէ, ընկալցի այսու միջնորդիւ ձեռն քո զնա՝ ամփոփեալ 'ի նոյն հաստատութեան. եթէ ամայի 'ի զգուշութէ պահողացն որ դեգերեսցի, ապաւեսցէ սովիմ՝ առ 'ի նոյն դարձ նորոգողիդ. Եթէ սաստիւ դիւային ջերման դողութի՛ ինչ զոք խռովեսցէ, սթափեսցի 'ի սոյն յայս նշան՝ խոստովանեալ և երկրպագեալ խաչիդ խորհրդոյ. եթէ անօրէնութեան մրրրիկ խորտակիչ հողմոյ՝ յանկարծ բախեսցէ զհաւաուածս մարմնոյ՝ շինուածոյ մարդոյ՝ յերկրային ծովուս, հանդարտեսցի անդրէն ղեկաւ այս թե-

ոյ 'ի քեզ պատկանեալ:

Գ. Դ՛ու արասցես լինել դեղ կենաց՝ առ հնարցաւոց հոգւոց և մարմնոց՝ քոց ստեղծուածոց զայս կարգեալ սահման ողբոց մատենի սկզբնեցելոյ յանուն քո՝ բարձեալ: Զսկսեալս իմ դու կատարեա. եղիցի հոգի քո խառնեալ 'իսա. շունչ զօրութե մեծիդ միասցի 'ի քո ինձ շնորհեալ ստեղծարանութիս. զի դու տաս զօրութի՛ վհատեալ սրտից, և ընդունիս փառս

յաւիտենիցս. ամէն:

Սէրոփէն յաւելուած կրկին հեծութեան՝ նորին
հոգւոյն, առ նոյն ազերս մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

## ԲԱՆ. Դ

Ա. Եւ քանզի սկիզբն կալայ խօսել ընդ քեզ՝ որ 'ի ձեռին ունիս զշունչ կենդանութեան հողեղս բաղմանեղի, կերակուր սարսեալ դողացեալ ատ-նապաս մեծաւ՝ յանէա երկնչիմ. վասն զի ահաւոր և անտանելի, և 'ի սաստման բանի փախչելի, կշտամբ անձրողօքելի՝ անաչառ քո ատենի՝ 'ի կշտամբութեան իմ պարտաւորի՝ արարիչ երկնի և երկրի: Նա զի և չէք իսկ բժշկութի բազմամոլութեան սաստկութեան վիրացս անողջանալի, խայթմանց խածուածոց մահաբերին ընկանող ժանեաց՝ օրսողին զանձն իմ 'ի կորուստ: Անսւանց զի՝ ոչ գոյ պատասխանի, բառ աստեղին, յաւուր պատերազմի. և ոչ բանիւ խրատանալի, և ոչ վերարկուաւ պատսպարելի, և ոչ զինակօք կեղծաւորելի. ոչ առ երեսս բանիւք մատչելի, և ոչ կերպարանօք երբեք խաբելի. ոչ յօղուածովք բանից ասելի. ոչ արագմամբ ոտից փախչելի. ոչ թեկնոյ զարձուցանելի. ոչ զինաց ընդ երկիր մածուցանելի. ոչ թզանով ընդ հող հասանելի. ոչ 'ի խորս երկրի թաղելի: Քանզի մերկ են քեզ ծածկեալքն,

և հրապարակեալ են աներեւոյթքն․ արդարու-
իմ՝ նուաղեալ՝ և խաղաղ ունայնացեալ․ մեղան-
քըն յայտնեցեալ՝ և յաւէտ առաւելեալ․ չա-
րիքն իմ՝ մնացական՝ և ես կորստական․ խրա-
տոյն կշիռ պակասեալ՝ և անխրատութիւնն խա-
կոյն զօրացեալ՝ բարեացն բերք հալեալ՝ և ո-
ղորմունքն արձանացեալ․ աւանդն կորուսեալ
և դատաստանքն այժմէն դատեալ․ մահուն մուր-
հակ գծեալ՝ և աւետեացն կնիք եղծեալ։
Նաւավարն ախտացեալ՝ և բանսարկուն ուրախ-
ացեալ․ Հրեշտակաց գունդն թախծեալ՝ և սա-
տանայ խնծղեւք պարեալ․ վերնական զօրքն ող-
բացեալ՝ և ստորնայինքն բերկրեցեալ․ սպանո-
ղին մխիթարիկ լցեալ՝ և պահողին զանձն կապ-
տեալ․ ճարպին կողմն կանգնեալ՝ և առացողի
պարզև մատնեալ․ հաստողին ձիր մոռացեալ
և կործանչին հաճոյքն պահեալ․ երախտիք փրկ-
չին հանդեալ՝ և բելիար զուարթացեալ․ կե-
նացն [illegible] փակեալ՝ և դատողին ժամն՝ ժամ-
դիս ժամանեալ։

Ժ․ Եւ արդ՝ ո՞չ ապաքէն բղձալի, եթէ բաց գլու-
ոյն կանխութեն նախաձայնելոյ, ոչ սանդղամանի
ներքեւ յարգանդի՝ և ոչ նկարիլն 'ի յորովայնի․
ոչ 'ի ծնունդ յառաջադրելն՝ և ոչ 'ի լոյս կենաց
հասանելն․ ոչ 'ի թիւս մարդկան գրելն՝ և ոչ 'ի
հասակ աճման ամբառնալ․ ոչ 'ի պատիժ գե-
ղոյ զարդարելն՝ և ոչ բանիւ հանդերձաւորիլ․ քա-

...րդ այսպիսեաց սատակողացն եւ ապստամբելոց
...ներանցն պարտուց, զոր եւ ոչ վճարեն կարծրութ-
բերէ, թողլով մարմնոյ լուծանելի:

Եւ արդ՝ սուր բարեգութ՝ աղաչեմ զքեզ՝
...ուր ինձ աղօթութեամբ, որ զայսոսիկ դու խնդրեն
...երկէն քաղաք բանիւ մեզ սաստկացեր՝ սաւ-
...լ, թէ սուր զայդ նաւէր՝ յանուն փրկութե-
...րոյ՝ ևս, եւ սուրբ եղբարք. զի զողորմութի-
...ակիմ, եւ ոչ զպատուհաս: Ահա բարձրագիր
...գրատին ինքեան այսր ընծայական, որ ունի
...ամենայն, եւ 'ի քէն է ամենայն եւ քեզ փառք
յամենեցունց ամէն:

---

...բոտքն յաւելուած եղեն հեղինակին՝ Նորին
...ինքն, առ նոյն ամէնը հողմանաց բանն:
'Ի խորոց սրտից խօսք ընդ Ա...

## ԲԱՆ. Ե

Եւ արդ՝ ես երկրածին մարդ՝ ...
...նաւ անկայուն զգալի գրաւեալ, եւ յանգա-
...թի պատրաստական գինեաւս յհարբեալ, որ
...նայնիւ սակմ, եւ ոչ մեով ինիք ճշմարտամ:
...անդի որ՞ք զինչք ձեռադրելով նշանակք
...ապաքեցելով՝ յանդգնեցայ լինել յանդիման
...մ զատաստանին, ո՞վ խաչդատ աշխար-
...ծառ՝ անպատում հզօ... ա: Քանզի

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ--Арм.ССР

զանեալ տատասկին 'ի սոյն՝ զապականութիւն մեղ-ուցեալ անձինս՝ առ քումդ երախտիս, ցուցից զե-րութիւն քո միշտ զօրացեալ, և զանկարութիւն իմ յաւէտ պարտաւորեալ։ Որ ատաքեր զեռ 'ի քո պատկեր պանծալի 'ի ձեռն վեհիդ տաղաւորաւ, զանկարս օժանդակելով ։

Ի. Ուղղարկեցեր բանիւ. փայլեցուցեր փըռ-մանք. մտօք ճոխացուցեր. իմաստիւք աճեցու-ցեր. համեմատով հաստատեցեր. 'ի շնչականացն որոշեցեր. հոգւով իմանալեաւ խառնեցեր. իշ-խանականին գոյիւ պճնեցեր. Օ՛նար հայրա-բար. սնուցեր զայնկայկս. ածեր սատայողա-պէս։ Տնկեցեր զամբարիշտս 'ի քումդ գաւթի. Ջրովք կենաց ոռոգեցեր. աւազանին ցօղով մաք-րեցեր. կենացն վտակաւ արմատացուցեր. հա-ցիւդ երկնայնով ջամբեցեր. ածայլին արեամբդ արբուցեր. անհպին և անհասանելեացն ընտա-նեցուցեր. զաշս երկրեղէն 'ի քեզ համարձակե-ցեր. լուսով փառաց վերածածկեցեր. զհօղա-նիւթ մարմինս անմարմնոյ ձեռացս 'ի քեզ մա-տուցեր. զմախիրս անարգ մահացու՝ իբր զնը-շոյլ լուսոյ յարդեցեր. զհայր քո հզօր աջաւդ օրհնեալ՝ մարգարտաղէս և անաժանս իմ անձին կերեցեր։ Այլ կիզեր զեկրանս լցեալ նան-բութիւն՝ 'ի ժառանգակիցն կարգս զքեզ. ոչ կշտամբեցեր զյանդգնեալս՝ 'ի քո կցորդութիւն ոչ սատակացուցեր զանսխ աչաց՝ 'ի քումդ ան

նորկութի. ոչ արգելմանս կապանաց՝ ընդ մա-
հապարտացն տառապեցեր. ոչ խոստակեցեր
զդաստակ-բազկիս, որ անմաքրապէս առ քեզ
համբառնայր. ոչ մանրեցեր զոտս իմոյ մա-
տանցս՝ ՚ի շօշափելն զմանդ կենաց. ոչ պատեցին
զինեւ մառախուղք՝ ՚ի ձօնելն զքեզ՝ անհաւոր.
ոչ փշրեցեր զպարս ատամանցս՝ յամբոշխնել բղ-
քեզ՝ անտահմանելի. ոչ ցնդեցեր բարկութի խա-
ւարնակ՝ խաւարնակի ընդ քեզ հեռեւօղս, իբր
ընդ փրկչեան առնն խաղալէի: Ոչ խայտառա-
կեցեր ՚ի հարսնարանիդ՝ զանարժանս քումդ
պարերգուն. ոչ ՚ի դձուձ հանդերձին անսխալ՝
զանօրինակս յանդիմանեցեր. ոչ կապանօք ձե-
ռացս և ոտիցս՝ յարտաքին խաւարին հալածեցեր:

Գ. Օ՜ ւայս ամ մասունս բարեաց և զնեբեկլուդ
երկայնմտութի ընկալեալ ՚ի քէն՝ բարերար օրհ-
նեալ՝ և յամի միջոյ երկայնամիտ, փոխադրեցի
զնաստակրտս պարտեաց՝ անթիւս և բազմօրինակ
անօրէնութիս, մարմնականաց և անձնականաց՝
ամենակլիր բազմածուփ խորհրդոց յուզմանց
երկրաքարշութեց: Օ՜ այսուիկ քեզ՝ ած իմ և
տէր, ընդ այսքանեաց բարեաց փոխարէնեցի.
զայս քեզ՝ ինձէն հատուցի շարիս, ըստ մոլ-
ախեան յաղխմանութեն տաակի, մատուցեալ
զեմաստութի՝ և սիրոյն յիմարութե: Օ՜ այսպ
բարեաց երախտեաց կոծման՝ ընդունայնութե
զնացին՝ շարաշար ունայնացուցի. զայս խո-

սարութի՛ շնորհաց անճառից՝ 'ի բարձրելոյդ ճնամոց բարգեցեալ՝ մրկաւն խնլագարութե ցնդեցի։ Նա թէպէտ բազում անգամ ծանուցար՝ կարկառմամբ ձեռին քո այցելութե՛ ձգել զիս առ քեզ, ոչ հաւանեցայ ըստ մարգարէին՝ որ չհրայէլէ ամբաստանութե. և թէպէտ խոստացայ դաշնաւորեցի քեզ հնազանդել, և ոչ ընդ այսմ սահմանաւ ուխտի փակեցայ, այլ դարձեալ զնոյն նիւթեցի չարիս, անզգամին յածրին առաջին մատեայ, զնոյն մեղաց հերկեցի զանդաստան սրտիս՝ յորոմմէն արդիւնաւորի։ Ո՜ ես եղանեն առածք ածարեալ սուրբ մարգարէիցն. քանզի մնացեր յինէն խաղողոյ, և ես ընդ այնորիկ փուշ շառաւիղեցի. դարձայ յանախորժ դառնութի՛ պտղոյ՝ այգիս օտարացեալ. բուռն հարի զանհաստատ հողմոյ, որովք միշտ տատանեալ՝ այսր անդր տարաբերիմ. ըստ ձայնի երանելոյն յոբայ՝ ընդ ճանապարհ իմ անդարձ գնացի. 'ի վերայ աւազոյ՝ շինուածս յիմարութե՛ կառուցի։ Լայնատարր հետովք խաբեցայ՝ կենացն անձկալեաց հասանել. փախեցի յինէն զնեղին ուղղութի՛. բացի կամաւ զկորստեան խորխորատն։ Խցի զպատուհան լսելեացս իմոց՝ առ բանից կենաց ընդունելութի. կախուցի զաչաց հոգւոյս հայեցուած՝ առ 'ի զկենացն դեղ նկատել։ Ոչ ընդոստեայ 'ի թմրութեց լրմանէ մնացի՝ 'ի պատրաստ փո-

գոյգ ահաւորութիւն . ոչ զգաստացայ ՚ի փառք գու-
ժի՝ հրամփորձական ուսուցին ընտրութե . ոչ երբեք
զարթեայ ՚ի նիրհմանէ քնոյն մահացուի , որ ՚ի-
կորուստն կարապետէ ։ Ոչ եւս հանդիստ քոյ
հոգւոյդ՝ ՚ի մարմնեղէնս տաղաւարի . ոչ ընդ
բնութիւն չնչոյս խառնեցի զմահու շնորհաց քու-
մոյդ պարգեւի . խմոյս ձեռօք կոչեցի կորուստ ,
բառ առակողէն , զհողիս կենդանի մահացու-
ցանել ։

Դ . Եւ զի՞նչ է ինձ սակաւ եւ նուաստագոյնս յօ-
դել սահմանս կոծելիս չափաբերականս , մինչ
անյեղ է բառ քանակաւի՝ եւ վրիպեալ ըստ բժ-
բշկաւի ։ Արդ՝ քո՛ է ընձեռել կեանս՝ հոգւով
մեռելոյս , եւ անխափանութիւն մատչել առ այցե-
լութիւն զառապարտելոյս՝ որդի ամ կենդանւոյ .
քեզ փառք յաւէտ . ամէն ։

---

Մերձաւորին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին
հեղողէ , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ԲԱՆ . Զ .

Ա . Զայս արդ՝ զինչ բարի որ դեղ առ այս , կամ
որ օգուտ ինձ առ այն սահման ընթացից ձայ-
նիս հեծութեան լսման , եւ ոչ զամբարեալ չարաց
մահացու վէրս՝ խարանաւ բանիս արտաքս հեր-

քել. և կամ զծանրութի՛ սրտի՝ մթերեալ
ցուցոյ՝ հողեկան խիթոյս, իբր տաղտկացու-
ցանողական հնարաւորութի, մատնամուխ զըղ-
ուանօք փոխել:

Ժ. Եւ քանզի ոչ գտայ արժանի պարծելոյ
'ի փառս՝ ընդ սոցին դաս, որոց լի են նոցա ծա-
ղու՝ և շրթունք խրախանց ցնծութի, ըստ առ-
ակողին և սաղմոսողին, 'ի կարգն երկրորդ դի-
մեցից՝ զնմանիսն իմ յիշատակել համայն առա-
ւնոր. թէպէտ առ խնում թերութե բարուց
անբարեաց՝ և նոքա յաղթականք լցեն, իբր ա-
պաշաւեալն քան զանապաշխարն: Տօնելի եղե-
մանատ, առ խմոց պարտուցս առաւելութի.
պատուեցաւ և փարիսեցին, առ դժնէխս ամ-
բարշտութի. դովեցաւ անառակ որդին, առ
անդարձիս ուխտադանցութի. յիշատակեցաւ
կեղծաւորութի որդւոյն ամանեայ, առ անշը-
նորհութի ապախտաւորիս. օրհնաբանեալ եղե-
ւ աւազակն, որ դատախազն է անհաւատից, պատ-
ուեցաւ և կինն պոռնիկ՝ սկզբնամայրն ապա-
շաւողաց: Ոչ պակաս քան զփարաւոն՝ զըն-
դեղծուած սրտիս իմ խստացուցի. ըստ օրինակի
խռովութե մրրկաց ծովու ծփեցայ. ոչ այնքան
տարուեցի և պատառեցի 'ի սաստկութե քամդ-
հրամանի, որքան ալիք ծովուն՝ յեզերացն:
Ընդ թիւս չափոյ կշռութե՞ առ իմս գործոյ՝
և աւաղոյն կոյս սահմանեցաւ. պակասեաց ան-

բանիցն չեղջը , առ համբալս խնդս անօրէնութեանց :

Գ . . Ո՛վ ի թէպէտ և յոյժ բազում են մանունքըն 'ի յափունս ջրոյն համահաւաքեալք , այլ՝ ուրոյնք և առանձնականք 'ի ծննդոց ածելուէ . բակ մեղանք խնդս յանցանաց՝ անթիւ ք , զորս անհնար է առնուլ 'ի միտ :

Ոմն՝ և ծնունդք իւր . ոմն՝ և շառաւիղք իւր .
ոմն՝ և ընծք իւր . ոմն՝ և արկածք իւր .
ոմն՝ և փուշք իւր . ոմն՝ և արմատք իւր .
ոմն՝ և հաստուածք իւր . ոմն՝ և պտուղք իւր .
ոմն՝ և 'նշխարք իւր . ոմն՝ և ծիղք իւր .
ոմն՝ և սաղք իւր . ոմն՝ և արմկունք իւր .
ոմն՝ և ծիրանք իւր . ոմն՝ և մասունք իւր .
ոմն՝ և խլրտմունք իւր . ոմն՝ և զօրութիւնք իւր .
ոմն՝ և ազդմունք իւր . ոմն՝ և 'նշմարանք իւր .
ոմն՝ և ախտք իւր . ոմն՝ և մնացուածք իւր .
ոմն՝ և սուերք իւր . ոմն՝ և մթութիւնք իւր .
ոմն՝ և յարձակմունք իւր . ոմն՝ և հնարք իւր .
ոմն՝ և պատիրք իւր . ոմն՝ և զխտմունք իւր .
ոմն՝ և զխեղդմունք իւր . ոմն՝ և չափք իւր .
ոմն՝ և խորք իւր . ոմն՝ դարշութիւնք իւր .
ոմն՝ և կայծակունք իւր . ոմն՝ և կերք իւր .
ոմն՝ և մթերք իւր . ոմն՝ և դարձք իւր .
ոմն՝ և ցնցուղք իւր . ոմն՝ և աղբերք իւր .
ոմն՝ և դիւաք իւր . ոմն՝ և շամթք իւր .
ոմն՝ և հրդեհմունք իւր . ոմն՝ և պատահմունք իւր .

ոմն՝ և վէհք իւր . ոմն՝ և անդամնք իւր .
ոմն՝ և բոլորքամունք իւր . ոմն՝ և ողջութիք իւր .
ոմն՝ և ամպրոպք իւր . ոմն՝ և կայծակք իւր .
ոմն՝ և հասմունք իւր . ոմն՝ և հեղեղք իւր .
ոմն՝ և սառնամանիք իւր . ոմն՝ և դրունք իւր .
ոմն՝ և շաւիղք իւր : Հնոցն՝ և սառ իւր . հըր-
սոյն՝ և գոլորշիք իւր . հալոցն ձուլակին՝ և ձըն-
ձերամունք իւր . օշինդրն՝ և դառնութիւն իւր .
կործանիչն՝ և հնազանդեալք իւր . բռնաւորն՝
և յեղուզակք իւր . դատաւորն՝ և սպասաւորք իւր .
աւազակապետն՝ և գումարտակք իւր . գազանն՝
և կորիւնք իւր . խաւարանոցն՝ և ծակոտուածք իւր .
ապականագործն՝ և նմանիք իւր :

Դ. Սիրտ՝ այսպիսի պէսպէս են գլխաւորութեանց ապականողաց ազգաց համայնից , դասեալք ընդ ինքեամբք նուաճութիւք մասանց՝ իւրաքանչիւրոց 'ի սոցանէ՝ րիւրք րիւրուց՝ և հազարք հազարաց . իսկ զհամայնեցս թէ նա միայն զօրէ իմանալ , որ զառ 'ի մէնջ չէութին գրեալ իւր զէութի գործոց տեսանէ : Նա սիրտ՝ եթէ ոք զանձն ոչ խառնեսցէ , և առ երեսս ոչ կերպարանեսցի , և կեղծաւորաբար ոչ անհաւանեսցէ , և մարդ զնորին ծանիցէ , և հաստատակաց բնութ փարեսցի , և երկրածին զանձն գիտասցէ , և 'ի շաւիղ իւրում կամանին կացցէ , իմասցի ծանիցէ զնախաթիւ մասանս արկածից փորձելոց . թէ ոչ ընդունայն ինչ գրեցի և կամ բա-

բնաւ խնկութիւն սահմանեցի, որ 'ի մերս բնաւ պատուակի աղվի աղվի փոխադրեանուի. այլ 'ի բնու- բուսյն արդասեաց չորեաց՝ չափ մի երեեցու- ցի, զի նորօք և զայլն խնստասիրեաչեք, թէպէտև ոչ բովանդակապէս:

---

Աշխարհին յաւելուած էին հեթանոսեան՝ նորին հոհոյէ, առ նոյն արկեր մաղթանաց բանէ:
Խեղդոց ոտնեց եօտ՝ ընդ ոչ:

## ԲԱՆ · Է

Բ. Ու զի մի գիտութեան փառաւորութի խա- ղաղ կարեցից, և ապացէն եղեալ՝ մտանեցայց այսքանեաց անեբեւութից ընդդիմամարտից, որք ոչ այլ ինչ են, քան թէ ընտանիք թշնամիք՝ ինքնածին բուսեալք, զոր փերատբեալըդ սահ- մանեցին՝ զորքանութի պատկերին ձևոյ եղեալ աշարկուս: Յուցից առ ամին բաղմարդլ բա- նութե մարտկայդ՝ զօրեղ ախոյեանս ածանկանս՝ ամենայաղթօղս և անպարտելիս, թէ և կոհ- ելս կիրս՝ և դժուարակութ պատուղս ծառոց ոնչասանելեաց, և անկոխ ձանապարհաց երկք և ատամանմունք: Զանզի զայն ամ՛ գունդս չա- րութե բանսարկուին զօրաց, ասիա մի արտօ- ղը կախուածոց աչաց՝ իբր ղձձիւ գեռունս բաղմատանս խայթից երկրի տեղւոյ իբրա-

մանց՝ անկեալ 'ի վերայ ծորումն ձիթոյ, կամ
դոյլն դեղ ինչ սատակչական, ցամաքեցուցանէ.
և դոյլն մի հառաչումն սրտի հեծութեն՝ ելեալ
'ի յոգւոյ, իբր շնչումն հարաւային ջերմութեն՝
խառնեալ յարևու, զատանամանեայս ասակու-
թիւն հալէ. քանզի ըստ միումն նմանութեն՝
հեշտածինք են. և ըստ միւսումն զխմաղ-
րութեն զխլրտմանօք:

Ի. Այլ ես ոչ երբեք կասեցից դատել զդա-
տապարտեալս՝ բանից կսկծմամբ. պարսել զը-
պարտաւորեալս՝ իբր զվնասակար անփրկանա-
ւոր անհամոզելի. վասն զի զոմանս սատակ-
եալ 'ի յխոց նեղչացն, ոմանց զօրութի տամ
կենդանանալ՝ առ հոգւոյս կորուստ: Տունկս
դառնատեսան, որ զզարշութի անպտուղ վար-
ուց ծաղկեցի. բորոնակս աղախնարեր և մահ
ողկուզեան, որ զկորստեան զինին երկնեցի.
քանանու զաւակս՝ և ոչ յուդայի, ըստ ասից
մեծին դանիէլի. որդիս գեհենին, և ոչ արքայ-
ութեն. ժառանգս զժոխոց, և ոչ փառացն փա-
փաքելեաց. նիւթս տանջանացն և ոչ հանգստ-
եան: Ապերախտս՝ առ երախտաւորդ. ապա-
շնորհս՝ առ բազմապարգևդ. միշտ մեղուցեալս՝
առ երկայնամիտդ. դառնացուցիչս քաղցրութե
բարերարին: Ծառայս չար և վատ, ըստ տե-
րունեան յանդիմանութեն. իմաստունս՝ չա-
րիս գործել, ըստ եսայեայ նախատութեն.

ժիրս առ ժանտագործութիւն զաղտութեան ։
փոյթս առ ՚ի բարկացուցանել զտէրն ․ մշտա-
շարժս առ դիւտս ստամոքսականս ․ հանապա-
զորդեան վիշտս ստացողին ։ Թոյլս առ բար-
եացն թմբիչս ․ Ծոյլս առ երանութիւն ընդունել ․
գանգատս առ զիտմունս խօսակցելոցն ․ անարգս
առ կարիս պիտանեացն և օգտակարացն ․ պաշ-
տօնեայս ուխտադրուժ երախտամոռաց ։
դ․ Վա՜յ անձինս մեղաւորի , զի զարարիչն իմ
բարկացուցի ․ վա՛յ որդւոյս կորստեան , որ բզ-
կենդանութեան ձիր մոռացայ ։ Վա՛յ պարտա-
պանիս անհամար բիւրուց քանքարաց , որ ոչ
գոյ հատուցանել ։ Վա՛յ բեռնակրիս ծանրու-
մեղաց գժնելոյ , որ չունիմ դառնալ առ հան-
գստարանն ․ վա՛յ մեծատակարիս տէրունեան պար-
տուցն , որ չիք հնար յանդիման լինել Հզօրին ։
Վա՛յ եղեգնախախ կիզանողականս նիւթոյ , որ
տաշօրելոց եմ ՚ի գեհեններն ․ վա՛յ ինձ առ այս քի-
շատակ , զի նեաք բարկութեան այ՝ այրեցելովք
են գործեալ ․ վա՛յ յիմարութեաս , որ ոչ մտառ-
եցի զծածկեցելոցն յայտնութեան հանդէս ։
Վա՛յ ամբարշտիս , զի միշտ անդադար՝ ստոյ-
նիս չարեաց կեցի ․ վա՛յ զմարմինս պարարողի՝
կերակուր որդանցն անմահից , կառողացն թու-
նաւորաց զեռուն համբերեցից ․ վա՛յ ինձ առ որ-
բումն մահուն բաժակի , որպէս զայս խնեականն
սուժեցայց ․ վա՛յ ինձ առ եղբ մեռտման հողոյս՝

յեղկելի մարմնոյս, ե՞րբ դատաւորին ճշմարտի յանդիմանեսցայց. վա՜յ ինձ առ նուաղութիւն իւղոյն լապտերաց, զի անարծարծելի է աղօտանալն. վա՜յ ինձ առ ձեռս տագնապի ահին պակուցման, յորժամ առագաստին մտան փակեալ. վա՜յ ինձ առ ձայնին ահաւորութե՛ դողացուցչաց և սարսափելեացն բանից՝ երկնաւոր թագաւորին վճռոյ կնքելոյն թէ ոչ գտանեմ գթեղ :

---

Սէրտին յաւելուած կէլէին հեծեծութեան՝ Նորին հոգւոյ. առ Նոյն աղերս մաղթանաց բանի :
'Ի Նարեկաց աղօթից բանէ՝ ընդ այս :

## ԲԱՆ · Բ

Բ. Եւ արդ՝ զի՞նչ գործեսցես՝ անձն իմ կորուսեալ, կամ ո՞ւր թաքիցես, կամ զի՞ արդարասցես, կամ ո՞րպէս ելցես 'ի մեղաց բանդէ: Բանդք բազում են պարտիքդ, և անթիւ հատուցմունքն. սաստիկ կշտամբանքն, և անվախճան նախատինքն. անողորմ են հրեշտակքն, և անկաշառ դատաւորն. հզօր ատեանն, և անաչառ բեմն. քննելի ապաւանալիքն, և անողորմ հատուցմունքն. ահարկու հրամանն, և մերկապարանոց յանդիմանութիւնքն. հրեղէն են գետքն, և անանցանելի են վտակքն. Թանձրա-

մեծ խաւարն, և արտաքոյ այցելութե՛ն մնաս-
խուզն. ապականութե է դուրն, և մշտնջենա-
ւոր է տագնապն. ամենալրաւ տարտարոսն, և
անշերծ սատանամանիքն: Իսկ արդ՝ արդարև քեզ
են գանձեալ գանձինքս այսորքիկ դժնդակք, և
տարժանելի օթևանք, անլրբերելացդ պատու-
հասից, ո՞վ անարժան անձն իմ մեղաւոր՝ չար-
ադործ՝ պոռնիկ՝ բազմարբի, սաստկան անդաս-
տանի բնաւին անմաքրութե: Ահա զարդիւնս
գործոց ձեռաց քոց ժառանգեսցես՝ թիւրեալդ
'ի յուղղութեց, և զառածեալդ 'ի մաքրութեց.
տարագրեալդ յարդարութեց, և 'ի կարգաց պար-
կեշտութեց. ունայնդ 'ի լիութեց՝ հոգեպարգև
հարստութեց. նախանձարկու բարերարին, և ա-
մենակալ թագաւորին:

Բ. Ու քանզի կառուցեր քեզ անել արգելան՝
և անփախչելի որոգայթ, խոստովանեալ քեզէն
զանբժշկականդ քո վէր, և զանօրինակդ հար-
ուած, վկայելով զանձինդ զպարտականդ մա-
հու՝ զանբուժելիդ բեկութի, ո՞վ չարդ 'ի բար-
եաց. ո՞վ դառնութիդ 'ի քաղցրութեց. ո՞վ
խաւարդ 'ի լուսաւորմէց. ո՞վ կապեալդ 'ի-
արձակելոց. ո՞վ դարմեալդ 'ի գովելոց. ո՞վ ամ-
բարիշտդ 'ի բարեպաշտից. ո՞վ չնչականդ 'ի բա-
նականաց. ո՞վ անմիտդ 'ի մտաւորաց. ո՞վ ան-
հանճարդ յիմաստնոց. ո՞վ անմաքուրդ յմա-
քրելոց. ո՞վ մահացուդ 'ի կենդանեաց. ո՞վ խոհ-

երկայնդ 'ի սէր. ով ապշեալդ 'ի պարկեշտից. ով կեղծաւորդ յարդարոց. ով անպիտանդ 'ի-պիտանեաց. ով անարգդ 'ի փառաւորաց. ով նուաղդ յառաւելութեանց. ով գերիդ 'ի գերագունից. ով նուաստագոյնդ 'ի վեհից. ով աղքատդ յընչեղաց. ով անարժանդ 'ի փրկութեանց. ով անանիդ 'ի բարձրութեանց, եւ 'ի հոգեւոր հարստութեանց. եւ հատուածեալդ յօծելոց:

Մէրոպէն յաւելուած կրկին հեծութեան՝ նոյն հոլովք, առ նոյն աղէրս մաղթանաց բանէ:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

## ԲԱՆ. Թ.

Ա. Եւ արդ՝ զի՞նչ արժանաւոր ըստ քեզ բան բանամս շարադրեցից 'ի կատակ մաղթանաց մնացելի այսր ողբերգութեան, ո՛վ անձն իմ թշուառ ամենապարտական, եւ առ պատասխանիս բանից անպատրաստ, անպիտան ոյ եւ սոյն մասնակցութեան: Ո՜վ եթէ զիա՛րդ մի ծածուց՝ 'ի յորակութիւն գեղջ յեղեղեցից, եւ զգաշտս ապարինօք բազմօք առհմանեալ՝ 'ի տարածումն լայնութեան քարանձ հափեցից, եւ զպուրակս յոքունց անտառաց՝ շամբից եղեգանց՝ 'ի հաւաուածս դոյութե դաշտաց կալմեցից, եւ ո՛չ զթիւմ 'ի բազմելոցն անօրէնութեանց՝ զորեցից ըստ

զբօսլ սահմանի գրաւել : Նա զի՝ թէ զմիւս այերանանու՝ 'ի մի լուծ կշռոց զօդեսցես , և կամ ողջեան արարածան՝ 'ի կէտ ամբարձման նժաղի միոյ արդարութեան՝ միջնորդ կացուցես , ոչ հաւասարէ այնր հարթութեամբ համաղուդակցել :

Ի. Օ՜տար ամբարձուղէշ՝ ստուարատեղն՝ տերևալից՝ ունայն 'ի պտղոց , նմանակից յաւէտ հարազատ այնր թզենւոյ՝ զոր անէծն գօսացոյց . քանզի սաղարթօք վարսից , այս է արտաքին զիմօք բարեշուք կերպից՝ իբր պտղաւ լիք պաճուճեալ , բացականայն գոս բաղձալի . իսկ եթէ մերձեսցի անկօղն՝ խուզել զխնդրելին , գտացէ զքեզ ունայն 'ի բարեաց , և զարշելի 'ի զեղեցկութենց , ծաղր անցողաց , և նշաւակութիւք նախատողաց : Օ՜ի եթէ ապաժամն՝ յանդգոյշ ժամուն՝ հերապանծ տունկն պտղաբերոյ անկենդան , որ զոյգն պատկերին է անպատրաստից , եկն ընդ անի իւք . և կամ երկիր սաղեալ ցողով , և ոչ բաղմապատիկ՝ զաւանդս արդասեաց երկրագործութե՝ տածողայն մատուցանէ , լքեալ մնանի . իսկ դու՝ ո՛վ անձն իմ եղկելի , սահման բանաւոր և տունկ կենդանի՝ և ոչ 'ի ժամու իւրում յպտղաւոր , իբր ոչ ըննոյն կրեսցես պատիժ նախնում՝ տնակիդ :

Ասան զի զհամայնն ընկալար 'ի քեզ՝ անպակաս յատուկութեց , սկզբնատրեալ 'ի մարդն տա-

աշխին՝ և մինչև 'ի սպառումն ծննդոց նոցին՝ ըդ-րերս գործոց նանրութեանց, և զգիւտս նորա-գըս՝ առելս և անախորժելիս հաստաղեն գքել-տառուծոյ։

Գ. Նւ վասն զի եղի գըրել նպաստակ համ-գէպ երևանց տեսութե մտացս՝ անձն իմ ան-պիտան, փնտռք ձգելոց արձանաց բանից՝ իբր զանընդել գաղան փայլենի՝ անողորմաբար ըդ-քել քարկոծել։ Ով թէպէտ և ո՛չ պատահիմ անուանել արդար, սակայն յառաջնումն պա-տասխանւոյն՝ իբր ընդ ոսոխի ումեմն՝ ընդ ան-ձին յօժարամիտ կամօք ոգորիմ, ըստ իմաստ-ութեանն ՚բանի. և զայսպս մնաց խորհրդոց զաղանեաց՝ իբր զգլխաւորեալ յանդգնութե չարութե գործոց խոստովանեալ, քեզ մատու-ծեցից՝ ամ իմ և տէր։ Ո՜վ որում չափով չա-փեցից զանձինս սոդոմաց, 'ի քոյդ անուանեալ գթութեանց՝ այսօրէն չափեսցես. ընկալեալ զշ-նորհս յանձնառութեան՝ ընդ մեծագունիցդ պարտ-եաց։ Նւ որքան վերայն հարուածք՝ անբժշ-կականք և անհնարաւորք ճարակեսցին, այնքան-կօք չափովք կրկին առ ամին՝ և իմաստք արուես-տից բարձրեալ բժշկիդ՝ բարեհոգակեալ լու-սաւորեսցին. և 'ի պարտուցն առաւելութեան, նոյնքան փոխատուիդ առատութեի բարե-բանեալ միշտ պանծեսցի, ըստ խնկաւորդ քում տանն։ Ո՜վ քո՛ է փրկութի. և 'ի քէն է քաւ-

ութիւն . և աջով քո՝ նորոգութիւն . և մատամբ քո՝ զօրեղութիւն . և 'ի հրամանաց քոց՝ արդարութի . և յողորմութենէ քոց՝ ազատութի . և յերեսաց քոց՝ լուսաւորութի . և 'ի դիմաց քոց՝ զուարթութի . և հոգւովդ քո՝ բարութի . և օծմամբ իւղոյ քոյ՝ սփոփութի . և ցօղով շնորհի քոյ՝ զուարթութի . և դու տաս մխիթարութի , և մնացուցանես զհաստութի . և բառնաս զխաւար փշաց , և զհեծութի ողբոց՝ 'ի ծաղր փոխես : Եւ քեզ վայելէ օրհնութի գովութի հանդերձ՝ յերկինս , և յազգս հայրն՝ և 'ի ծնունդս նոցա և յաւիտենից յաւիտեանս . ամէն

---

Մեծարոյն յաւելուած կցեալ հեթանոսական՝ նորին
հոլովք , առ նոյն ազգերս մաղթանաց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

## ԲԱՆ · Գ

Գ. Եւ արդ՝ քանզի միապէս մատնեալ կորստեան՝ և զգջումն ուժգնապէս , և մեղանչելն մեղնաբար . զի թէև օտարացեալ իցեն 'ի միմեանց պայմանօք նմանութեցն , սակայն ընկերպարանս երկաքանչիւրոցն առ միմեանս եղեալ , զմի և զնոյն վճռատութե ծնունդս արտադրին : Ոչ մին զհզօրին ձեռն՝ իբր ամփոփ թերահաւատ . իսկ միւսն՝ ըստ նմանութե քառասնից պանծալեաց՝ յանդգնայս եղ-

եալ, զլուսոյն առաւօտն խոյէ. վասն որոյ ընդ առաջնումն միշտ փաղաքշեալ՝ համապազ խըն-դայ ատամանոյ. իսկ երկրորդաւն՝ ըստ նմանու-թեան լափլիզօղ դժոխորովայն գազանի, իբր կե-րակրով արեամբ պարարի:

Ի. Եւ արդ՝ իբր զլանեալ բազմահարուած-եան հեծանաւ, և յաւին մահու ժամանեալ՝ զուգն ինչ դարձումն շնչոյ ընկալեալ, և յոգի կենդանի եկեալ, կազդուրեցայց՝ պատսպարեցայց՝ կանգ-նեցայց՝ յարեայց յանկենդանականս կերպանէն, օժանդակեալ քո ձեռամբն՝ որ գթածն է յամի. 'ի բարերար յերկնաւոր հօրէն՝ փրկութե և բըժ-շկութե պտուղ ընձեռեալ ինձ մեղուցելոյս՝ ախ-տացելոյս՝ և մահացելոյս: Եւ սկզբնաւոր ող-բերգութե այսր աղերսանաց՝ զհաւատոյն չըն-ուած կառուցից. քանզի և ամն 'ի նախնեացն՝ աւքիմբք զննեալ, փոխեցաւ խոկոյն յանմահա-կանն վիճակ վերին. զապաշխարութենն գեղ ըն-կալեալ, ապաշաւանաց թոշակաւն՝ զերաւա-կանն անեղծութե աստէն ժառանգեաց: Դ մեր քան՝ զորոց առաքեալ ընդ նմին ցուցանէ, որք զհանդէսն միջնակին յերկրի կատարեալ, ա-պագայիցն և երկնաւորացն յուսոյ հաւատացին, և անտեսիցն ձոխութե փարթամացան: Իսկ ըղ-խոխոյս տէրունի պաշտեկի բանին՝ յիշեալ առ-ամին, զի ում ինչ հնարաւոր է այնմ որ հաւա-տայն: Ոչ զի՛ և զհաւին ընտրականացն բարե-

մանութեն այս հաճելեացն՝ ընթեալ առաւօտ ,
զայս պատկեր բանի ընկալաք նախնի գահերէց ,
առ 'ի սրբութեանն մօտ ամէնք հանդերձել .
առանց որոյ և ոչ տէրն փառաց՝ գլուխն առ մեզ
հրաշագործեաց զօրութիւս , եթէ ոչ նախ՝ ըն-
ծակից խնդրեաց բարերարութեան իւրոյ զհաւ-
տան մեր . ուստի և կեանս ընծեալ զօրէ ըն-
քրիստոնեան բաւականութիւ՝ առընթեր գոլով
այս . քանզի հաւատք քո կեցուցին զքեզ՝ օրհ-
նաբանեալն այս բերան վկայեաց : Քանզի ար-
դարև սեռն տեսութի , և կատարեալ խնամո-
ւթիւն , և առ ած ընտանութի , և բարձրե-
լոյն ծանօթութի հաւատոց մասն՝ երջանիկ և
ընտրեալ անուն , որ յարաձգեալ մնայ անխը-
թար և անփակելի , պատուակից գոլով սիրոյ և
յուսոյ : Օհ եթէ փոքու սերմանի գոյր՝ հա-
ւոյ մանանխոյ չափոյ նուաստի հաւատք՝ զեր-
անց մեծութի փոխէ զօրեղագոյս 'ի սիրտս ծովու ,
ապա յերուէ ընկալաք զայն ակընաշաւիղ առ-
աջնորդ կենաց՝ աներկմիտ պաշտօն առ ած . որ
զապառնին և զծածկեալն՝ առանց երկբայու-
ի հոգւոյն այս տեսանէ , երրորդութեն փառատրե
ի անուանն պատուեալս հաւատք՝ ընդ սիրոյն
դասեալ և յուսոյ : Օհ թէ՝ և զերկին հաստա-
ծրս առանձնաւորականս՝ 'ի մի և 'ի նոյն խորհուրդ
զխաւուցես , յաւէտ մեծացիս նորօք 'ի յած .
քանզի՝ թէ հաւատաս 'ի նա , և սիրես . որով
և յուսաս աներեւութից պարգևաց նորին : Նմա
փառք յաւիտեանս . ամէն :

Սէրտին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին
հոլովէ , առ նոյն աղէրս մաղթանաց բանի ։
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ԳԼԽ · ԺԸ

Ա. Եւ արդ՝ ես յետինս դաւանողաց՝ ունայն ՚ի բարեաց , նայեցեալ խորհրդով մտացս ՚ի սկզբնաւորն իմ եղելութիւն՝ ՚ի ձեռն ձեռին ստացողին իմոյ յանէից , յուսով հաւատամ յի քի՝ տանել զոր կամի ։ Քանզի հաւատացի , վասն որոյ և խօսեցայ խրատեալ պօղոսիւ , ուսեալ ՚ի դաւթայ , թէ և սիրտ կենդանի մաղթանք նոցա՝ այց լինձ արարչէ . որպէս հաւատովք ճանաչել զնա , և զզօրութի յարութե նորա , ըստ առաքելոյ , և զհաղորդութի չարչարանաց նորա , և որ զկնի բերին առաջեալքն ։ Այժմ է ամէն և յոյժ նմանատիպ՝ հաւատալն խոկալես և ՚ի նորոգս այս փոխադրութի , որ ՚ի մեղացն ՚ի քաւութի , և ՚ի չարագործութէ յարդարութիւն , և յանմաքրութէ ՚ի սրբութի , և յանքաւելեացս պարտեաց մահու յանցանաց՝ յանդատապարտ երանութիւն , և ՚ի ծառայական կապանաց՝ յերկնաւորն ազատութի ։ Քանզի զիա՞րդ ո՞չ արդեօք չքնաղ քան զլամ՝ և ՚ի մթութէ երկեանութե խաւարի զանեալ՝ և սատուծով օժանդակեալ և օգնեալ սիրտ մեղաւորի , որ ընդ մար-

Մանապէս ծիծաղելի՝ առ նմին հեծէ հողեալէս ։
Որ թէպէտ և յամբարձմանէ բարձրութե գերա-
գունիցն կայից , ստորատուղեալ ծանրութի յան-
դնդային վհին խորխորատ գբոյն կործանման ,
նորադիւտ մեղօք անջրպետօք , ունի և նշխար նը-
շուլից՝ փրկութե կենաց հրաւոր , իբր կայծակն
լուսոյ պահեցեալ 'ի միոս և յողի . որպէս ըդ-
հուլն նշանաւոր և զարմանաւոր թանձրամած՝
հրաշիւք մնացեալ վեհին հրամանի՝ 'ի յա-
տակս նեղքինս նկրհեալ ջըհորոյն ։ Ուստի և
մեղուցելոյն խաղա թախծելոյ , և անկելուի
բարւոյն բարձելոյ , և համարձակութի շնորհին
լերելոյ , յուսալ վերստին անդրէն միանգամ
նախապարգևելոյն փառաւորութեց դարձեալ
հասանել . քանզի և յիծուստ անդուստ հան-
գերձի և այս՝ ներգործիլ առ սոյնս . փանզի
ամ զառաղին զօրութի՝ ամենահնար ունա-
րանէ ։ Յոր խունկ համեղութե մեծապէս հո-
տոտի ած , քան յամբարումն անուշից , և քան
'ի խառնեալն երբեմն աղացմանց՝ 'ի սպաս խո-
րանին , որ է կնդրարան անձանց խոնարհից զեղ-
եալ ընկութի՝ առ 'ի միութին նոյն նմանութե ։
Ըստ որում հարցեալ փրկչին ամենից՝ ցանկա
ախտալցեալս սեռմնելեօք , հաստատոյք աներկ՝
առ այդ , թէ կարօղ եմ առնել ձեզ զայդ . ոչ
պարգևեաց աչաց նոցա լոյս , եթէ ոչ նախ ըդ-
հաւատոյն դրան ընկալաւ ։ Քանզի զինչ քան

զմեռելոյն քառօրեայն զնոյ՝ առ կենդանութի
մեզ անյուսացոյն, առ որ կանանցն ժամանելոյ
'ի յոյս արարչին՝ հաւատոյն հանդերձանօք, ան-
յապաղաբար զփառացն այն տեսին զհանդէս
'ի յերկրորդն կենդանութի:

Ի. Իսկ աստուածն անկարօտ շնորհէին մնա-
ցելոյ զնի մեղանացն՝ հզօրագոյն՛ են վկայք:
Կախ՝ ենովք. զնի աշխարհ. յետ Նոյա դա-
ւիթ · դարձեալ և պետրոս. ընդ որս և փոքրն
եղեւապար, որ 'ի մեծէն այն ողորմեալ՝ մեծա-
գոյնիցն վկայեցաւ: Եւ երկրորդ է առ այս և բանն
առակի անառակ որդւոյն. Թողում զպոռնիկն՝
որ 'ի տաճարն դովեցաւ. և մաքսաւորն՝ որ 'ի-
բարերարէն յիշատակեցաւ. և զաւազակն եր-
ջանիկ՝ որ յարձակումն վերջին շնչոյն՝ հաւա-
տովքն պլատկեցաւ. և զոր անքաւելին են պար-
տիք՝ զհաղորդեալքն սպանմանն մահու արարչին.
առ որս և զգլխաւորն ընտրելոց պօղոս՝ որ երբե-
մըն նախանձին էր անօրինաց: Յորոց ամենք ծա-
նօթութիւ օրինին գրեալք, անդրէն կանգնե-
ցան բիւրապատկեան գերապանցութի՝ քան ըն-
նախակրօնիցն առաւելութի: Իսկ որ նախ քան
զօրինակին տուչութի՝ զաւանդն պահեալ հայ-
րենի, մերձաւորագոյն գոլ պատուիրանի սկզբ-
նահօրն զաւանութե, որ և զնախնւոյն պարտս
քնքեան փարկուցեալ, զնորայն՝ խրովքն տու-
ժեաց կրից սաժանման. ոչ քաւեցաւ միայն

ծածկեալ 'ի յերկրի, այլ չարչարելեան մարմ-
նոյ բանականաց բնուն կենաց կարապետ՝ յաղ-
թող զօրացէս բռնութեն մահու փոխեցաւ :
Իսկ ոմանք 'ի բուսոց տհաս հասակին չորուին
յերկրաձգեալ, 'ի կատարեալ տիս ժամանակին՝
ոչ 'ի բարձրութեն կայից հոսեցան, քան թէ 'ի-
ստորնականաց թշուառութեց դժնէից կենացս՝
'ի կամայն երկնից համբարձան : Նա թէ այն ժա-
մանեաց կանխաւ՝ զօրացեալ 'ի չարեացն դարձ,
որ մինչեւ յախեղէն նիւթ յեղանակեալ հողոյս
գոյութե, եւ պատկերն արքունի՝ 'ի պատիւ կեր-
պիս մերոյ՝ նկարեալ արքունական քանդակ-
ուածով, անկորուստ եւ անփոփոխելի եւ յաղթող
պատճանութե զմերս ենթարկեալ բնութիւն,
արա առաւել յուսալի է այժմ մերկապարանց
լուսաւորութի անքօղ եւ անվերարկու՝ տեսանի
քիւ ուխտեալ. որով եւ միշտ հաստատեալ պա-
հի 'ի մեզ բանն տէրունի, ըստ մարգարէին ձայ-
նի, ուխտ խաղաղութե եւ կենք հաստատութե՝
առ հաշտարարն միջնորդ՝ երկնային անմահ կեն-
դանի եւ մշանջենաւոր բարեխօս : Ապա ուրեմն ըստ
այսու կանոնի ճշմարտագունի, եւ անփոփոխելի
սահմանի, եւ արարչական պայմանի, համբուրեմ
հաւատոց շրթամբք զպատկեր բանիս, եւ անու-
նիմ փառացն շնորհի. քանզի արդարեւ յարդար-
ապացուցանելն զմեզ ոչ՝ ոչ որ զօրէ, պատապարտ
անել, ըստ առաքելական բանին սահմանի :

Գ. ՐԺԼ յայս անստուերագին փառահունն ապ-
աստան, կամ կործանեալս՝ կանգուն. Թշուառաց-
եալս՝ յաղթօղ. փրկեալս՝ 'ի դարձն կենդանա-
կան. ամենաթշուառ չարագործս՝ 'ի յոյն մահու
մատնեցեալս՝ 'ի կեանսն. ընդ ապականութք փա-
ծանեալս՝ 'ի ձիրս. դժոխայինն գործովք գրաւեալս՝
'ի լոյսն. ստորնասէր անսահմանելեացս՝ յերկինս.
երկրին դայթակղեալս՝ 'ի վերաւին փրկութին. մեղօք
կապեցեալս՝ 'ի հանդստեանն խոստումն. անբժշ-
կական վէրօք վարանեալս՝ 'ի դեղն անմահացու-
ցիչ. սատամնակեալս վայրագութ՝ 'ի սանձն հան-
դարտութ. սրացեալս վարատականն՝ 'ի կոչումն.
ապառուժ դժնդակս՝ 'ի հեզութին. ընդդիմարան
լուացօղս՝ 'ի ներումն: Քո յս, և 'ի հայր նո-
րին հզօր և աչաւոր, յանուն և 'ի կամս բարե-
րարուն հօրոյն ճշմարտի. օրհնաբանեալ խոսու-
թեն՝ և մի անձնեն՝ զօրուի և ալքայուի, մեծ-
ութին և փառք՝ յաւիտեանս. ամէն:

---

Մերձեցին յաւելուած կեցին հեծարբեան՝ նոյն
հոխոյէ. առ նոյն ազէրս մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

## ԲԱՆ. ԺԲ

Ա. Եւ որդ՝ քանզի յաւէտ յառաջնում զօրջ-
մանն՝ յաւահատութեն բանիւ լեայ, և տարա-
կուսանաց հեծանուն՝ 'ի մահ ձաղկեցայ, առ-
ատնօր 'ի յաւայն կերպարան փոխեալ՝ յարդա-

հատեալ համարձակեցայց , զեղլորդութի՛ն սուրբ կարգաւոլ յօժնականութի ինձ մեղաւորիս : Որ և անգամին իսկ յորհնարանելն և'ի դաւանելն զկենդանարարն բնաւից ած , խոկոյն և կոչումն ընտանի ձայնի ահաւորութե անուան շնորհաձիրն բարերարի , մահացեալս է կենդանութիւն , ըստ մարգարէին Նախաձառուե , թէ որ կարգայ զանուն տեառն , նա կեցցէ : Իսկ ես ոչ միայն կարգամ , այլ նաև հաւատամ մեծութե նորին . ոչ եթէ վասն պարգևաց նորա մնացեալ յողջ գեղերիմ , այլ իբր զկենդանութի իսկապէս , և զչնչոյ տուրեաութիւն հաւատի , առանց որոյ ոչ է շարժողութիւն կամ ընթացութի . զի ոչ այնքան յուսոյն հանգուցիւ , որքան սիրոյն կապանօք բերիմ : Ոչ 'ի տուրսն , այլ 'ի տուօղն յաւէտ կարօտիմ . ոչ փառքն են ինձ անձկալի , այլ փառաւորեալն է համբուրելի . ոչ կենացն փափագանօք , այլ կենարարին յիշատակաւն միշտ ձնձնիրիմ . ոչ փայելչն տարփանօք հեծեմ , այլ հանդերձողին անճշանօք՝ յերկիմանց տառի կախանիմ . ոչ բըհանդիստն խնդրեմ , այլ զհանգուցչին զերեսս աղաչեմ . ոչ հարսնարանին խնձոյից , այլ փեսային անձկութբ մաշիմ : 'Ի ձեռն որոյ զօրուե՝ վստահապէս ակնկալութբ՝ վերապրեցեալ յանցանօք բեռանց՝ անեղծելի յաւով հաւատամ 'ի կարողին ձեռն ապաստանեալ , ոչ քաւութե

միայն հասանել, այլ զնոյն ինքն տեսանել՝ յորդ
մաւի և 'ի գթութի և յերկնից ժառանգութի. թէ
պէտ և յոյժ եմ տարագրելի։

Բ. Եւ արդ՝ բազում պատկառանօք ամաչե-
ցելոց դիմաց կորացեալ, զմիջնորդ ազդման կա-
փուցմանց երկակի շրթանցս՝ արժանափակ աղ-
խիւ կարկելոց՝ առ անհամարձակ լեզուիս շար-
ժութիւն, նորոգեցից 'ի յերդ հառաչման պա-
ղատանաց յեղանակութեանս աղիողորմ հեծե-
ծանաց՝ 'ի բարձունս աղաղակելոյ։

Սաղմանք զօրաւորք՝ արհաւորաց գեղջկոյնոյ։

Գ. Ընկալ քաղցրութիւ՝ տէր ած հզօր, ըզ-
դառնացեալս զաղաչանս. մատիր գթութեամբ՝
առ պատկառեալս դիմօք. փարատեա՛ ամենա-
պարտդ, զամօթալից տխրութիւնս.
բարձ յինէն՝ ողորմած, զանբերելի ծանրութիւ.
անջրպետեա՛ հնարաւոր, զմահացու կրթութիւ.
սաստեա՛ միշտ յաղթօղ, զխաբողին հաճութիւ.
բացայայտեա՛ վերնային, զմոլեկոյն մառախուղ.
կնքեա՛ կենացուցիչ, զկորուսչին ընթացմունս.
ցրուեա՛ ծածկատես, զմիտնողին չար դաւմունս.
խորտակեա՛ անքննելի, զմարտողին դիմեցմունս.
Տնկեա՛ քո անուամբդ՝ զուարթացոյց երդ յերկի-
պարփակեա՛ քո ձեռամբդ՝ զառաստաղ տաճարիս.
գծագրեա՛ քո արեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս.
կերպարո՛ զքո նշանդ՝ 'ի հետս ելից մաղթողիս.

ամրացո՛ քո աջովդ՝ զհանգստեանս խշտի ·
մաքրեսցես 'ի հաղբից՝ զծածկարան անկողնոյս ·
պահեսցես քո կամօքդ՝ զտառապեալ անձն ոգւոյս ·
անխարդախ արասցես՝ զքո շնորհեալ շունչ մարմնոյս ·
կացուսցես շրջափակ՝ զպար զօրուդ երկնայնոյ ·
կարգեսցես 'ի գլխի՝ ընդդեմ դիւացն դասու :
Տո՛ւր հանգիստ բերկրութե մահահանգոյնս
նիրհման 'ի խորութե գիշերիս , բարեխօսութբ
հայցուածոց սրբոյ ածածնիդ՝ և ամենայն ընտ-
րելոց : Ամփոփեալ պարուրեա զպատուհան ան-
սութեանց՝ զզայարանացս իմաստից՝ անդարհու-
րել զեանգմամբ՝ 'ի ծփական խռովութեանց ,
կենցաղական զբաղմանց . անրջական երազոց ,
խօլականաց ցնորից , քշտատակաւ քո յուսոյդ՝
անմխտելի պաշտպանեալ : Իւ սթափեալ վե-
րստին 'ի ննջմանէ ծանրութե՝ ամենադպատ
արթնութբ , հոգենորոգ զուարթութբ 'ի քեզ
արձանացեալ , զայս ձայն մաղթանաց՝ բուր-
մամբ հաւատոյ՝ քեզ ամենօրհնեալ Թագաւոր
փառաց անճառից , փառաբանողաց երկնադու-
մին խմբից երգակցեալ՝ յերկինս չառաքել : Զի
դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւ-
իտեանս յաւիտենից . ամէն :

Մէրոպին յաւելուած կրկին հեծծաբեան՝ նոյին
հոլովէ, առ նոյն ալէյս մաղթանաց բանէ:
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

## ԲԱՆ · ԺԳ

Ա · Աստուած բարերար, հզօր, ահաւոր, հայր
բղխ բարի՝ ողորմութեան շնորհի, որոյ անունդ
իսկ մեծիդ՝ գթութի և զինաստութի աւետա-
րանէ, քաղցր գժնէից և անդրոհացողաց: Ընդ
քեզ և որդւոյդ քո՝ երրեակ դքեզ, զօրաւոր ձեռն՝
երրեակ դքոյդ, անժամանակ տէրութի ահեղ՝ ընդ
արարչութեան քում բարձրացեալ: Եւ հոգիդ
այն ճշմարտութեան՝ բղխեալ առ՝ի քէն անսպա-
ռութեամբ, կատարեալ խակութի գոյի, էութի
մշտնջենաւոր, հաւասար քո ամէն, փառակից
որդւոյ քոյ տէրութեամբ: Երրեակ անձնա-
որութի՝ համայն անքննին, տարաշեալ՝ի դիմաց՝
ուրոյն զատուցմամբ. իսկ միաւորեալ համա-
զուգութի՝ նոյնագոյ բնութեամբ անբաժէ՝
անշփոթ և անանջրպետ՝ միով կամօք և կար-
գութեամբ. ոչ երկցութեան ամենն՝ի յամենն,
և ոչ քթթել միակն առ նուազութի միոյն ժա-
մանեալ, քան թէ պատճառ սիրոյ երկնային
անստուեր լուսոյ՝ որ առ մերն է ծանօթութի,
միով պատկառ որբառայութի անախղմարար ած-
արանեալ: Քանզի արդարև փերանձնեալ այս

խոստովանութի՛ երկքփառատրեանդ դաւանութե՛,
զվէմն հաւատոյ պետրոս երանեաց. իսկ զդատա-
պարտեալոյս անձն մեզօք՝ բարեհրաման քո ակըն-
արկուե, ո՛վ խնդրողդ գեղելոյս՝ հրաշանորոգ ար
դարացուցէ: Բանզի թէպէտ և քո՛ լցեն պար
գեւք՝ և քո՛ ողորմութիւք, այլ ոչ՝ի պարգևեան ես
այնքան հաշակել, որքան յողորմութեն. զի երկ-
բորդն՝ զքոյդ յաձախէ զփառս, իսկ առաջինն՝ ըղ-
ձնաւորացն յայտնէ զգործս. զի պարգևք՝ վաս
տակոցն են փոխատրութիւնք, իսկ ողորմութիւք՝
մեղուցելոյս բարերարութիւնք:

Ժ. Եւ արդ՝ մի զօրասցին մարդկայինս գործք
առաջի քոյոյդ շնորհեաց՝ ած գթուեց թէ և անդր
իսկ լցեն քան զօրէնս համարակաց՝ բնութականս
հատանց. այլ յաղթօղ եղեալ քոյդ երկայնմտ-
ութե, նուաղեցի առ քումդ մասին ընթացք երկ
րաձնայ: Բանզի և որ մարքուէն պերձանայն
օրինականացն վստահութիւնք, ՚ի լուսաւորել
քոյդ արդարութ դուշակ ներկայիս, ամենանուաղ
անձկութի լըեալ հրէութին՝ յեանեալ, և յաւէտ
ընդ տարադրական ողորմելոցն, առաւել նոքա
զատն կարօտեալ մարդասիրութ: Ըստ քանզի ամ
ենչ հնարաւոր է քեզ՝ բարերար, լե՛ր պղջանակաց
զօրման հեծութե՝ որ կարդամս առ քեզ. ողոր-
մեա, կեցո՛, և մարդասիրեա: Օրհ քո է երկայն-
մտութի, քաղցրութի, փրկութի, քաւութի, և փառք
յաւիտենիցունց՝ յաւիտեանց ազգաց. ամէն:

Սէրտին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին
հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի։
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

## ԲԱՆ · ԺԳ

Ա. Պաղատիմ առ քեզ լուսոյ ճառագայթ՝ արքայ երկնաւոր՝ գովեալ անպատում, որդի անճառ մեծիդ այ. խոնարհեցո զունկն քո՝ բարձրեալ բարերարութ՝ կենաց ապաւէն, նորոգ մերձեցեալ կրկին տատանօք ՚ի հառաչումն նուաղ ձայնի վիրաւորելոյս։

Բ. Ոչ ցուցեալ է երբէք, եթէ աղաչեաց ըզքեզ ՚ի ձեռն աւազակացն արդ խողխողեալն, քանզի կարկամեալ էր. ոչ ձայն պաղատանաց գլխոյ արձակեաց, քանզի անկարօղ էր. ոչ մատամբքն տատանելոց՝ զաղէտ վտանգին յայտնեաց տեսողին, քանզի խորտակեալ էր. ոչ աչաց կողկողագինս արտասուօք ողբոց՝ բարեխօսիւ յանդիման կացոյց, քանզի վհատապարտ էր. ոչ ՚ի պատգամ բանից միջնորդի՝ զողորմածիդ կամս հաճեցոյց, զի անայցելու էր. ոչ հայթայթմամբ խորտակեալ մարմնոյն արիւներանգ ներկուածով ձորձոց՝ զգթածիդ զսիրտ ճմլեցոյց, վասն զի անյոյս էր. նա և ոչ ծննդովքն հաստատութ՝ իբր դարշապարաւ ոտին փարեցաւ, այն զի անյարիր էր. քանզի կիսամեռն առել կեն-

զանոյն՝ սակաւ ինչ նուազ է 'ի մեռելութենէ : Մանաւանդ զի 'ի քոյոց խրատեալ բանից , և բարերարեալ քոյդ ողորմուք , և փառօք քո լուսաւորեալ , ոչ միայն զի ոչ վերջացայ 'ի հակառակն քո ընթացից , այլ ստահակեալ ապստամբութի՝ յիւր թշնամեացն թիւ յաւելու . ընդ նոսին դաշնաւորեցայ , միաբանեաց ատել-

եացն քոյ :

Գ. Իսկ դու՝ բազմագթութ , բարերար , անոխակալ , ամենակեցոյց , ոչ միայն զի ոչ պահեցեր զյարադործին մեղաց յիշատակ , այլ և ոչ բանիւ յանդիմանեցեր . ոչ ետն հարեր անկեալն , այլ կարեկցաբար մատուցեալ՝ զծայրագոյն ցուցեր զինամս : Ո՛չ քահանայապէս ընդ աչօք-ոննան ահար սրէնէն՝ [illegible] տօն՝ զատապարտին անիծիւք և բանալէր քարանցն ձգմամբ՝ 'ի խոտանեալսն խոցեալն արատեալ մատեար . և ոչ որպէս ղևտականն կարապետայքն անկատարադործ՝ 'ի յերկուցն միջի բաժանեալ խորոց՝ հնոյն լուծին՝ և նորոյս սկզբան , ունայն 'ի հոգւոյ յաղաշխարհին հանդիպեցեր՝ զվիրաւորելոյն տեսեր զվտանգ , զի մի սատակիցն օրինակութեամբ տապարան արմատակորու՝ զմահուն պաշտօն 'ի քեզ նկատեալ , յառաջ քան զփորձ առակայիցն ստատկեցի . այլ հեթանոսացն պահպան անուն սամարացւոցն-եցյն , որք 'ի հրէիցն ընկալեալ զօրէնս՝ ամբողջ

պաշտեցին, զոր նոքա մոռացան, նոցին կցորդեալ մարմնոյդ վերարկուաւ՝ մերակերպարան խոնարհութեամբ, զաղատաւորն գծագրեցեր զաւետիս՝ առ օտարազգիսն. և ամծարարդ ներգործութեամբ անապականաւ՝ ձեռն կարկառեալ, յարուցեր զմարդն նախնի՝ մեղուցեալ 'ի մահ խորովքն ծննդոցն: Զարամեցելոյն սիրտ բերկրեցուցեր, և զվհատեալն հաստատեցեր, և ընթշուառացեալն մարդկան՝ կրկին զուարթացուցեր: Ջաղանիքն կենարար օծմամբն և բաժակաւն լուսոյ լցեր. հալիւդ երկնային արարչականդ քոյին մարմնով նոր յեզանակեցեր: Վերակացութեամբ երջանկացն ազգաց ընտրելոց՝ յանձանձեցեր, դրդեցեր, և խնամարկեցեր: [illegible] ծառայութեամբ՝ անզգուելի պահեցեր, մինչև յարկն լուսոյ ածեր: Ի ձեռն երկաքանչիւրոց միջնորդաց՝ նախնեաց և երկրորդաց՝ տուչութեն կտակաց կենդանականաց, մարդասիրապէս զարմանաւորեցեր: Նորոգես երբեմն ընդ մեղուեալ՝ թես տարածեալ արծուոյն օրինակաւ՝ ընկալար զնա, և 'ի համդիսան հանդարտութեն՝ երկրին բարութեն առաջնորդեցեր. և զրանիքն կերակուր՝ ջամբել հրբամանաւորեցեր վարդապետուեց:

Դ. Այլ արդ՝ որ զնուան ծայրագունին բարութեն լուսոյ՝ յամի բախտագիտապէս հրաշարար ծեցեր, զոգտողին զգանձ քեզ սեպհականեալ՝

դրօ սուրբութեան առ քեզ դարձուցեր, կեցօ և զիս մաքրեալ 'ի մեղաց պարտեաց, որ ձրի պարգևես և անպատրաստից. ընդ որոց և ինձ սացես քաւութիւն և բժշկութիւն՝ բարեգութ, զօրեղ, անքննելի, անեղծ, ահաւոր, օրհնեալ միշտ յաւիտենից յաւիտեանս. ամէն:

---

Աղօթքն յաւելուած կցկէն հետեւողեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

## ԲԱՆ. ԺԵ

Ա. Իսկ դարձեալ սաստուստ վերստին առ նոյն հեծութիւն սրտիս վառանկի ինձէն մատուցեալ, սովին նուագաւ 'ի նոյն ոճ բանի՝ զամենապարգեւդ արգահատեցից, տագնապեալ ոգւոյս վըտանգիւ խայտառ. իբր մեռեալ՝ կենդանւոյ անմահիդ մաղթեմ Այ. խոստովանեալ ընդ փառացդ քո՝ զիմս անարգութիւն, և առ չարեօք իմովք՝ զքոյդ բարութիւն. որովք յաղթեալ դատայ՝ քան թէ բժշկեալ, և ամաչեցեալ՝ քան թէ համարձակեալ, ուխտաւորոյս աւանդամառաց:

Բ. Իսկ կրկին առաւելն որ առ իս՝ որ ոչխարին սրուսն տարածուցիչ, որ յետին անզգայութեն եր մատնեցեալ՝ մոլորեալ, և 'ի լերինն՝ ուր ոչ

է այցելութի , ընդ գաղանականացն գնալ՝ և կարգն վայրենութե թափառել , ոչ մերձաւոր դոլ սակաւ մի հօտին . ոչ բան ունէի , որով և զցաւոյն աղէտ պատմէի . ոչ ձեռն ձգողական , որ համերցն է ազդողական : Իսկ դու միայն զովեալդ յսկզբանցն յաւիտենից՝ և յարգի ծընեալս , գտեալ ըստ մաղթանաց դուշման երգոյն զիս զմեղուցեալս՝ յանմշոյն մոլորութե , խնամոզորէն անուշութե կամաց՝ հովիւ կոչեցար . և ոչ միայն հոգացար , այլև խնդրեցեր . և ոչ գտեր միայն՝ հրաշագործ , այլ անճառելով բարերարուէ սիրոյ՝ 'ի կենդանարարդ քո յուր բաձեր , և ընդ երկնային զօրուն դասեցեր՝ 'ի հայրենիդ քո ժառանգութիւն : Նա արդ՝ դու հըգոր՝ կենարար՝ օրհնեալ՝ այցելու գթածդ յոգոյմնութե , եթէ զնոսա ընկալար զապարանեալն աղերսանաց , որ մինն՝ 'ի միջոց մահուսահմանի էր չարչարեցեալ , իսկ միւսն՝ ըստ անբանիցն անզգայութե՝ փտարանդի բացամերժութեամբ յանբնական վայրի վարանեալ , 'իրաւաչ ձայնի բարբառոյ , որ անկերպաւոր աններշնչական , ածային բարեխնամութեամբդ որն անսեցեր զախեզերահրաշն խնամողութիւն՝ առ կորուսելոյն մեծ թշուառութե , յայսմեաց մեղաւորին և արդ զթութեցդ խոյք և բարերարութեցդ հասանք՝ առ անօրինեալս սաստկութեամբ՝ վերադրելոցդ օրինակութե : Ո՛չ բաղմ-

օրինակ մահու պատուհասս առ որ 'ի բարութեանց խառնից քաղցրութեանց՝ յատուկ համն չար. առ անդամս մարմնոյ՝ արժանաւորս հատումամն. առ համաճարակ ամենաբոլոր ախտացել հոգիս վիրաւոր. առ հաստատեալս անզգայութեանց ախտանց. առ օտարացեալս յընտանութէ խնամոց. առ ամենայնս հանդունակից բանաւորութեանց: Որ եթէ տարացոյց գոյր, եւ առէր. թէ նմանակից գոյր խմ, պատմէր. թէ հանդունակից գոյր, եւ ճառէր. թէ հաւատաց գոյր, եւ գրէր. թէ զուգադրած գոյր, ցուցանէր. թէ օրինակ գոյր, եւ աղչէր. թէ յանցեալն, հայթայթէր. թէ 'ի ներկայումս աստ, եւ յուսայր: Բայց քանզի անցեալ է բառ օրինակ, եւ հրաժարեալ բառ նմանութի, զոր միայն քո է քաւել բժշկել եւ կենդագործել՝ կենդանարար համայն մեռելոց՝ նորոգութիւն ոխեղելոց:

Կ. Ո՜վ եթէ սորոյն սրտի տեսութի՝ երջանկին դաւթայ, անօրէնութիւն չարեաց բարձրացեալ առի քան զգլուխ, եւ բառ ծանրութեանց բեռանց դժուարակրելոց՝ յանցմունք մեղաց. խակ որ առ իս կրկին սխալմունք՝ գերազանցէ քան զհեղեղին ջրակուտակ տիեզերածաւալ ամենատարած ծովուն յորդութիւն, եւ զգլխոց լերանց վերադիրէ: Այլ շնչեսցէ օդ քո քաղցրութեան իբր առ նոյին, եւ որ զեփիւռս հալէ

զօրութի՜ւ , ցամաքեցուցանել զհեղեղս ջրակոյտս բազմակոհակս՝ և երկրակործան խմոյս պատենաց , և լեռնակարկառ բարձրուն մեղաց ամբարձելոց : Դու համառօտեալ զբան քո հզօր՝ ամենակալ հնարաւորութե՜ , հակիրճ հատուցմամբ , արտաքսես ահա ելս քաւութե , ըստ մարգարէին , առ երկարաձիգս անօրէնութեան . և ներելով իմն յամառութե , ո՞վ երկայնամիտ ողորմած՝ օրհնեալ՝ թողցես միանգամայն , բարեգործեցես իսկապէս , հատցես բոլորովին զանվճարելի պարտուցս զարժանահատոյց տոկոսացս այժմ տարժանակիրս : Դա զի՝ և չէք լոկ առ քեզ ցասումն սրտի , և կամ բորբոքումն բարկութե , որպէս ոչ կրին նենգութեք , և կամ նշմարանք մթութեան . քանզի կեանք են ՚ի կամաց քոց՝ և լոյս . և ոչ արարեր զմահ , և ոչ խնդաս ընդ կորուստ մարդոյ ըստ գութի և

աղօմնի :

Դ . Եթէ մարդկան կարգեցեր զայս կէտ սահմանի մեծի պայմանի՝ ՚ի բարեվճարակդ քո կանոնաց՝ ոչ փոխադրել անդրէն չարի չար , եօթանասնիցս եօթն թողուլ անդուստ ՚ի յառաջ զնեքաքանչիւր մեղանաց զպարտս . և այդ բան առմեղ , որ միշտ ՚ի բնութեան ունիմք բնաւորաբար ուղերձեալ զբիծս չարեաց՝ անհամար ըրուց նորոգ յայտնելոց , որք օրինաւորին երեխ յանդատան սահմանի՝ ամենաբոյս փշածին ըն-

նութեանս , ըստ անսուտ քո վկայուն , որ թէ՝ միոք մարդոյ 'ի խնամս չարի են արձանացեալ 'ի մանկութենէ : Զի որ զկատարեալ մաքրութիւն ունէր՝ աւետարանիչն կենացդ բանի՝ յովհաննէս , և զենքն ընդ հասարակաց բնութեան ծակցեալ , հաստատեալ զճշմարտութի քո՝ առ իմ սուտութիւն յոյժ արդարացեալ . թէ ասեմք ասէ , մեղս ինչ մեք չունել , սուտ առնեմք զնա : Իսկ արդ՝ կատարեալ է բան քո խնկեալ , և 'ի գլուխ ելեալ անպակաս 'ի սուտութեն՝ առ իմ մոլորութի և գժնդակ անիրաւութի : Աւան որոյ խնայեա՛ ցիս ողորմութի՝ քաղցրութեն ճաշակից աղբիւր , միայն օրհնեալդ յամենայն յաւիտենից . ամէն :

---

Միւսանգամ յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ , առ նոյն անբիծ Տարփանաց բանն :
Ի նորոյ սրտից խօսք՝ ընդ այ :

## ԲԱՆ. ԺԶ

Ա. Եւ արդ՝ դու միայն ած երկնաւոր՝ բարձրեալ՝ բարերարդ՝ քո՛ է զօրութի , քո՛ ներողութի , քո՛ բժշկութի , քո՛ տնտեսութի , քո՛ են պարգևք , քո՛ միայնոյ են ձիրք ձրի , քո՛ քաւութի , քո՛ պաշտպանութի , քո՛ հնարք անխմանալիք , քո՛ արուեստք անդատմելիք , քո՛ չափք անչափե-

լիք . դու սկիզբն և դու կատարած ։ Քանզի ոչ երբեք ստուերացուցանէ զլոյս ողորմութեան քո՝ խաւար արտմութեան . վասն զի ոչ ես դիւրաւ ընդ մասամբ ախտից՝ 'ի վերոյ քան զբանս Պատկեր անպարագիր՝ անդր քան զորքանութիւն կըշռութեան . անչափ լայնութիւն փառաց . անսարրափանց ընդարձակութիւն՝ հաստու զօրութեան . անամփոփելի առաւելութիւն բացարձակութեան . անսահմանելի բարերարութիւն գթութեան ։ Դու դարձուցանես՝ ըստ մարգարէին , յայգ՝ զստուերս մահու . որ իջեր կամաւ 'ի տարտարոսն ներքին արգելականացն բանտի , յորում և մահթանացն դուռն էր աղխեալ . և գերեալ անտի զմթերիցն կապուտ՝ վտարանդելոցն հոգւոց , սուսեր հրամանի յաղթական բանիդ՝ զկապ սատակման մահուն խզեցեր , և զմեղացն կարծիս ցրուեցեր ։ Դարձ առ իս՝ որ զընդամ զընդանաւ վհիս՝ տղմասոյդ գբոյս՝ յերկաթս մեղաց , վիրաւորեալ խոցմամբ սլաքաց՝ բանսարկուին նետից ։

Բ . Մեծ դու յամի անեղդ բարերար , լոյսդ 'ի մէջ խաւարի , օրհնութեանդ գանձ , ողորմած , գթած , մարդասէր , կարող , զօրաւոր , անպատում , անքննին , անճառ . բաւական՝ ըստ այն յակոբայ . անհնարինդ ամենից՝ դիւրապատրաստ հնարաւորութի , հուր ծախիչ զխարս մեղաց . ճաճանչ կիզանող ընդ հանրական թա-

փանցանցութեն խորհրդոյ մեծի. յիշեա զիս յո-
գորմութեն քո՝ օրհնեալ, և մի յիրաւունս քո.
'ի ներողութեն քո, և մի 'ի հատուցմանն. յերկայն-
մտութեն, քան 'ի հաւատութեն: Եթէ կշռես-
ցես զմեղանաց իմոց ծանրութիւն, ընդ քաղց-
րութեն քո՝ և մի ընդ արդարութեն. զի առ սակ
նախնումն՝ յոյժ է նուազեալ, իսկ 'ի ներհակ
վերջնոյս՝ յաւէտ ծանրակիր:

Գ. Արդ՝ մատիր առ իս՝ բարութիւն, որպէս
յունկանն բժշկութի՝ հակառակ քո համբարձե-
լոյն. բարձ 'ի մեղուցելոյս զհոգւ մահու խաւա-
րութեան, զի հանդիցէ յիս ամենակալ հոգին խա-
ղաղութեան: Եւ քեզ փառք յամենայնի, յաւ-
իտեանս յաւիտենից. ամէն:

---

Աւարտեցաւ յաւելուած կրկին հեծութեան՝ նորին
հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

## ԲԱՆ · ԺԷ

Ա. Արդ՝ աղաչեմ զխնամակալդ վտանգա-
ւորաց տաժանելեաց կրից թախծութեանց հոգւոյ
վշտացելոյ: Մի յաւելուր հեծութեան ցաւ. մի
խոցեր զվիրաւորեալս. մի դատապարտեր զպատ-
ժեալս. մի տանջեր զչարչարեալս. մի դաներ ըզ-
հարուածեալս. մի գլորեր զանկեալս. մի կոր-
ծաներ զդայթակղեալս. մի մերժեր զնեղեալս-

մի տարագիրս զհալածեալս. մի ամաչեցուցանէր զպատկառեալս. մի կշտամբեր զհարթուցեալս. մի խորտակեր զբեկեալս. մի խռովեցուցանէր զամբոխեալս. մի ալէկոծեր զբքացեալս. մի սասանեցուցանէր զդողդողեալս. մի շփոթեր զմրրկեալս. մի կեղեքեր զգիշատեալս. մի ջաղջախէր զբեկեալս. մի գոշեր զմոլմոքեալս. մի կուրացուցանէր զխաւարեալս. մի զարհուրեցուցանէր զապշեալս. մի խորովեր զխարշատեալս. մի մահացուցանէր զհիւանդս. մի բեռանց ծանրութեն մաշեր զոչ յարս: Մի անուր յաւելուր կարկամեալ թիկանցս. մի կրկնակի ողբումն՝ զառն հեծութես. մի ուժգնակէս փարեցիս առ հողս. մի սաստկագէս՝ առ մոխիրս. մի անպատռակէս՝ առ սանդղուածս. մի ահարկութե՝ առ փոշիս: Մի ըստ հարկանիր խստութե մեծդ՝ ընդ փոքուս. լոյսդ՝ ընդ սաորնականիս. բնութեամբ բարիդ՝ ընդ 'ի բնէ չարիս. ողջոյնդ օրհնութե՝ ընդ պարտոյս անիծից. քաղցրութիւնդ խնկակէս՝ ընդ համայն դառնութես. փառաւորեալդ անփոփոխ՝ ընդ ամենեքին անարգիս. կենացդ 'նչխար՝ ընդ կաւոյս զանդուածոյ. անեղդ անբանից՝ ընդ աղմիս երկրայնոյ. աննուաղ լիութիւնդ՝ ընդ չքաւոր ստրկիս. անկարօտ ծոխութիւնդ՝ ընդ անպատսպար տառապելոյս. անկարօտ բարութիւնդ՝ ընդ ամենաթշուառ աղքատիս: Վասնզի ո՞վ որ հասեալ յառաւօտ, և 'ի-

ծաղման լուսոյն խիթայ մթանալ. և կամ ըն-
թերակաց կենաց, մահանալ. կամ ազատուե,
և պարտաւորիլ. կամ շնորհաց, և դատապար-
տիլ. կամ փրկութե՛ն, և մատնիլ. կամ նորոգ-
ման, և եղծանիլ. կամ օրհնուե՛, և տարագը-
րիլ. կամ բժշկութե՛, և վիրաւորիլ. կամ լու-
թեան, և նուաղել. կամ յաճախութե՛ հացի,
և քաղցնուլ. կամ գետոյ հասանաց, և պաս-
քիլ. կամ մայրենի գթոց, և ննջիլ. կամ խը-
նամոց ածեան աջոյդ, և զզուիլ:

Ի. Եւ արդ՝ ընդ ախտացելոյն սաստկապէս
մարմնոյն բոլորութի՝ հոգւոյս վտանգաւ և ես
պաղատիմ, տէր՝ եթէ կամիս, կարող ես զիս
սրբել: Ընդ աւազանաւն նեղելոց՝ մշտագիշերն
խարխափանօք՝ մեծակական ձայնիւ հառաչեմ.
ոչ որդի անուանիմ Դաւթի, այլ ծնունդ Եւ-
այ դաւանեմ. ոչ միայն աւրրի կոչեմ, որ վար-
դապետայն է պատիւ կարծողական զեկն դի-
տելոյ, այլ տէր երկնի և երկրի հաւատամ: Ոչ
ձեռնընդ միայն ձգմամբ հպաւորուե, ո՛վ բարե-
գութ ած մերձաւոր, այլ 'ի բացեայ զօրով մի-
ջոցաւ մեծաւ՝ անունով զօրեալ քո բանիդ՝ առ-
իմ բժշկութի: Ոչ թէ ինչ խարոց կասկածա-
նաց միջոցի բանի, որ երկմտութեն կարծի նը-
շանակ՝ 'ի մէջ արկանեմ կամելոյն և զօրութե,
այլ կամիս որպէս բարերար, և կարես որպէս
զօրարիչ. տաս բանիդ, և բժշկեցայց: Ընդ

հարիւրապետին հաւատոյ՝ և ես լծակցեմ . ոչ մինչ անձուկ միայն բացակայութբ հեռի լինելով խորան 'ի խորանէ, հաւատամ աղերսել քոյ կարողութենդ առ յարութի և բժշկութի, այլ 'ի վերինն երկնի բազմելով, և 'ի ստորինս երկրի բովանդակ առ հրաշիցն սքանչելութիւն՝ ոչ ունիմ

հատուցանել ։

Գ․ Շնորհեա ինձ, որպէս դատակնիք բանին քո վճռեաց առ պոռնկին ընդունելութի՝ հնգից հարիւրոց դենարաց պարտուց շնորհաբաշխութիւն՝ ած բարութեց և տէր երանութեց . որ յաճախն ընձեռել՝ բազում փառաւորիս, և 'ի շատն մատուցանել՝ նովին չափ սիրիս . և յաւելն ողորմել՝ կրկին բարդաւաճիս . և յայսքան բարիս՝ խրատամբք գովիս . և ամի տէր գոլով հաւասարորդ ճանաչիս . և որ զբոլորն ունիս՝ ընդ մերումս կշռիս . և անճառելեաւդ ձրրիւ՝ մերայնովքս վճարիս . և ընդ երկրաւորիս՝ զանվախճանն պարտ վարկանիս . և մեծարել քո զմերն՝ վեհս գոհարանիս . և 'ի սակաւուն տուչութի՝ դոյզն փառաւորել ոչ ամբարտաւանիս ։ Արա՛ և ինձ զնոյն գթութիւն՝ ունողիս զգործս անհամար պարտուց . զի և 'ի ճաշս

երախտեաց քում պարգևաց՝

նորին խոկ սակով սիրելն կար

ղեացի . և քեզ փառք

յամի, ամէն ։

Մէրատէն յաւելուած կրկին հեծութեան՝ նորին
հոգւոյ, առ նոյն աղէրս մաղթանաց բանի։
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ԲԱՆ · ԺԲ

Ե. Արդ՝ ես ծնունդս մեղաց, որդիս մահա
ցու երկանց, արդարև անհաստահման բիւրուց քան-
քարաց տուժից գոլ հատուցանող ՚ի միում ա-
ւուր ։ Եւ ո՛չ թէ առ փոքրկութի մարդկային
միայն հայցեմ ներութի, այլ առ աննուաղ լի-
ութին փրկչիդ յի քի պաղատիմ մարդասիրութի.
որ չէի երբեմն, և ստեղծեր . չմաղթեցի, և դու
արարեր . չև ես եկեալ ՚ի լոյս, և տեսեր . ո՛չ
յայտնեցեալ իմ, և գթացար . ո՛չ կարդացեալ,
և խնամարկեցեր . ո՛չ համբարձեալ ձեռն, և
նայեցար . ո՛չ պաղատեալ, և ողորմեցար . ո՛չ
կերպացեալ ձայնիս, և լուար . ո՛չ հեծեծեալ,
և ունկնդրեցեր . դիտելով զարդեան դիպուա-
ծոյս, և չանտեսեցեր . Նախահայեացդ աչօք նը-
կատեալ զպատժապարտս չարագործութի, և
յօրինեցեր ։ Եւ արդ՝ զքո արարեալս, և զքեւ
փրկեալս, և զայսքաննեաց խնամոց յանձանձեալս՝
մի իսպառ կորուսցէ մեղացն հարուած՝ դիւաք
բանսարկուին . մի յաղթեսցէ յամառութեանն.
խոյ մառախուղ՝ ներողութե քո լուսոյ . մի սր
տիս կարծրութի՝ երկայնամիտ քաղցրութեանդ .

մի՛ մահացու մեղօք՝ ամենակատարդ լռութե .
մի՛ ակարութիւն նիւթոյ՝ անպարտելեդ բարձ-
րութեան ։

Ի. Ահա կարկառեմ զկարկամեալ բազուկս
հոգւոյս յանուն քո՝ Հզօր , ապառացես ողջ լի-
րեւ զառաջինն՝ մինչ 'ի դրախտին փափկութե
զպտուղն կենաց կթէի ։ Աշխանդեալ դօսաց-
եալ 'ի կոր կործանմամբ ընդ կնոջն տառապե-
լոյ՝ կայ անուղղելի հոգւոյս թշուառութիւն ,
ընդ երկիր պշուցեալ մեղացն կշռամբ՝ սատանայա-
կան բռւռն կապանօք , զի մի՛ զերկնայնոյդ ըն-
կալցի զողջոյն · խոնարհեայց առ իս՝ միայն ողոր-
մած , զի բարձրացուսցես զխայտս խոնարհ բա-
նաւորանկեալ , եւ զչորացեալս ծաղկեցուսցես 'ի-
բարի կրօնս վայելչութե , ըստ անճառանութե ·
սր մարգարէին ։ Որպէս զի 'ի ձնէ կոյրն անլու-
սաւոր՝ չունիմ տեսարան , որով զաներծելդ նը-
կատեալ զկերպ մաղթեցից՝ Հզօր բարեգութ՝
միայն դու պաշտպան ակնարկեալ խնամօք ան-
ձառ քոյ սիրոյ՝ 'ի շնչական խօսուն քո անօթս ,
յանէից գոյացութիւն լուսոյ հաստեսցես ։
Ընդ երկոտասանամեայ չարեօք չարչարեալ վըշ-
տագին կնոջն տանջեցելոյ՝ դեղովք մեղանաց
արեան հեղեղիմ · Հայեաց 'ի բարձանց անմա-
տոյց լուսովդ պարածածկեալ , ուր ոչ է քղանցք
ձեռաստեղծական վերարկուի ձորձոյ , այլ տա-
րածումն հրաշից՝ ամենայն ուրեք զօրացեալ ։

Մշօծութեամբ խաղաղ պատժապարտս ընդ մե-
ղաւորին մատուցեալ առ կենդանածին ոսկեդար
շապարդ՝ զկաթիլս աչացս՝ փափուք հերացս ըն-
ծայեցուցանեմ, այլ զամբիծ հաւատս՝ ամբարձ
մամբ բաղկացս՝ ստոյգ դաւանմամբ հոգւոյ ող-
ջունիւ՝ շրթանց կախուցմամբ զերկիր համբու-
րեմ. խառնեալ հեծութեան աղերսիս արտաս-
ուաց, բժշկութեան հոգւոյս աղերսեմ: Ա՛մա-
նեալ մեղանօք հոգւոյս զգութեան լուծեալ մեղ-
կութեամբ, և յերկուց կայից մայնակողմամբ
անհաստատ հետովք, ընթացից զորեն՝ նահանջմամբ
չարին՝ զհեռեակմանն բարձողութեան շնուածոյ
մարմնոյս՝ առեալ ծառայն կենսատիթ պտղոյն
խափանեցելոյ, պատսպարեսցես անդրէն մերը-
ծին՝ միայն հնարաւոր առ 'ի փրկութիւն:
Օ փառաբանարան հաստատուածոյ կերպիս 'ի քէն
եղելոյ՝ ամբափոփ լսմամբ համրացոյց արդեւ
հողմ բանաւորութիւն. հողեր քո աղդեալ մեծ գ-
ողորմութեա, ըստ յաւետարանին բժշկեցելոյ,
հրաշափառաղես բարեգործեսցես բանդ կենդա
նի լին խօսողութի անայթաքելի: Անկեալ կամ
չարեօք 'ի մահճին ախտից ընկողնեալ մեղաց՝ զի
կենդանի և խօսուն մեռեալ, կարեկցեալ խմա-
մբ թշուառութեան՝ ողորմածեօք քքուանաց ձայ-
նից, ո՛վ բարերար որդի իմ, օրհնաբանեալ ա-
շացդ ցօղով մկրտակաղդնեսցես 'ի կենդանութի,
իր զնիրելն 'ի յանշնչական մեռելութենէ:

Սոյդ դառնացօղս 'ի դրի մեղաց կամ տարա-
կուսեալ, ձեռն մատուցեալ՝ աւրև. անտառեր ո-
գի բարձրելոյ, հանգեա զիս 'ի լոյս քումդ նշու-
լից։ Ընդ աղիողորմ թշուառուն կականման ձայ-
նի՝ այրւոյն 'ի Նային՝ մօր միամօրին, տատանմամբ
մատանցն, կոծմամբ կրծիցն, հառմամբ արտաս-
ուացն, տուայտանօք սխրտութե զիմացն՝ և ես
պաղատիմ վերջին հեծութիս, առ յուսահա-
տելոյս զքաջալերութի մխիթարուե զթած քո
բանիդ, ասելով և ինձ գովեալդ բարի ատեղ-
ծից աշխարհի, թէ մի՛ լար զերի՝ բազմաց ող-
բալի. որով ընդ պատանւոյն կենդանացելոյ՝ 'ի-
վշտացելոյ ծնողին սփոփանս՝ զամենապարտ ո-
գիս ընկալայց 'ի քէն ընդ նմին կրկին նորոգել։
Ընդ այսակիր անդրդայելոյն՝ զիւալուկ և քար-
կոչեալ հեղձամղձուկ եղկելի անձանցն, քա-
մենեալ զխախտուե հերացն, փայլեներեա բան-
դաղուշելոյն՝ 'ի քէն ողորմեալ փրկիչ բոլորից,
խրրև զնոսին առ քեղ զիմեցից. հերքեալ մեր-
ժեսցես զզունդս չարացն ապականողաց՝ 'ի քո
խորանէս, զի ժամանեալ հոգիդ քո բարի՝ այս-
րէն հանգիցէ. լցեալ զմարմինս մաքրութեամբ
շնչոյս՝ զդեցմամբ անդամոցս, զգաստ արասցես
զխելագարեալս ամենաթշուառ։ Ընդ դերեցեալ
զժոխարանակայց փարանդելոյն հոգւոյ՝ արդե-
ցեալ կամ 'ի փառանդի. զձառադայթ ողորմութե
փառաց քոց ծագեալ՝ լոյս իմ անձկութեանս,

'ի կապանաց օցտողին զերծեալ զես ապրեցու-
ցես : Գաղտնորդայթ աներեւութերակ վերի-
պակ արահետ գարշութբ մեղացս ջրդողեցեալ
ոգւոյս կերպարան, կայ 'ի տաղնապի. զծած-
կեցեալն 'ի անսողութենց՝ զչարագործին նիւթեցն
պատուցմունս, քո ինքնաւորդ զօրեղութբ որդի
ով, գթածարար առողջացուցես : Ո՛ բազմա-
զան տարաղս ցեղեցն զանազանից ախտաւորու-
թեանց մահացուցանողաց խորականօք կոլլատ-
եան բերիւք՝ դժնդակարմատն շառաւեղօք հաս-
տատեցելովք 'ի յանդաստանի անօրէն մարմ-
նոյս, տարակորզեցես 'ի ձեռն ձեռինդ ամե-
նակալի. որ արօրապլեալ միշտ՝ և մշակես բղ-
աւհմանս հոգւոց առ բանիդ կենաց պտղու-
նաւորութիւն :

Գ. Ի՛. քանզի անցաւ ըստ նմանութի օրէնա-
կութեանց յանցուածոցս վէր, ըստ Ճարակօղն
քաղցկեղի, առ ընաւ անդամս մանաւորեալ
զախտին տարածումն, չիք ապեղանի իբր խո-
բշելն՝ առ անշարժութիւն խարանացն մատու-
ցանել . 'ի խարախաց բարձիցս մինչև ցափն կա-
ւուցման լռութեան անդամոցս չէ առողջուի,
ղ ամենեքին՝ անբժշկութիւն : Իսկ դու՝ ողոր-
մած բարերար օրհնեալ, և երկայնամիտ թա-
գաւոր անմահ, լո՛ւր պաղատանացս արդա
հառութե սրտիս վաանդի, որ կար-
դամ առ քեզ տէր 'ինեղութե :

Սրտին յաւելուած կցկից հեծութեան՝ նոյն հոգւոյ, առ նոյն ողբս մաղթանաց բանի։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## ԲԱՆ. ԺԹ.

Ա. Ձայնեաց ամենահայեաց տեսութի կենաց բարութե յուսոյ, 'ի մեծապայծառ աղաղակ ցաւալեալ անձինս հեծեծանաց։ Ո՛նհա մեծութիւն. անուն ահաւոր. բարբառ կենդանի. լոյս ցանկալի. ճաշակ ախորժելի. կոչումն պաշտելի. բարութի խոստովանելի. ազդումն խնկելի. խոկութի դաւանելի. էութիւն փառաւորելի. գոյութիւն օրհնաբանելի, տէր յիսուս՝ ընդ հօր քում գովեալ և երկրպագեալ. և ընդ հոգւոյդ սրբոյ բարձրացեալ և վերաձայնեալ։ Որ միայն մարմնացար վասն մեր բան մեզ, զի արասցես զմեզ վասն քո՝ բան քեզ. լոյս ամի յամի ողորմած՝ հզօր՝ երկնային։ Եւ այժմ ղուծեալ և զխորտակեալ հողանիւթ անօթս անօրէն հրաշակերտութե, աղաչեմ գթած, նորոգ հաստատեա։ Զքոյին պատկերս մեղօք հնացեալ՝ 'ի քրայս հալոցայ՝ կայծակամբ բանից, պաղատիմ առ քեզ, վերստին ձուլեա։ Զխախտեալ շինուածս քումդ հանգստեան տաճարի մարմնոյս՝ պաշտպանու հոգւոյս, մաղթեմ բարերար՝ 'ի բնակութիւն քեզ մաքրագործեա։ Մի հա-

տուցանէր չարեաց իմ գործոց՝ զնոյն փոխառ-
րութի: Արդեաւ եմ, բստ մարգարէին բանի,
և ոչ 'ի գլխոյ. Թափեմ զմրուրս անօրէնութեն՝
Թմբրութե մահու բաժակիս՝ աղաղակաւ հրամա-
նաւդ՝ ամենակեցոյց, զի մի՛ զքոյդ քամեցից 'ի վեր
ջին աւուր յետնում հատուցմանն:

Բ. Արդար ես յիրաւունս քո, և յաղթող ի-
գատաստանի. եթէ մահու մատնես, ճշմարիտ
են գործք քո. եթէ դատապարտես՝ աստուա-
ծախեալ զանձնզղջականն կշտամբութի, ուղիղ
են հատուցմունք քո. եթէ յանդգնութս խորոց
սուզեսցես, թէ զկենդանութի շարժմանս բարձ-
ցես, թէ զբանիս զօրութիւն ունայնացուսցես,
թէ զաչացս պատուհանս ստուերացուսցես, թէ
զկենացն ճաշակ՝ 'ի քեզ ինքն ամփոփեսցես, թէ
զհասարակաց կենակցոյս զարմանս բարձցես, թէ
զսուրցս հարստութիւն համառօտեսցես, թէ
ընդ իջման քաղցրութե ցօղոյ՝ և հուր տեղա-
ցես, թէ 'ի լռութէ բանի քոյ սովեցուսցես, թէ
զականջացս դրունս խցցես, թէ զշնորհիդ ձիր
կարեսցես, թէ զզետին յատակի ոտիցս սասա-
նեցուսցես, թէ յանձկալի երեսաց լուսոյդ քոյ
հանցես, թէ 'ի համօրէն աշխարհէ աստի հեր-
քեսցես, թէ փայլատակմամբք հրոյ պակուսցես,
թէ անբժշկական ցաւօք դատեսցես, թէ զի-
նաց չարաց մատնեսցես. թէ գազանաց ժան-
կեր մանրեսցես, թէ հողմով ցասման հոսեսցես,

և թէ այլ ինչ նորոգ արարած տանջանարանաց
կազմեսցես՝ չար քան զտարտարոսն , և սաստիկ
քան զգեհենն , թունաւորագոյն քան զորդուն-
սըն , տարակուսելի քան զխաւարն , երկիւղա-
գին քան զխորխորատն , ողորմելի քան զմերկու-
թիւնն , մկայեմ անձամբ անձին՝ յոյժ պարտա-
պան գոլ սոցա :

Գ. Նո՛ւ քանզի յաւէտ տաղաւորագոյն են նը-
մանութիւնք փոխատրութեանց՝ առ ազգակցութի
մեղանացս՝ երբ պատկերակիցք մատուսակք զու-
գաշաւիղք՝ նշանակիչք այսր խորհրդոյ , արդ
կարեոր է խոստովանել և յանդիմանել զերեսացն
ծածկոյթս՝ առ ծանօթութի խնդրողին : Որ-
պէս՝ զի ոչ ջերմն սիրով առ ընկերին կարիս մա-
տուցայ , յիրաւի 'ի նախնումն վտանգին տառ-
ապեալ սառնում : Նա զի ոչ զցանկանն խոտո-
տականութի սանձեցի , յարժանի կրեմ եղկելին՝
զանդորանալի զկիզումն : Նա քանզի ոչ սիրեցի
զլուսոյ աւետիս , արդար հատուցմամբ՝ 'ի մը-
թութիւն ըմբռնողական մըգլին կորստեան՝ վը-
րիպեալ դանդաչեմ : Նա զի ոչ խորեցի զմա-
նուանս փոքունցն յանցանաց , երբ անմնասակարք
վարկանելով , պատկանապէս 'ի խածանողակա-
նացն զազերն զեռնոց՝ խթեալ խոցոտիմ : Նա
զի ոչ ձեռն կարկառի առ կերս վտանգաւորին՝
այց առնել նմին , 'ի դէպ իսկ՝ ըստ դծագրու-
թեան այսր օրինակի , ապականութեանն գըրո-
նուխրեալ մաշիմ :

Դ. Տէր, որդ՝ ոչ յանձուստ ամենարարի զան-
ձուցդ՝ չարիս, և ոչ 'ի լուսոյդ նշուլից՝ խա-
ւար, և ոչ յապաւինութենէդ՝ դայթակղութիւն,
այլ ես յինձէն կորստեան որդիս գտի զայսոսիկ.
մեղանք անօրէնութեան իմոյ գանձեցին նիւ-
թեցին զայսքանեաց բարկութե՛ մթերս հոգւոյ.
իշխանին մոլորութեան հնազանդեալ, թողի
զանդի քո՝ նորա, ըստ գրոյն խրատու յանդի-
մանութեան: Նա քանզի յայտնեցաւ յետ-
ուստ՝ գաղանեաց ատականաց մարմնոյս ան-
դամոց, և արկաւ զերեսօք կերպիս՝ անվայե-
լուչ ստուեր ամօթոյս, ըստ մարգարէին առա-
կի, որպէս ցուցեալ զիս ամենեցին՝ իբր մեր-
կացեալ խայտառակեցելոյ պոռնկի, ծագեա՛
յիս զլոյս քաւութեան՝ արքայ երկնաւոր. զի
թօթափեալ զմեղաց փոշիս, ըստ աւետեաց
ձայնի դարձելոցն 'ի բաբելոնէ, նստոյց վեր-
բառին կանգնեալ 'ի հողոյ, և 'ի հաստատութի
յուսոյդ հիմնացեալ անսասանելի, ըստ եսայ-
եան բանին, զգեցեալ զզօրութիւն բազկի կա-
րութեան նախնում մաքրութեանն, վասն մե-
ծութեան փառաց քաղցրութեան ա-
մենապարգև քոյ ածու-
թեդ. օրհնեալ
յաւիտեանս.
ամէն:

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## ԲԱՆ. Ի

Ա. Տէր տէր՝ անոխակալ եւ երկայնամիտ, ներող՝ բարեգութ՝ հզօր՝ ողորմած. ահա՛ ճշմարտութեամբ են գործք քո, եւ խոստովանեալ դատաստանք քո. վկայեալ են ընտրութիւնք քո՝ անսուտ ծածկութեից։ Ընդ երից երջանկաց մանկանցն՝ որք կիզանողական բոցովն փորձեցան, եւ ոչ վնասեցան 'ի բաբելոնին, զնոցա թախծութե ղերգն հառաչեմ, մեղայ, անօրինեցայ, յանցեայ, ապստամբեցայ, եւ պատուիրանաց քոց ոչ անսացի։ Եւ քանզի մաքուր գոլով 'ի վնասուց նոքա, եւ զայս խոստովանութի գոչէին. իսկ ես ընդ նոցայն՝ նովին աղերսիւ ձայնակցեալ ամեն ողբոց երգութե, եւ այլ յաւելից՝ ամենապարտ մահու։ Ընդ դանիէլի երանեալ եւ այր մեծ մարգարէի, որ 'ի քում հարազատութե աղգականութե՛ տանն յուդայի՝ շաւաւիղ ընտրեալ, ըղնորայն առեալ ընդունական եւ նուիրական բանից պաղատանս, խնդրեմ պատժականութե գոմամբ հեծութեանն՝ եւ այլ կրկնեցից. 'ի մէջ գիտութեանս՝ անպատշաճական գնացի, զպարտուղի սխալեալ գծնդակապէս. այս է՝ ամէն ամ իրօք

մեղանչելն ։ Ընդ սահման կշռութեան կամաց քոց արտաքս փախեայ․ որ է հաւասար կերպարան՝ բանիր անօրէնութեան ։ Անդխափիցն չափոց՝ չարութեան գործոց՝ լրումն յաճախութեան նիւթեցի․ որ է ճշգրիտ պատկեր յանցաւորութեան ։ Ապաւնայար, և ոչ զարհուրեցայ․ արգահատեցեր, և ոչ երբեք լուայ․ որ է ապստամբութեան յայտնի նշանակ ։ Քեզ արդարութիւն հանդերձեցեր՝ բարերար, և ինձ ամօթ և պատկառանս պատրաստեցեր․ քեզ փառս վայելչականս, և ինձ նախատինս յարմարաւորս․ քեզ քաղցրութեան յիշատակ և ինձ մաղձ քացախեալ ՚ի կատարածի․ քեզ բարերարութիւն անլռելի, և ինձ ձայնս ողբոց աղաղակի․ քեզ օրհնութիւնս երգոց խնկելի, և ինձ մերժումն տարադրութեան անյուսալի․ քեզ իրաւունս բազմարժանիս, և ինձ պատասխանատուութիւնս ամենավարանս, քեզ բարձրութեանս անճառ գովեստից․ և ինձ զածիւն լեզելոյ պատիժ ձաղանաց ։

Ի. Եւ արդ՝ ընկալար դու բարեաց ընտրութեանց անկշիռ սահման՝ զքոյոցդ ախորժականաց կնդրկաց պտղոց վեր առեալ ըստ քեզ, և ես զխմոյս աստէն առ ամին պարաւանս յուսունոյ՝ կրկնակի բարդեալ ինձ ըստ իս ։ Իսկ եթէ անպատիցն մեղթանաց այս էր յանձնառուի, իսկ ինձ զո՞րս հիւսեցից շարս և տողս բանից դրոշակմանց, որ քան զնա՛ դժնեայս՝ յաւէտ

վրիպեցայ։ Մոլորեցայ անառակ ընթացիւք՝ 'ի-միտս վայրենիս. յանդգնեցայ շրթամբք խօսից՝ 'ի բանս երկրաւորս. զակատեցայ անկասելի՝ 'ի-պատկառելեացն գործոց։ Փքացայ, վերացայ, որ յետ սակաւ մի ժամանակի՝ 'ի հող մահու եմ իջանելոց. գոռոզացայ, բարձրացայ, որ և ոչ զգրաւական հոգւոյս՝ տուրևառութեան շնչոյս՝ ունիմ 'ի ձեռին։ Ամբարտաւանեցայ փոշիս շըն-չաւոր. ամպարհաւաճեցայ կաւս ձայնաւոր հըր-պարտացայ հողս անպիտութե. 'ի վեր ամբար-ձայ մոխիրս մերժելի. բաղուկ կառուցի բաժա-կըս մանրելի։ Տարածեցայ առաւել իբր վէհ, և դարձեալ իբր զհեղեղեալ առ իս ինքն ամփո-փեցայ։ Նարկութեան բոցով ցոլացայ տեղւոյն բա-նաւոր. իբր զանմեռ ոք մեծամտեցի, որ ընդ քառատանեաց մահու եմ փակեալ։ Գիրկս ար-կի կենցաղոյս սիրոյ, և 'ի քեզ թիկունս՝ փոխանակ դիմաց դարձուցի. 'ի թուլըս մտաց՝ ընդ խաւար խորհրդոց սլացայ. զանարատ հոգւոյս՝ մարմնոյս փափկութիւ յաւէտ վատեցի. զզօրութիւ աջա-կան կողմանս՝ տկար արարի, ահեկանցս կայ-լից ուժգնութիւ տալով յաղթեցի։ Զերդ իսկ տեսի հողացեալ վասն իմ, զոր չէ՛ ասա զրկելի, և ոչ պատկառեցի. իբրև զհաւ վայրենի սրա-ցայ, ըստ ոսկեան բանին առ եփրեմ, 'ի նախ-նին իմ սովորութե։ Յաղօթարանն վայրի՝ ընդ պատարագմունս այսր կենցաղոյս շրջանակեցայ. ոչ

կացուցի յոտին զերկիւղը մտացս՝ երասանաւ բա-
նին: Ընդ հին չարութեանն՝ նորոգ ինքնաստեղ-
ծութիւնս գտի. անուրս, ըստ յորայ, ծանուցս
և անտանելիս՝ ինձէն ինձ սատակացուցի. առի-
գած անկարկառելի, ըստ երեմիայի, զանձն իմ
արարի. իբր զվիժած անդրելի կուռմն, ըստ ա-
ռակարկուին, 'ի մարդկանէ համարոյ եղծայ. ի-
բրբ զհանդերձս ինչ աղարահից, ըստ եսայեան
բանին, զաղբացայ. որպէս զթրծեալ աման խե-
ցեղէն՝ փշրեցայ անարծարծելի. ըստ բանբա-
սանայն եղումն 'ի մարգարէէն, զչորրորդ չափն
անօրէնութեան սատակմանն՝ ինձ պատրաստեցի:
Եւ զի՞նչ ստութիւն առ այս՝ և զայս յաւելուլ
ընդ այս. քանզի զվրանն իսկ զխանուէր մո-
ղոքայ՝ առի ինձ այսրէն՝ առ գժոխոցն ժառան-
գութիւն, լքեալ զերկնայինն՝ յեղանակաւ իմն օ-
րինակի նմանակիր ձեւակերպուե, որպէս առակ
պատկերի աստեղն ռեփանայ բաբելականի՝ յիս-
րայէլէ պատուեցեալ ցուցաւ 'ի սինայ:

Դ. Նաև արդ՝ զի 'ի նախնի շնորհին համարձա-
կուէ դարձեալ՝ փոխեցայ, զրկեցայ, ելայ, հեռա-
ցայ, բաժանեցայ, և անպատուատելի կարեցայ,
որդ ընկալ զիս անէր վերատին կերպարանեալ 'ի-
պատկեր հողոյ, զանարժանս կենաց՝ իբր զմա-
հապարտ. իբր զչարագործ. իբր զպատկառեալ.
իբր զկոխան եղեալ բանսարկուին. որպէս զան-
բոչկելի մոնեցեալ. որպէս զհասեալ յառաջս

մահու. որ զզարշեցեր. որ զխոտան գտեալ քո հոշմանդ. որ միայնգամայն 'ի կորուստ վարեալ. որ զեղերեր. որ վանեցեալ. որ տարակուսել. որ թշուառացել. որ վհատել. որ կործանել. որ խորտակեալ. որ բեկեալ. որ զթախծեալ. որ յողի արտմեցեալ. որ թշնամանեալ: Իսկ զարձեալ անդարձելով քո՝ գթած, մարդասէր, հեզօր, 'ի յաղերս բանիս՝ որ զղջացել. որ խոստովանեալ. որ 'ի յոտս քո գլխեցել. որ զապաշխարեալ: Որ կշռես զերս՝ և մեծ համարիս ըզհառաչ հոգւոյ, և զաղդումն շնչոց հեծութ. զխըրկիծ շրթանց, զպաղատել լեզուի, և զախորժանութ երեսաց. զհամն խորհրդոց, և զյօժարութ խորութ սրտից: Որ փրկութիւն ես անձանց, և տեսող՝ ոչ գործեցելոց. և ստեղծիչ բոլորից, և բժիշկ վիրաց աներևութից. պաշտպան յուսացելոց, և բարեխնամող ամէնեցուն: Եւ քեզ փառք յաւէտ, յաւիտեանս. ամէն:

---

Սերտին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն տէրն մարդկանց բանի:
Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

## ԲԱՆ. ԻԸ

Ա. Եւ քանզի ես յինքեն անձամբ իմով ինքնագրաւ 'ի մահ՝ ոչ կացի երբեք 'ի յոտս մարդոյ. և ոչ սիրտ բանականի առաջայ, ըստ գրոյն:

Նա քանզի ոչ փոփոխեցայ 'ի նախակարգելոցդ , և ոչ ընդ բարուք ուղին ընթացայ , ընդէ՞ր ոչ զխոտորնական հետոցն խաւարայնոց զդէմս ցուցից՝ 'ի սահման կարգի այսր ընթերցուածոց ։ Առ որս ածեալ յարմարեալ առ սոյն՝ զկերպարան տեսակի բանից երևաց , ըստ մերադոյնդ նշանակելոյ՝ անփոխադրելի պահելով , խոստովանեցայց մերատին դարձեալ առատօր զմնացեալ չորութեանցն զբեծս , զոր յաջորդաւդ է իմանալի ։

Բ. Օտար ժամանակորդս արժանապատիժս աձեցուն արարի զնոցիւք անաստութեն զգունդն բելխարայ ։ Աքաւս կայթից՝ և ցոյցս վաղեց խաղալկացն զիւաց դարշելեաց ճարտար խարողայ՝ ծուլութիւս խմով շնորհեցի ։ Գանս գաղտնիս՝ և խոցուածս անյայտս՝ 'ի կործանեցելոցն դաշնայ ընկալայ ։ Ոչ հերքեցի զվանեալն խաչին քո , քան թէ անդրէն առաւել կրկին խոկ զըրայուցի ։ Վասն իմոյ հիքոյս անօրէնութե՝ անունդ քո հայհոյի 'ի մէջ ազգականաց , որպէս ան իսրայէլ՝ 'ի մէջ հեթանոսաց ։ Հարուա- ս հարուածոց՝ մնասակարս ապականութեց անդոյ և թրթրոյ՝ և այլոց կերչաց վատնողաց ազնիկ հօդուոյս , ըստ սորոյն յովելեայ հրական ողբոցն , որ 'ի ցոյցս երկրի վասն իսրայ- ՝ յաւաւս հինից և չարաց հօդուոց , յիս հոանկեցի . սանդծանել զնաստ պաշտպանութե-

ցայ , քան թէ սատակել ։ Մինչ կուտեալ հաւաքեցի անձին իմում մարտիկս մահացէնս . կըրտամբիչս ինձ գոյացուցի՝ անխրատս և անպատկառելիս . ներհակս ինձ զօրացուցի՝ ապառումս և անկռուելիս . դաւիս ինձ առի մասունս՝ ընդ քաղցրաւենեաց ճաշակաց . առ ստացօղն՝ միշտ ոխնդրաւորս , և առ բանսարկուն՝ յաւէտ հաւատարիմս ։ Աւա՜ղ աղէտիս , վիշտ վտանգիս , խաւար ամօթոյս , մութ պատկառանացս . զիա՞րդ և առ բանս յանդիմանութեան համարձակեցայց . Մեծ է ձայն գուժի , և անբերելի բողոքս աղաղակի ։ Քանզի թէ զհոգիս էր զիմ տեսանել , ապերղս՝ և նուաղս՝ և ամենևին ներքևեալս , ցաւոք հեծութեան՝ ՚ի վերջինս վարեալ վարանումն , և մթացեալ աղտեղեալ գունով զազրութեան՝ իբր զպաշտօնատար մեհենի . վասն զի նոյն է սպաս տանել ձուլեալ պատկերի՝ և մեղաց ախտի ։ Արդ՝ ես գնացի ընդ այս ճանապարհ կորստեան հետոց խաւարի . եւս զբաժինն՝ քո ցանկալի՝ յանապատ անկոխ , ըստ մարգարէին որ առ քահանայն իսրայէլի ամբաստանութեան ։

Գ. Եւ զիա՞րդ տացից անձին իմում մարդ՝ զբերեալս ընդ անմարդիս . և ի՞բր անուանեցայց բանական՝ անբանից յիմարութեան կցորդեալ . և որպէս կոչեցայց տեսանողական՝ մթացուցեալ զլոյս որ յիս . և ընդէր համարեցայց զգայական զենմաւորիս զբունս փակեալ . կամ որո՞վք

ցուցայց տպաւորութի՛ նկարագրութե՛ անեղ-
ծին շնորհի՝ անձամբ ինձէն յոգի մտհացեալ.
Նաև ոչ շարժողական, և կամ շնչական ունիմ ան-
ուանել, թող թէ հոգեկան, կամ մնաց ըն-
դունական. անպիտանս՝ ի թիւս անօթոց. անար-
գըս՝ ի քարինս որմոց. արհամարեալս՝ ի կարգս
կոչեցելոց. վատթարս՝ ի յաղգս հրաւիրելոց. ար-
հաւրօք մահու պակուցեալս, անխրախուսելի՝ ի-
բոլորեցունց՝ ցաւովք և տանջանօքն երուսաղէմի,
ըստ երեմիայի բանին խրատեցեալ. պակասեալ
աւուրցս՝ ի հեծութ, և ընթացք ամացս՝ ի հա-
ռաչմանէ, ըստ Նուագարանաց երգողին: Երբ
առուի՝ ի ցնցոյ՝ և փայտ՝ ի յորդանէ, ըստ իմաստ-
նոյն բանի, ՚ի խիթմանէ սրտիս հալեցայ. երբ ոս-
տայն սարդից մաշեցայ, ըստ սաղմոսողին, և խո-
տան դատայ. երբ զամս առաւօտեայ՝ և զցօղ վա-
ղորդայնի, ըստ մարգարէութեն ձայնի, սպառեցայ:
Այլ ոչ՝ ի մարդ ոք ունիմ զյոյս, եթէ անիծեալ
՚ի տեսանողէն՝ անյուսադրելի վհատիմ. այլ՝ ի-
քեզ՝ տէր իմ ողեալր, որ ընկղմեալ՝ ի քոյդ գը-
թութեանց բարեաց անսպառելից, և՝ ի բեհենելոյն ժա-
մու՝ ի խաչին մաղթեցեր մեծդ ողորմեալ և առ հայր
քո բարձրեալ՝ քո չարչարողացն: Արդ՝ շնորհեա
ինձ յոյս քաւութե՛՝ կենաց և ապաւէն. և՝ ի տուր
եալս թշուառի՝ առից զուղիդ քո բարի: Ը-
ղ ընդ հօր հոգւովդ միշտ փառաւթի. յաւիտե-
ան. մեծութի և փառք յաւիտեանս. ամէն:

Վերստին յաւելուած նիւթն հեթանոսութեան՝ նոյին
հոլովք, և նոյն ազէտ մաղթանաց բանի ։
Իւրեանց արտեւց երետ՝ ըստ այ ։

## ԳԼ՟Խ · ԻԲ

Ա. Դարձեալ ալլարանեցից՝ 'ի նոյն շարու-
նակ բարդեալ գեշտամբանացս եղանակ՝ գործ-
եալ անձինս, ածեալ մատուցեալ՝ կրկին կացու-
ցեալ նոյին պատկերաւ 'ի նոյն պայմանի. Թէ-
պէտ գրեցաք ինձ ամենադէտն՝ զայս յանդիմա-
նութե զատակնիք՝ կսկծեցուցանողականս բա-
նի՝ ճշմարիտ խոստովանութիւն համայնից գոր-
ծոց՝ զաղանութեց չարեաց ։

Բ. Այլ ոմն ձիս խօսնական՝ կարծրերախ սան-
ձակոտոր արձակերասան . յողանակս անհամ-
բոյր՝ վայրենական և անկրթական . երինջս առո-
ղական՝ անուղղական և անվարժական ։ Մարդս
մոլեգնական՝ տարադրական և կորստական . մա-
նուկս մեղանչական՝ անխրատական և վարատա-
կան . անտես մահապարտական՝ տարտամական
և անգործական . բանական անասնական՝ գա-
զանական և անմարդկական ։ Չիթենիս ամայա-
կան՝ անպտղական և կործանական . մարմինս
հողեղէս իմ Թախծողական՝ դատողական և սան-
ջողական. խոցեալս անբժշկական՝ անխնամական
և անխափանական ։ Ոսկր չորս կայսերական՝ արդ-

փառնական և անդատական. ծառայս սխալական՝
փախստական և թշուառական։

Գ.. Ահա ես ինքն ինձէն կամաւորապէս անձ-
նամատն և մարմնակործան, հոգեկորոյս և միշտ
մոլախափ, կամակոր խուլ՝ և սրտաբեկ. ուշա-
մոլաց և հանճարազրաւ. զգայազերծ և իմա-
տասպառ. յայրատատես և եղեռնալուր։ Ես
ստառուստ և անառուստ բնաւ իսկ բոլորքմամբք
մահարեր երկամբք մնասեալ, ոչ միով իւիք առ-
սութեամբ 'ի գործ ընդունելութեան քեզ պիտանա-
ցուս՝ անէրդ բոլորից, ողբամ զորովայնն, որ երկ-
նեացն զիս. աշխարհեմ զատինան, որ զիկցուցին.
ընդէ՞ր ոչ մաղձ մակարդեալ ընդ կաթինն ձր-
գեցի, և զիա՞րդ ոչ զառնութի ինձ ընդ քաղց-
րութեանն՝ ջամբեալ մատուցաւ։ Ո՛հ եթէ ես
ինձէն անձին իմում զմնեալ զատախազ համ-
բարձայ այսքաննեօք բանիւք, և ունիմ տակաւին
զսուր բարկութեան անխոնարհելի, ո՞վ ոք 'ի յերկ-
րածնաց սատի զիս ողորմեսցէ. զմիմ խայտառա-
կեցից. զընտանւ էութիւնս զատեալ տուժեցից.
զհամօրէն զմնասակարայն զգունդ՝ զանեցից.
զխոցոտայն զընտանութիւնս զատախազեցից. ըզ-
դայակինայն զխատորութիւնս կշտամբեցից։
Մեղայ ամբ յամի, ողորմեա զիթած. ոչ նոր
չգտեր յիս զյանցանս պարտեաց մասաւորեղ,
ւ նոյն եմ յաւէտ նովին պատահմամբ պար-
ւորութեան, անկցելի ձորձով սխալեալ առաջի

քոյ՝ անփոփոխելի, և դու միայն խնկապէս դը-
թած օրհնեալ մարդասէր, ընդաջմէ խմոյս փըր-
կուէ կանխեալ ՚ներուք անայլայլելի:

Դ. Տէրդ՝ մատո խնամակալ՝ հզօր՝ երկնաւոր՝ բարի՝ ամենից հաստիչ յոչէից գեղանիդ զօրութե խմաստից կայծակն՝ ՚ի գործի ազդման լուսոյս շարժութե, առիթ մաքրութե յամենուստ ընդայականաց գոյաւորութեց յիս մանաւորելոց՝ քո ձեռակերտից. սոքօք առ ՚ի քէն եղելովք և բժշկելովք, կրկին հանդերձանօք, անապական ձայնիւ, անհաս բարբառով, քեզ վերընծայել գոհաբանութի ՚ի փառս մեծութե հօրդ քոյ ընդ մերոյ, յաւիտեանս. ամէն:

---

Մերոյն յաւելուած կցկին հեծեծութեան՝ նորին հեղինակի, առ նոյն ազգերս մարդկանց բանի:
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

## ԲԱՆ. ԻԳ.

Ա. Տէր ած ամե, զօրաւոր յամե. անպարագիր և անվայրափակ տեղի ամենուն. բոլոր խակութեամբ հասու յամենեսին. անուրեք վայրից և չեք սահման առանց քոյ: Ոչ երևեալ երբեք, ոչ տեսականութի առանց քո ծագման՝ լուսաւոր: Փառք ահաւորութե. անուն անհասութեան. կոչումն մեծութե. ձայն անբաւութե. խոկութիւն անքննութեան: Անմատչելի հետա-

ւոր, և անընդմիջելի մերձաւոր։ Տեսող հեծութեան. նկատիչ թշուառութեան. մօտակաց թախծութեան. ամենաբուժ հնար անճարութեան. հայր գթութեանց. ծագող ողորմութեան. ամ մխիթարութե։

Ր. [illegible]այեաց առ ողորմութի՛ 'ի պատկեր վերտաց դառնութե̃ բազմավտանգ կրից կարեաց, որ հանդէպ քո տարածանիմ. կցորդակից լեր բժշկապէս, և մի 'ի խոյզ ընտրութե̃ կոչեր դատաւորաբար։ Արդարև մեծ է վտանգ տարակուսանաց ցաւոց այսր վարանման, յորժամ կիցէ մարմինն մեղօք դրաւեալ, և անձն՝ 'ի դործոց չարեաց ոչ մեկուսացեալ. գործնականացն գործի՝ սովորութի՛ն կարեաց կապեալ. զանդուածն հանդերձանաց՝ մահացու կրիւք շաղախեալ. զգայութի՛ սրտին իմաստից՝ խեթիւ խառնեալ. անկայութի՛ բարեացն՝ բնաւին բարձեալ. և 'ի բանականութե̃ն ընդ անասունս գաւակարգեալ. և զազիր գարշութի՛ ընդ գոյութեանն շաղամանեալ. և ստեղծականացն ողջ եղ իմանալեացն վիրաւորեալ։ Եւ 'ի սատակութենէ յանցանացն յիշատակի՝ յաւէտ յուսահատեալ. և տաղնապաւ նախագործելոցն՝ միշտ տարակուսեալ. և յատակսէ աղերսին՝ խայտառակեալ. և խղճիւ մտացն յուզմանց՝ կրկին ննձեալ։ Եւ ձեռն 'ի մածի գործոյն՝ զկեանս հեստողեալ. և կերպ 'ի յատակ դիմեալ՝

ոտք 'ի վերջ կայս հետահարեալ: Այլ դիտումն եւյն՝ 'ի չէիցն միշտ խաբեցեալ. եւ 'ի մտացն մարա՝ 'ի փոքունցն յաղթահարեալ: Այլ 'ի թաւանչ արտին՝ հաղագին գուռն հրդեհեալ. եւ խոնաւ-գոյութիւն քմացն՝ ա̃ծ ուրեք տոչորեալ, եւ ա-նարեւ միգով յա̃մ մտաց պարփակեալ: Այլ լայնութի աննկալութեն՝ ամենեւին խապառ ամ-փոփեալ. եւ անըերելեացն այժմ 'ի գդալին ար-պաւորեալ. եւ եղկութիւն կորստեանն՝ 'ի յուշ անդ եկեալ. եւ պատահնիք հատուցմանն՝ 'ի դի-ւանի մտացն գրեցեալ: Այլ բարերարին ահն 'ի-ցաւումն իմ երեւեցեալ. եւ լոյսն բնութեանն՝ զանկուածոյ հոգւոյս զայրացեալ. եւ ահաւորու-թիւն Էին՝ ընդ փոքրկութի բնութեա ընդ հար-եալ. եւ միշտ որոտմամբ բանից՝ բանաւոր մխո-րոյս բարկացեալ. եւ խրատանցն վճռոք՝ զարմա-նիս մահու կոչեցեալ: Այլ որ իմն է տաղանդ՝ յանառակս աստէն կորուսեալ. եւ պատուական իրին ստացուած՝ իբրեւ անարգ յերկրի թաղել. եւ տաժանմանցն արդարոց՝ ծուլութեն մթով ծածկեալ. եւ իբրեւ զ'ի բաց բարձեալ նշմարան ծրագի չերեւեալ: Այլ պատասխանատուն լեզ-ուիս՝ յիրաւանցն ստոր՝ կարկեցեալ. եւ անհամ-բոյր չրթանցս զրութիւն՝ օրինաւոր դատմամբ պապանձեալ: Այլ յուզմունք մտացս՝ 'ի զանա-զան մտաւոնս ցնդեալ. եւ զենալն 'ի վերայ օգտին՝ ոչ ինչ գիտացեալ. եւ 'ի կշռութի բարւոյն ըն-

րութին՝ յիմար երեւալ. և ընթացք ելից՝ նո-
հանջման չարին խափանել. և վաստակն խո-
ղոյն՝ ամբռնումն հնոցի լցեալ: Նա անուանս դիր՝
'ի կենաց մատենէն եղծեալ, և կշտամբանք ընդ
երանութե՛ն՝ անդ արձանացեալ:

գ. Եթէ գինուոր տեսանեմ, մահու ակն ու-
նիմ. եթէ պատգամաւոր, խստութեան. եթէ
մատենադէտ, մարզական կորստեան: եթէ օրի-
նաւոր, անիծից. եթէ աւետարանական, փոշ-
ւոյ ոտիցն թօթափման. եթէ բարեկրօն, յան-
դիմանութեան. եթէ ապառում, կսկծման:
Եթէ ջրոյն ընդունութե՛ն փորձիմ, խորտակիմ.
եթէ գետ ինչ դատման ձգեմ, սատակիմ: Եթէ
բերս նկատեմ բարութե՛ն, 'ի կարծեաց չարեաց
փախնում. եթէ ձեռն համբարձեալ, կործանիմ.
եթէ փոքր ինչ խրատել, սարսեմ. եթէ սա-
կաւ մի թնդեւն, ընդոստիմ: Եթէ 'ի խորախ-
ծանս ընկղմեաց հրաւիրիմ, դողամ. եթէ մե-
ծիդ յանդիման լինիմ, սարսափեմ. եթէ 'ի-
հարցումն բանի կոչիմ, կարկիմ. եթէ իրա-
ւամբք քննիմ, համրանամ: Որդ՝ այսքան ա-
մենաթշուառ և ողորմագին տարակուսանացս՝
'ի վերայ միմեանց բարդելոց, ոչ զատորեն զգայ-
ականաց սրտիս դրութե՛ն 'ի ներքուստ անտուստ
անբժշկական ցաւօք՝ անկրեալք նետիւք խոցո-
տեալ, անպարտաբերելի մշտակիր յարածնաց հա-
նապազամուխ բեւեռեալ սառուա ընդ հոգւոյս,

լեալ շարաւով կեղեն հարուածով , փոխանակ սա-
տակման մահու գուշակեն : Թշուառս մթերից՝
պատեալ զերկաթով դաղանեալս ծածուկք՝ այ-
գեն լինձ տաղնապս՝ վէրս պահեալս անխնա-
մարկելիս՝ ընդ եւս չնչոյս տուրեւառութե . յո-
րոց նեղութեց չարաչար ծրնչեալ աղաղակ ձայ-
նիս . խառնեալ արտասուօք կողկողագին թախ-
ծանօք հոգւոյ , բարեգործիդ հնարաւորութե՝
յերկրպագեցից նուհատակաց ընդ իմ մաղթո-
ղաց , վերջին հեծութիւս և ես ընդ նոսին ար-
տասուօք ողբոց ամենեքումբք նուիրօղք՝ զա-
գերմանս բղձից՝ ՚ի սորինայնոցս սաստ յերկինս
առաքեմ : Շնորհեա՛ սէր անդորրութի կենաց
համդաւեան՝ ողորմելի փառաւորեցելոյս ՚ի յըն-
դունայն երկրպագործութիւնս , համայնդ յամե-
նայնում . ամի առաջեալ քեզ փառս :

---

Մեռանին յամենայնուժ կեղէն հեծութեան՝ նորին ձայնէ , առ նոյն տակերս մաքրանաց բանէ :
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

# ԲԱՆ. ԻԳ

Ա. Արդ՝ որո՞ց խնդրոց արժանաւոր վար-
կանելով զիս , մանաւանդ ապերախտ , արքա՞յութեն
յորմէ վրիպեցայ . եթէ փառացդ վայելչութե՛
յորմէ զրկեցայ . թէ կենա՞ցդ անմահականաց՝
յորմէ հերքեցայ . թէ ընդ հրեշտա՞կան պարակ-

ցուԹեան՝ յորմէ արտաՀեցայ . Թէ ընդ արդա՛ր-
ացն մասնակցուԹեան՝ յորոց ձերբեցայ .
Թէ ո՛ւր որԹոյն կենդանւոյ՝ յորմէ քանցեցայ .
Թէ ուր անկո՛յն բերկրուԹե՛՝ յորմէ գօսացայ .
Թէ ծաղկի փառա՛ցն շնորՀի՝ յորմէ Թափեցայ .
Թէ պանծանա՛ցն ժառանգաւոր՝ յորմէ կորացայ .
Թէ Հայրենի ծոցո՛յն Հարազատ՝ յորմէ ընկեցայ .
եԹէ զգեստուն լուսո՛յ պարծիմ՝ յորմէ մերկեցայ .
եԹէ 'ի ստացո՛ղ դրձին յուսացյց՝ յորմէ խորԹեցայ .
եԹէ 'ի լուսո՛յն իղձս զիմեցին՝ յորմէ մեկնեցայ .
եԹէ յիսուսի յանկե՛րան յօղիմ՝ յորմէ մերժեցայ .
եԹէ 'ի Թեւս Նորա՛ մերձիմ՝ յորմէ օտարացայ .
եԹէ յապաւէ՛նն ապաստանեցայց՝ յորմէ խեԹեցայ .
եԹէ 'ի փրկուԹեն Նորոգուի՛ յորմէ մաՀացայ .
եԹէ 'ի զգաստուԹեն զուարԹուի՛ յորմէ ես լքայ .
եԹէ 'ի կանո՛նն կենացն ուխտի՝ յորմէ փոխեցայ .
եԹէ 'ի սաՀմանն Հաստատագրակա՛ն՝ յորմէ սաՀեցայ .
եԹէ յանշա՛րժ վիմին Նշդուի՝ յորմէ սասանեցայ .
եԹէ 'ի շա՛րս գումարտակին՝ յորմէ Հանեցայ .
եԹէ 'ի քաղա՛քն անդրանկաց շինիմ՝ յորմէ գերեցայ .
եԹէ Հանապազորդեան Հացի՛ն աղօԹեմ՝ զոր
ոչ վաստակեցայ . եԹէ փոխադրուԹեան երկան-
ցըն խնդրեմ՝ յոր ոչ քրտնեցայ . Թէ պարգե-
ւօքըն պսակեցայց՝ յոր չՀանդիսեցայ . Թէ ար-
ձա՛ն ինձ կենաց գրեցից՝ յորմէ ջնջեցայ . Թէ
զերախտաւորացդ ձիր յիշեցից՝ զոր
միշտ մոռացայ :

Գ.. Մ՛ահ հասաւ և կամ խզեցաւ լար կենաց
յուսոյն . տխրեցայ ՚ի բոլորութենէն դարշութէ,
համայն ախտացեալ՝ ամի սպառեալ մարմինս՝
ապականութին շրջապատեալ՝ մեռոյց զիս : Գոյն
պալար՝ փայլունակ ողեղ լնայնեալ, մնացուած
ինչ պահեալ նախունակ երկղիմի կերպին, որ
զերկին անմաքրութին նշանակէ . պարծանացն
նշոյլ՝ ամենևին ինձ շիջաւ .. փրկութին մաս-
նեցաւ . բարին սաուերացաւ . ելք կենացն ըն-
նաւին փակեցաւ . մխիթարութիւնն բարձաւ .
դատաստանին առեան մերձեցաւ . Թոյնք մա-
հուն ինձ արծարծեցաւ . սպանեալն կրկին ինձ
կենդանացաւ . լասին դաղարք՝ վիմօք լցաւ .
շաւիղն յուսոյն՝ կուրացաւ . շնորհին ծածկոյթ՝
յինէն մերկացաւ . փառացն վայելչուն՝ ըստուե-
րացաւ . համձարին առաջնորդական՝ խափանեցաւ .
կշտամբանացն փուշ՝ բազմացաւ . անօրէնութեն
ուղէշ՝ ծաղկեցաւ . բոց գեհենին ինձ՝ բորբոքեցաւ .
ծառայութեն լուծ՝ սաստկացաւ . ստրկութեն կապ՝
զօրացաւ . ունօղն յարկին կառուցման՝ ահա ան-
կաւ . բարձրութեն փառահարան՝ կործանեցաւ .
ընտանութեն մխաւորաց՝ անջրպետեցաւ . սիրութեն
սիրող հոգին իմ՝ տրտմեցաւ :

Դ.. Ո՛ւ քանզի զվերջինն համբուրեցի դառ-
նութէն, տանջանս՝ խեթս՝ տխրութիւս, վշտս
հողեկանս, ցաւս անխնամօրկելս, տարակոյս
անյուսաղըրելս, ամօթանս անպարտերելս, խայ-

տառապանս անվրդովելիս, պատկառանս անհամաձայնելիս, փախուստս անդառնալիս, հալածանս անմարդասիրելիս, երկայն ուղևորութեն՝ ապաձեռն անթոշակութիւս, իսկ դու փրկութի զօրութի և օգնութի, ողորմութի լուսաւորութիւն քաւութի և անմահութի՝ տէր յիսուս քրիստոս, որդի այ կենդանւոյ, արարիչ երկնի և երկրի. որ ընձեռես ջուր պասքելոցն՝ 'ի ծարաւուտ վայրս անապատի, օրհնեալ, բարեգութ, հզօր, մարդասէր, երկայնամիտ, խնամակալ, հնարաւոր, այցելու. պաշտպան անախանձ, պահապան յաղթօղ, կեանք անկորուստ, միջնորդ երկնային, լուսութի աննուաղ, երանութիւն տօնելի. ձեռն ձգեալ սիրոյ՝ ողորմութեան քոյ աջոյ՝ ընկալ և մատո քաւեալ և սրբեալ զիս զամենապարտս՝ բանդ կենդանի՝ առ հաւատարապատիւ քո հոգի, զի քև վերադին կաշառեալ՝ յիս դարձցի: Այլ 'ի ձեռն քո՝ խորին կամօք մաքուր նուիրեալ՝ զօրեղն խոնարհութեյ զիս հօր ընծայեալ, անդէն առ նըմին՝ նովիմբ միշտ 'ի քեզ շնչոյս ողջունիւ կալեալ ընդ շնորհիդ՝ 'ի քեզ միանալ անբաժանելի: Ան որոյ քեզ՝ ընդ հօր քում հոգւովդ սըրբով՝ երրեակ անձնաւորութեանդ՝ 'ի միում բընութեան և 'ի մի ածութե՝ փառք, և 'ի սատեղծախմանց էից՝ գոհաբանութիւն, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Վերստին յաւելուած նշխն հեծութեան՝ նորին
հոկողէ, առ նոյն ազգիս ծաղկանաց բանի։
'Ի Խորոց սրտից Խօսք՝ ընդ այ։

## ԲԱՆ · ԻԵ

Ա. Բայց քանզի 'ի վերայ այսքանեաց դժուա-
թեանց անհնարթշուառ վտանգաւորիս՝ մի ըն-
միով եւս եւ ես առնելոյ, զոր զկերպարանս ան-
ցիցն 'ի մտանէ վերածանելովդ նախադրեցին․
ուսալ եւ փոխեալ զեզանակ բանիս՝ այլ ոչ զեղ-
կութիւն աղէտս։

Բ. Նոյն զի ծով է ինձ ծփանաց կենցաղոյս
բերմունք յայժ նմանապէս․ յորում կոհակօք
բազմօք անթիւ դիմեցմանց՝ տատանեալ հողմս
'ի յայսմ աշխարհի՝ մարմնոյս շնուածով իմ
'ի նաւակի։ Զոր եւս յետս մարդարէն զյանկար-
ծակէց կատարածն, որ 'ի պարսկական հնոցի՝
երուսաղէմի եւ սամարիայ կործանմանն, նմա-
նութեամբ այսր օրինակի կերպաւորեցոյց․ որ եւ
առ իմս հոգեւորական խարանակումն զուգաձայ-
նել՝ ոչ է անյարմար։ Քանզի մինչեւ ցուէլի եւ
յանհնարին անպատմելի վտանգութք, զոյն
կաակած արկածից 'ի միտ բերելով առ խորոց
փոքր միջոցին, որ 'ի մէջ հանդարտութեան եւ աշխա-
տութեան, եթէ այն թէ հասեալ եղէ ձեռն
յանմարմինն, ընդարմ հողմով ժամանեալ՝ հեղ-

քաղեանն զինակցութիւ , ամբոխեաց դժնդակու-
թիւնն : Սուսափ նուէն 'ի բախման փայլենի
ալեացն՝ խորտակեցաւ : Թեւոցն ձեռնարկութի՝
քայքայեցաւ . կայմն ամբարձման՝ 'ի կայից խ-
րոց խլեցաւ . առագաստին թռչման՝ յանկար-
կածելի ծուէնս պատառեցաւ . շինուածոյն շար
անդաղեցաւ . առասանք ձգողականացն խզե-
ցաւ . տեսարան գլխոյն գիտակի՝ խանգարեցաւ .
ապաւանդակին պարան կորեցաւ . ապաւինու-
թիւն խարսխին լուծաւ . լուծք սատարք ամե-
նեցն կցորդութեան՝ բաժանեցան . սամիք ուղղչա-
ցին հեռոյ՝ գալարեցան . լայն հիմնոյն հաստա-
տոնի՝ ընկղմեցաւ . ղեկացն կառուցմունք՝ անդ-
րէն սուզան . ջրւոյն յարմարութիք՝ պակասե-
ցան . ողնափայտին պատուարան՝ խախտն բեկաւ .
կապարանք զըստին հաստատածոյ՝ յօշատեցաւ .
գօտք ամփոփման ծոցոյն կառման՝ անտրդե-
ցան . խելք շրթանցն եզերաց՝ խախտեալ սատ-
կաւ . պաշպաշնունք բազմականացն՝ անկեալ բար-
ձաւ . վանդակապատին փայլուն թի՝ յատակե-
ցաւ . գաշաւորակին հանգստարանն՝ չփոխե-
ցաւ . մածմունք տախտակաշարք՝ 'ի միմեանս-
թեանց միմեանց անջատեցան . հեղոյսք ընդ-
ման բեւեռացն՝ քարշեցան : Երդափք երկին՝ յի-
շատակարան ողջոց երկն նմանեցաւ : Նաւո-
ղերն համդէպ նաւին գեղեցիկ ողջոց , ձեռն
'ի ծնոտի եդեալ՝ արտասուաց գետս իջուցանէ-

'Աշխարհք սակաւ մնացուածոյն՝ 'ի ծայրից ծըփ-
մանց աղեկոյ ծովուն, իբր խողխողեալ բանա-
ւոր՝ ողորմագին թախծանօք հեծէ։ Վասն զի
թէ զբարի նաւապետն՝ երկնաւորօքն զօրօք՝
յաշխարհիս ծովու առ 'ի զխորտակեալս խնտա-
պան խնամոյն գոյութեան՝ տացէ աշխարհին բա-
նիս յարմարութիւն, ոչ ինչ վրիպեսցէ 'ի ստու-
գութէ։ Քանզի արդարեւ եկաց բարեգութն
տէր՝ յառաջ մարդկութեան՝ զթաղեալ աղա-
կելոյն. եկաց առ նմին եւ զերուսաղէմ մակեալ, եւ
գլուգաս մակեդնեալ. յորոց երկուցն՝ կործա-
վստահութի՝ յօրինակ նմանութեան աշարանել
նաւի. իսկ միւսն՝ հասեալ յառաջս անդնդոց,
ստաստան յուսոյն՝ ձեռամբ ունողին՝ յանքոյթն
արտաբերեաց խաղաղութի։

Գ. Արդ՝ իցէ՞ թէ յաւելից հայել զբազմախոր-
տակելի տապանակ մարմնոյս իմոյ՝ նորոգեալ։
Իցէ՞ արդեօք տեսանել զփշրեալս նաւ ողջակի
հոգւոյս ողջացեալ։ Իցէ՞ արդեօք տեսանել ըն-
թաժանեցեալս միջնորմ մեծաւ՝ վերստին կցեալ։
Իցէ՞ արդեօք տեսանել զզօրնաթախիծ սիրտ վըշ-
տացելոյս՝ բերկրեցեալ։ Արդ՝ իցէ՞ ակն ունել
նայել զյաւէտ խաթարեալ կերպարան բնութե՝
կրկին հանդերձեալ։ Իցէ՞ արդեօք թէ տեսից
զբակտեալ տաղաւար թշուառացելոյս՝ միա-
նգամ կանգնեցեալ։ Իցէ՞ արդեօք յուսալ
նայել զառամեալ դէմս՝ պայծառեալ։

Ապաքէն դուցէ ակն ունել՝ զանկեալս ՚ի շնոր-
հէդ լուսոյ՝ դարձեալ կազդուրել: Որդեօք
տեսի՞ց զվայելչութի՛ն ընտանիդ քո պայծառուն՝
յողորմութի՛ն ինձ երևեցեալ: Եթէ տեսի՞ց եր-
բեք զամենատեսուր կերպարան հոգւոյս իմոյ՝
ժպտեցեալ: Որդեօք լուա՞յց ընդ ձայնի դու-
ժիս՝ աւետեաց համբաւ՝ ինձ առաքեցեալ:
Որդեօք տեսի՞ց զեւրակործան վնասեցեալս ա-
նօթ՝ կազմեցեալ: Իցէ՞ թէ տեսցեն պատու-
հանք աչացս իմաստից զմուրհակ պարտուցս ի-
մոց՝ պատառեալ: Եթէ յայտնեսցի՞ օրն իմ
անձկութեան՝ շնորհին քաւութեան՝ բարւոք ինձ
ծագեալ: Որդեօք մտի՞ց ՚ի խրախճանութի խո-
րանին լուսոյ՝ քև առաջնորդեալ: Իցէ՞ թէ կեն-
դանի լինիցին ոսկերքս, բաց եղեալք, ցամա-
քեալքս ՚ի կենդանութենէ՝ նկաւորութեն ազդո-
ղական շնչոյս զօրացեալ: Իցէ՞ թէ յաւելից հա-
յել ՚ի տաճար սբ քո, աղաղակաւն մարգարէին
՚ի դուրս կլոփին, հերքեալս ՚ի լուսոյ՝ որ կամ
առաջի ամաչեցեալ: Եթէ լինիցի խաւարաս-
նունդս մթացելոյ՝ ծագման առաւօտ: Եթէ
հասցէ՞ տեսանել զառագաստանս մշտատեւոյ՝
յեղանակս դարնանն մօտ: Եթէ տեսի՞ց զզօղ
անձրեւոյն կանաչացուցանողն հոգւոյ՝ ինձ արօտ:

Եթէ իցէ՞ արդեօք նկատել զգաղտնածածկ
հեշտալի ողջունի՝ մերձաւորին կամաց
գթութեան քո հօտ:

Դ. Ն՝ու քանզի լաւ բանին յոբայ , շուրջ պա-
տեալ են չարեաց հնարք՝ ընդ որ ոչ կարացից
անցանել . իսկ եթէ լոյս ողորմութեան բարերար
կամաց քոյ՝ ցուցցի . գթութեան քոյ դուռն բաց-
ցի . Ճառագայթ փառաց քոյ՝ ծաւալեսցի . խը-
նամք ձեռին քոյ՝ յայտնեսցի . արեգականդ կե-
նաց որ՝ տարածեսցի . առաւօտուդ ըղձալի սե-
րիդ՝ մերկասցի . առատութեան քաղցրութեան քոյ՝
աղբերասցի . փակ արքայինդ կողից՝ հոսեսցի .
ծորումն անապակ սիրոյ քոյ՝ հեղցի . ծագումն
աւետեաց շնորհի քոյ՝ երեւեսցի . պարգեւիդ քո
ծառ՝ ծաղկեսցի . մատունք օրհնեալ մարմնոյդ՝
բաշխեսցի . համառօտեալն անձկալութի՝ հան-
գլեսցի . հաստատեալ ձայն ողջունի քոյ տէր՝
լուիցի . հեռացեալդ խաղաղութիւն՝ մերձեսցի։
Յայսոսիկ յաւէտ սովին սահմանաւ երանակա-
նաւ՝ հաւատ ընկալեալ յուսոյ հաստատնոյ ,
ապաւինեալ ՚ի հոգիդ քո սէր , որ ընդ հօր քում
պաշտի ձայնիւ քաղցրութեան՝ ընդ քեզ փառա-
րեալ ՚ի լոյս անմատոյց , որով կեանք եւ երա-
նութիւն քաւութեամբ հանդերձ՝ ընծայեալ
ինձ մեղապարտիս : Յաւանդ անկորուստ ընդ
իս պահելով առ հաւատչեայ ճշմարիտ յիշա-
տակի . ՚ի ձիր անեղծութեան՝ անուամբդ անմա-
ռելեաւ ահաւորութեան հզօրի սրբոյ միայնոյ եւ
անքննելի տէրութեան՝ երբեակ անձնաւորութեան .
որ եւդ յիսկութեն յէութեան եւ յարակայութի

բարձրութեան՝ քաղցրութեամբ ողորմութեամբ և մարդասիրութեամբ պսակեալ հանդերձեալ և թագաւորեալ: Այո՛ առ ամենեսին ամիւ ամի կարօղ ես՝ գթած . և քեզ վայել է փառք յաւէտ յաւիտենի , և ՚ի հանդերձեալ մշտնջենաւորութիւն յայտնութեան աւուրն մեծի , յաւիտեանս . ամէն :

---

Մէրամին յանձնուած կղէկն Հեթումեան՝ Նորին
հօկողէ , առ Նոյն աղէկս մաղթանաց բանէ :
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ոյ :

## ԱՂՍ · ԻԶ

Ա. Դու արդ՝ սաստկապէս և խրատարար , ընդ որս որք ըստ ձայնից կոչկոչանացն՝ և զբանից յարմարութեան հանդերձեն , ՚ի նոյն գիր բերեալ ղաստատմունս տանցն , որովք առաւել սաստիկ մորմոքեալ ձմեռնացուցանեն զադեաս կորեացն սրբոյն ըղձից՝ առ արտասուացն բղխմունս . ուսոյ և բաղձեալ իմ ՚ի գլուխս պարու՝ անիրից դասու այնր երախանաց , որք զայեաց՝ յեզանակեն բանաստեղծութի , և ես ընդ նոսին՝ նոցին հեծութեան՝ աւաղական ձայնարկութեան՝ զանձինս տարածանեմ պէշապկութիւն : Որ ոչ ընտրեն մեռեալ աշխարհի , և ոչ խոկալով կենդանի ոչ . ոչ ջերմասէ , և ոչ ցուրտ յատուկ , ըստ սաստի

աւետարանչին՝ գրեալ 'ի յայտնութեն . երիցս ասել՝ երրեակ սրբութեանն , և ամենատես արարչութեն : Եւ այս են պատկանեալ Թախծականացն կերպարարութիւնք , կրկին ողորմելի այսու երևեցեալ , որ 'ի մի գիծ սահմանեալ կացուցանեն զԹշուառութեանցն զօրինակ , այսպիսի

կցորդութիւ շաղկապեալ :

Ի . Պարտուցն ժխտեալ տաղանդացն՝ ճեպով մեծաւ 'ի տուժի . ես ապիկար մնացեալ՝ անարժան գործովքս յիրաւի . վասնիչ արքունի գանձուց՝ կրկնապատ և անԹափելի . պատասխանատու մեծին՝ ըմբռնեալ անհրաժարելի . բիւր քանքարոյ խնդիր՝ ես չունիմ կշիռ մի ունկի : Ընդարմեխօս կապեալ 'ի պահեստ՝ դառն արգելանի , հեծութեն և վասնակ ցաւոց՝ ճաշակեալ յանձնչոյլ բանտի , անապաւէն տանջեալ անԹոշակ՝ կամ ողորմելի . այլ յեղանակ լինի ողբականաց՝ սաստուկ կնքեցի , փոխատրեցի սովին բարբառով կոծ կականի , կարգադրեցի շրջաբերութեամբ՝ 'ի նոյն պայմանի , անհատական Թիւ խորհրդական՝ երկեակ տասնեկի : Աղքատուեն հնոց՝ յամենասաստ մասանց մերկ . անպատսպարԹշուառ փառնդէլ սրտի 'ի դրան է . տարակուսիլ հոգւով ապաշխարհ այր 'ի վիճակի . անխնամելի հայցմամբ՝ դատաստան յետին պահանջի : Այդպէս և մահու գետոյ՝ զզայարան դադանեացս խոցի . անփրկելի մնացեալ բանտէ՝ չարեաց գերի .

սուր սուսերաւ սատակից՝ դդուճ բնունս յօշատի :
Յիշատակաւ բեմին՝ աստատին 'ի դատաստանի ,
անծագելի մուայլ՝ չարատես աչացս երևի .
անձեռնկալ կապեալ՝ եղկելիս 'ի տարակուսի ,
ահարկութի գլխոց՝ պատկերի վերնոյն սեպանի :
Յոժ անարի՝ և անվերարկու 'ի տարտարոսի .
անապաւէն մոլար՝ մոլորեալ 'ի Հուր գեհենի .
անյայտնելի կորուստ՝ կործանեալ 'ի մեղաց վՀի :
ԱՀաւոր ունիմ արծիթ անգլխան՝ ոչ երբեք յղդի,
և ոչ ընդունի և կիմ Համբարի՝ 'ի գանձ տէրունի .
Հայցուած պղտոր և ձեռն անմաքուր՝ աննուիրելի :
Այլ բեկեալ սրտիւ մատանց տատանմամբ՝ յոյս
առեալ դարձի , դդեսս 'ի յերկիր եղեալ պաղա-
տիմ՝ մօրդ յի . բարեխօսեա մաղթեա քաւու-
թիւն ինձ մեղաւորի . դու զօրաւոր փրկանակ
կենաց՝ խնկուՀի երկնի . քեզ օրՀնութիւք ձայ-
նից՝ և բուրմունք խնկոց 'ի յերկրի , և անուշից
իւղոց մատուցու՝ մին յամենայնի :

Դ. Արդ՝ յասպեալ ողբոցս Հիւսուած՝ այլ
մասն յաւելի . բարեբարին շնորՀաց արտասուաց
պտուղ մատուցի . գերբասեան խորս չափելով՝
զորքան երբեք ոչ գտի . մանկաւորօք բանիւք՝
'ի Հանդէս նորին ջանացի . զմտացս արադեալ
զթևս՝ յերևոյթ իրին ոչ Հասի . զուշին պար-
տութիւն յանվթարելեացն՝ բաժակ բարկութե՛
'ի ձեռն իմ առի . զապարտամութի տարակուսա-
նացըս՝ իբր ճաշակու մն մաՀու արբի : Եւ այժմ

զկամացիցն յանձնառութիւն՝ ողորմելի ձայնիւ յերդ-
արկի . անսրբելոյթ կրակարան տապոյ՝ բորբոք-
մամբ մեծաւ անզովանալի . անտեսական խմըն
քրայս հալոցայ՝ տատափիկ եռացմամբ անշիջա-
նելի . սլաքս նետից պատկանեալ գիզովք՝ 'ի լը-
տեմարան խորութե սրտի . խիթք ցաւոց խո-
ցոտման մահու՝ 'ի գնացս երակաց դղուեթեան
լերդի . կերք երկանց անճարակ ճեպոյ՝ 'ի պատ-
ուած աղեացս անելանելի . անզօրելի դեղոց ջեր-
մութիւն 'ի յերիկամանց մասունս երկակի . ան-
հնարաւոր դառնութի մախձի՝ 'ի նախադրուն
խմըս կոկորդի : Նուաղս ձայնից լռուցանողայ՝
'ի փողս շնչոյս խոշոյս հնչի . բազմահատուած
էութիւն բնութեա՝ ներհակք միմեանց 'ի պա-
տերազմի . երկշոտութի կարծեաց վարանեալ՝
ամենայնիւ կայ 'ի վտանգի . հարազատաց դա-
ւաճանութիւն՝ անհաշտելի 'ի կռուորուածի . ոչ
մեռեալ և ոչ կենդանի՝ թաղեալ 'ի մեղաց դժո-
շութեան տղմի . կասկածաւոր պատժապար-
տութեամբ՝ վերակնարկելով քեզ բարերարի ,
յանակնկալս կենաց վհէ՝ սրտաբեկեալ 'ի լոյս
անձկալի :

Դ . Այժմ ինքն որ զայս՝ բան տպաւորեաց . ընդ
երջանկա՝ ցըն պատկեացի . ակնարկելով քո ողոր-
մութեան , անպարտ՝ ցըն հաղորդեցի . վան-
դենման այդ բանիդ , բարեգործեալ՝ քև կենդա-
նացի . օրհնութիւն՝ գովեալ քո շնորհաց՝ 'ի-

գլուխ բաշխողի՝ այսր մատենի․ հաստատեսցի ըղձականութիւն սողոմոնեան բանիս առակի․ նըկարագրեալ հոգւով քո՝ բարձրեալ, ՚ի նորոգումըն անեղծանելի ։ Ո՜վ դու միայն ես երկայնամիտ, ներող՝ քեզ փառք յաւէտ․ ամէն ։

---

Մերոյին յաւելուած էջին հեծանուենան՝ նոյին
հոլովոյ, առ նոյն ալեօք մոլորանաց ծանէ ։
՚Ի խորոց արտէց խօսք՝ ընդ ոտ ։

## ԲԱՆ․ ԻԵ

Ա․ Եւ քանզի ընդ ողբաձայնիցն բանաստեղծութեանց վերընծայելոց գլխուն թուոյս յարմարեցի՝ կական և հեծութիւն, հառաչանք կողկողագինք, դառնութիւն լալումն և արտասուաց հեղ, դարձեալ սկայց զձայն պաղատանաց՝ խոստովանօրէն զղջականարար՝ զդաւանածածուկն յայտնարարութ․ զի անդրադարձութի սկզբնամբն՝ և վերջաւորօքն բանիւք, զնոյն հաճաձեւութիւն ՚ի մի թախանձ նմին մաղթանաց՝ հոգեկեցոյցն խնամարհուն աստանօր եդից։

Մեղայ մեծիդ բարերարութեան, անարգս մեղայ.
Մեղայ ծագմանդ ճառագայթից, խաւարս մեղայ.
Մեղայ շնորհցդ անպատ երախտեաց, արգելս մեղայ.
Մեղայ սիրոյդ վերնումդ գթութեան, յղանալես մեղայ.
Մեղայ սատացողիդ յոյս էութեան, ստուգապես մեղայ.

մեղայ դերունակ դողոյդ դրկմանց, անբաւս մեղայ·
մեղայ աննուազ լուսոյդ փայլմանց, նենգօղս մեղայ·
մեղայ ճաշակման անճառդ կենաց, բիւրումս մեղայ·
մեղայ անհաս պարգեւացդ ձրից, համայն մեղայ·
մեղայ դովեալ մարմնոյդ քո, մահու չափ մեղայ·
մեղայ պաշտելի արեան արդիւնդ, խնկաւէս մեղայ:

Ո՛հ՛ արդարեւ օրհնեալ է հատուած բանի՛ յուսադրական սրտի՛ այսր մեղայի. սո՛յն սա՛ պատուելի աւանդ. անմոռաց պատուէր. հայրենեացն ասուր. նախահայրցն օրէն. համայնից թօշակ. անհերքելի բան. զօրաւոր պատասխանի. կենդանութեան կամուրջ. անդրժելի վերնոյն. սիրելի սրբոց. անխզելի կապ. հրաշալի բարբառ. անշրջելի պատճառ. բաղձալի աղերս. փափաքելի սեղան. սրտաբեկ հնչումն. անհնարից ճարակ. կարծուեն փանիչ. անծապաշտից սահման. հեթանոսաց դիրք. փախնջուց կանոն. քրիստոնէից հարազատ. արարչութեան յաղթօղ. անջրպետ հզօր. խարոց ահաւոր. արուեստ բարձրութեն. խորութեն անչափ. հիացման սեսիլ. խորհուրդ կոչեալ, ընդ որ չէք ումեք անցանել, եթէ ոչ անըմբռնելի մտաց արարման՛ զօր ծանիցէ: Զայն բարեպաշտն հրաշալորական, որ ոչ յիշատակեցաւ 'ի վերջին դատակնիք դատուն լրելոյ. գուցէ առ 'նմին խղեալ համառօտ զվերժակն խրաւանց մահուն հատելոյ, յորժամ ընտրութեան ապաշխարօղ եղեալ, ըն-

զսահմանն յաւիտենական քաղաքէդ : Օ՜ արդ
փառաց մեծութե , որով նոյն ինքն մեծութիւն
պատկեալ բարգաւաճի : Քանզի ո՞վ որ դիմեալ
կալաւ զերջերաց սեղանոյ այսր արքութե , և ոչ
առժամայն արձեալ 'ի պատժոյ` անպարտադատ :
Իսկ եթէ աւար գարմեան , և սաստիկ կինեան ,
և յուղս սխմաննեան` անկեալ զոյն ոչ արդարա-
ցան , և ես մեղաւոր` խրատամբք խոստովանեալ
զայս պայման բանի . զի անմասնութեանց բնակա-
ռանց` ոչ է կատարեալ սէր , սակայն և ոչ բա-
րեպաշտութեան փրկութի : Իսկ ես կամիմ համ-
բարձել զազատեալ կրկնելով զերջանիկ բանիդ ըն-
մերտութե հարազատս :

Դ. Մեղայ երախտեացդ մատուցութե , փրկո-
տին մեղայ . մեղայ մարմնոյ ձեռն յոգի հայրեալ ,
քննարս մեղայ . մեղայ առ կեանս դժոխդու ,
խակ և խակ մեղայ . մեղայ բանիդ ապախտ առնե-
լով , չարաչար մեղայ . մեղայ 'ի յօր սատակման` ին-
ձին բռնաբեալ , փառթարս մեղայ . մեղայ պար-
տական անկենդան մահուն , ձաղելիս մեղայ .
մեղայ անպատկառս քո բարձրումն , տաղտկալիս
մեղայ : Ներքին ինձ կրկին աշխար հոգւոր , զի
'ի կորուստ և 'ի կործանումն ինձ երևեցայ . զի ան-
դարձս վարատեցայ . զի որդիս` թշնամի գրեցայ .
զի 'ի բարձանցն երկնից ընկեցայ . զի փուշս փա-
բուց զինի : Այլ ես առ ամին ողբս աղաղակի , զի
ինձամբ զանձն անարգեցի . զի բոցին կորուսին

գտայ ։ Այլ են կսկիծ դժնդակ սրտի, զի՛ զնա ունին՝ առ որ չէր, զտարաքնայարդար բամակս անմոքուր , զքուեալ որմն գաղշունակ , զսին պարծանօք պաճուճանօք , զնոյն՝ 'ի մնայլ շրջ-եալ , զգերանակիր ակնն՝ թշուառացեալ , զջա-հէն փառաց՝ շիջեալ , զմիտս յամի ամ իրոք մնասակարս , առ անօրինականն ակրունակս . առ յայտնութեան ածայինս . առ երևմունն ա-բարչարքս . առ խոնարհութեան սարսափելիս . առ այն՝ զոր տեսի աչօք իսկ իմովք։ Ո՛ր որ մեծ է պատասխանատուութիւն , քան առ համօրէն ա-ւետարանին՝ զարմանս , հիացմունս . հոգս հա-լողականս . անդաձմունս անհնարաւորս . թուա-կանութիւն՝ մնաց անբարդելիս . նշմունս անկա-տարս . իջմունս անհասատատս . յուսահատութիւն յարմարականս . յանդիմանութիւն պատշաճա-կանս . ձաղանս պատեհագոյնս . նզովս լրաւա-ցիս . անէծս արժանահասոյցս ։ Որք՝ այսոքիկ են մնջաւորս իմ կշտամբութիւք , և ինքնահար-

ուած տանջանաւորութիւն։

Դ. Ս՛ու . քանզի կարօղ ես զայս ամ զգալուս թողուլ , և զխայթուածս մահու բժշկել՝ տէր ողորմութեանց , ամ բոլորից , քրիստոս թագա-ւոր՝ բարձրեալ հօր որդի , սանդծիէ՝ գթած՝ բա-րերար , օրհնեալ՝ տուտ՝ հարուստ , աշաւոր՝ հզօր՝ ողորմած , տէտու՝ ձեռնհալ՝ հաստիչ , ապրեցուցիչ՝ զարմանիչ՝ կեցուցիչ , երկայնա-

թեան , մանկավարժ ինքեան և Նախնի , մեքենայիւ մահու սղոցեաց ,'ի յերկուս մասունս խըզեալ՝ դժնդակ տանջանօք մաշեաց իբր խորհրդով ապստամբութե՝ գլուսոյն փրկանակ կարեալ : Նա որով գլար յաւելուածն մոլեգնական՝ ըղքրէական վերնամարտութեին՝ 'ի բարձրեալն յանդըգնութիւն . քանզի ոչ պատկառեաց երբէք զստեղծողին պատիւ և զանուն՝ յիւրարնակ խորանէն մերժել . հալածեալ զնոյ հոգին , բըխարայ զանձն զաւանեաց : Քանզի զնոյն տաճար տիրական՝ ինկարկութեան հաստողին սահման՝ հուշակաւորն երկրի տեսարան՝ զարդասիրելին ազանց սրբարան . ուր տեսիլք հրեշտակականք և ածային հրամանք յաղթողականք՝ լուսաւորապէս յայտնութեամբ աղբեալ երեւէին . զայն վայր երկնանման ահաւոր սքանչելատես՝ քեանոյ ումեմն քաւաղիմակի՝ նախանձարկու պատկերի՝ աւերածոյն անապատի , պաշտօնեատեղ զարշելի և դիւաձնեձեր զոհարան պատրաստեալ կացմեաց : Օրհնեալ զարքայն երկնաւոր՝ 'ի յարքայականն կայից . զամենահարուստ՝ ունայն 'ի ստացուածոց իւրոց . զտանուտէրն՝ անհանգիստ և թափառական տատանեալ : Նեհեղզեբուղայ ձեռուն նկարեալ , և զանունն ահեղ՝ փառանդի արարեալ . գերի տարեալ զաւանդ զօմելոյն , ողբալի՝ զողորմածին մասն նուաղեցուցեալ . ողռեսուն փոքու ապարանք՝ զօրահն լուսոյ կար-

դեալ , և բնաւին ունողին՝ և ոչ գլխոյն տաղա-
ւար յիւրայնոցն եդեալ . հատեալ զցանկ հզօ-
րին , բախտից հմայից՝ զնշանն մեծախորհուրդ
արեանն սրսկման՝ երևեցուցեալ : Լայնեալ հե-
ռու բազումն՝ ընթացելոց 'ի գայթակղութիւն.
հովիւ կորստեան՝ հօտին սատակման . մոլորու-
թեան բուռն վարդապետ . և այն՝ գիտութի
կրօնիցն օրինաց , հայր ունելով զմեծն եղեկին՝
զնմանակիցն դաւթի :

Ն. Այնքան ստացեալ զամենա չարեաց , որ և
զնոյ պատիւս՝ որ զարքայութեն փառս ընծայ-
եալ նմա , հայհոյեալ և թշնամանեալ . և զա-
գօթկերացն բազմութի սուսերա մահու խող-
խողեալ : Ընտանի դաւաճան . մերձաւոր փառ-
նից . հարազատ սատանկից . կցորդակից սպանօղ :
Նա ամ ոչ գոյր գառնով , զի ուրացեալ էր ըն-
նա . զաբրահամ ոչ էր յիշել , զի խորթացեալ
էր 'ի նմանէ . զիսահակ ոչ էր աղօթել , զի ըն-
դոլեալ էր 'ի նմանէ . զիսրայէլ ոչ էր պարծել ,
զի տարագիր էր անուան կոչմանն մեծախոր-
հուրդն շնորհի . զդաւթեան երգ ոչ էր նուա-
գել , զի կշտամբիչ էր նորին . 'ի քաւարան ոչ էր
մերձենալ , զի պղծեալ էր զնա . 'ի տապանակն
ամպիծ ոչ էր ապաւինել , զի ընդ գարշութե՛
ձուլածուին էր փոխանակեալ . առ մովսէս ոչ էր
կարդալ , զի անքաւելի էր պարտիքն՝ որ առնա .
առ ահարօն ոչ գոյր աղաչել , զի ...

էր առ նա . առ մերձաւոր մարգարէիցն գունդ ոչ էր դիմել . զի սպանող էր նոցա ։ Դու նորա քաւութիւն մեղաց , և արքայութի թագաւորութեան վերստին պարգևեալ տուաւ . զի քեզ՝ բարերար , բաղմացուցես կարգեսցես գովեստ անճառս և անլուելիս՝ 'ի յազգս տոհմից և 'ի դարս ժամանակաց . և զգուան յուսոյն մաքից անխակելի պահեսցես՝ 'ի փառս քոյդ բարձրութեան և 'ի փրկութիւն դատապարտելոյս . անմահութեանց պարգևաց տուիչ քրիստոս , գովեալ յաւիտեանս . ամէն ։

---

Սերոբին յաւելուած կցկին հեծեծանեան՝ նորին հոլովն . առ նոյն աղերս մաղթանաց բանն ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

## ԲԱՆ . ԾԲ

Ա. Օրհնեալ տիրաբար 'ի քում էութեան, անհասանելի և անփոխադրելի . խնկապէս բարի, պաշտօն ընկալելի , և երջանկութի խոստովանելի ամ երկրի . երկայն յուսոյ ամենապատրաստատեսութիւն . գթած ողորմած , որ ոչ պահես ոխս բաղմութե ամաց մեղանաց՝ քթթել մի ական . որ հրաշաւորս զարմանալիս՝ գեր քան զամ աղենոյս նախնեայն՝ անհասման առաւելութի՝ կրկին ընդ միոյ հաճեցար հեղուլ ողորմութեան

վերնահաս վտակս ամենախնկաւորս 'ի շնորհաբաշխութեանս նորուն ։ Այլ զանտուստ զմուտս լուսաւորանի պատուհանին անձկութե՛ նշուլիցն աղօտականաց , չափով դիտութեան ըստ սողոմոնի , և իւր խակ նմին , և ինձ ընդ նորին՝ բացեր ընդարձակեցեր թշուառացելումս զառադասն անջրպետարան ելից ողորմութեան՝ ձրի պարգևացն ածականաց . զոր ընդ մեզ իմն մասնաւորք աւետաւոր կշտատակաց և 'ի հնումն զայր տպաւորութի՛ օրինակաւ նկարագրեր , ընդարձարուքն առ իս , և ես դառնամ առ ձեզ . և յորժամ դարձցիս և հառաչեսցես , յայնժամ կեցցես ։ Նա զի և զաղջամղջին սնութի դունոյն՝ փոխարկել 'ի ձևան պայծառութի՛ . և զալանցն արևամբ ներկելոցն՝ յեղանակել 'ի պատահումն գեղման , ըստ եսայեայ և զաքարիայ . և 'ի մէջ բարկութեանն՝ դարձեալ զյդ ողորմութիւն . քանզի անապատանալ քաղաքացն խաբայէլի , և դարձեալ բնակել . և ճանապարհացն ամայի լինել 'ի չգոյէ մարդկան , և անդրէն հետևելի . և լքանիլ 'ի սովոյն ուժով , և դարձեալ զօրանալ ձեռամբ . և գնալ ոչ 'ի տեղի իւր զայրացմամբ , և դառնալ ողորմութ . ըստ նորոգողն՝ զելոյն , և 'ի մէջ սաստիցն սպառնալեացն՝ կրկին պաշտպանութի՛ և 'ի սրտին խռովութ՝ յուզումն խնամոց դթութե ։ Այս մարգարէիցն ձայն խնկելի , որ զօրհնեալդ քո դալառեան զաղտարիրդ հրամանն կանխաւ աւետեին ։

Ի․ Եւ զոր չէ բաւէ նիւթեղէն լեզուի ընդ
թիւ արկանել վասն անբաւութեան, փոքունք են և
նուաղունք օրինակք և նմանութիւնք, հինք և ժամանակաւորք՝ առ աւետեացդ քո յայտնութի, և
խաչիդ փրկագործութի։ Որ յամ վայրի կատուցեր զնորանն վկայութեան արեան քո ուխտի, որք
մեծարարբառ միշտ աղաղակեն՝ քան զզատակնիք
մահուն հարեալ՝ զյաղթանակ բարեաց քումդ
հանդիսի, կեանս կրկին և անմահականս՝ շնորհաց, մկրտութեան, յարութեան, նորոգութեան, առ քեզ
բնաւորութեան, ընդ հօրդ և հոգւոյդ սրբոյ միութեան, քաւութեան, ազատութեան, լուսաւորութեան, մշտնջենաւոր մաքրութեան, խնդալից երանութեան, ընդ վերնայնոցն կցորդութեան՝ անկապուտ փառաց. ՚ի շնորթուն մերձայնիւ բարձրեղոյն հաշտեցուցիչ բանից աղաչանք։ Եւ զոր ահաւորն է ասել, կարգեալ
ատամնօր՝ յիշատակ եղեալ մեծիդ երախտեաց՝
ած խոկ լինել ընտրութիւ շնորհին, և ընդ հատտ
ղեղ միանալ՝ անբանի մարմնոյդ ճաշակմամբ, և
ընդ լուսոյդ կենաց խառնութիւ. զոր կատարումն
երջանիկ խոստմանն, ըստ պօղոսի բանին, ուսունէր օրէնն։ Եւ զդու փրկութի, եկիր հայրենիդ
քո հարազատութիւ, ապաքէն և կատարեցեր զյաւոյն
յերկարաձգութի, որ առ քեզ պահեալ անհամառօտելի քաւիչ ամի։ Եւ քեզ փառք ընդ հօր
քում ՚ի զուգեալ բարեբանութեան հոգւոյդ քո
սրբոյ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Մէջբերումն յաւելուած նշխին հեթանոսեան՝ նոյն
հոկտեմ. առ Նոյն աղէրս մաղթանաց բանն:
՚Ի Խորեայ արտից Երուս՝ ըստ այ:

# ԲԱՆ. ԾԴ

Ե. Տէր տէր զօրութեանց՝ բոլորից գոյից Թագաւոր, որ հնարանեալ ողորմութի ած ամենեցուն: Որ յաղթես սահմանի լայնատարած ընդարձակութե. ամ անբաւութեց դու ես որքանութիւն. մինչ զի կարծրն՝ քեզ հաստատուն է, և լոյծն՝ քեզ պնդակացմ, և չիք քո իր անհնարաւորական՝ յաղթօղ զօրութիւն ահեղ. հուրն՝ ցօղ լինի է զովական, և անձրևն՝ բոց կիզանողական: Զքարն բաւես ցուցանել կերպարան աղբման, և զգանակն գնես անխօս և անշունչ արձան: Զպարտաւորն ողբեալ՝ պատուական առնես, և զկարծեցեալն մաքուր՝ խրատամբք քննեալ դատես: Զմատուցեալն ՚ի մահ՝ բերկրութեամբ բարեաց արձակես, և զամբաստեցեալն՝ զուարթ տեսութեամբ օծեալ՝ դարձուցանես: Կանգնես զմատնեալն հաղբից դղորման, և զատանեալն՝ ՚ի վտահոյի վիմիդ հաստատես: Զախտացեալն բազմահատաչ՝ երջանիկ կարգես, և զյուսահատեալն՝ դարձեալ անպէտն ՚ի յետս նահանջես: Դու յորժամ սպառնես առ ՚ի մէնջ բարկս, զատուել դարմանողին յոյժ

ժամ ներգործես․ քանզի փառն քո զխանս թո-
ղուլ զմեզ՝ և ջնջել զանօրէնութիւն, և քաւիչ
լինել անիրաւութեանց՝ և զմեզս մեր ոչ յիշատա-
կել, ըստ Եսայեայ և Երեմիայ:

Բ. Այլ առ շնորհ նորոգ փրկութեան՝ բազմօք գոհաբանութեամբ հետևեալ, ՚ի յաճախութի անբաւիցն՝ լռեալ առ սմին խոկոյն կարկեցայ․ քանզի կրկնեալ զլուսոյդ անապառ բարիսդ, որ ՚ի քէն առ իմ յամառս թշուառութի, քոյին աղերսիւ առ քեզ մաղթեցից, յարմարեալ դարձեալ ՚ի նիւթս բանիս զտառ ողբերգութե այսր մատենի, լցից թախծութեամբք և հեծեծանօք: Այլ աւելալ խառնեցից ՚ի տուողին հաճութի, ընդ ցաւոցն՝ զդեղն․ ընդ վհատութեն՝ զխրախոյսն․ ընդ յուսահատութեն՝ զյիշատակդ անուան հաստողիդ․ ընդ տխրութեան՝ զափոփանսդ․ ընդ խմուման դառնութե՝ զքաղցրութի կենարարիդ․ ընդ պատիժ օրինին՝ զշնորհն․ ընդ պարտ անիծիցն՝ զազատաւոր օրհնութիդ․ ընդ մարմնոյ մահուն՝ զանմահ նորոգութիդ:

Գ. Աստուածահզօրիդ բանի, ուստի վկայեմ․ ըստ ըթութեան սրտիս՝ տէր յիսուս, որ հնչումըն է առ քեզ մեծութեան ձայնի երկար գոչելոյ: Որ մարմնականց և պատկերականց մեր եղեալ, և քաղցրանայապետապէս անօրինակդ՝ զօրինակին խառնակեալ զլուծ, ընդ զքենման մահու անսանայն՝ բարերանեալ մարմնոյդ նուիրմամբ, անմա-

հայելս միշտ մատուցանես, և աննուազաբար քաւութիւն շնորհես, ոչ սակաւամեղիցն միայն, այլ և որոց հատեալ է ակնկալութի առ ևս կենաց: Ո՛վ որքան զօրէ մարմնոյ անդամոց առ մեզ կենդանութիւն, թէ և բիւրուց ամաց ունիցի յերկարաձգութիւն, յորժամ ա՟ծդ բոլորեցուն վասն սորին կամաւ և յօժարութեամբ զենումն ընկալեալ, մահու համբերես բաշխեալ 'ի քաւութիւն: Ո՛վ ոչ եթէ մաքրութեդ աղբիւր՝ պարտական գոյ մահու յօրինաօրէ կատարիլն, այլ կամօք քովք՝ հոգւոյդ գործակցութբ, 'ի հաճութիւն հօր՝ և 'ի մեր հաշտութի ցանկ մատուցանես: Իսկ եթէ ամենեցուն ա՟ծ անքննին՝ իմաստ վասն իմ առ իմ փրկութիւն, 'ի դէմս իմ, երբ թէ ընդ քոյդ էութեան ես լցեմ մարմնով՝ պարունակողիդ կցորդ միացեալ. և դու բարերար, յաղագս իմ 'ի յիմս կերպի՝ փոխանակեալ ընդ իմում պարտեաց, և մահ ընկալեալ անպարտըդ՝ զմահապարտս մեռուց պատուհաս, և 'ի յիմ անուն յանցաւորապէս, որպէս թէ կամաւ ընդ քեզ ես կրեցեմ, բաղումն մեռեալ՝ և մնաս կենդանի. ոչ ու բացողացն ձեռօք, այլ դաւանողացն հաւատովք ածապէս նուիրեալ և 'ի մասունս անհատս բաշխեալ:

Դ. Րաւէրումն օղոքաւոր՝ չհաւատալեացն պաշտօնատար. մեծ խնձ և անկշռելի առ սմին դատել՝ անյարմարագիր անձին յուսալիր, հաւատամ

զփառս և զերջանկութիւն, քան թէ մարտիրո-
սութեամբ խոկ՝ թող թէ ուղղութի՛ իմն թշուա-
ռութե՛՝ յանցաւոր մարմնոյ փախճան ընդունել:
Իսկ զանձառութի՛ խորհրդոյս՝ այսու գիտելի.
զաւանէր խոկոյն, որ զի և մաքրոյն անձինք ա-
ռանց նախկին այսր յիշատակի՝ չե՛ են խակա-
պէս կատարեալք խոպա, եթէ ոչ ընդ այս հը-
րաշակերտութի՛ մեծութե՛՝ հոգւով խառնեսցին:
Այս թէ մեղաւորս մասին, կրկին մատուցար
բաժին ասելով յուսայլ, իբրև այն՝ թէ ես ինքն
եղեր ճշմարիտ, զրաւեալ զիմն զաժանութի՛
ընդ քում համեղութե՛, պատարագեալ քրիստա-
նիւթ զանդուածոյ նշխարաց կենաց լուսոյ:
Այսու ամի՛ ի վերնատանն նախանուէր բարե-
շնորհութեան՝ անհնարաւոր ախտիցն ճարակ,
զմարմին և զարիւն իւր բաշխեաց ի քաւութի,
ի վեր կարծեցուցանէր քան զնահատակի վկայե-
ցելոյ արեամբ կատարմամբ. յուսոյս օրինակ
յարդարութեամբ դրել զիս ի փառս, այսմ
փրկանօք համառօտի երևեցուցանէր, քան թէ
քաւելոյ և աղօթելոյ և շնորհելոյ, որչափ անձակա-
նիգ առ մարդ զօրութիւն. և ոլորական անձա-
խառն մարմնոյն կամաւորական նուիրումն առ
անամանական ազատելին մատուցումն. և անմա-
հըն՝ առ մահկանացուս. լոյսն ահաւոր՝ առ բա-
ռեղայինս. յաւիտենականն՝ քան զանցաւորս.
բարձրեալն՝ քան զերկրաւորս. անստեղծն՝ քան

գեղանակս. բարին խոկութեամբ՝ քան զթիւրեալս բնութեամբ. մանաւանդ զի իւր է կամելն, և իւր կենագործելն. օրհնութեան առիթ՝ քան զանիծից պատճառ:

Ն. Որդ՝ տուր խոցելոյս 'ի սիրտ և յոգի՝ աղաչեմ գըթած, զառ 'ի յերկնուստ ընծայեալ զդեղդ կենաց. մաքրի քաղցրութեամբ՝ առ ախտացեալս մեղօք. քաւեա՛ 'ի պարտեաց՝ ամենակատար բաւականութիւն: Իսկ առ 'ի յինէն՝ այս է ճշմարիտ և անխաբելի կերպարան բանի, որ զի հաստիչդ ամենից՝ 'ի սուրբս բնակես. և ըստ տարազու սերմանն՝ և հնձելն է իլաւացի, ըստ ճշմարիտ բանին պօղոսի. և աչաց աչացաւացն՝ 'ի տապ արևու ոչ է զօրութիւն: Այլ դու բարերար հաստիչ յոչէից՝ յարդես յաւէտ իսկապէս համայն, և զդաւանելն զքեզ բաւական առկենդանութիւն. և ոչ ես ընդ սահմանաւ փակեալ օրինի, այլ յաղթես՝ մանաւանդ թէ խըզես զկապ կանոնի, և դու միայն մնաս պայման աւետեաց՝ համօրէն յանցաւորաց տարակուսելոց: Եւ քեզ ընդ Հօր՝ Հոգւոյդ սրբոյ փառք և իշխանութիւն յաւիտեանս. ամէն:

Մերոյին յաւելուած կրկին հեծութեան՝ նոյն
հոգւոց, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այս:

## ԳԼՈՒ. ԾԴ

Ա. Եւ արդ՝ յանձն առ ամ ամենակալութն քո է զօրութիւն, սկզբնալոյսդ աչաց տեսանելեաց և սրտի իմաստից՝ Յիսուս. քո է բարերարութիւն, կեանք և անմահութիւն: Դարձ առ իս գթութեամբ, և հանդերձեսցես դառնալ ինձ առ քեզ կրկին բերկրութի. զի առանց քոյ կամաց՝ ոչ ունիմ լինել նորոգ փոփոխեալ. և եթէ ոչ կամք քո գթասցին, ոչ զօրեմ փրկիլ մահապարտականս. և եթէ ոչ կատարեալ յարդարեսցես պատրաստել ինձ հեշտ ճանապարհի՝ որ առ քեզ բերէ, վիհ է ինձ խորոց յաջմէ և յահեկէ:

Բ. Ահա ոչ պարծիմ՝ ամ իրօք նախատեալս. ոչ պանծամ զօրաւորս. ոչ խրոխտանամ լքեալս. ոչ մեծարանեմ սպասանձեալս. ոչ ըմբոստանամ ձաղեալս. ոչ երջանկանամ եղկելիս. ոչ պարզարանամ ամբարիշտս: Զի ոչ երբեք հարթ ընթանայ երիվար՝ առանց սանձահարի. և ոչ նաւ հանգստանայ հանդէպ՝ առանց ուղղչի. և ոչ արօր կցեալ լինի գործել՝ առանց մաճակալի. և ոչ երկրագործեալք լծոյն ՚ի ձահ ճռնեսցին՝ առանց ե-

զօղի. ոչ ամպ վերաչուէ՝ առանց հողմոյ. ոչ աս-տեղք ցնդին և կամ գումարին՝ առանց ժամանակին. ոչ արեգակն փոխաբերեալ ուր շրջանակի՝ առանց տարրական օդոյ. և ոչ ես նոքօք հանդերձ՝ առանց բարեգործիդ հրամանաց ախորժութեան: Զի դու միայն ես տուիչ կենաց բանականաց, և խնամիչ կարգաց հոլովման արարածոց, և՛ի քէն է ինձ փրկութիւն, ըստ սաղմոսողին. և դու ձայնես բարբառ խնդալից աւետեաց հնչման՝ յականջս լսելութե՛ան իմ հասակի, եկայք ՚ի հանգիստ իմ բնաւին աշխատեալք, և ես մաքրեցից զձեզ ՚ի պարտեաց: Իսկ զի՞նչ օգուտ ՚ի լուացմանէն, եթէ կրկնակի զաղտասցի. և կամ ո՞ր օգուտ ՚ի ճաշակմանէն, եթէ գեհենին մատնեցայց: Եւ կամ զի՞նչ յաբրահամ պարծեցայց՝ խորթացեալս ՚ի գործոց նորին. որդիս դարշութե՛ան հօր ամովրհացւոյ, և մօր քետացւոյ կամ քանանացւոյ ըստ մարգարէին որ առ ի՝ յանկաւոր ձայնի. ժառանգս մերժելի եթովպացի. և ոչ սեննեկին սառայի, ըստ տեսանողին առ խառածի. Եղբայրս շամբնի՝ և կամ գոմորայ. համբակս անլուաց և անողեկի՝ խակակութ ոլորտոյն խակութե՛ան տղայ և տղեկայ, ըստ եզեկիէլի կրկ-

նամախառն կշտամբութե՛ան:

Գ. Եւ քանզի ՚ի ծուփս բազմախոռնգս ալէտանջ հողմոյ սաստկապէս զզուեալ՝ ուժգին ընկանօք խաղաղ տագնապմամբ ՚ի ծովին փոխեալ

ընկեցեալ 'ի վտակն վայրենական ողողիչ. առ որս՝ զմտաւունս ձևուցս այսր անդր տարաբերեալ, իբր 'ի հոսանաց բնութեանց դարձանալայր գետոց, արտաձգեալ յակամայ ընթացս ողորմագին գլորման՝ ջրակուլ ողեսպառ պղտորարրութ՝ դամանահատ սկախառն մանաւորման խառնախոհ՝ մահարեր երկամբք վանեալ, ըստ որոց յուղխոյն հեղեղեցյին՝ հեղձուցեալ: Այսու առակաւ ես եղկելիս՝ խօսին, և ոչ իմանամ. գոչեն, և ոչ ինչ լսեմ. բարբառին, և ոչ զարթնանամ. հնչեն, և ոչ փոխադրիմ. փողեն, և ոչ զուարթիմ. վերաւորիմ, և ոչ ես զգամ, կուոյն զարշութե նմանեալ՝ թմրու յաղդմանէ բարեաց իմաստից: Արդարև չար առաւել յաւէտ իսկապէս քանզօրինակ՝ ճշմարտութիս, առելի և մեղադրելի, և առանձին քի արժանացեալս մասանելի:

Դ. Ո՛ւ քանզի անդառնալի ուղղոյն վիճակ՝ առեալս պարտեաց՝ զայս կտակ թողի որոց ընթեռնուն, իմոյս բանիւ առ իմ կարգալ հանապազորդութի, այս կացցէ սահման յանձնառական խոստովանութեան՝ մշանջենաւոր ձայնարկու առաջի քոյ՝ ամենակալ. զոր գիրդ ընդ մարմնոյս, և բանդ ընդ հոգւոյս, զանսահմանելիդ միշտ թախանձեսցէ, իբր յանեղծական մաղթողէ ընկալեալ աղերս 'ի յիմոյս ձայնէ՝ բարեդութ մարդասէր, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Սրտին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոլովք, առ նոյն աղերս մաղթանաց բանի:

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

# ԲԱՆ · ԾԵ

Ա. Եւ վասն զի սկսեալ ոգւոյս թւոք ՚ի-թիւս անբաւից ծննդոց մարդկան՝ եդի ՚ի կշիռս իմանալեացս մտաց, ոչ գտի զոք համեմատ ինձ պարտաւոր. և առ այս զգաւթեան սաղմոսին զբանն ՚ի յերգ ինձ առի՝ գառն կշտամբութեան գաւազանաւոր գործավար. ո՞վ յարիցէ ընդ իս ՚ի չարիս՝ հաւասարել յանօրէնութիւնս: Եւ-քանզի այս ըստ ամին մասին՝ կնքեցաւ և ճշմարտեցաւ առ այլս մահու, և ես վկայեմ կրկին հաստատեալ. առ այսր իրաւունս գրեմ՝ ինձ միայնոյ զեղծանիլ իսպառ, քան իմովս բանիւ բազմաց տարագրիլ. թերևս սովիմք առ այսու արդեօք՝ և ինձ շնորհեսցես, շնորհողիս զպարտիս իմոցն:

Բ. Եւ արդ՝ զի՞նչ քեզ աղերս հաճոյական ՚ի-յայսմ և ՚ի սոյն, և ծուխ անուշից ընդունելի խնկոց մատուցից՝ գովեալ թագաւոր երկնաւոր քրիստոս, եթէ ոչ զաւ ՚ի յինէն անիծեալսն՝ օրհնել մաղթեմ. զկապեալսն արձակել. ապա-ւել զդատապարտեալսն. բարեգործել զնզով-եալսն. պսակել զթշնամանեալսն. սփոփել ըզ-

տրտմեցելոյն. դարմանել զխոշտանգելոյն. խընամել զաղքատացելոյն. պատսպարել զնեղեալսն. զվիրաւորեալսն 'ի մարմին՝ յոգի բժշկել: Եթէ օրհնութեան բանիւ առ որ մատուցայ, լուիցես. իսկ եթէ անիծիւք, մի՛ հայհոյեսցես ընդունել, գըթած: Ես տառապեալս ամենաթշուառ՝ 'ի վերջին սպասաւորութեան մաղթանաց այսր մատենի, 'ի բովանդակ մասանց շնորհեցի իմոցն՝ փակեալ առ 'ի քէն զանիծիցն դժնդակ բղձիցն չարաշուք ձայն. և դժնեայց ննդողացն իմոց՝ ընդ բարիսն 'ի բոլոր սրտէ հաշտութեան արդահատեցի. վասն որոյ և ծունր պաղատանաց կրկնեցի. որչափ դու ինձ ահա յայց եկեալ տանել ողորմեսցիս ըստ քոյդ մեծութեն՝ գովեալ խնամակալ, կեանքդ՝ մահացուցիս. հզօրդ՝ տըկարիս. ամենակարդ՝ փարատելոյս. իմաստութեդ աղբիւր՝ յիմարիս և թմբրեցելոյս: Քանզի յաւէտ սխալեալ անկայ իբրև զողողակ մթային ոչ ընդունակն՝ 'ի հաղբս մահու անպղջայացէս. չիմացայ զկորուստն. չզխտացի զորոգայթն. չըտեսի զըմբռնող որսոյն ծածուկ մեքենայս. չըկարծեցի զխաբուսն կերպարանաց կեղծաւոր փարմին. չնկատեցի զդայթակղութիւնն շուրջանակի. չշօշափեցի զպատանդիչ զցանցարկ կարթին. ժամանեցին ինձ չարիք, և ես ոչ կարացի ճանաչել, ըստ սաղմոսողին:

Գ.. Քանզի և որպէս խնամատակք ումեմն ար-
տաքնոյ բարւոք թուեցաւ, չար ասել զմահ՝ ա-
չիմանալոյն պատճառի, և ես վկայեմ իմոյս բա-
նիս. քանզի իբր զանզգայ պատճառս անասնոց
մեռանիմք՝ և ոչ զարհուրիմք. կորնչիմք՝ և ոչ
հիանամք. թաղեցեալ լինիմք՝ և ոչ խոնարհիմք.
տարագրիմք՝ և ոչ տաղնապիմք. եղծանիմք՝ և
ոչ պղծանամք. մաշիմք՝ և ոչ մնասեմք. պակա-
սիմք՝ և ոչ պատրաստիմք. դնամք՝ և ոչ զգու-
շանամք. գերիմք՝ և ոչ ես զգամք: Իսկ հան-
գիստ ասել երջանկին յոբայ զխախճան մարդոյ,
և ես խոստովանիմ զայն ընդ սմին, եթէ ոչ ու-
նէր զբեռն աշխատութեան մահացու գործոց ըն-
տանձեալ: Մանաւանդ զի՝ որոգայթն դաղանի,
և հնարագիլն աներևակի. տալր ժամանակիս
յանկէից, անցեալն անյայտ, և ապառնին կար-
ծողական. ես անհամբեր, և բնութիւն թերա-
հաւատ. ոտք անհաստատք, և միտք ցնդեալք.
կիրք հարկաւորք, և բարք անժուժկալք. մար-
մին մեղսամակարդ, և յօժարութի՛ երկրաւէր:
զիմաստութի՛ անկակից և խառնութի՛ ներհա-
կական. բնակութի՛ կաւեղէն, և անձրևք ուժգ-
նակիք. կարիք անթուելիք, և պատահարք ա-
մենազդրաւք. միտք չարախնամք, և անխնմունք
բարխառնեացք. կեանք առօրեայք, և զբաղք
սակաւաւորք. խարմունք յիմարութե՛, և խա-
ղալիք աղայականք. աշխատութիք ընդունայնք,

և փայլմունք երազականք . համբարք ոչնչից , և պահեստք հողմոց . նմանութիւնք ստուերաց , և կերպարանք ծիծաղելիք ։ Քանզի իբրև եկն եհաս պատուիրանն , ըստ պօղոսեան բանին , անպատրաստ գտեալ զիս ինքեան , մեղքն կենդանացան յանդիմանեալ յարդարութեանցն , և ես մահացայ կենացն , և կենդանացայ կորստեանն ։

Գ. Գողացան օտարք չարին գումարք՝ զստացուածս սրտիս իմաստից , ըստ դրոյն կանխաբանութեան . որով եկն եհաս խոկոյն աստանօր իմաստութե ինձ նուաղանալ , ըստ առակողին , և առաւելուլ ոչ բարւոյ ցանկութիւն ։ Ոչ յառեցի զակն ոգւոյս 'ի գլուխն իմ կենաց քրիստոս , որով ընդ ուղիղն հետևեցայց ։ Քանզի կամելով ուժգնիս ընթանալ՝ ընկլայ սաստկապես . յանչափն ձգտիլ՝ իմոյն ոչ հասի . 'ի մեծագոյնն ամբառնալ՝ աստուստ գլորեցայ . յերկնային ուղւոյն՝ անդնդոց մատնեցայ . 'ի զգուշանալն առաւել՝ յաւէտ վնասեցայ . յանարատն պահել՝ մանըր խորտակեցայ . կարծելով ընդ ահեակն մտցիլ՝ յաջն գլթեցի . 'ի զերկրորդն խուզել՝ զնախնին կորուսի . 'ի խնդիր սակաւուն՝ 'ի կարեւորացն զըրկեցայ . 'ի յուխտին պահել՝ դաշինն դժրեցի . առ սովորութեն կարիլ՝ կորուսիչս գտի . 'ի փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնեցայ . զոր ես ինքն ինձէն սանձեալ՝ չարաչար դատա-

խաղ անձին կարգեցի: Յորոց փրկեալ զմատնեալ գերիս դու միայն զօրեսցես, կենաց մատուցեալ ընծայեալս մահու՝ զհոգիս. զի դու միայն՝ տէր յիսուս, ճանաչիս բարերար, անսահման փառօք՝ ընդ հօր և հոգւոյն սրբոյ օրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

Վերջերն յաւելուած կցեցին հեծծանքեան՝ նոյին հոլովք, առ նոյն աղէրս մեղանաց բանի:
Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

## ԲԱՆ·ԾԶ

Ա. Իսկ զառիթման մահու դիպուածս՝ դըժոխարմատ ծառոյս դառնութեն պտուղք, ընտանիք թշնամիք, հարազատք հակառակք, և որդիք դաւաճանօղք, ստորագրեցելովք մասամբքըդ նշանակեցից՝ դրեալ յանուանէ, որ են այսոքիկ:

Բ. Ախտս նանրախորհուրդ, բերանս չարախօս, ակնս յայրատատես, ականջս վրիպալուր, ձեռնս մահաձիգ, երիկամունքս անփորձ, ոտնս մոլորաշաւիղ, ընթացքս աներկիւղ, հետք՝ խոտորնակ, շունչք ծխախառն, գնացք խաւարային, գոյութի լերդի վիմական, խորհուրդ ծորեալ, կամք անկայուն, չար անփոփոխ, բարեմասնութիւն սասանեալ, անձն տարագիր, ա-

ւանդ վաճառեալ ։ Գազան վիրաւոր . թռչուն նետահար . փախստական քարայծ . ըմբռնեցեալ վնասապարտ . աւազակ ծովակուր ։ Զինուոր ննջաւոր . մարտիկ անպատրաստ . սպառազէն անժուժկալ . մշակ հեղգացեալ ։ Աղօթական անխորախոյս բեմական ատենաքարշ . քահանայ անկնդրուկ . օրինական անմուէր ։ Գովք կշտամբեալ . իմաստակ խեղագար . ճարտասան անճոռնի ։ Ակն անպատկառ . դէմք անամօթ . երեսք լպրշեալ . գոյն անհամբոյր . ախտ անմարդի . գեղ ծանակեալ ։ Խորանի խանդարեալ . ճաշակ դարշեցեալ . այգի գաղձնաւոր . որթ որդնահար . պարտէզ փշաբեր . հասկ ուճահար . մեղր ՚ի մկանց ճարակեալ . անպատուպար անկեալ ։ Անապարծ յուսահատ . անհամոզելի նզով . անհաշտական բաժանեալ . ունայնարան շաղակրատ . պաճարամիտ դառաղ . անառնօրէն ապիրատ . դժոխային աղաւ . աներտասն յանդուգն ։ Անլեզնութի անանձ . ձեռնաձգութիւն սպանող . տատասկացան երկրագործ . երջանկութի եղկելի . մեծութիւն վատթարեալ . վայելչութի անչքեալ . կարողութի ակարացեալ . բարձրութիւն խոնարհեալ . փառաւորութիւն ընդոտնեալ . պատուիրանազանցութիւն յարակայ . սխալանք ինքնակամ ։ Ամբախտարար կամակոր . խորհրդակից ննջաւոր . բարեկամ հատուածեալ . հաշտարարեալ

գողամիտ . մերձաւոր կծծի . բաշխօղ ժլատ . վե-
րատեսուչ կարկամ . ոգի անախտակիր . խղձք ան-
սէր . բարք տանջօղ . աչք անդթակիրք . դը-
նացք անխոհեմ . աներեւոյթք վնասակարք . ծա-
ծուկք անխծեալք . դիպուածք թշնամանեալք :
Սատանայական վաստիկ . շահարար շուայտեալ .
պաշտօնեայ արբեցօղ . դանձուց սատիկան երկ-
միտ . պատգամաւոր բանսարկու . դռնապան նն-
ջած : Աղքատ հպարտ . մեծատուն ժխտօղ :
Դիւանապետ անօրէն . սպասաւոր մատնիչ . ըն-
կերակից չարախօս . սուրհանդակ անժաման .
թղթաբեր պարծաւոր . առաքեալ խռովարար .
միջնորդ անիմաստ : Երէց արտաքած . թագա-
ւոր թարմանտար . կայսր ողէկործան . իշխան ախ-
րադու . զօրաւոր դեկօղ . դատաւոր ակնառու .
ռամիկ ինքնագլուխ : Նախատողի ծաղր . սխե-
լոյ աշխար . բանադրի դարոլ . յանդիմանչի դա-
տախազութիւն : Զանդի և 'ի մեհագունեցդ կոչ-
մանց՝ էր ուրեք արդեօք՝ զի էի . խակ 'ի վատթա-
րագունացդ մասանց՝ նէն երբեմն եհաս՝ զի եղէ :
Արդ՝ այսքան մնասակարութիւք խարդախութեց
յանձնադունեց , յորոց յամանց խորեցայ երբե-
ղջիմար , և յամանց տիրեցայ երբե զոհար՝ կամա-
մատնեալ զիս Քեզ մահու :

Գ. Արդ՝ զո՞ր 'ի միջադրելոցդ մասանց՝ քեզ
տանեմ , և իմ կորուսցս՝ 'ի սպառ սպաշտամամն
քեզ ընծայեցից . զո՞րպիսի աղախնութեան

պարագրեալս՝ ամենասուրբ քո մեծութեն հանդէպ կացուցից. և կամ ո՞րքանեօք երկայնմտութբ համբերեսցես այսքանեաց պարտուց. ո՞րքան ներես. ո՞րպէս լռեսցես. զիա՞րդ իսկ անսայցես. երբ ոչ մատնեսցես հարուածոց դառնից զարժանիս սատակման մահու: Այլ՝ այսօրիկ աննշոյլ մթութեանց՝ հողւոց խաւարի՝ ողորմութեամբ լուսոյ քոյ պատահեսցես՝ բժշկել քաւել և կենագործել՝ զօրէղութիւն անմթարելի. և քեզ փառք յամենայնի. ամէն:

---

Մերային յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ. առ նոյն աղբեր մաքրանաց բանի:
Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

## ԲԱՆ. ԾԷ.

Ա. Քրիստոս Աստուած անուն ահաւոր. մեծութեան տեսակ. անքննելին բարձրութեն պատկեր. անսահման զօրութիւն. կերպարան փրկութեան լուսոյ. պաշտպան կենաց. դուռն արքայութեն՝ վերնում հանգստեանն. ճանապարհ հանդարտութեն. ապաւինութիւն նորոգ և անտրխրական երանութեն. ամենակալ ինքնիշխանութիւն՝ բոլոր էականութեան. օրհնութեն կոչումն. աւետեաց ձայն. բերկրութեան բարբառ. անմահութեն դեղ. որդի անճառ աստուծոյ միոյ:

Որ ինձ անհնարին է, քեզ դիւրին է. որ ինձ անհասն է, քեզ սահմանեալ է. որ ինձ անանցն է, քեզ հպաւոր է. որ եղկելոյս ինձ ծածկեցեալն է, քում նրանութեն մերձաւոր է. որ ինձ անկարելին է, քեզ կատարեալ է. որ ինձ անկըշռելին է, քում անճառութեն չափեալ է. որ ինձ յուսահատութենն է, քեզ սփոփանաց է. որ ինձ անբժշկականն է, քեզ անվտանգելի է. որ ինձ հեծութենն է, քեզ խնդութեն է. որ ինձ ծանունք են, քեզ թեթեւագոյնք են. որ ինձ եղծեալն է, քում զօրեղութեն գրեցեալ է. որ ինձ կորուսեալն է, քեզ ըմբռնեալ է. որ ինձ անճառն է, քեզ համարեալ է. որ ինձ մռայլն է, քեզ ճառագայթ է. որ ինձ անթիւն է, օրհնեալդ քում ձեռին բովանդակեալ է. որ ինձ սոսկալին է, քեզ հեշտալի է. որ ինձ փախչելին է, քեզ վանելի է. որ ինձ անմատոյցն է, քեզ դիւրահերքելի է. որ ինձ մահաբերն է, քում էականութեն զօրութեն՝ ընդ ոչ գոյն համարեալ է:

Ի. ԱՅԼ դու ողորմած ամ բոլորից տէր յիսուս քրիստոս, եւ այսմ զօրես առ ելեցն հնար՝ եթէ գթասցիս։ վասն անուան փառաց մեծութեն հօր քոյ օրհնելոյ, վասն կամաց գթութեն ոգւոյդ քոյ սրբոյ, առ 'ի տաժանաւորս կրից յանդիմանական յայտնութեն, եւ 'ի խորոց սրտից ինքնամատոյց դատախազութեն. նայեա 'ի բնութես ամենապատող խակութեն, եւ պարգեւեա բժշկութեն վիրացս, եւ

հնարաւորութիւն կորստեանս. զերծումն բազմամամնեայ մահուս, և շաւիղ կենաց ապաքինելոյս. նորոգութիւն եղծմանս, և մուտք յուսոյ ամբարշտելոյս: Եթէ ես զանձնամահն ինձ կամ ցուցի, որչափ առաւել դու զբնաւորականդ քո զբնական բարերարութիւնդ. Եթէ 'ի փշոց պտուղ ընծայեցայ քաղցրութեան, որչափ առաւել 'ի ծառոյդ կենաց՝ ճաշակ անմահութեան. Եթէ ես խնոց ատելեաց ողորմութեան մաղթեցի, դու քոյոյս զիա՞րդ ոչ կրկին մատուցես հզօր յաննուազդ առատութէ:

գ.. Տէր՝ ես 'ի քոյդ մեծութիւն բարձրեալ, նայեցեալ 'ի յիմս փոքրկութիւն. ընկալ զպակախոստովանութիւս անհամար մեղացս, որ զբնաւն համայն տեսանես. և որպէս զվիճին դթել՝ ոչ դըրժեցեր, և զաւաղոյս փոքր սասանել՝ մի համարեցիր. և իբրև զգութին՝ ընդ մեղայն ասել՝ խաղոյն անցուցեր զպատիժ սպառնացն, և առ իմ ձայնիս հեծութի՝ զնոյն գործեցես երկայնմըտութիւն. որ առս ամենեցուն առատապէս անաչառութի՝ որպէս յաղթող բարի բազմիմաստ. և ոչ նախատես զձեռնեալ սորուհի՝ որպէս ողորմած և ամենաստեղծ. ատացիր փրկանին, և մի կորուսաներ զգուժեալս արեամբ քո, և զբուծեալս սանամբ քո՝ զլծած: Զի քո է փրկութիւն, և 'ի քէն է քաւութի, և քեզ վայելէ փառք յամենայնի յաւիտեանս, ամէն:

Մերատին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ. առ նոյն աղերս մաղթանաց բանին:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

# ԲԱՆ · ԾԲ

Ա. Օրհնեալ տէր յիսուս ընդ հօր 'ի կամս հաճութե հոգւոյդ քո սրբոյ. և օրհնեալք ամ առ 'ի յօրհնելոյդ օրհնեցան. օրհնեալ միայն որդի օրհնելոյ. չիք իմ թագաւոր իշխեցող շնչոյս բաց 'ի քէն՝ քրիստոս: Այս է օրհնուի յակոբայ՝ ասէ նայի, յորժամ բարձից զձեռս նորա:

Բ. Արդ ողորմեա՛ց ինձ՝ տէր բարերարութ՝ ըստ նախնիդ քո սովորութե, և օրհնեա՛ զանօթս քո բանական, ըստ ձայնին դաւթի՝ և ըստ մովսէսի. զի բանիւդ քո փրկութեան ժամանեալ, հասից քաւութե օրհնեալ առ 'ի քէն: Աստուածապէս ինձ հրաշագործեա՛ ողորմած արքայ երկնաւոր, որպէս անկելոցն 'ի բազմաժամանակեայ մահճացն խշտեա, ժողովելոցն 'ի սրահին բեթհեզդայ: Յորոց մի էր և կրկին թերահաւատն՝ երից տասանց և ութի միոյ ամօք ախտացեալ յօդիցն լուծմամբ, որում ոչ անխայեցեր զբըժշկութեանն ձեռնտուութիւն, իբր դիտելով զանբոյժ չարութիւն՝ որ նիւթեացն քեզ յաւուր մատնութեան զատն գիշերին տխրամարտութե՝ երախտաւորիդ, մեծիդ և բարեկարիդ: Որ թե-

պէտ և կանխաւ իմն զգուշացուցեր , թէ մի մե-
ղանչէր՝ զի մի կրկնեսցին կրկին քեզ չարիք , ոչ
ինչ վերջացաւ լինել ձեռներէց սկզբնաւոր ան-
համբուրելի՝ դատողացն զքեզ 'ի խաչին : Նա զն-
ոյնպիսւոյ անյարիր ջատուկ մահու ծնգեցեալ
չարաշուք առն ողորմեցար , անճառ բարութի .
օխրալի մարդասիրութի . սարսափելի ներողու-
թիւն . սոսկալի երկայնմտութիւն . անբաւելի
քաղցրութի . փառաւորելի հեզութի : Որ միշտ
յաղթիս 'ի գթութէ , և ոչ թշնամանիս . պար-
տիս յողորմութենէ , և ոչ պարսաւիս . բռնա-
դատիս 'ի մարդասիրութենէ , և ոչ անդոսնիս .
հարկիս 'ի բարութէ , և ոչ հայհոյիս . ստիպիս
'ի սիրոյ , և ոչ բամբասիս : Պաղատիս դարձին
իմ առ քեզ , և ոչ ձանձրանաս . արագես զկնի ա-
պերասանիս , և ոչ լքանիս . ձայնես չլսողիս , և ոչ
որոտմիս . փութաս մեղկելոյս , և ոչ խափանիս.
Առ չարս՝ ես բարի . առ ամենապարտս՝ ես նե-
րող . առ մեղաւորս՝ ես քաւիչ . առ խաւարեալս՝
ես լոյս . առ մահացեալս՝ ես կեանք:

գ. Այս են գիրք ամ հոգեշունչ օգտակարու-
թեան , որ յաճախս ծնանին երկնաւոր պտուղս՝
անճառս և զարմանալիս : Աստ և ինձ թշուա-
ռացելումս՝ օրհնեալ ամենապարգև , արի առ
զմահիճս խշտացդ մեղաց 'ի վայր կործանմանդ ,
և հետևեալ ժամանեա յանդորր հանգիստ ան-
աշխատ կենաց : Խոշեցես ամենակարօղ սուսե-

րաւ բանիդ հրամանի՝ զերկրպագնդեայ մահա-
զգեստս պարփակութիւն՝ դժոխայնեայ կա-
պանացս . և լոյծ ինձ զհանդոյցս խեղդողակա-
նըս ոգեպահանջ սատակութեանս , առաքելով
զարժանաւորս մահու՝ յազատութիւնն վերին
անանց բերկրութեանն , կենսաբեր և աստուա-
ծային քո բանիւդ : Մի՛ տակաւ տակաւ աղ-
գեսցես , և մի օր 'ի յօր յերկարաձգեսցես , զի
մի ստուար ծանրութիւն բեռանցս մեղաց՝ տի-
րեսցէ թիկանցս ազդերաց , և կործանեալ զիս
կորացուսցէ՝ հայել 'ի դժոխս . և ուժգնակի դո-
ռող բռնութեամբ՝ անպարապ հոգևորական զե-
նուն արարեալ , մահու ծառայեցուսցէ : Այլ
օգնեա ինձ՝ բարի վշտակից՝ հեծութեան կա-
րեացս մահու երկանց , առեալ յինէն զփայտ
սատակմանն , որպէս երբեմն յուսոյ պահակին.
որով կառուցես զվայելչականն յաղթանակի
արի զօրութեանն , պնդապէս հաւատով յու-
սոյն կարծրութեան՝ ընդ քեզ բևեռել անսայ-
թաքելի : Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ
սրբով՝ փառք և իշխանութի
յաւիտեանս .
ամէն :

Մերոյին յաւելուած կրկին հեծութեան՝ նոյն հանգոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանին։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## ԲԱՆ. ԿԹ

Ա. Հաւատամ և վկայեմ մտաց գիտութիւ՝ 'ի-քէն ազդեցեալ ողջոյս իմաստիւ ուշիւս տեսման. զի բղխալի են քեզ՝ բարերար, աղաչանք մեղաւորաց՝ քան զխնդրուածս արդարոց։ Զի միոյն զպարտութի անձինն յայտնեալ՝ շնորհի քո սպառէ. առ որ ծանուցեալ զինութեան չափ, և մեծ կշռամբից առաւէն համբարձեալ՝ ինքնագոր մարմնակից նմին իսկ ինքեան, և զառն զարվից և ծածկեալս զաղտախտ։ Իսկ միւսն՝ յարգելեալ բարեաց իւրոց նայելով, յանձին հարեալ ձեռն վստահութեան, մանանայ զահամն բնութեանն, և պարգևաց՝ քան ողորմութե զինեալ անն ունի։ Վասն որոյ առ մինն՝ անթիւ են բաւերձուածք ձեռաց, որ զողորմութեց քո՝ փոզով բարբառոյ աղէ. իսկ առ միւսն՝ լռեալ են քոյդ անքննելի աշխարհ և ամենախնամ. աղաչեմ ասել, թէ և երկրաւորիս գործոց պատմութիւն դժոյդ յառաջեալ։ Արդ՝ արի տէր, և մի զօրացի քան զքոյդ՝ աջ հողեղէնի. մի կշռեսցին ողորմութիւնք քո՝ ընդ ջանից մարդկան։

Բ. Եւ արդ՝ առողջքն անդամոց՝ անկարօտք
են բժշկութեան. և տեսանողականքն աչօք՝ չու-
նին պէտս առաջնորդի. և փարթամքն ընչիւք՝
ոչ գեգերին առ դուրս լիոյն. և ամեն յղփա-
ցեալքն՝ ոչ սպասեն փշրանաց սեղանոյ հացի. և
սուրբքն վարուք՝ ապէնիկաց են ողորմութեան.
Եւ արդ՝ ինձ գթացիս ողորմել՝ բարձեալ երկ-
նաւոր հզօր, ամենատխուր վարանեցելոյս:
Քանզի թէ էի իբրև զյօբ, ասէի զանձն իմ
իբրև զնա արդար և անարատ. թէ իբրև զմով-
սէս, ասէի վստահութեամբ զնորայն, ծանիցէ
տէր զայնոսիկ՝ որ իւրն են. եթէ իբրև զդաւիթ,
ասէի՝ արարի զիրաւունս և զարդարութիւն. և
դարձեալ՝ զմեծն քան զբնութիւն մարմնոյ, զմեղս
թէ տեսանէի 'ի սրտի իմում՝ մի լուիցէ ինձ տէր:
Թէ էի իբրև զեղիա, ասէի զանձն իմ այր այ.
թէ էի իբրև զերեմիա, զքոյդ ճշմարտութիւն
յանձն օրինակէի. թէ էի իբրև զեզեկիա, պար-
ծէի զբարւոքն և զիրաւացին՝ գնացի առաջի քո
արդարութեամբ. թէ և իբրև զպօղոս, ասէի զիս
բնակարան՝ ազդարան՝ և ընդունարան այ բանին:
Այլ ես անօրէնս 'ի մէջ գիտութեան օրինացն,
ոչ միայն չունիմ զանձն իմ քեզ ընծայել յար-
գանօք բանից իբրև զնոսա, և զընտրելին չարս՝
որպէս զբարիսն զայնոսիկ առաջի քո մեծասա-
կել, այլ և ոչ զամենուստ գոյից զբարեհաճա-
կեալ անունդ հզօր՝ անբարշտահալս լեզուաւ գովել:

Իսկ դու առ իմ հնարս զօրաւոր՝ մատո՛ ինձ ոգի փրկութեան. աջ պաշտպանութեան. ձեռն այցելութե՟. հրամանս բարութեան. լոյս ողորմութեան. բան նորոգութե՟. պատճառ քաւութեան. գաւազան կենաց օգնութե՟: Զի դու ես յոյս ապաւինութեան՝ տէր յիսուս քրիստոս, օրհնեալ ընդ հօր հոգւովդ սրբով յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

Վերջին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոկողէ, առ նոյն աղէրս մաղթանաց բանի: Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

## ԲԱՆ · Ղ

Ա. Եւ արդ՝ որպէս զի ոչ վայելէ օրհնաբանութիւն 'ի բերան մեղաւորի՝ 'ի ճշմարիտն առակէ կանխաւ իսկ ուսայ, զիա՞րդ յաւելից կրկնել զնոյն դովութիւն աղաչաւորս բազմապակառ, որ հանապազ ընդունիմ անէծս 'ի սաղմոսին բարեբաստութե՟: Զի ե՞րբ երգեցից ինձ փառնդս, և արձանացուցից նախատինս. և 'ի մերկութե՟ս դրկի՝ փուշս ընդ շուշանաց ժողովեցից: Զիա՞րդ ընդ դաւթի համարձակեցայց ասել, թէ զատամունս մեղաւորաց փշրեսցես: Զիա՞րդ դարձեալ, թէ մի անօրէնք բնակեսցեն առաջի աչաց քոց: Զիա՞րդ թէ գա՛տ արա

ինձ տէր ըստ արդարութեան քո , ըստ անբը-ծութեան իմոյ որ յիս ։ Օ՜խա՞րդ , թէ կատարեսցին չարիք 'ի վերայ մեղաւորաց ։ Օ՜խա՞րդ , թէ խորտակեսցին բազուկք մեղաւորի և չարի , և զայլն որ գլնի ։ Օ՜խա՞րդ , թէ տեղասցէ 'ի վերայ մեղաւորաց որոգայթ հուր և ծծումբ ։ Օ՜խա՞րդ , թէ սատակէ տէր զշրթունս նենգաւորս՝ և զլեզուս մեծաբանս ։ Օ՜խա՞րդ , թէ փորձեսցես զսիրտ իմ , և ոչ գտներ անիրաւութիւն ։ Օ՜խա՞րդ զյաջորդն սմին , թէ ես պահեցի ըզ-ճանապարհս խիստս ։ Օ՜խա՞րդ զևան , թէ ես արդարութ̃բ երևեցայց երեսաց քոց ։ Օ՜խա՞րդ , թէ և ես եղէց ամբիծ ընդ նմա ։ Օ՜խա՞րդ ըզ-միւսն , թէ հատուսցէ ինձ տէր ըստ արդարութեան իմում , և ըստ սրբութեան ձեռաց իմոց ։ Օ՜խա՞րդ անձամբ ինձէն զստութի իմ ծանակեցից՝ ասել ընդ սրբոյ , թէ լուացայց սրբութեամբ զձեռս իմ ։ Օ՜խա՞րդ 'ի մէջ նանրութ̃ե զամբաբըշտաց աթոռս բամբասեցից ։ Օ՜խա՞րդ զերջանիկն պարծանս՝ թշուառացելումն կերպաւորեցից , թէ դատ արա ինձ տէր՝ զի ես յանբծութեան իմում գնացի ։ Օ՜խա՞րդ օտարս 'ի բարեաց՝ դիտողիդ դաղանեաց արդահատեցից , թէ մի համարիր ընդ ամբարիշտս զանձն իմ ։ Օ՜խա՞րդ ես ինքն դոլով զայլս անիծեցից , թէ տուր նոցա տէր ըստ գործս նոցա . և 'ի կարգ բանիցն համարձակեցայց ։

Ի. Քանզի թէ զյետինս բանիցն՝ առաջնոյ-
քըն ատամնօք եղից, կրկին ծանրանան ինձ ցաւք,
և յաճախեսցեն դառնութիւնք։ Բայց 'ի շեղջեցե-
լոցն արտասուաց՝ դոյղն մի չափեալ, բաւակա-
նացայց հանապազորդեան յանդիմանութիւն սաղ-
մոսարանին ընտանի ձայնիւն, որ զպարտաւո-
րեալս միշտ կշտամբէ. առ որս՝ և սպառուած
քառասներորդի ինններորդի հատուածի բանի
յանդիմանողի՝ զիս դարշեցուցեալ, հանապազ-
խայտառակէ. խցեալ զբերանս 'ի փառաբանու-
թենէ, եղկելի զանձն իմ ցուցանէ. աստուա-
ծային ձայնիւն դատախազեալ, յակնկալութէ
կենաց լքանէ, միանգամայն և վէրս մահու ինձ՝
իբր 'ի պատնիշէ առաքէ։ Քանզի թէ չար է ա-
նէծս առնուլ յօտարէ, ապա անձամբ զանձն
անիծանել՝ կրկին չարաչար. իսկ եթէ չառնուլ
նախատինք 'ի մերձաւորաց՝ օրէնք են, ապա 'ի-
տեառնէն հայել զպայտոնիկ, կրից արեան տաժան-
մունք՝ վիշտք աղէտից, և խէթք մտաց։ Բայց
թէ առ խոնարհութե՛ անձին իւրում մտանեա-
ցի, ջնեալ և կշտամբեալ անիծիւք 'ի լեզուէ իւր-
մէ, 'ի խոստովանեալ և յանձնիշխան շրթանց
բերանոյ վերնոյն՝ օրհնեսցի. զի ճշդրտին թարգ-
մանեաց զգարձն իւր առ նա՝ զհետս կենաց ոչ
լքանելով. սահմանաւն սիրոյ՝ զպարտեացն ար-
ժան կրճատեաց, ոչ տիրեալ 'ի խարդաւանաց չա-
րաբանողաց. ոչխար հօտին քո՝ դտաւ բժշկեալ՝

զինելով 'ի յաղն բուժիչ ալեացն արկածից ։ Բայց և անբանական բարոյից է՝ ասուն կենդանեաց 'ի մէջ գալարաց ծաղկածին վայրից՝ կենածիր բանից՝ Թմբլութեամբ մտաց 'ի յարօտս մահու ճարակել ։

Գ. Նու արդ՝ քանզի իմ է առակս վերջին կըշտամբողական , և առ ևս ակնարկէ զխպուածոցըն չար պատահմունս . որ ինձէն անձին նիւթեցի միշտ զեղծմունս կիզանողականս հրոյ առչորման , հասեալ 'ի յերկնուստ զդոյլս դաղաթանս իմաստնարանի բաղմակիս ։ Քանզի զեմ՞րդ 'ի յարդիւնս ինձ օդակից սաղմոն եկեալէ , յորժամ անպտուղ 'ի բաղմերդութէն լինիցիմ , ոչ նուաղել հոգւով , ըստ Թելադրելոյն պօղոսի ։ Ոխ՞րդ ընդ մարդարէին և զոհերուհին խառնեցից՝ մեծա մեղաւորաց՝ նկունս պխանեաց՝ առել ընդ սրբոյն , Թէ 'ի բաց կացէք յինէն ամէն՝ որ գործէք զանօրէնութի ։ Ոխ՞րդ ոչ ունելով 'ի բաղմացն պատուիրանաց կատարեալ՝ շնորհին և օրինին՝ բարբառեցայց զերջանիկին , որ նախ լինքըն արար՝ զոր մեղ կանոնեաց , Թէ քանզի ծառայս քո պահեցի զայս . և որ զհեան զան ասացեալ քն ։ Ոխ՞րդ Թափուրս 'ի լութէ իմաստից կենաց՝ ընդ երկիւղածս տեառն օրհնեցից ։ Ոխ՞րդ ընդ մեծին մաղԹանաց զխմ յօդեցից , Թէ զմին խնդրեցի 'ի տեառնէ՝ զանխիլ վայելութեան նորա և զհրամմնատրուի , տաճարի նորա ։

Զիա՞րդ 'ի հրաժարելն ինձ ձեռնամխեցից յորժամ լսեմ, թէ ուղղոց վայելէ օրհնութի՞ : Զիա՞րդ շրթամբք իմովք զանձն իմ անիծից՝ ասելով զկնի յոլովից առաւելն, թէ երեսք տեառն 'ի վերայ չարագործաց՝ սատակել զյիշատակս նոցա յերկրէ. զիա՞րդ զմիւսն դարձեալ, թէ չարք վաղվաղակի սատակեսցին : Զիա՞րդ զկերպարանոյն իմ նմանութիւն, թէ բազուկք ամբարշտաց խորտակեսցին : Զիա՞րդ սատակման ինձ պաղատեցայց, թէ ահա մեղաւորք կորիցեն: Զիա՞րդ զբազմայածեան լեզուս 'ի յօրհնեալն բան մխեցից, թէ ասացի պահել զճանապարհս իմ, զի մի մեղայց լեզուաւ իմով : Զիա՞րդ փշովք մեղաց հեղձեալս՝ զանարատին պարծեցայց, թէ այլ զիս յանբծութեն իմում ընկալար : Զիա՞րդ ես մեղաւոր և կրկին պատժաւոր՝ ընհանդունակիցան գործեցից ասել 'ի նոցունց, թէ 'ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս

աստուած :

Դ. Զիա՞րդ իբր ոչ կռապաշտեալ անպատկառակէս պերճացայց ունայն պանծանօք ասել ընդ դաւթի, մի թէ մոռացեա՞լ իցէ մեր զանուն աստուծոյ, կամ ձգեալ զձեռս 'ի մաղթանս օտար աստուածոց. քանզի որ 'ի մեղս գարշութեն խոնարհեցի, առաջի կայ նորին կառուցեալ առեալ 'ի պաշտօն յունականացն ախտարծարծիցն պոռնկապատիր պատկերացն կերպարան՝

ատատարաց և քամահեալ և մեղքամբ արտա-
ձանի , և թարահատաց թարմատարի , ընդ զաղ-
բռնեացն կանացեաց՝ իշանդամիցն պատկառանք՝
անվէրպարկու ծանակութիք ։ Ո՞րք ոչ պատկա-
ռեցից սովիմք ասել ընդ նահատակին , որ զայս
գիմաղբաւութիւն առ բարին ունէր միշտ , թէ
վասն քո մեռանիմք զօրհանապազ . և որ 'ի կար-
գին է սորին՝ սաղմոս ։ Ո՞րք յիմարս յարս և վատ-
թարս՝ ասել ժպրհիմ , թէ բերան իմ պատմեսցէ
զիմաստութի , և սիրտս զհանճար . Ո՞րք մար-
գելոյն կերպարանաւոր՝ զմարդահաճոյիցն ոսկե-
րբս ցրուել մաղթեցից ։ Ո՞րք զերկին երկրա-
գնացն մեծանուննն բարութիւնս , թէ հաճոյ ե-
ղէց առաջի տեառն յերկրին կենդանեաց ։
Զիա՞րդ ունօղս անբաւից մեղաց՝ զարդարոյն
առեալ կարդացից , թէ ոչ մեղք իմ և ոչ յան-
ցանք . առանց մեղաց ընթացայ , և ուղիղ եղէ ։
Զիա՞րդ զիս ինքն մատնեցից կորստեան՝ յա-
սելն զայս բան , թէ մի՛ ողորմիր գործողացն զա-
նօրէնութի ։ Զիա՞րդ , թէ որպէս հալի մոմ ա-
ռաջի հրոյ , այնպէս և մեղաւորք յերեսաց նոյ ։
Զիա՞րդ զդժեալս ապականացու փափկութի՝
սահմանեցից զանձնմանն ինձ բան , թէ խոնարհե-
ցուցի պահօք զանձն իմ . և զաղգակիցս նորին ընդ
նոյն , թէ ես 'ի ննջել նորա քուրձ զգենուի . և
իբրև զսգաւոր և զտրտում՝ խոնարհ առնէի ։
Ո՞րպէս հանդարտեցից զնմանեացն իմ պատմ

միշտ յիշատակել, թէ սակայն մրուր բարկութեանն այդ ոչ սպառեցի, և արբցեն 'ի նմանէ ամ մեղաւորք երկրի. Ի՞բրև զեան առ սմին, թէ զամենայն եղջիւրս մեղաւորաց փշրեսցես: Ո՜ խա՞րդ զապերախտութիւն յակոբայ 'ի ծառառեալ հենդնեցից, որ ընդ ստուերին զճշմարտութիւնն ընկալեալ, մոռացայ ընդ նորին՝ նոցին թերութիւ զերախտեան քրիստոսի ածայնովքն արուեստիւք խաչին փրկանօք, քան նոքա զզօրավարութիւն մովսէսի՝ ցայդն սքանչելեօք, որ զօրինակն նկարագրէր տէրունական տնտեսութեան: Ո՜ խա՞րդ զյարուցելոցն 'ի վերայ՝ զևաց զաղետս ցուցից, երբ նոքա զօտարացեղից խուժադուժ ազգացն՝ ասելով, թէ արկլին զգխակունս բարեացըն որ 'ի մէջ՝ կուր մնասակարայն թռչնոց, այսէ՝ այսոցն օդայնոց. որպէս զանկեալ զսերմն բանին 'ի ճանապարհին, և զմիաբանեալ զկամս ընդ չարին՝ ոչ անուանեցից. Իբրև զնմանակիցն առ 'ի նոյն շաւիղ չարին պատերազմի՝ զուպար զաղտնամարտ մտացս օցտելոց, զոր ես զօրացուցի՝ զործակցեալ հնարից բանսարկուին: Այլ ոչ ունիմ աղերսել, թէ մի լռեր և մի դադարեր ա՛ծ. և խորհեցան 'ի վերայ ո՞ց քոյ և ասացին, զոր 'ի կարգէ սաղմոսն է աղօթել: Քանզի յոյժ պատեհագոյն է առնուլ զայսոսիկ 'ի վերայ բռնութեան մոլեկան դիւաց՝ միշտ ճակատելոց՝ առ ներկայիս խռովութի, և ընդ նոսին՝ նոցին մշակաց:

Ն. Յորոց դու տէր քրիստոս՝ որդի բարձեալ մեծիդ այդ՝ պահեսցես և ամրացուսցես , երկնային զօրուդ շրջափակութեամբ՝ յամ ընթացից խաւարային հոգւոց՝ խաչիւդ լուսոյ զմեզ պաշտպանեալ . որ զի՝ թէ և դայլին յիս անօրէնութիք բազմօրինակք , այլ ոչ հայհոյութիւնք : Որ ոչ հանդեար 'ի կորուստ նմանեայն խմոց ամբարշտելոց , այլ ամենադորով թախանձմամբ ընդ եղծման ջրողղն զազրագործաց՝ կրկին փշացար , տաղտկալի զմահու նոցա դիպուածն քեզ դրեցեր , առնլով զդարմանալեան լուղաց բան , ածեալ զմտաւ ոչ ևս յաւելից անիծանել զերկիր վասն գործոց մարդկան : Եւ մխիթարիս մեծ իմն պարարեալ ընդ կեանս անմաքրից՝ և պարտաւորաց սատակման . որ երբեմն առակաւ դդմենւոյն՝ զանխայելն 'ի կործանելեան ցուցեր՝ ողորմած . և առ այլ ումեմն՝ նեղեցար սաստիկ փոխանդեալ , ընդ յամրանալ անձրևին առ ուրացողացն զարման : Անճառելիս ցուցեր բարութեան տեսակս յիշատակաց տօնելիս՝ 'ի վերջին աւուրս . քե 'իձեռն առաքելոցն քոց՝ ողջոյնս հաստատակայ անհամբուրիցն հեռաւորաց քաղցրաճաշակս հրամայեցեր : Ահա և յիս ցօղեա կենդանի զհայրենի զգթութեանցդ զսէր , զի և ես փրկեցայց քաւեալ ամենառատ քո այցելութեամբդ : Եւ

քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով փառք՝

յաւիտեանս . ամէն :

Մերատին յաւելուած չէլին հեծութեան՝ նոյն հոլովը, առ նոյն ավէրս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

# ԲԱՆ. ԿԸ

Ր. Եւ ընդէ՞ր է ինձ բնաւին որ 'ի սաղմոսին այնպիսեաց բանիցն՝ 'ի կիր արկանել. որ 'ինախատինս՝ միանգամայն և 'ինզովս ինձ յարակային, հանապազ երգել խմփս տաւղօք: Քանզի՝ զիա՞րդ արդեօք զշուք երջանկին ինձ դատապարտեալս նմանեցուցից՝ ասելով ընդ նմին, թէ ոչ մերձեցաւ առ իս թիւրեալն սրտիւ: Զիա՞րդ զկարգադրութիս սանիցն՝ 'ի յայսմանէ զկնի թըւելոյն զարհուրեցուցչաց՝ ընդակից կայից կանոնաց օրինաւորին՝ զինուորին և թագաւորին, և մարմնական հրամանատուին, որք և երկնայնոցն են համբուրելիք՝ ասելով, ոչ յուսահատեղէց 'ի կենաց պատմօղս աւետեացս և նորոյս աշակերտ՝ անմահն յաւէնուստ բարեկարգութեց: Զիա՞րդ ըստ խրատախորհ արդարոյն, ընդդէմ մեղաւորացն՝ մահու զենեցայց առաւօտին 'ի սկիզբն արթնութեան միշտ պատրաստական լինելոյ, որ և ոչ զանդամս մարմնոյս դանեալ խրատեցի. զիա՞րդ մանկացեալ մեծին արութեն՝ սատակեցից 'ի քաղաքի տեառն զանօրէնեալսն, և ոչ զբուսեալ բիծս հողւոյս իմոյ մե-

ուցի ։ Օ՜ խո՟րդ սուեցից դրողին չէ՛ յայտնե-լոյն, թէ զմնխիր որպէս հաց կերայ. զխո՟րդ, որ ոչ միացուցի յիմոցս կերից կաթիլ մի պղտոր` ընդ յստակ արտասուր աչերց երգողին` առեմ ընդ նմին, թէ զմնպելս իմ արտասուօք խառնե-ցի. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի ։ Օ՜ որս ինձ գրեցից մեղօք մահացելոյս, յորժամ սիրողն այս 'ի բոլոր սրտէ` զյանցմունս նախնեացն իւր վարկանիցի, թէ մեղաք մեք ընդ հարս մեր` անօրինեցաք և յանցեաք. և որ 'ի վախճանն յան-դի սաղմոս` խրատմբք առ իս, քան առ Իսրայէլ ։ Որովք յարդեցայց դաւել ընդ բարեան, յոր-ժամ մարդկային հնարից այս պատուեցաւ` որ ոչ յիս գտաւ, 'ի դարշութենէ կերակրոց 'ի մահ սովեցելոց` և յաճախութենէ ճչանց 'ի հողւոց նուաղելոց, ըստ խորութեան ինքնորէն կրօ-նից` հրէից և հեթանոսաց ։ Օ՜ խո՛րդ` արդա-րութիւն իմ Տեառ յաւիտեանս, զոր ոչ բնաւ իսկ կատարեցի ։

Բ. Եւ զի մի տաղտկացայց յամեալ 'ի բանիս, 'ի համառօտել զայն փութացայց ։ Օ՜ ինչ ունիմ առնել 'ի տեղի բանիցն` զոր անձաշունչ ձայնն նու-ագեաց օրհներգոյն դաւթի, թէ բոլորով սըր-տիւ իմով խնդրեցի զքեզ. զխո՟րդ ընդ սմին ըղ-ձեծն քան զայս, թէ յամ ճանապարհէ չա-րեաց արգելի զոտս իմ. իբր ընդ եղեալս և զայն մատուցից, թէ 'ի սրտի իմում թաքուցի զբանս քո`

որպէս զի մի՛ մեղայց քեզ: Ո՛րպէս զունայնու-
թեանցս իբր զլռութեանց ճառեցից ընդ պարս
մաքրոց, թէ 'ի պատուիրանաց քոց իմացեալ,
առեցի զնա՛մ ճանապարհս չարաց: Օ՜ իա՛րդ ըզ-
հեզոյն ճշմարտութի՛ իմում ստութեանս մըշ-
տնջենական երդմնահարութի՛ կարգեցից՝ ուխ-
տեալ ընդ հաւատարմին, երդուայ զոր հաստա-
տեցի պահել զդատաստանս արդարութեան քոյ:
Օ՜ իա՛րդ ինձ հրեշտակ մահադոյժ անհրաժեշտ
վճռի՝ զբանին պատգամ կրկնեցից, թէ հեռի է
'ի մեղաւորաց փրկութիւն: Օ՜ իա՛րդ չարս խո-
կապէս՝ զբարեացն գրեցից՝ որք 'ի տեառնէ առ-
նուն զնոյն հատուցումն՝ զայս տուն յեղյեղել,
թէ բարի առնէ տէր ուղղոց սրտից: Օ՜ իա՛րդ
զհամառօտն փոխատուութի՛ անաչառութե՝ վը-
րիպեցելոյս ինձ սահմանեցից, թէ զթխուրեալն
յափշտակութի՝ տանի ընդ այնոսիկ, որ գոր-
ծեն զանօրէնութիւն: Օ՜ իա՛րդ զա̃ծագրեալն
պանծանս՝ ամաչեցելոյս ինձ պատուատեցից
առել զնորայն, թէ տէր ոչ բարձրացաւ սիրտ
իմ, և ոչ զբօսան աչք իմ. և որ յետ սորին
պատմին ասացեալքն: Օ՜ իա՛րդ զանճառն քան
զմարմին բան՝ 'ի ցոյցս առից քաջալերութեան
վհատելոց, ես դանձ գեհենին՝ առել ընդ օձեալն
այ̃ հոգւոյն, թէ յառաջադոյն տեսեր, զի ոչ
գոյ նենգութի 'ի լեզուի իմում, 'ի սկզբնաւորն նա-
խանձայնեալ սաղմոսն՝ մինչև 'ի լռումն աւարտ-

ման բանիս ։ Ո՜ խո՛րդ դատակցութեան դժնէից մարդոց համարան՝ այլս մահու և որդիս սատակման՝ բարբառիմ զբարեշնորհին , ո՞չ ահա պատրէլիս քո՝ տէր առեցի . և զմնացուածն սորին կարդի ։ Ո՜ խո՛րդ մեծաւն փառահութեամբ տօնելի վեհին՝ անձն իմ և դու աշխար աշխարհի՝ զանդամ քո ողի յառաջ ընծայեալ՝ մեծացուցանես ընդ պատկերոյն , թէ փորձեալ զես տէր և տես , թէ լցեն անօրէնութիւնք 'ի ձեռս իմ . և զյաւելուածն որ զհետ սորին ։ Ո՜ խո՛րդ ես դողով և յայլոց աղօթեմ աղբեր՝ յուսայելոյն յանձ ձայնակցեալ , պահեա զես՝ տէր 'ի ձեռաց մեղաւորի , և 'ի մարդոյ չարէ ։ Ո՜ խո՛րդ համբարձայց ընդ փառաւորեալն մաղթել ոյ , թէ դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց ։ Ո՜ խո՛րդ երբ հանդիմացեալ ընդ ձգնաւորին՝ զմրցանակն յաղթանակի թագաւորին մատուցանելով զառաւելեալն քան զօրինակ աղերսաղօթից , թէ ինձ սպասեսցեն արդարք քո մինչեւ հատուցես ինձ ։

Գ.. Նարեքանեալ է և այս իմաստ հոգևոր՝ և տէրունի գործոյն նմանի , որ զփորձիչն պատկառեցոյց , յորժամ չամ արհամարհիցէ՝ և զընկղմնապատճառն եղելոց միայն ընարիցէ՝ ասելով , թէ երանի ժողովրդեան , որոյ տէր աստուած է նոցա ։ Մեծ է և այս բարձրութի՛ շընորհի՝ և զգուշական համարձակութիւն լցեալ

երանութի՜, թէ սուրբք քո օրհնեսցեն զքեզ ։ Ըղձալի է և այս ընտանութիւն մերձաւորական հոգևոր հաղորդութե՛ն՝ յոծ յուսալ և 'ի նոյն արձանանալ՝ բանիւ սաղմոսին բերկրեալ, թէ զկամս երկիւղածաց իւրոց առնէ տէր . և զկարդ-բանին կատարէ, մինչև զողբալին և զզուարճալին ազդեսցէ, թէ պահէ տէր զամենեսեան որ սիրեն զնա . և զամ մեղաւորս սատակէ տէր . 'ի գլուխս լըման գրոց նուագարանաց սաղմոսի՝ իբր թէ զօրինակն իսկ եցոյց վերջին հատուցման՝ արդարոց և մեղաւորաց . Զուգակցորդք են միմեանց և զկնի երգեցեալքս . զի թէ ընդունի զհեզս տէր՝ և խոնարհ առնէ զամբարտաւանս մինչև յերկիր, ապա ինձ ո՞րքան եղկութիւնք կան առաջի . իսկ եթէ հաճի տէր ընդ ժողովուրդ սուրբ, և բարձր առնէ զհեզս 'ի փրկութեան, ապա հերքեալս 'ի բարեմասնութեանց ես՝ ո՞ւր հաստատեսցայց . իսկ եթէ օրհնելի է ինձ 'ի սուրբս նորա տիրապէս, ապա օտարս ես 'ի մաքրութեն ընդ որս դասեցայց . իսկ եթէ 'ի կանխերգից մերձ այսր եղեց յիշատակարան ինձ կշտամբութե, թէ սիրեցէք զտէր սուրբք նորա, զի ստուգութի խնդրէ տէր՝ և կրկին հատուցանէ ամբարտաւանից, ապա յորում գնդի ես դասեցայց՝ գերեալս 'ի գաղանեանց գառղին չարեաց ։ Վանկի զօրօրինակ տառանին տագնապաւ տերեւք անկոց եղեւին ծառոյ՝

շարժեալք 'ի հողմոց ուժգին բախելոց՝ հասեալք 'ի խոնարհ, այնպէս ջանացայ ջարդել զընթացից իմոց վերարձակութեն քաջաբեր ուղէշս՝ ըն-յարմարեալս ձեռամբ անեղ մշակին: Օ՜ որ հաստատեցեր արմատացուցեալ վերստին դարձեալ՝ նոր պտղաւորութե՛ անապականս, յանդաստան կենաց խնամոց քոց կամացդ ամենապարգեւ Թագաւոր Քրիստոս, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

---

Երրորդն յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանին:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

## ԲԱՆ · ԿԲ

Ա. Այլ արդ՝ ընդէ՞ր ոչ 'ի վերադարձեալն սաղմոս նախաձայնականն՝ և յայլ մարգարէիցն մասն ինչ յօդեցից: Բանիւ զինչ վայելուչ իցէ կերակրոյն, եթէ անզգայեալ ցաւովք ուտիցեմ, և կամ զի՞նչ շահ սաղմոսն ունիցի, եթէ ոչ 'ի միտ առնուցում: Բանիւ նզովեմ զիս ինքն 'ի նմին, և ոչ իմանամ. լուացեալ լինիմ, և ոչ պայծառանամ. արեւու ծագեալ, և ոչ լուսաւորիմ. մեղր ճաշակեմ, և ոչ քաղցրանամ. ռեանիւ ըմպեմ, և ոչ բժշկիմ. միշտ կանխեմ 'ի նոյն, և դատարկ երևիմ. հանապազ ձաղիմ, և ոչ երբէք խրատիմ. ողոքիմ դարձեալ, և ոչ զգաստանամ:

Ի. Արդարև՝ մեղք և անօրէնութիւնք իմ յիս, և ես մաշիմ 'ի նոսին, ըստ մարգարէին՝ որ 'ի գլխոյ պարտաւորացն՝ բանի. և տէրունական առակին հին տկոյն և նոր գինւոյն: Վասն զի թէ սատակին անօրէնք և մեղաւորք 'ի միասին, ըստ եսայեայ ձայնին, ապա և ինձ դժնէիս նոյն բաժին հանդերձեալ պահի: Քանզի ասեմ զսաղմոսն, թէ հատուցանէ այնոցիկ՝ որ առաւել առնեն զամբարտաւանութի. և կցորդեմ զմին զընթերցուածն, թէ օր տեառն 'ի վերայ հպարտից և ամբարտաւանից. ասեմ, թէ օտար եղեն մեղաւորք 'ի մօրէ; և որ ինչ կարգ սորին ցուցանէ. յարեմ առ սմին, թէ կործանեսցին անօրէնք երկրի, և ամբարիշտն բարձցի յերկրէ, և անիրաւք մերժեսցին 'ի նմանէ: Ողբք ինձ կարդացէք առ ձայնն, թէ գերօրինակ վառի եղէքն 'ի կայծականց հրոյ, այնպէս այրեսցին մեղաւորք 'ի բորբոքեալ բոցոյն. լացէք առ սաղմոսն, թէ արկցես 'ի վերայ նոցա կայծակունս հրոյ. աշխարս պատմեցէք 'ի բանս ծնեան վճռին՝ մարգարէին ազդեցեալ, թէ ոչ կամիցիք լսել ինձ, սուր կերիցէ զձեզ. կոծեցարուք առ սաղմոսն, թէ մա՛հ հովուեսցէ զնոսա. աղեարտասուս՝ ողորմ հառաչմամբ ընդ հեծութիւնս իմ յարմարեցէք, յորժամ բարձրեալն ընդ խոբայէլի և ինձ ասասցէ բանիւ սաղմոսին, թէ ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում. աւա՛ղ

կարդացէք Թշուառացելոյս, յորժամ այլ մար-
գարէ զնոյն դիցէ, վա՛յ նոցա՝ զի վարեցին զնա։
Նորրա՛ւ փողեցէք 'ի սիրտ մղձկեալ նոր աղա-
ղակի, յորժամ տեսանողն աստուծոյ ամաչեցու-
ցեալ զնս կշտամբեաց՝ ընդ ապարասան տանն
յակոբայ, տեսէք ո՛րհամարհոտք՝ զարմացարու՛ք
և եղծարու՛ք։

Դ. Սեղ դարձուցեա և ամփոփեցեա զբարձ-
րացեալ զսուր բարկութեն ահաւորդ սպառնա-
լեաց՝ 'ի սարսուցելոյս յերեսաց մեծիդ. և խնա-
մեա՛ք ասողդ բարերարութեն առ իս ժամանեալ,
օծուածն կենաց պարգևաարեցեա քո աղաչողիս։
Եւ քեզ փառք՝ յերկինս 'ի բարձունս, և 'ի մա-
հացուաց յերկիր 'ի խոնարհ, 'ի սահմանս բոլոր
ազանց, և յամենայն յաւիտեանս. ամէն։

---

Մերոյն յաւելուած կրկին հեծծութեան՝ նորին
հաւհաղէ, առ նոյն աղէրս մաղթանաց բանի։
'Ի ներքոյ որոյ կռոց՝ ընդ տայ։

# ԲԱՆ · ԿԳ

Ա. Յարերա՛ր և բաղմագութ, մարդասէր և
երկայնամիտ՝ միայն Թագաւոր, ընդ հօր քում
պատուեալ և օրհնաբանեալ տէր իմ, որդի ին
կենդանւոյ։ Անպատճառ միշտ խման կայրս-
տեան. որ ամենեին անփորձ ես 'ի չարեաց. որ

ոչ կամիս զմահ մեղաւորի . որ փրկութիւն ես 'ի-
քոց կամաց ընծայեցեալ . որ դարձուցանես ըզ-
մոլորեալ մեղաց՝ 'ի յօդ քաւութեան . որ զհուր բար-
կութեան՝ յանձրեւ փոխարկես ։ Որ զկեանսեալ
զկեանս 'ի բարեաց՝ կրկնակի դոյլս նահանջեր՝ եր-
կնային բնութի 'ի նոյն արձանի , ոչ խիկարես ընդ-
անպարտան , եւ ոչ համայն ընդ պատժաւորսն ։
Որ զլուծութիւն ծովուն սահմանաց՝ իբր զկար-
կատս քարանց կառուցեալ յեզանակեցեր ։ Որ
զկարծրանիւթ վէմն անապատին՝ 'ի վէժակս վը-
տակաց հոսեալ բղխեցեր ։ Որ զյորդանանու ջը-
րոյն արաշարժ վայրենկութի՝ հրաշաւոր անդրա-
դարձութեամբ՝ 'ի յետնորդս հեթանոսաց լուա-
ցումն աւազանին 'ի Թիկունս առաքեցեր ։ Որ ըզ-
պատուասեալ պարիսպն երիքովի , յօրինակ
կործանման բռնութեան սատանայի՝ իբր զԹե-
Թեւութիւն յարդի ցնդեցեր ։ Որ զմնասակար
ջուր նորին 'ի յառակ այլայլութե առ 'ի բարին
փոխարկութեան՝ քանանացւոյն փրկութե՝ խոր-
հրդական աղիւն համեմեալ անուշեցեր ։ Որ
զմեռոյին դառնութիւն , իբր զմտաց անհաւա-
նութիւն , կենացն փայտիւ 'ի քեզ յարմարեալ՝
պիտանի արարեր ։ Որ զառեալն 'ի գետոյն՝ 'ի-
գծաղրութիւն անսահմանդ քո հրամանի անո-
րակիդ գունակութե՝ 'ի նոր երանդ բոսորայինն
մածեր արիւն 'ի ցամաքի ։ Որ զանկենդան ցուպ
գաւազանին 'ի կենդանութիւն՝ առ 'ի զքոյդ մե-

բովս նկարագրիդ , այլ և յօտարականիցն ըն-
րութիւն` 'ի տիպն ապալթոյն կերպիւ վիշապի`
նմանեալ ցուցեր : Որ զերջանիկ ձեռն աջոյն
մախախի , 'ի ցոյցս տեսութեան ապագայից հը-
րաշից մարդեղութեանդ քո` բարձրեալ , և քե`
ախտաւոր մարմնոյս մաքուր լինելոյ անփոփոխ
փոխատրութի` կրկին գուշակեցեր : Որ յայս-
քանեայս շրջագրութի , բարեխնամաբէս ար-
ուեստիւ սիրոյ զանակնկալն դիտ մեղաւորաց
կորստականաց , նշանակեցեր` օրհնեալ ամե-
նագութ :

Ի. Որ բուսուցանես յերկրէ դալարի , զմե-
ռեալն` յանշնչականէն . որ զանշարժն` իբր զըն-
թացող կառավարես . որ յանարգ արգանդէ`
կոչես քեզ պատկերակիցս . որ տաս պատանե-
կաց` աղօթս ըմբոշխնելիս . որ յայտս մաքու-
րս` հերս ընծայես . որ զաղաղաթ սևութեան
վարսից 'ի ձեան կերպարան զարմանագործես .
ցուցեալ` թէ առ ամ՛ սահման հեռաւորական ,
յաղթող ես հզօր . որ փոփոխես զշրթունս ըն-
նաւորականս , ըստ բանին յորդ , 'ի կամս հա-
ւատարիմս : Որ տատանես զերկիր , և զսիւնս
նորին 'ի հիմանց , նշանակեալ հաստատուածին դո-
յիւ` թէ դու միայն Տէր անկործանելի . որ հո-
լովես զաստերս` իբրև զանցաւորս , և զարձեալ
'ի նոյնն կացէս` իբրև զյարակայս . յայտ արա-
րեալ` թէ և առ մեղաց բազմութիւն` զփրկա-

ոչ ես ունել կամ թողուլ՝ նոյնպէս զօրաւոր լինել: Որ զարուեստին անզգայ էութիւն՝ երբ երասանաւ իմն զաստախարակես. երևեցուցեալ այնր իրի կերպիւ՝ թէ զընութեանս չար զխմեցումն՝ յորժամ և կամիս՝ հանդարտ առնիցես: Որ զանբարբառ բոլորակ լուսինն՝ կարգես ունայնս և պատարունս. լուսաւորել զպատճառն առ աւետիս անսողոց՝ թէ ՚ի նուազութէ բարեաց ըղպարտաւորս մարմին՝ դու ածես ՚ի լրութիւն աստուածանեղծ հարստութեան: Որ զպատկերս մխսօս աստեղաց՝ երբ զգաստիս դոյն հօտից՝ արոհես և ժողովես. յոյս իմն կենաց առ այս խորհրդաբերեալ՝ քաղցրահայեաց տեսութիւն. թէ և անապաշաւորաց լեզուաց՝ կարողացես բաւես ողորմել: Որ ՚ի մէջ մահու և կենաց՝ շաւիղ փառահաւթէն ուղղես ՚ի ծովու. վկայութի եղեալ հաւատոյ, թէ և յանկասկածաւորն վայրի՝ քե պաշտպանիք անդայթագղելի. որ երբ զջուր կաթայից ՚ի հրոյ եռացեալ, որպէս զմեղաց մրրիկ պղտորեալ՝ բանիւ կամաց քոց խափուցանես: Որ հայիս յերկիր և տատանես զնա, զի անբանին՝ զմարուրս զգաստացուցանես. որ երբ զակատ մի անձուկ նաւի ՚ի վերայ շարժութեան ալեաց՝ զանբաւ թանձրութիւն զեանոյս դղրդես, որով ծանուցեալ լինիս ամենից հաստատածոյ՝ թէ էջես անեզրակելի, որ ՚ի բանն քո զօրեղ՝ հիմնացեալ ունիս զամենայն: Որ սե-

մանես զարտաշնչելով մարմնոյ յերկրի ; և զնոյն անկորուստ պահելով կրկին կենդանածնես . որ ապականացուս աւանդելով անեղծս առնես . որ ընդ մահացու նիւթոյս զնշխարս կենաց խառնես , որ հրամանաւ անմարմնութե 'ի խուն փայլկենի կազմեցեր՝ պատրաստ կացուցեր զանզարդութիւն ամենից եղանակաց ։ Քո՛ է զօրութիւն և կարողութի , որ շրջանակես զմարմնակս ամաց հողմկան աւուրց՝ յայլ նմանութի բարեպատեհ սեպողութե ։ Որ կարդաս զանմրցունչսն՝ իբրև զկենդանիս . որ աղբես միայն , և նորա ընթանան . որ միայն հնչուս անկանես անձառ արուեստիւ հնարաւորութե՝ մեզ և առաւօտ ։ Որ յետ նախակարգ յօրինուածոյն առաջնաստեղծ լինելութեն , արարեր զփառաւորեալսն մեծամեծս հրաշակերտսն հանդերձից , ըստ զբոյն երջանկութե կանխահնոյն զարմացման , այլ խնմ գոյացութի տօնելի տեսակի՝ անեղծ աշխարհադործութե ես քան զսոյն՝ 'ի մարդանալդ

քո , որոյ ոչ գոյ թիւ ։

Գ. Որ առհա զճնասն մեր՝ քեզ գրեցեր . որ զարդարութիւն քո՝ մեզ շնորհեցեր . որ ընդ քեզ կրեցեր զհաշտութեն մերում փրկանաց . որ ոչ երբեք լքանիս յողորմութե . զարձ՛ զմխարըշտակալ՝ 'ի պաշտօն բարի երկիւղի . զթմբրեալ՝ 'ի ղդաստութի արթնութե սրտի . զանմորուս՝ 'ի սրբութի պայծառութե կերպարանի . զտ

մարխծս՝ յանբծութիւն հանդարտական սուրբ պատկերի. զընկենալս՝ յողջութի, որ 'ի դիպմանց ոչ խորտակի. ըղլացեալս՝ 'ի խնդութի զուարթութեան անախորժելի. զյուսահատեալս՝ 'ի սէր միութիւն անքակտելի. զամաչեցեալս՝ 'ի վստահութիւն հաստատութե անշարժելի. զխաւարեալս՝ 'ի լոյս երանութեան անմեկնելի. զմահուգերեալս՝ 'ի կեանս, որ ընդ եղծմամբ ոչ անկանի։ Ո՜վ փառաւորեսցի անուն 'քո՝ յիսուս, խոստովանեալ յամի, ընդ հօր և ընդ հոգւոյդ սըրբոյ՝ 'ի բարձունս երկնի և 'ի ստորևս երկրի՝ և 'իրնակիչս նոցա, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

Սրբոյն յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն ասէրս մաղթանաց բանի։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

## ԲԱՆ · ԿԴ

Ա. Բայց արդ՝ վասն զի արթնականն մեր զուարթութիւն՝ քեզ ննջումն իմն է համարեալ, իսկ ՚ի խոր թմբրութիւն լինելն՝ վասն ուղիղ հաւատոյն ՚ի քեզ՝ անթարթափ բացումն աչաց, ուղղեա՛ հոգւոյդ քո իմաստութեամբ զյաջողուած ձեռնիս գործոյ՝ ընդ հեծութեան ձայնիս մաղթանաց։ Զօրացո՛ տէր՝ ՚ի հանդէս բարի ճգնաւորական արի վաստակոյ. կցորդ լեր կարեացս տկարութեան. թեթեւս կացո զաշխատութեան այս սկիզբն. արագեա՛ միշտ կարօղ՝ զյառաջագրեալ ձեռակերտս. զեւրաւորս ընթացս ՚ի յաւարտումն լրմանն։ Ի վախճան երկին բերկրութեան զիս հասո՛. ժամանն կացուսցես՝ ՚ի հանդիպումն յուսոյն. կցորդ լեր ուղւոյն՝ ճանապարհիս ընթացից. ՚ի թռիչս ամբարձմանն՝ փութացուսցես յօգտակարն. ընդ աջմէ իմ լեցես՝ ՚ի վտանգի ծանրութեան. զձայն քո լուռ՝ ՚ի յանձկութեան պահու. ձեռամբ քո կեցո՛ ՚ի կորստեանն ժամու. մատամբ քո արգելեա՛ ՚ի սահմանին անձկութեան. հարթեա՛ զխորոց՝ ամենաչար խափանմանն. հողեղինին առաքմամբ, ըստ Ամբակումայ, իմն հնարեա՛. բան իմն շնորհեա՛ ՚ի յառնելն բաղմութեան. իմաստութիւն յիս անկեա՛ ՚ի յանդիմանման քննութեան։

Ըմպով կամաց քոց հովանացիր հրաշապէս. հան դարտեցո՛ փայլուդ կենաց՝ զծովուս մըրրիկ սան-ձեա՛ շատտեաց կենցաղոյս պատկեր՝ քոյին հրա-մանաւդ. քանզի թէ սաստ ողորմութի քո տէր՝ կամեսցի, այս լուծութի կոհակաց կարծր է քան զվէմ, և թէ ՚ի ցամաքի անտես առնիցես, իբր զանկայուն սնդութի յատակիս ՚ի ներքոյ սասի

հոսեալ սաստնի:

Բ. Ըրդ ընկա՛լ յխուս զպաշտամանացս ձեռնար-կութի՝ քեզ ՚ի հանձուն, և արա՛ ինձ զամենակարծն գայթագղութի՝ մեծ վստահութի: Որպէս ՚ի ջրահեղձոյց ամենակործանն գալու, որք ՚ի հարթ տարածման դեռնի առանց երկիւղի յանհոգս կեին, յողորմուէք ամայի մնացեալ՝ կորուսան-եալ ընդ հուանաւոր մածուածով լաստին հոգ-նատատան հիմնն հայթայթանօք՝ յանուն զթա ծիդ յեցեալ պահեցան. ընդորս՝ և զաղաչօղս մըշ-տատատան՝ ՚ի նաւահանգիստն խաղաղուն մար-գասիրաւէս պրծեալ ապրեցո՛ վարձս ՚ի քոյոցդ ընդիս բերելով հոգևոր շահից, զատարարերս այս սուսարութի պարտուցս յքեալ բանից առաւել, ՚ի քեզ տէր անկայց միացեալ խապառ անրաժանելի օրհնեա՛լ յամի: Նա կցորդելով այսմ մաղթանաց հոգեղէնքն ամենամաքուրք՝ ընդ հոգեղինացն մար-մնոց, որք ջրով և հրով փորձեցան, և յերից զերծմանն ընդ մեր խնդրեցին. և մեզ յիշատակ թաղին օգնութեան, սասացեն ընդ մեզ հանա-

բանաբար զուգամասնութի՝ եղիցի եղիցի:

Վերադին յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հոլովէ, առ նոյն աղերս մաղթանաց բանի։

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## ԲԱՆ · ՁԶ

Ա. Ընդ այսր հառաչանաց թախծութեան ող-
բոց՝ ՚ի բազմաց կերպից շարակարգելոց, և ամե-
նից հոգւոց ողորմելի գծեալ և երկայնամիտ թա-
դաւոր։ Նաև այնոցիկ առաւել՝ որոց հատեալ է
ակնկալութիւն փրկութեան կենաց. որք ննջեցին
անպատրաստաբար՝ շիջեալ լապտերօք իւղոյն
պակասութեան։ Ահա յիշեա՛ տէր իմ զթու-
թեան, և ՚ի յայս ևս պատճառ խրատունս ինձ գրեա՛։
Զանզի թէև ՚ի փառս ահաւորութեան սքանչե-
լեաց մեծից՝ հակառակօքն հանդերձեցեր զկազ-
մած մարդոյս, զոմն ծանր՝ և զոմն թեթև. զմին
զօդ և զմիւսն հրային. զի զխնդրութիւն ՚ի հա-
կառակացն հարթ պահեցեալ՝ արդար կշռեցուք
հաւասարիմ հաւասարութեամբ. և ՚ի յայսմ դատա-
ման առաքինութեան վերաբերեալ ընդ ամբարձե-
լոյն, զխոնարհութիւն առ կաւն զխառնման անմո-
ռաց պահեալ՝ պսակ ընկալցուք ծննդաւորական։
Այլ քանզի յայսմ կանոնէ ուխտի վրիպեցաք,
և անմանաբար սահեցմամբ ըստ հողոյն զիջման՝
ընդ երկիր մածաք, այլ ոմն ախտիւ՝ և այլ ոմն
անդթութեամբ. միւս մասն մոլութեամբ ամենա-

բաղձ կերակրոց՝ լեր դադան մշտարոյծ՝ յարա-
կայ կապեալ ընդ բնութեանս ։ Իսկ 'ի քաւիչս՝
ումն անըմբռնելի և անողորքելի սլացմամբ 'ի բաց
ստացեալ՝ վայրենապէս անբարտաւանէ . եթէ
ջեռնումք տապով սիրոյն որ 'ի քեզ՝ նշխարա-
բոյոյն որ 'ի մեզ , ցուրտն առնթեր կենակցնը-
մին՝ զնոյն կասեցուցեալ , բարւոյն ընդմիջէ . եթէ
օդականաւն հրեշտակայնոյն յառիցիմք 'ի քեզ ,
ծանրուն թանձրու անդրանիկ նիւթոյս այս հո-
ղոյ՝ 'ի ստորև քարշեալ խափանէ ։

Բ. Ո՞ւ արդ՝ յամենուստ պարտեալ և խապա-
ղեալ՝ լեր զայլիկար հաշմեալ հերքեցայ կորեայ
վանեցայ . վատնեալ 'ի բաղմաց՝ 'ի մահ դրաւե-
ցայ . վասորոյ 'ի պարտեւականէն զրկեցեալ՝ յո-
ղորմութենէն կողմ նայիմ . և պատկառեալ զի-
մոք համայնից ունօղս՝ զընաւից աղերսարանեմ
զմեռեալոցն՝ քեզ կենդանեաց . քանզի կարող ես
յաւէտ հնարիւք և կորստականացն բառնալ մեռե-
լոցն . ամ ինչ քեզ զօրելի է . նա զի՝ և ընդ անակար
կարեւոյդ՝ և կամեցող է ախորժելի ։

Գ. Արդ՝ այսց երկուց բարդաւած շնորհաց նո-
բողչաց՝ առ միմեանս եկեալ՝ կարեէն ընդ կա-
մելն , բարձեալ եղիցի և յուսահատութեն վը-
հատութիւն աղդաց մեղաւորաց . և ժամանեալ
հասցէ աւետեացդ լոյս՝ հոգւոց բժշկութեան
քումդ հրամանի՝ տէր ամենայնի , օրհնեալ
յաւիտեանս . ամէն ։

Մերոյին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

## ԲԱՆ · ՁԷ:

Ա. Եւ արդ՝ քանզի 'ի գլուխ կատարման հասեալ սակաւամասնեայ կտակի այսր ողբերգութե՛, արա՛ տէր՝ վախճան դադարման առնուլ ընդ այսց բանից մաղթանաց՝ ինքնանախատս կշտամբութե՛՝ և որ յիս կրին չար սովորութի՛ք: Որ քեղէն կարգեցեր սահման աւետեաց անխափանութե՛ դատապարտելոյս՝ ասելով, ոչ են կամք առաջի հօր իմոյ՝ եթէ կորնչիցի մի ոք 'ի փոքրկանցս. և դարձեալ, այս են կամք հօր իմոյ՝ զի զամենեսին ինձ յանձնարարեալսն ոչ կորուսից:

Բ. Ահա օրհնեալ ես 'ի գթութեան. բարեբանեալ միշտ 'ի քաղցրութեան. խոստովանեալ յերկայնմտութեան. ծանուցեալ 'ի յայցելութե. քարոզեալ տէր 'ի փրկութե. ներբողեալ դու յառատութեան. պատուեցեալ 'ի պաշտպանութեան. փառաւորեալ ես 'ի փրկութեան. երկրպագեալ յանճառ բարձրութեան. պաշտեցեալ 'ի յանքննութեան. գովեցեալ միայն 'ի յաղթութեան. վերաձայնեալ 'ի մեծ զօրութե. ինկաւորեալ յողորմածութեան. համբուրեցեալ յանճառ հեզութեան. ճաշակեցեալ 'ի-

խոնարհութեան ։ Ընդ քեզ և ծնօղդ քո երկնաւոր ածդ բոլորից մխիթարութեան. ըստ ոբում հզօրիդ քո սուրբ բարութեան, որ զանկեալ զզրաստ Թշնամոյն՝ և զդայթագղեալ մարդն անբանութեամբ՝ կամեցեր ոչ անտես առնել ։ Արդ երախտիս հզօրիդ 'ի յեր, և առաքինութի մեծիդ 'ի բարձունս տօնեալ անդադար յանվախճան փառաբանողաց. որովք զայս ձայն աղերսական յարդեալ ընկալցիս՝ մարտիրոսացն պաղատանօք 'ի հոտ հաճութեան բուրման անուշից։ Եւ այսու փրկանօք հաշտարար բանի՝ զնախնեացն պարտս և զանկրելութ վէրս՝ միջնովքն և վերջնովքն մահացուցանողօքն զանձն և զմարմին բժշկեա՝ ամենակարօղ. զներքինս և զարտաքինս. զախտքն և զղիծքն, և զխորամս հարուածոցն. բարձեալ և մաքրեալ դեղովք ողորմութեանդ զկտեալ խածուածս բազմադունիս, որք դարշելիս ընդ ախորժելեացն քեզ ցուցանեն զէութի բնութեանս ։

Գ. Եւ եթէ հասից յամս ծերութեան քե առաջնորդեալ՝ արժանիս մահու, մի Թողցես ըզակարութիւնս. մի անարգեր զալեսն. մի կորացուսցես զկործանեալն. մի զեջուցես զկքեալն. մի փայլաբեկեր զխոնարհեալն։ մի շնչման հողմոյ մատներ զառկայծեալն. մի ընդպահիւցես զդեդևեալն. մի անվերադիւ առներ զաստացեալն. մի անդարման լիցի տագնապեալն ։

Մի առանց տածելոյ՝ յարկն խախտալեալ. մի անպատիւ՝ պատկերն հնացեալ. մի պարտութիւնն անհամեալ. մի շուք շնորհին անարգեալ. մի հնութիւն քամահեալ. մի նաւ հոգւոյս ալէկոծեալ. մի երկարութիւն յուսոյն կըտրեցեալ. մի լար շաւիղն խզեալ. մի ուշ իմաստին բարձեալ. մի դոյլն կազմած ղեղձեալ. մի ամբարձմանն թեւք փետտեալ. մի զուարթութիւն գեղոյն տգեղեալ. մի ճաճանչ նշուլին քաղեալ. մի պատուհանք աչացս փակեալ. մի՛ լուսաւորութիւն նորին խափանեալ. մի՛ պատկերն խօսուն անկեալ. Ահա աղաչեմ զքեզ՝ բարեգութ, ամենայն սրբովք պաղատիմ, լո՛ւր սոցին ինձ կանխաւ, զի զանազանն մի՛ մոռասցիս: Դու առաջնորդեցեր ինձ, ըստ սաղմոսողին, եւ ապրեցուցեր, հա՛ն տէր՝ ընդ երգողին՝ եւ 'ի կարծեացն կասկածանաց, յորմէ երկնչէի: Իսկ ես չեմ արժանի 'ի քէն՝ եւ ոչ հասարակական կերակրոյն վարձու, այլ դու կարո՛ղ ես սովորաբար՝ եւ առ զլացօղս բարերարել: Քո՛ են զարմանալիք անճառելից բարեաց՝ միայն հրաշագործ առ ամենայն երկայնմտութիւն, ընդ հօր եւ հոգւոյդ սրբոյ օրհնեալ հանապազ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Մերոյին յաւելուած երկին հեծութեան՝ նորին հոլովոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## ԲԱՆ · ՁԲ

Ա. Եւ արդ՝ ջուր և կաթ արտասուաց՝ բխկութք հոգւոյս՝ մատչիմ լռմամբ՝ խորտակմամբ սրտիս հեղեալ առաջի՝ զմարդարէին յիշեցուցանեմ զարամաթացւոյն Սամուէլի, զոր առեալ էհեղ 'ի սկաւառակէ յանդիման քո՝ ամենատես, առ ժողովրդեանն օրինակութիւն՝ զանձն արկանելոյ խոստովանութեամբ և հնազանդութեամբ կենդանարարդ դարշապարաց։

Բ. Եւ արդ՝ ընկալ զայս հիւսուած բանի աղեղորմ հեծեծանաց, և հաստատեսցես յայս նուէր բանի՝ անարիւն զոհի՝ թա՛գաւոր երկնի. և օրհնեալ սրբեա՛ զտառ մատենի այսր ողբերգուե՛ն. և գրեալ դրոշմեսցես յարձան յաւիտեան՝ ընդ հաճոյականացն սպասաւորուե՛։ Կացցէ առաջի քո մշտնջենաւոր, և յիշատակեսցի 'ի լսելիսդ քո հանապազ. բարբառեսցի շրթամբք ընտրելոց քոց, և խօսեսցի բերանովք հրեշտակաց քոց. տարածեսցի հանդէպ աթոռոյ քոյ, և ընծայեսցի 'ի սրահ սրբութե՛ քոյ. խնկեսցի 'ի տաճար անուան քոյ, և բուրեսցի 'ի սեղան փառաց քոց. պահեսցի 'ի գանձարանի քում, և համբարեսցի 'ի ստացուածս քո։ Պատմեսցի 'ի յականջս ազգաց, և քարոզեսցի 'ի լուր ժողովրդոց.

՛նկարեսցի ՚ի զրուցս իմաստից, և տպաւորեսցի ՚ի-
մտաց զգայութեանց. իբր կենդանեօք՝ զնմա պատ-
մեսցէ խոստովանեալ զանօրէնութիւն. և թէպէտ
վախճան ընկալայց իբր զմահացու, այլ յարակա-
յութիւն բանի այսր սովերի՝ գրեցայց կենդանի:
Մնասցէ սա անեղծ ՚ի կամս քո տէր՝ ինձ պատ-
ժապարտս համբարձեալ միշտ՝ անդուլ դատիչ.
անաչառ կշռամբիչ. անպատկառ յանդիմանիչ.
անանխայելի զսրովիչ. անողոքելի պարսաւիչ. ան-
համբոյր ծանակիչ. աններդաշնակելի մասնիչ. ան
փրկելի տանջիչ. անկաշառ կառափիչ. անխնա-
մելի յայտնիչ. ապառում հրապարակիչ. աշխար-
հալուր բողոքիչ: Փոխեալ մեծութեն ազդման ա-
ռանց լռութեան և կամ դադարման՝ զիմոցս պար-
տեացցս խոստովանեացի:

Գ. Սոյն զիր՝ իմոյս ձայնիւ՝ իբր զիս ընդ իմ աղա-
ղակեսցէ, տարածեսցէ զծածկեալսն. հռչակեսցէ
զգաղտնիսն. կականեսցէ զկատարածն. հնչեսցէ
զմոռացեալսն. յայտնեսցէ զաներևոյթսն. բար-
բառեսցէ զպարուրսն. քարոզեսցէ զխորոցն. պատ
մեսցէ զմեղացն. մերկացուսցէ զանտեսիցն. ցուցցէ
զներպարանս թաքուցելոցն: Շօշափեսցին սովո-
րաքն. գայցեն գայթագղութիւքն. յանդիմանեսցին
անձառք. քամեսցին չարեացն մնացուածքն: Եւ
թագաւորեսցեն կեանքդ շնորհաց ողորմութիւն քո
փրկաւոր՝ ՚ի զանձս պահեստի ամկերացն ցամաքե-
լոյ. որով ՚ի ժամանակս կենդանականս սկզբնաւոր

լուսոյ մտի զարնայնոյն՝ նորոգման աւուրն պայ-
ծառութեն՝ քոյովդ ցօղով յողի ամենեցուն պտու
փրկութիւն անմահականս, և անցամնաքեալ վերամ-
բարձումն շառաւիղս ձգեալ խմանալեացն բարեաց՝
զարձեալ զալարեցայց և կրկին ծաղկեցայց, ըստ
քոյինաշունչ զրոյն յուսադրութեան: Եւ քեզ մի-
այնոյ փրկողի՝ և Հոգւոյդ քում Հօր խակակցի՝ մի-
ասնական աէրութեանդ և անձառ երրորդու-
թեանդ՝ խորՀրդական զովեստիւ փառք և երկրը-
պագութիւն յաւիտեանս. ամէն:

---

Մէրաքին յառեալուած կրկին հեծառնեան՝ նորին
հոլոյն, առ նոյն ողէրս մազմանոյ բանի:
Իխօսրոյ որթեյ խօսք ընդ ոյ:

## ԽԸՆ: ՁԹ.

Ե. Աստուած և Տէր. կենաց և արարիչ. ողոր
մած. գթած. լոյս. երկայնամիտ. անոխակալ. մար
դասէր. ամենազօրութ. պարգևատու. փրկիչ. օրՀ
նեալ. գովեալ. բարերանեալ: Կարանագործ.
պատսպարան վստաՀութ. առանց նենգութ բարի.
առանց խաւարի ծառագայթ. քաղցր մեղաց. ող-
ջացուցիչ վիրաց. անՀասանելեաց Հնարք անմատ-
չելեաց Հպաւոր. անյուսաթեան երբ. անուն քո
խոստովանեալ՝ ոյ որդի. և Հօր քո ընդ քեզ Հա-
զօրի և աՀաւորի, և Հոգւոյդ ամենակալի և ընդ
քեզ երկրպագելւոյ՝ փառք և պաշտօն գոՀաբա-
նութեան՝ յաւիտեանս. ամէն:

Սէրովբէն յաւելուածք կցցին հեծեծանօքն՝ նոյնն
հոլովէ , առ նոյն աղէտս մաղթանաց բանի :
'Ի ներքոյ որոյ են խօսք՝ ընդ այս :

## ԲԱՆ · Գ.

Ա. Բարեբանեալդ ած երկնաւոր , միայն արա-
րիչ , տէր ամենակալ . մեծութիւն ահեղ . գը-
թութիւն օրհնաբանելի . ողորմութի խոստո-
վանելի . բարեխօսութիւն երկրպագելի . խնա-
մակալութի պաշտելի . մարդասիրութի տօնելի .
պահպանութիւն խնկելի . բարձրեալ անքննին .
մերձաւոր կամարար . ապաւէն անկասկածելի .
մխիթար սրտից . փարատիչ վշտաց . ապաքինիչ
ցաւոց . պատուամն վհատութեանց . բարձումն
պարտեաց . փոխարկիչ կարեաց . կարգաւորիչ
կռից . յարմարիչ բանից . սանձարկու լեզուի .
ամշրջագրութիւն շնչոյ . կացուցիչ հաղագի . ամ-
փոփիչ խորհրդոց . կրթարան կամաց . արձանա-
ցուցիչ յուզմանց . հանդարտութիւն մրրկաց .
խաղաղութիւն ծփանաց , որ ունիս զԹևոց ամե-
նընթաց իշխանականիս , և իմաստութե նուա-
ճեալ առ քեզ դարձուցանես :

Բ. Գոհաբանեալ միշտ երախտաւոր , որ հնչու-
թեամբ անհպարտութեան երկայնամտեալ հանդ-
չիս աննմանօք անճառ հրաշիւք՝ յանձինս մերոց :
Թագաւոր երից համայնից , ամբ ծանուցեալ

գթած. սկզբնահայր և նախաշաւիղ սիրոյն ըն-
թացից. ճանապարհ կենաց, որ առաջնորդես
քաղցրութիւն՝ զխմելոյս 'ի լոյս վերին: Ձեռնկա-
լու մեծ վստահութիւն, որ ոչ թողացուցանես
գայթագղելոյս 'ի վայր կործանել. յուսոյ կեր-
պարան. ճշմարիտ առ հաւատչէիւ աղաչողաց
մատանց յայտնի երևեալ. ապաւինութիւն հան-
գըստեան, որ ոչ երբէք մատնես վտանգի դատա-
պարտութիւն: Ազատութիւն շնորհաձիր, որ տաս
լիապէս առանց փոխատրութեան փրկանաց. առա-
տութիւն աննախանձելի, որ քոյին փառաւո-
րութեամբ զանարգ նիւթ հողոյս ճոխացուցա-
նես: Պայծառութիւն անստուեր, որ ճառագայ-
թիւք ահեղ բարձրութեան պարածածկեալ զթըշ-
ուառս՝ կրկին բարգաւաճ առնես: Քաւիչ մե-
ղաց բազմաց, որ զհերքեալս 'ի փրկութէ ա-
ռաջնոյն պայծառութեամբ նորոգեալ՝ վերստին
վայելչացուցանես: Հնարաւոր զիւրահաս՝ առ
ամ անբաւ զերամբարձութիւն յաւէտ յառա-
ջեալ. ելք վստահութեան առ խոստացելոցն վա-
յելս. երանութիւն անձկալի, յոր զկենդանութիւն
ջնջոյս լքանելն է ախորժելի, զի զքեզ գտից՝ կեն-
դանի: Կամք անփոփոխագրելի՝ առ 'ի քաւութիւն
գերոյս զօրացեալ ամենազօրելի. անսխալելի գեղ
կենաց, որ և մեռելոց՝ բնաւին եղծելոց անձնա-
զգածելոյ զքանչելիս: Ամենաստեղծ աներկրպագելի, որ բռ-
նութեր զեղեալն, և զհողմնով հոսեալն, և զմա-

նեոք գաղանաց ծախեալն, 'ի քթթել ական նո-
վին հիւթականութի անսպառ յարուցանես:
Ընհաւասար համարձակութի, յորում ածօրէն
պանծանօք պարծելն է իրաւացի:

Ի. [illegible]այեայց ոէր՝ յիրկնից զուարթ քաղցրու-
թեամբ յամենակործան փառնդ նեղելոյս, և ա-
րամ անդորր հանգստական զեփիւռաւոր՝ 'ի բաղմա-
տադնապս հեծութենէ: Դու զյարուցեալ զու-
մարս աստակչայն, եթէ ապառաժենք այսական
զժնեայ հնարաւորութեան բուռն մարտակցայ
պատկաննեալ զինուք, եթէ մեղաց ոգեղ և ք-
տեղի կերպարանք, եթէ ցաւոց և ախտից փա-
նից և կարատական նշմարանք, մերժեսցես հան-
ցես հատցես խափանեսցես և հալածեսցես՝ հե-
ռի սահմանաւ խաղաղ տարագրեալ անդարձ ո-
րոշմամբ վերստին կորստեանն. և կառուցես
կացուցես նպաստ կենաց և ամուր մահարձան՝
մինչան խաչիդ՝ ապաւինելոյս 'ի քեզ՝ փրկութի:
Դու յայամ անպարտ և անպատիր և անխանել
պարուեալից աճաւորիդ մեծութեան՝ լուծցին ո-
րոգայթքն դաղտնածածուկ սատանայականք.
կապանեսցին մեքենայքն. վատնեսցին գայթակ-
ղութիւնքն. խայտառակեսցին հաղբիցն զրու-
թիւնք. յայտնեսցին երևոյթք որսոյն. դագին
[illegible]ցին ծուղակք. վերասցին փարմին վերար-
[illegible]ուսորեսցին պատմանցն բայոք. նշմեսցի
[illegible]ցին չարարուեստութիւնք. կորեսցի լար խա-

դէութեան 'ի մահ որսողին . սպառեցին պատրողին բանսարկութիք . պակասեցին զէնք զրպարտողին . անկցին սուսերք մահաբերին . սուղեցին աղեղին պատրաստութիք . արձակեցին տեգունք աղեղնաւորին : Նշայլեցին սուտ կերպարանք կեղծաւորին . սատակեցին խորխտակամացն խիստ յարձակմունք . ցրուեցին կցորդութիւնք կերչացն . բաժանեցին ալինք աւազակացն . քայքայեցին բոյլք բարբարոսացն . քանդեցին ամրոցք ապստամբողացն . արգելցին ամպրոպք յանդգնելոցն . փարատեցին փորձողին անձրևք . հալեցին և ցամաքեցին եղեամն ապանդաւորին : Խորտակեցին եղջիւր դաւողին . մանրեցին ամբառնալիք գլուխն կերպարանաց . փշրեցին ամբարհաւաճութիք հպարտացելոյն . նահանջեցին գնդացմունք ձնկատելոցն . քակտեցին մեղսամանութիւնք զօրացն բելիարայ , թէ անմարմինք , և եթէ մարմնաւորք . փախիցեն ընդ նոյն ճանապարհ 'ի մի շաւղաց հեռոյ՝ յեօթն տարակոյս . 'ի գուբն ինձ փորեալ՝ ինքեանք ընկճեցին : Յեղանակեցին ձմերունք ձանձրացուցչին . հատեցի կապն կցորդութեան մշտաջան աւազակին . նազեացի մասքս կարգս [illegible] բայր շողոքորթին . ընդմիջեալ մեկնեցին [illegible] տաձգութիւնք նենգին . կայցի 'ի [illegible] նաւ խարդախողին . խլեցին յար[illegible] տատանմունք խածանողին :

Դ. Աւան փայլից օրհնութեան կենաց, յորում պրկեցար ինձ անըմբռնելի. քշտա-կաւ բեւեռացդ, որով 'ի գործի մահուն մածուցար՝ արարիչդ երկնի և երկրի. արեամբդ տէրունականաւ, որով զվիշտսն մեծ կարթիւ ածեալ որսացար. լեղւոյն դառնութեամբ՝ զոր արբեալ, զդեղատուութի կորուսչին արտաքս հեղեր. պատմարանութբ բղձական ճառիւք կըրիցն սարսափելեաց, որով զըբութիւն հակառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր. անուամբքդ անհասականաւ ամենայնիւ անթարգմանելւոյդ, յորմէ դողան և դատապարտին սակացեալ սաստիկ սարսափմամբ՝ բնութիւնք ամենայն երևութից և աներևութից, եղիցին այս ամենայն պարգևք շնորհաց՝ խոստովանելոյս 'ի պաշտպանութիւն, 'ի բժշկութի և 'ի քաւութի: Նա մահաբեր դառնաթոյն օձին, և որ 'ի նմա աղբեաց ախեղերադաւ չարութեն, 'ի սատակումն եղիցի նորին. նոյն լիցին 'ի կորուստ և յանբժշկական հարուած տանջանացն՝ սովաւ մանեսցի, կապեսցի և ըմբռնեսցի: Եղիցի ողորմու ստեղծողիդ ընդ իս, և շունչ ոգւոյս իմ ընդ ք'

անբաժանօրէն կապաւ միացեալ 'ի մի:

Ե. Եւ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայ մաղթանաց գրման՝ աղօթից հայցման ծերոյ տղայոյ, կուսի և երիտասարդի, և եթէ յաղանաց ոք պաղատեսցի ինձ ախրաբար, հաւատա

պէս անապատութեան ընկալցին 'ի քէն մասն երանութեան՝ պարտուց ազատութեան, հաստեալ վերստին յանարատութիւն նորոգ մաքրութեն, նկարեալ դարձեալ զ.ոյդ կերպարան անփոփոխելի : Նա տիրապէս հնարաւոր՝ զօրեղ՝ անպատում անհաս՝ անքննալի, տեսցես աստանոր 'ի հառաչանս կողկողանաց այսր հեծութեան, որ 'ի բոլորից շրթանց ընծայեալ քեզ մատուցանի, վասն հօր քոյ երկնաւորի և բարերարի, և հոգւոյդ սրբոյ փառակցի և կենդանատուի, ծածանից բարեխօսութեամբ, և խնդրուածովք ամենայն սրբոց : Զի դու ստեղծեր զամենայն. և 'ի քէն եղեն ամենայնք. և դու տիրես ամենայնի. և քեզ փառք յամենեցունց՝ միշտ յիսկութենէ անժամանակ երրորդութեանդ, զուգակցապէս փառաւորեալ յանրաւս, և յաւիտենից յաւիտեանս. ամէն :

---

Սերտագին յաւելուած կցկցեալ հեղինակին՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանին :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

## ԲԱՆ · ՂԵ

Ա. Տէր՝ Տէր գթութեանց և ած ողորմութեանց. անուն մեծութեան. ձայն աշաւորութեան. կոչումն սաստկութեան. լուր անհասութեան. բարբառ զօրութեան. հնչումն հիացման. յուսադրութիւն բարերարութեան ամենողորմ քաղցրութեան

Յորմէ երկուցեալ սատանային ամ՛ բնութիւնք ե-
ղելոց ․ 'ի քո սպառնալեաց ահիւ պակուցման՝
սատանային ճերբերէք ․ ամփոփին քերբերէք ․ պա-
րուրին պարք լուսակերպին ․ երկնքին հեղ-
մամբ բոլոր պետութիւնք մերոյն ․ նոյնք ցըն-
ծան դողութբ մեծաւ 'ի մի նաւակատիս բերկ-
րութեան ․ զարհուրին դեք ․ ընկերին չարու-
թեանցն դունդք ․ պակասին խաւարասիրացն հօ-
գիք ․ անդնդոց մասնին հրեշտակք օտարին ։ Սա-
պին նշանաւ խաչին՝ յաղթականք զինուոր-
ային ․ փակին 'ի ստորին բանտի՝ քինաւոր ամաղե-
կացիքն ․ անխղճին հանդուցիւք պաշարին խումբք
հակառակորդին ․ արդելին անգերծ զընդամաւ՝
մահաբեռնացն կամաւք ․ սնդին 'ի մեծագոյն ահեղ
հրամանիդ՝ այսականացն դումարք ․ պարպանձին
կարկեալ՝ ընդդիմարանիցն զաւակցութիւք ․ պա-
րաւանդին հեծմամբ կորստեան աներեւութիցն
ժողովք ․ անդոյծ շղթայիւք նեղին՝ ատաքելու-
թիւնք գերաքբխատոսին ։

Ժ․ Ահա կարկառեմ մատամբք ձեռին՝ զանսա-
նողութի նշանիդ 'ի ժամ գիշերիս , որ ոչ մթա-
նայ խաւարաւ անդիտութեան՝ ամենեւին տեսակա-
նաւթին , քան թէ 'ի լոյս անմատոյց հանդուցեալ
ջնահին ։ Ընկալ զաղաչանս փանդաւոր դոհա-
բան՝ ընդ պարհգանութբ թեւոյ հզօրիդ ․ փրկեա
'ի չերքոյ՝ նկանդեալ պղտորութեանց ․ սուրբ արա
ղաղացարան հանելեաց՝ պահես նկատմանց ․ ամխաղե

փայլեալդ կենաց 'ի տխրական անրջոց. տրեամբ քո առաքեալ զշրջագայութիւն կայից. զհետս երամբոնիցն՝ կաթուածով կենարար կողից զծաղկեալ. երգոյն պաշտպանարան՝ քառակերպից ձեւակերպութիւն եղիցի. համդէպ անսութեն աչացս ամբարձման՝ փրկական քո կրից խորհուրդ առցի. ընդ բարւոր յարկիս՝ չարչարանաց քոց դարձի հասցիցի. զծառոյդ օրհնութեն՝ հաւատք յաւոյ իմոյ կախեսցի: Որդեն՝ տէր սուրբ զատակիցն հօղւոյ. մինչ անխափան՝ պաշտպանն լուսոյ. և ընդ առաքիլ ծանրութեն ցաւոց՝ և զերեան պարտեացս թեթևացս, զոր 'ի լռարանի մասցս ամփոփման մահճացս անկողնի՝ ուշարկեալ զյուսահատութեցն դառն պարզոյն՝ խոստովանիմ ամենակալխոյդ զանհամար մասունս գործոց չարաչար անօրէնութեանցս:

Գ. [illegible]անդամ զփառատակեալս 'ի բազմածուփս աշխարհութենէ. բարձ զաղդնայ տարակուսանաց ողւոյս կործանման, զգառնութեն ընդ վշտացն. զհեծութիւնն ընդ կարեացն. զանձկութեն ընդ թշուառութեցն. զհառաչմունսն ընդ խորտակմանցն. զերկութեան ընդ ախտութեցն. զթմրրութիւնն ընդ շտամանցն. զարբեցութեն ընդ յիմարութեանցն. զթերամտութեն ընդ խոպազարութեանցն. զառաքինի, անդոյն և զգաղցն ջերմութեն աղուական ախտին: Ամենայն [illegible] ըր ակարութեան բազմախուսս տարաժամութեան

բարեգործ աջովդ շնորհի · ձեռամբդ նորոգողի · մատամբդ կենսաբաշխի · փառօքդ մշտաբայլի · յարակայութեդ անեղծի · երեսօքդ զուարթականի · խնկութեամբ եւղ պաշտելի · բարձրութեամբդ երկրպագելի ։ Զատ զչարաչար հեծութիւն՝ կորստականս խեղդման · զնոր զկաչարին · զհին խարդախութի բանսարկուին · զօտար աղեցմունս՝ 'ի մահ կրթողին · զանյարմարական երեւոյթս՝ համապաղորդեան եղեռնագործին · զառ աչս հնարագլութին դժնդակ զխլին · զոզոքական բոցաշնչութիւն ձգօղ կախարդին ։ Աղաչեմ 'ի սեղուոջ հանգստեան մեռօրինակ այսր դադարման, յանսերեւոյթ մտածութեց · 'ի մասնաւոր սխալութեանց · 'ի մեծագոյն գայթակղութեանց · 'ի փոքրագոյն ոտնառութեց · 'ի խաբէրայ չար ձանձրութեանց ։ Զեւացո զանհանդէպ մտածութի 'ի զգայութեց ծառայիս յանցաւորի · զկիրս բարեկիս · զվարս թշնամանելիս · զղխզուածս պատկառելիս · զհետս մոլորելիս · զպատիրս ձաղելիս · զխորհուրդս անդոսնելիս · զանելարանութիս նշկահելիս ։ Մնախալ հոգւով եւ անշաղախ մարմնով զապաւինեալս 'ի քեզ հանդերձեալ, 'ի շնչմանէ հողմոց · 'ի զարկմանէ բըռնութեց · 'ի բախմանէ փոթորկաց · 'ի յոտմանէ մրրկաց · 'ի յարձակմանէ գազանաց ։ 'Ի կափման աչացս՝ հայեցուած սրտիս մի տաւերացի, այլ զուարթացի պայծառացի փայլեսցի՝ ընդ քեզ

փայլեցի՝ տէր յիսուս քրիստոս, լուսաւոր վառմամբ անշիջանելեաւ: Բանիւ քո սրբեա զպատրապարանս բազմականիս՝ 'ի խորամանկութեց. 'ի զբաղմանց, 'ի քո առնել յիշատակաց, 'ի վերնամարտ մտածմանց, 'ի քրէական մորոսութեց, 'ի տխրանենդ անշնորհութեց, յաստուածընդդէմ հերձուածութեց: Գնդիւք վերնայնոցդ՝ վերակացու ինձ լերիս, պետութիք, իշխանութիք. զօրաւորօքն անյաղթականաց՝ մաքուր մատակարարաց՝ սր ածութեց. առաքեալքն՝ աւետեաց աւետարանաւն. մարգարէքն՝ կատարանօքն մաղթանք երջանկացն՝ 'ի կատարածի աւուրն ընծայել: Որովք նորհեցից երկիւղիւ լաւ քեզ՝ տրամութի, և զարթեայց շնորհօք քո՝ կրկին ուրախութի. եթէ վհատութեամբ 'ննջեցից, յարեայց դարձեալ հոգևորական բերկրութի. Եթէ ընկողմնեցայց մեղանօք, կանգնեցայց վերստին զատեալ 'ի խղճէ անարատ ամբծութեամբ:

Դ. Լուր խնդրուածոց ամենահառաչ ձայնիս հեծութեն՝ միայն բազմագութ, բարեխօսութի սրբոյ ածածնիդ, և ամենայն արդարոց, և նահատակաց ընտրելոց: Եւ քեզ փառք յամենեցունց՝ խմբի գոչմամբ վերառաքեցեալ սրբովք զուարթնոցն անմահականաց դասուց՝ 'ի գովեստ հօր քոյ այ մերոյ, և հոգւոյդ սրբոյ բնաւից հաստողի և նորոգողի, յաւիտեանս յաւիտենից.

ամէն:

'Ի փայլուն երկնից բարեբարութեան՝ ճառագայթն
ներգործութեան. աղաղակեն երեխայն ընդ կերպարանս
ներքինականութեան :

## ԲԱՆ · ՂԲ

Ա. Գոհանամ զքէն բարերարդ՝ միայն մարդասէր, արարիչ երկնի և երկրի, որ զի ոչ կենդանւոյն լինել դարձուցեալ՝ անճառութեամբ սիրոյ քո յիշատակի՝ 'ի լուսութիւն հնչման՝ փայլուն հրաւիրման: Որով բաւեալ զձայնարձակութեան զաղաղակս, սթափեցայ կանգնեցայ, 'ի վեր յարուցեալ 'ի մեռօրինակ թմբրմանէ. ուստի եւս կոչմամբ սփոփանաց բանի՝ բերեալ ձգեցայ 'ի ժամ պաշտաման օրհնաբանութեան, յանդիման լինել քեզ ուրախութեամբ՝ հանդերձ հատուցմանս բանի:

Բ. Ահա փառք քեզ՝ անսահման անուն՝ և անբովանդակելի զօրութիւն, որ այսքանեօք հնարաւորութեամբ՝ ընդ փխրութեան իմում հողացայ. գոհարանեալ անեղծ խակութիւն, որ կերպարանեցեր հրաշիւք աստուածն զհանդերձելոցն նմանութի, համարտ գործեալ փայլմակեալ փայլի անօթոյ՝ առ քոյին անյայտի՝ աստուածին ստացողի: Որպէս թէ ընդ ծուլութեանս դանդաղութեի զյանդիմանութեի խոտառեալս խառնեցեր. 'ի հայրենի սիրոյդ հեզութեի՝

զուժգնութիւն ճայթմանն յարեցեր. յընդոստ զարկուած երկուց միջնորդաց՝ մարդասիրապէս քաղցր անձրևեցեր. ոչ մեղմութեամբ մեղմական վանդիւ նկրհմամբ ընկղմեցեր, և ոչ անխընամարար ահաւորութեամբ՝ զտառապեալ հոգիս զարհուրեցուցեր: Ընտրողական երկըպագութի ստեղծչիդ բոլորից, որ այժմէն ցուցեր համայն՝ յայտնապէս՝ զօրինակ ահեղ բարբառոյն՝ մեծի աւուրն յարութեան. կենդանացուցեր 'ի դադարմանէ զժոխական անդանութենէ. 'ի խնդիր ելեալ կոչեցեր զպակասամիտս՝ 'ի դիմիդ ուրախութեան. արարեր զսոյն՝ լինել հանդերձիչ անապատ հարսինն՝ առ տէր փեսայիդ. երկուցեր փոքր այս խթանաւ՝ զապարասանելն զվենթխարութիւն. լուծ սաստար կրթութեան՝ սաստկաքին ուսոյ՝ զայս իր գործեցեր. վարապան վանից՝ չարախօսին կղակաց եղեալ կապեցեր: Փառաւորեալ յաւէտ անբաւ բարձրութիւն մեծիդ այ, որ փոխարկեցեր զխայոյն պարտիս՝ յաղատութիւն շնորհիդ կենաց. իմաստնացուցեր վերստին դարձեալ՝ զմխմարս ցնդեալ՝ հոգևորական հանճարովդ. կարկառաձևամբ՝ զանդրժշկութիւն հարուածոց օձին՝ առանց մնացման միշտ թարգմանեցեր. ընդ երորդութեանդ զծագրութիւն՝ զկայն ներքին իմ ճշմարտին 'ի կատարածին սովիմ կրկնեցեր:

Գ. Պօղոս ներբողեմ՝ բուրմամբ խնկոց վե-
րառաքեմ քեզ՝ ամենախնամ, զի 'ի տառապանի
կրօնն բազմաստուածութե՝ առաւել յաճա-
խագունիւք որսայր զանձն իմ պարտաւոր 'ի-
քս երկրպագութի. խոհեմ և ահարկու նու-
րեալ փայլիւ՝ զճշմարտութիւնն քարոզեցեր.
մեծացուցեր այսր պատճառաւ պատշաճակա-
նաւ՝ զնոր աւետարանութեդ պատիւ: Այն ինքն
աղաղակ բարձրութե գոչման սպառազինութեդ
քո՝ արքայ պետութեանց կայսերաց երկրի տէր
քրիստոս. նշան խրախութե աւարտման հան-
գստի մարմնի քոյ՝ ջլուսս, յորում իմանալին
փարաւոն կապեալ ըմբռնեցաւ. կափիչ հանա-
պազորդեան՝ գլխոյ գագաթան հպարտացեալ
չարագործին՝ շէրտս այս տաշեցեալ: Սովաւ դու
մարտին 'ի պատերազմի որդիք սիոնի ընդդէմ աշ-
խարհակալին խաւարի. առն իմն ծծաւանդ կրօ-
նութեան կարգեալ 'ի հեռուստ՝ այս դրօշուած
իւղեալ՝ առանց հնանալոյ և կամ խափանման.
նշանակիչ ժամանակի ապագայից հատուցման
'ի բացուստ անդր ծանուցմամբն. ազդակից հան-
գունանման կենացն փայտի՝ որ 'ի դրախտին այ
կոչարան բարւոք հաւաքման փոյթ ընթացիւ
'ի յարկն օրհնութեան. պատկեր տեսակի տեր
կոյն գխտութեան՝ 'ի կարգ ընտրութե բարւոյ
և չարի. յիշատակ մեծ տնտեսողութե յերկրա
կրպելս հոգւովդ սրբով զնշան խաչիդ. նախա-

զենոյց աւետամատոյց փառաց գալստեան՝ 'ի դըր-
խոյն պահեալ սուրբ Թագաւորին . 'յորդորիչ
քաջալերական՝ մաքրազարդին խրախճանութե .
անախտական սիրարկու՝ անձնահաճոյին կցոր-
դութեան՝ շքեղաշուք քողընծայ ամենածին կու-
սի Թագուհւոյ , յարդարիչ ծածուկ պճնութե ,
որ 'ի հոգին է վայելչութի. նմանութի պատկերին
սինայ , որ 'ի ներքունեացն արտաքս տարքիւր .
միշտ օրինող պանծալի անշաղախ որդւոց մայր
անարատից՝ սովաւ փառաւորեր :

Դ. Պ'երճագոյն քան զերկրային փողն եղջերեայ՝
զբանութիւնն բեկեալ՝ սովաւ հարթեալ տա-
պալեցեր . քարինս արձակեցեր պարսիւս այսու
փայտեաց՝ ընդդէմ գողիաթու . գայխոն նորոգ-
հասուցեր՝ վէմ ահարկու կործանմանն սատա-
նայի . զ'ի խոր անձեալ արմատս մեղացն՝ մե-
քենայիւս այսու խլեցեր . զմուացեալ գործոյս
իմ պարտիս՝ այսր երախտեօք ընդէս կապեցեր :
Զոր եթէ այլ իմն ձայն բանիդ աստուծոյ ան-
ուանեմ նախապատուեմ եկաւորութեանն՝ ոչ
սխալեմ , քան թէ ճշմարտեմ . 'ի տկար ամա-
նըս այս նիւթոյ հոգեկրի՝ մեծութիւն գործո-
ցըդ յիսուսի՝ առաւելապէս պատմեալ հոչակի .
Իրաւոր օղնականութիւնս վերնապարգեւս և
քոյինատուրս՝ 'ի յայսմ անպատսպար ապաւ ի-
թենէ՝ երկրականաց զար-
մանալիսցեր :

Ե. Աստուածնեալ անունդ անքննելին՝ մարդասիրիդ բարեխնամութեան, խնկեալ խորհրդով սրբամասնութե՝ անդծագրելի կերպարան լուսոյ. որ կրկնաձիր նշանաւս այսու՝ նետս արձակեցեր հեռաձիգս ձայնատրականս՝ օդաչու և յարմարաթռիչս՝ ունօղս յինքեան հոգւի կենդանի. որով անախալ հանդիպմամբ զնպատակն խաւարային աշերձնաւորին գաղտնութե՝ յաւէտ կործանմամբ 'ի յետս ընկճեցեր: Իբր զպատնէշս ամրաբերձ բերդամարտութե՝ կանգնաւորըս անփայլարկելիս՝ աստուած անտանօր զկըտեալ դիպուածս այս փայտի զարկման՝ հրեշտակ կամարար՝ թշնամւոյն ներհակ վեր յուզարկեցեր: Նանիւ հրամանի մեծիդ ակնարկութեան՝ օծութեամբ շնորհիդ արեամբ քո խառնեալ՝ զայս եղջեւր խեթկիչ՝ մոլի գոռոզին, իբր զխաչեդ փրկանակ յեսաննեալ սրեցեր: 'Ի մեծ ազդմանէ այսր աղաղակի գեր քան 'ի վերնոցն՝ քանդեալ վերացաւ դրանդն ամրութեան կամաց՝ անկայելուչ և անծներկչոտ խենեշութեան կարծամալին, ընդ հրէական սրտին իմաստից՝ և տառերական տանն կործանութե:

Զ. Փառաբանութի քեզ վերընծայեմ՝ անմահ թագաւոր. զոր արարեր և հաստատեցեր աջովդ քո հզօր՝ աղաչեմ զքեզ՝ կրկին ներգործեա: Անցուցեր սովաւ հերքեալ առ 'ի մէնջ զխէթ դժնդակ խորամանկութե բանսարկուին. զա-

ժամանակն տապ մեղաց · զհողմն դառնութեան շնչման խաւարզին · զոտար արկածից մահու երկիւղի · զառ 'ի յոզից ցնդմանէ վնասակար բերմանս տխրեցուցիչս · զպատճառն հեծեծուխ թալկացուցիչս : Յրուեալ վերստին քզյինսէն հեծանեալ՝ օժանդակեալ թեւք նշանիդ՝ զամպըս հրածինս · զորսամուն կարկտաբերս · ըղցաւազին ցոլմունս հրախառնոր կեղծաւորութե՛ փչման՝ բազմատանի վնշապին · զուր սատակման, զձախատաճարա զխժեցման , զյարուցելոցն 'ի վերայ վայրենական խորհրդոց , զխուացն կաքաւս : Յորմէ զարհուրին յայսմ կրէ փոքունէ՝ տեղի տուեալ մեծաւ դողութեամբ , կիրթ լինն ծանօթութք յայտնի զխադչեալ , թէ յայս աղձայնի՝ յառնէ տէր 'ի զատաստան : Նու խրախուսին յողի արութեամբ՝ զրահեալ սնդապէս սուսերա հօգւոյն՝ ածարեալ մարտիք ամ՝ 'իձեւ կանոնի այսր քիչատակի , որ զամենափրձ հրոյն լնտրուէ՝ զօրմամբ անկերպարրելեալ՝ համօրէն աղանց քարոզէ 'ի յօրինաւոր ասպարէզ՝

երջանկարար նահատակութե՛ :

Ի · [illegible]արաւ աշճա փող աւաղափող , համբարձաւոյսու ած օրհնութեամբ · պատմեցաւ սոխմբ ամենայն երկրի · հնչեաց 'ի լսելիս բաժանման հեթանոսաց · ձայն պահապանաց մեծին զօրացաւ , ըստ բանին եսայեայ , և 'ի նոյն բարբառ առ հասարակ ցնծացուք : Զնդեցան ջրոյն ա-

ռակաւ՝ 'ի ձեռն սորին՝ թշնամիք խաչին. անպատուեցաւ ճաշակն պաղոյ առաջին փայտին. տօնեցաւ Նիւթս այս խորհրդական կենաց անուանեալ. անարգեցաւ երկաթ առ 'ի պէտս պատերազմի. իբր զօրութիւն տեառն՝ 'ի սանձս երիվարի մեծին Նշանի՝ այս փայտ կենաձայն յար մարտադրեցաւ. ամփոփեցաւ օծեալս ցպով հոլուլին երկնային՝ առ իշխանութեան մարդկային ձեռին: Ոչ գծեաց 'ի քար տաճարին մուրճ ինչ գործողի. իսկ յանձակերտս խորան՝ փայտս այս նուիրեալ ընդ խաչին թեւոց սլացեալ զօրէ: Ոչ 'ի գլուխս ամսոյն, և հում յեօթնիցս եօթներորդս յոբելինիցն՝ յանկեան ուրեք խախանմամբ փողէ, այլ ընդ ծաղս տիեզերաց՝ և ընդ ծիրս եղերաց՝ 'ի ծոցս Ջուրց բազմութեան ծովուց և կղզեաց նոցա՝ յաճախ սատարութի անարգել ճայթմամբ իմն ածայնով հնչեցեալ աւետարանէ: Կատարեցան սուսերք սատակողին՝ այս փայտի ցուցմամբ, յանօգտակարէ անափ մեղ փոխանձեալ 'ի խոփս և 'ի մանկաղս:

Բ. Ո՛չ արձագանք արձանաց 'ի խորոց ինչ դանչութենէ՝ խիստ առաքեցեալ, և ոչ դժնդակապէս, բատ իմաստակի ումեմն օտարի, զօդ վիբաւորեալ. ոչ անախորժ սրբութեամբ ընդ ունկրն մնեալ, և ոչ զաման ուղղոյն անկամակութեամբ չար թնդեցուցեալ. ոչ ոսկերցն փոխարուցման՝ յանձն բուսուցեալ, և ոչ մատ-

տկլայլայշութիւն առաջի արկեալ. ոչ զանգակ նիւթոյ պղնձոյ դանդաչեցուցեալ, և ոչ քար ընդ վիրգս սալի՝ առանց քաղցրութեն առ նոյն զարկուցեալ: Պարփակարան անխորտակելի նորոյս սիւնի. մի սա՛ 'ի սպասուցն կազմուածոյ արարչաւանդիցն գլխաւորաց, զոր եկեղեցականքըս քրիստոնէից՝ ընդ ղեւտականացն՝ զգուշաւորապէս բարձեալ յանձանձեն. օրինակ ձայնի հրեշտակին, զոր առակողին բան՝ հաւուն կոչմամբ այսու տեսակաւ զայն տպաւորեաց. Նոր գործի շնորհի նուագարանաց աւետարանին՝ զոր Թուցիչ հոգւոյն աստուծոյ առ մեզ, քան առ օրհնաբանունի սաղմոսարանին՝ 'ի վերայ եղեւէին: Սկզբնապար նախընթացութեան աղէ յարմար Ջութակաց՝ բարեհաւիղ ողերգարկութեանց՝ բարացուցական բամբռան բառացի բարառնութեանց. որինկ նորոգ այլ իմն տեսակաւ առեալ մեզ՝ ընդ հնոյն փոխանորդութեամբ. ոչ հեթանոսօրէն ուրուաձայն հնչման, և կամ հրէաբար խակախորհութեն, զոր մարգարէն տերամբ ազգեցոյց՝ 'ի բաց արա յինէն, այլ զսա սիրեաց և կրկին պատուեաց մաքրական տածմամբ՝ աչարկու-

դիւաց և ամ չար պատահարաց:

Ժ. Եւ արդ ընկալ օրհնութեամբ յարդեալ զավեստի զայս տուր սրբութեան՝ ինձ պահպանութիւն և քո փառաւորութիւն. քո պաշտօն՝ և իմ դոհութիւն. անապանդ արուեստ բարձ-

բութեան՝ արարչական փառաւորութեանդ ։ Ո՞չէ ձայնդ այդ ծածկեալ՝ ընդ պատուաստ յօղից շաղկապութեն, հանել 'ի հողւոյս գլա-խոյս գերւոյ՝ և գմուտս անփծից՝ և մեղաց ապա-կանութեան ։ Արդարեւ լինել զայս էր՝ նշանա-կիչ ջնար ջահաւորական՝ անջրելի նաւակ՝ ջա-տաղով անխափանական տէրունական անօրինա-կանացդ ։ Ահա պարզեալ սովաւ՝ բարեգութ, աղաչեմ հզօր՝ կրկին մեզ շնորհեա պահպա-նութիւն 'ի գնմամարտից՝ յաներեւոյթ և երևելի։ Ընձեռեա մեզ ձեռն ամենալի, որ բանաս և մա-տուցանես պատրաստարար բաշխմամբ 'ի մտաւ-նրա բարգմաղխոս, օդոց քաղցրութիւն, անձ-րեւաց շահեկանութի ։ Պակասեցին քոյով հր-մանաւ այսու բարբառով հողմ տապախառն, շնչումն ցաւաբեր, յարձակմունք հինից չար խարդախութեց. սովաւ խափանեցին ամ գը-մամարտութիք զինուորութեանց 'ղմնոյ մա-արնչին. հալեցին հատցին և մեռցին յերջանիկ ձայնէ՝ օծեալս այս փայտէ՝ որդն և ուտիչ, և ամ նմանք սոցին, որ 'ի մերոց մեղաց զօրացեալ՝ ընդ մեզ պատերազմին։ Արմատացո մեզ սովաւ տունկ երանութեան զյուսոյդ 'ի քեզ մեծ պաշտպա-նութիւն՝ սանդծիչ բոլորից ակր արարածոց, զայս ծառ սարեկայ, որ ունի կախեալ 'ի գլխոյ սորոյն՝ զաւանդ սուրբ նորոյդ՝ այժմու փրկու-թեանս ծաղկեալ քեզ՝ քրիստոս, 'ի պտուղ կե

նաց անմահականաց ։ Փախիցեն յանհուն հեռաստան խորին խաւարի՝ այսր փոյթի փառաւորելոյ բարեզգեցոյց ձայնարձակութեա՛ն նէսարք ներհակք ստապատիրն ստորնականաց՝ բազմաձեւոնեան խաբդաւանողաց ։ Սնրժեսցին սովաւ 'իյանդոյ՝ պաղատահմական աղօթարկութեց մերոց սահմանաց՝ եւ 'ի քո մշակեալ կենդանի երկրէ՝ վէրք վանիչք , եւ հոյլք մորմոքեցուցիչք ․ կըռբեսցին սովաւ՝ յաւելուածք կրկնապատեղ եւ անվայելուչ պատահմանց՝ 'ի հնարից չարին 'ի մեզ յայտնելոց ․ իսկապէս վանեսցի սովաւ , որք յերկրանչելոց բնութեանցս մերոց վերերեն ինքնատեղծութիւնք մերձաւոր դաւաճանողաց , յումեմն օտարին վրիպակ մտածմունս , եւ յայլումն դարշ գոյութիւնք՝ անմաքուր զեռնոցն ապականողաց ։ Փրկեա տէր յիսուս աղաչեմ զքեզ , փրկեա բարերար ․ կարկառեա առ իս զաջդ ամենազօրդ , եւ օգնեալ ինձ սովաւ՝ զերծո զիս յամենեցունց ընդդիմացողաց ։

Ժ․ Խառնեսցի միասցի հրաման քո 'ի սոյն՝ առ 'ի փոխարկել զանդամանդեայ սիրտս յիմարեալ՝ 'ի քոյին բանիդ արդիւնաւորութիւն ․ հալեսցեն մխեսցեն զայսնեցուկ հրաշից քումդ սքանչելեաց՝ 'ի սիրտս ծորեալք եւ յոգիս լցեալք , եւ հաստատեսցեն կազմեալ ողջապէս՝ 'ի կայումն ուղիղ անսասանելի ․ իսկ զանընդոստան կակղացուսցեն զարթնուլ եւ զգայուն լինել յոգի յղութեան՝

ծածուանդ քո պատուիրանիդ , որպէս զպօղոսն
և զմատթէոսն ։ Յիշեցո՛ մարդասէր պատուելոյ
այս փայտիւ՝ զերախտիս խաչիդ , որով զանճառ-
արն ներգործեցեր ․ բարձ յինէն՝ կեցուցիչ , ըզ-
վտանգ պարտեացս՝ պանծալի լծակօք ամբառ-
նալեաց նոր տապանակիդ ։ Կացցին կամք քո
Հզօր՝ 'ի յայս ձայն կենաց՝ լսելիք սրտից յա-
մոռացելոց ․ լուիցեն յայս մեծի բարութեան
քումդ ակնարկութեան՝ ականջք խլից ․ պար-
զեսցին 'ի ձեռն սորին՝ լեզուք համրացելոց ․ լու-
սաւորեսցին 'ի սոյն տեսարանք աչաց , հայել
մաքրապէս 'ի քեզ պշուցեալ անայլայլաբար ․
զղջասցին դարձցին կազդուրեալ կամք յափրա-
ցելոց ․ ընձեռեալ տացես տէր՝ տագնապելոյս
անձրև արտասուաց ։ Եղիցի քև սա՛ մեզ՝ լոյս
ցնծութեան ․ ձայն ուրախութեան ․ բարբառ
բերկրութեան ․ նուագ հանգստեան ․ նիւթ ե-
րանութեան ․ պատճառ փրկութեան ․ առիթ
քաւութեան ․ մերժումն վշտաց ․ խզումն խեղդ-
մանց ․ ընդարձակութիւն նեղութեանց ․ հա-
մառօտումն խեթմանց ․ հալածումն հեծու-
թեանց ․ թեթեւութիւն թառանչմանց ․ յա-
պահովութիւն կարեաց ․ կարգադրութիւն կը-
րից ․ սփոփութիւն վհատմանց ․ բժշկութիւն
ցաւոց ․ տեւականութիւն հեղգու-
թեանց ․ ուշադրութիւն
անտեսից ։

ԺԱ. 'Ի յայս կամուրջ ցանկալի անխոտոր և անխոտորնակ, և 'ի վերնաշաւիղ բարձրաբերձ սրբահետ սանդուղ երկնաչու, առ հայր քո օրհնաբան ահաւոր անուն՝ ձգեալ մատուցես՝ բարերար, հոգւոյդ առաջնորդութ միանալ 'ի քեզ անընդմիջելի. որով և սոյն միոյ՝ միայնոյ և միանական տէրութեդ՝ և անեղծ արարչութեդ՝ 'ի կենդանեաց և յանշնչականաց հաստելոց՝ վայելչական գոհութ փառք և իշխանութի յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աւարտեալ յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոլովէ, առ նոյն աղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ած:

## ԲԱՆ. ԿԳ

ԱՂՕԹՔ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԳԼԽՈՅ ՍՐԲԱԼՈՅՍ ԽԱՉԱՑՆ ՄԱՍԱՆՑ:

Ա. Սուրբ ահաւոր անուն բարձրեալ անպատում. անձկութեն փափագ յարախորժելի. 'ի սրբերգենիցն փառաւորողաց միշտ սրբաբանեալ՝ բնակեալդ 'ի սրբում. լի և ամենալրացուն բարութեամբ առատաձեռն աննուազելի. լոյս բարի, և ծագումն գովելի. երկրպագեալ փառաւորելի, ահեղ և անքննելի. ամէն և յամենայնում: Այսու բանիւ դաշանց յուսոյ՝ ուխտ ընդ քեզ միութե՝ հզօր, այո, ամէն, ալէլուիա. գովեալ թագաւոր հանուրց. ած բոլորից. սանձիչ դիւաց. և տէր կամարար. միայն առիթ պատճառաւորաց. փրկիչ և օծեալ մշտապաշտելի:

Ի. Սուրբ մեկնապէս թարգմանեալ 'ի մեզ զայս գանձ անվաճառ՝ և հարստութի՛ անփոխադրելի յիսուս քրիստոս արքայ երկնաւոր. որում գոհութեամբ մեծաւ սպասեն անմահականացն ահեղից լուսաբերան բոյաշնչութիւնք, կրկնեալ քեզ յօժարութեամբ 'ի հաճութե՛ անխոտոր մըտաց՝ ծունր գոհութեան. ստեղծօղ էութեանց, որ են 'ի անսամանն և 'ի ծածկութե՛ն: Որ եդ և էիր միայն բովանդակ՝ ամենեքին անպակասելի, առեր զմեզս խնկապէս համայն, զի 'ի լրութե՛ քումմէ լցուցես. օրհնեալ և բարեբանեալ՝ ծանուցեալ յաւէտ միշտ անքննութեամբ ողորմութե՛ մեզ 'ի փրկութի, 'ի փառս և 'ի գովեստ անճառ բարձրութեան՝ ահաւորիդ բարեբարութե՛: Ակընածիր օծմանս շնորհի՝ մեծախորհուրդ հրաշազարդութեան. քանզի լոյս քո մեզ ծանուցեալ՝ ճառագայթ անհաս. ծագումն անսահման. արեգակն անաչառափիռ. աստղ սահմանիչ՝ երկակըշիռ տարրութեանց. ճրագ ոտից՝ և լոյս հետեւմանց, որով 'ի ցոյցս իմաստից եկեալ տեսութեամբ՝ բանիս այս յարմարութե՛, տօնեմք պարերգութեամբ հրեշտակօրէն յստակամտաբար՝ փրկչավայելուչ կնքելեաւ խնկեալ զպարգեւաբաշխ առատատուութի ամենիմաստին՝ յեղ զուարթ անբիծ գառանման: Քանզի 'ի սկզբան անդ՝ կայտեցելոյ ողորմելի ախտականութեամբ 'ի փչմանէ բարձրագոյն շնորհին՝ հայր իմ սկզբնաստեղծ՝ և

հնացեալ յաւէտ մեղացն գերմամբ 'ի մահ գը-
րաւեցաւ. կապեալ ընդ եղծման ապականութե՟
անզերծ հանդուցիւ, 'ի ծառոյն պատճառաւո-
րեալ յանկումն անյարիր ամենակործան գլորման,
հերքեալ 'ի լուսոյ՝ այսր խաւարին վայրի մատնե-
ցաւ. իսկ դու գթած տէր ողորմութե՟ քանզի
յաւէտ քան զնոյն ծանեար զոր ստեղծեր, և զը-
չէիցն անհնարութեամբ չեկաց յոր ինչ էին, ո-
րով անկարողանայր խնկապէս տեսանել 'ի լոյսն
վերին անմատոյց դերակայութեան անսահմանե-
լոյդ, ոչ միտափայլ յարակայ վառմամբ անա-
ղօտելի տարածանեցեր, այլ գիշերայնոյն ոտնալ-
պերծ մթին արհաւրաց՝ ձեռնկալութի ձիթոյ՝
շարամանութ՟ նիւթոյ պատրուկի ընդ նոյն զան-
գելոյ՝ յօրինակ քո անախտ միութ՟ ընդ մեղ
խառնելոյ՝ մարդասիրապէս հիւսեալ կազմեցեր.
զի որ 'ի ստուերս մահու տարադրեալ գտաք՝ կան-
խակորուստ անկումն պարտեաց, 'ի պատճառ ի-
րին՝ աղաղակցաւ պտղոյն ջահաւորեցեալ հաւա-
տոյն վառմամբ՝ 'ի նոյնն դարձցուք խնկաւորու՟.
որպէս և փաստիւն մահու՝ մածմամբ քո 'ի նա՝
ածեալ մածուցեր զմեզ, տուակաւ մեծի խորհըր-
դոյն՝ միաւորեալ 'ի վայսն կենաց:

Գ. Նա՝ և արդ՝ որպէս ոչ է որ լռմամբ՝ առանց դի-
շերոյ, և ոչ անօրէնութի յարկի՝ առանց ձիթոյ
պիտոյից խնդրոյ. քանզի երբ օրինակն հասարա-
կոյին ոչ նուիրաւոր՝ զմարմնաւոր աչաց տեսու-

թիւն լուսաւոր առնէ, նոյնպէս և մաքրեալն քաղցրաշունչ շնորհին ընտրութեամբ անխմնալեալ՝ զաներեւոյթ հոգիս մխութեամբ 'ի մեղ անտեսից՝ հրաշափառապէս պայծառացուցանէ ։ Ո՛չ որպէս յիջուման լուսարանի սուրբ աւազանին՝ լուացմամբ մարմնոյն՝ զանձինն հաւատամք առնուլ սրբութիւն, սոյնպէս 'ի յօծումն իւղոյն պարարեալ յուսով՝ զհոգւոյն զօրութի՛ սովիմք և 'ի սոյն՝ համարիմք ունել նմին անկրկնելի ։ Այլ որպէս հրամանդ տէրունական օրհնաբանելի՝ զքաւութի՛ մեղաց ախտացելոյն նախավճռէիր. իսկ ո՛չ հաւատ ունողացն առ այն բժշկութիւնն հրաշալի՝ յանդիմանակաց անտուստ առնմին մարմնոյն տեսակի՝ հաւատարիմ վկայ անդարձից հաստատէիր, սոյնպէս իւղս այս փրկութեան լուսով կատարեալ՝ հեղեալ 'ի մեղ օծանէ զպարտաքին խորանս. իսկ զներքին մարդըս անկրեալ՝ ծածկապէս մնեալ նո՛ր կենդանածնէ ։

Դ. Պատկեր պանծալի այս զանդուած նիւթոյ՝ արարչիդ երկնի. քանզի որք զեւղոյն կրեցին օգտութիւն՝ յողորմութենէն շահընծայութիւն, և դու 'ի գովեստ քեզ զայս բան սահմանեալ, թէ ողորմած եմ ես տէր. քանզի որպէս սիրոյն անուան կցորդիս ա՜ծ, նոյնպէս 'ի մանէ և այսու զիջեալ գծագրիս՝ ըստ տնտեսութե՛ն որ առ մեզ ։ Ահագոյն մեծութեան խորհրդոյ յարմարաւոր

դիմակերպութիւն՝ այս ճարպ պարարտութեան՝
երկրի թանձրութե՛ն՝ հողանիւթ գոյականութե.
զի որպէս սոյն մասն 'ի կենդանւոյն՝ ոչ 'ի կերա-
կուր հրամայիւր անդ՝ ըստ օրինին, այլ ալար-
չութեանդ բոլորովին պտուղ որոշիւր, նոյն նը-
մանութեամբ եւս և ստամոքոյ՝ իբր պղօրութիւն՝
տեսան մաշելի յայս աւանդ՝ հաճութեան էիդ
ոյ վայելչապէս տուեալ նուիրի, հոգւոյս հա-
րազատ զուգաձնապարհ, արարողին պահեալ
և ուխտեալ. քանզի ոչ շունչ արեան՝ և ոչ ձեն-
ձեր ինչ զուարթութե՛ն՝ օրինակ հոգւոյս իմոյ և
կարոյս՝ ընդ անդամաթիւս մոյն ծախի, այլ
արքայութեանդ վերնուս վիճակի՝ տէրունական
բաղմականին ձօնեցեալ ճաշակ՝ այս նիւթ ջահա-
ւորական մշտաբորբոք անաղօտելի։

Ն. Ո՛չ էր մաշելի 'ի նախադահութիւն արու-
անդրանիկ՝ գտիչ քննողաց, եթէ ոչ օծմամբ
ինչ նշանակէր. ոչ քահանայութի՛ 'ի յանկոխելին
տեղի ձեռնարկէր, եթէ ոչ այսու կատարեալ
լինէր։ Յակոբ զքարն պատկեր վիմին՝ 'ի խոր-
հուրդ երկար՝ խորանին ընտրութեան՝ օծմամբն
տպաւորեալ կերպացոյց. առ որ գլխոյ մն անճառ-
բարձրեալոյդ՝ տեսութեամբ սանդղոցն յարմարու-
թեան, և զնա 'ի վեր տանելոյն անդուլգնացութե՛ն,
զարձանն իւղեալ կառոյց նպատակ՝ 'ի ցոյցս բա-
պտնեացն յիշատակի։ Ահարոնեան քահանա-
յութեանն պայծառութիւն հրամանաւ մեծիդ

ույ՝ օծմամբն ծորխանայր . որով 'ի գլխոյ անտի 'ի մօրուսն վերջեալ՝ դերասիսա հոգոյն՝ զարմանական կենդանագրութի , ըստ սաղմոսողին , զփառաց նախնւոյն առակէր զանդրադարձութիւն , և զշնորհիդ կենաց սրբութեան՝ ընդ մեզ խառնութիւն : Թագաւորութի ոչ էր պանծալի անդանօր պատկերաւն սանղծագործիդ , եթէ ոչ եղջերբ հոգոյն օրհնութեան ձեռնադրեալ՝ պըսակաւ պճնութե թագին՝ յանուն քո քրիստոս գլուխ ամբառնայր : Նա զե՞րդ զնախնին վեհից մոռացայց՝ զծառոյն մեծիդ՝ և զկերպարանն անպարագրելւոյդ . ո՞չ ահա մելքիսեդեկ՝ յօրինակ ճշմարտիդ ահաւորութե՝ 'ի ձիթաստանեաց լերինն , ուր յետոյ ոտք մարմնացելոյդ քո զետեղեալ կային , 'ի վերնոց անտի հրեշտակաց՝ 'ի պըտղոց տեղւոյն հեղեցաւ . ուստի շիրմի սկզբնահօրն պաշտպան՝ եպիսկոպոսական արքայապատիւ ծոխութեամբ՝ 'ի քէն հանդերձեալ նստաւ , մինչև յայտնեցար երևեալ լրմամբ՝ համայն իսկութիւն ադամային կենագործութենդ :

°.. Նու արդ՝ քանզի քո են շնորհք , և քեղ վայելեն գոհաբանութիւք՝ օրհնաբանեալ որդի քո , դու ինքն յարմարեա՛ բարենշմար տպաւորութի զաղաչանս հեղաւորականս՝ խնկապատարս՝ զմըտայինս՝ պատճառ քեղ փառաց , և ինձ մեղապարտիս առիթ բժշկութե . մանա՛ տէր յիսուս , զերծայս աներևութից՝ զայս ձէթ լուսանիւթ . և

արկ 'ի սոյն խորանս խոցոյ մահացուի՝ զկաթ-ուած օրհնութեան իւղոյդ փրկութեան՝ անա-պակ գինեաւ սիրոյդ , միութեամբ արարչակա-նաւ պատուպարեալ պատանօք խնամոց. զի յի-շատակարանս թարգմանօրէնս բանից մաղթա-նաց՝ վայելչական ինձ յարմարութեամբ՝ 'ի թես հոգւոյդ զկարգ իւր գտցէ : 'Ի վերայ դաւթի հոգի քո բարձրեալ՝ յայնմ օրէ խաղաց , յորմէ օծութիւն նուիրեցաւ : Սաւուղ յայր յայլ՝ և 'ի-մարգարէս ոմանս անտուստ իսկ դրեցաւ , յոր-ժամ օծումն ժամանեցաւ զաղաթան նորին : Արքայութիւն աստուածանեայց՝ օծմամբն դրա-ւեալ՝ մատուցաւ 'ի կցորդութի տանն իսրայէլի: Այսպէս ոմանս նշանաւորս մեհս և երեւելիս , 'ի-խժականաց բարբարոս ազգաց՝ իւղս այս կենսա-ցնցուղ ցօղով անձրեւեալ՝ իբր կարթիւ որսա-ցաւ 'ի յընտանութի հպատակութե մեծիդ այ : Նանն որ առ կեղրոս երկնաւորին պատուասի-րութեան՝ զօծեալն ձայն՝ նմին մեծ վարկաւ : Զայն սաղմոսողին՝ գեր քան զմարգարէութիւն՝ զօծեալն անուն նախայարմարեալ , կանոնափակ ընդմիջարկութեամբ պատուէր առանցեալ , մի մերձենայք , և մի մեղանչէք : Նա հեղխաստա-քելութիւն ածային հրամանատրութեանն , նը-շանակ ինձ հանելոյ 'ի պաշտամանէ անտի բա-հաղու , զօծելութիւնն 'ի քորեր ազգեաց յե-ւոյ և ազատելի : Իւղ թափեալ անուն փեսա-

յիդ՝ 'ի հողեղէն բանից իմաստնոյն վերաքնեալ կանխաւ խակ դրեցաւ. որպէս զի հողին՝ ոչ յաւէտ պատկեր և նշանակիչ, զ'ի փոքուս զմեծդ կերպադրութի քև նկարագրեալ՝ ընդ քեզ միացուք առմամբ քո շնորհիդ:

Ժ. Նու զի՞ ես երկարս՝ պատուածօրէնս՝ բացականադոյնս՝ գծագրականս և առակաւորս շարադրեցից առաջի վերնոյդ և ահաւորիդ մաղթողական բանաստեղծութիւս. տէրդ և կենդանարարդ՝ արարիչդ երկնի և երկրի՝ 'ի յօծմանէ անտի սկսար քարոզել զաւետարանն արքայութեան. վկայեալ անտուստ 'ի յոհաննէ՝ օծեալ և զառն աստուծոյ՝ բարձօղ մեղաց աշխարհի: Օ՛չ թէպէտ ընդ օծմանն օրհնութե՝ հողին էր քեզ խակաբար լըմամբ, և ածութեանն խառնութիւն բովանդակապէս, այլ անունն պաշտ խորհրդեամբ շնորհին հրաշափառապէս աղեւոյ 'ի սուրբն. զի զարկութի ադամեան մարմնոյն՝ մեծանալ յաւէտ այսու յորջորջմամբ պատրաստ արարցես: Նացեալ զաւածս մարգարէութեանն եսայեայ՝ զու լինքն ածութիւնդ մարդացեալ՝ ընթերցար, հաւատարիմ առնել զբան ծառայից քոց՝ տէր. և իբրև ծանուցեալ երկր օծութեամբն 'ի կարդ անդ բանին, թէ հոգի տեառն 'ի վերայ իմ՝ որով և օծ խակ զիս, աւափակեցեր 'ի հանդիսափառն օծելութենէ՝ զորքանութիւն երկաքանչիւրոցն յայտ արարեալ

խորոցաւ սահմանի՝ ընդարձակ հեռաւորութ՟ք
մեծաւ կնքեցեր, զմերս՝ կաթուածով ինչ շնոր-
հազարդեալ, և զքոյդ՝ խնկութեամբ ընդ հօր՝
և ընդ հոգւոյդ համասարութ՟ք թարգմանեալ:
'Ի նախածանօթ մերակերպութեն՝ պանծալի ի-
մըն գովեալի օծեալն կոչմամբ՝ 'ի Հրեշտակացդ-
փառաւորողաց՝ արարածոց երկրի ծանուցար:
Ո՛վ որ մարգարէն կանխաւ գուշակեաց զ'ի յոր-
դանան, և յընտրեալն լեառն Թաբօրական՝ հայ-
րենի ձայնիւդ եկաւորութի, թէ որ պատմէ 'ի մէջ
մարդկան զօծեալ իւր: Ո՛վ որ սաղմոսին ձայն կան-
խաւ պատմէ՝ հզօրիդ փառաց զայս պատիւ առ
'ի զառեալդ ձեռնադրելոյ, օծ զքեզ ած՝ ած քո
իւղով ուրախութեան:

Բ. [redacted]ոգի երեսաց մերոց տէր քրիստոս: որ է
օծեալ անուանդ խկոյն, որով զփչումն կենդա-
նութեան 'ի դէմս մեր լոյս՝ բարերարութեամբդ
քո ազդեցեր. իմաստութեամբ ումեմն երջանկի՝
մարդասիրութի խոստովանելի, ասելով առ ոմն,
թէ եդ վկայութիւն առաջի տեառն օծելոյն. ընդ-
նոր աւետարանս վկայելով, թէ կոչեկս անդամ
ոչ առի յամ մեղեաց: Յերգոյն երգ՝ իւղեփե-
ցական զինի՝ զաստուծով ծանուցեալ զնոր-
հուրդն՝ 'ի գովեստ հարսին սուրբ եկեղեցւոյս՝
զմուռս առաքինութեան հանդերձ ամ՝ առաջին
իւղովն. և ես զմուռս և կնդրուկ մաքրութեան
վարուց ամ փոշեաց անուխշից՝ ողոքն զան-

գեալ՝ անդստին և այսր յառաջաբերեաց: Դանիէլ զկենսատու մահու քո՝ քրիստոս Թագաւոր երկնի, 'ի վեր քան զօրինակ կոչումն ձայնի՝ զայս անուանադրեալ վկայեաց յայտնի, թէ զկնի վաթսուն և լինն եօթնևրորդացն՝ սպանցի օծեալն, և օծեալ առաջնորդ ղեկ յորջորջեաց: Ճրագակիր աշտանակն ղաքարկեայ ադդոփայ՝ որ 'ի բարեքեայ՝ իւղոյն բարեբաշխ բացատրութեամբ 'ի մասունս եօթանց առաջադրութեանցն գընդլցն վառելոց՝ 'ի ջահէ անալ զօրութեամբ անեկամատաբար վեճակաւորեալ, զ'ի քոյդ լըութենէ 'ի մեզ փրկութիւն և օծելութիւն գերաբընպէս նախադնկուցեր: Օ՜օր բատ օրինին անտուստ դուշակմամբ 'ի խորանին որ 'ի տաճարին՝ ամէնընդել խմն կրթութեամբ սովորաբար մատուցեալ լինէր, պանք բաղարջընծայք և նաշխհք՝ իւղովք խառնեցեալք, և զուարկըք եզանց իւղարկեալք, և տիրական անուամ ձայնեցեալք, և հաւուց ոմանց թաթաւմամբ յաղդակից ճարպին 'ի յարիւն, այսր խորհըրդոյ՝ առձեռն տեսակք և նշանակիչք յարմարականք քեզ՝ միածին ծնունդ օրհնաբանեալ մեծիդ սասուծոյ. միայն դու օծեալ նորոգ և զարմանալի խնքնութեամբ համայն էութեամբ՝ իսկապէս լըմամբ ամէնայնիւ

անպակասելի:

Թ. Ու զի՞ եւ լոյծ բազմապատիկս նշանակել առ այս մեծ խորհուրդ անհասանելի , և ոչ ճաշակել զքեզ՝ քաղցրութի . իմանալ քեւ զայս՝ թէ զի՞նչ լոյծ իւղն եթէ ոչ՝ զուարթութիւնն 'ի փայտն պատուոյ՝ սովին բժշկեալ , ըստ սաղմոսողին, զուարթ գործեցես: Ու զի՞նչ պարարտութի՞ն , եթէ ոչ՝ զկերակուրն մահու՝ սովաւ մոռացուք լցեալ 'ի սմանէ : Ու զի՞նչ օծութիւնն , եթէ ոչ՝ զմոխրոյն թշուառ տեսութի՞ն՝ 'ի ձեռն սորին փախարկեցուք 'ի պայծառութի յաւէժ ուրախութեան . անուամբ քո փրկեալ յոգլի զօրութեան՝ հօր անուանեցուք : Ու զի՞նչ արդեօք մարդարէին հոգևոր ըղձականութի ամենատենչ բազձանացն լոյծ իմանալ , որոյ ծերութիւնն առակի 'ի ձէթ պարարտութեան , և կամ օծանելն իւղով զգլխոյն վերամբարձութիւն , եթէ ոչ՝ զհեն խաղաղութի սդոյն սաստկութե 'ի մահ կործանմանն՝ կենդանարարեալ դեղովս այս կենաց՝ պատրաստեալ օժանդակեցես : Ու զի՞նչ ճրագին լուսաւորելոյ շնորհակալութիւն , եթէ ոչ՝ 'ի մէջ իմն անյուսութեան մեղացն միգի և կռապաշտութեանն խաւարի՝ կերպակցապէս մխութեամբ 'ի լիս էմմանուէլ : Ու կամ զի՞նչ մարգարէն ածարանեալ 'ի ափոփանս զուարթարար օրհնութեան՝ նշանակ յատնի փայլեցապէս ոմանց աւետէ , օծցին իւղով 'ի մրրոյ պարգևոյ . և կամ իմաստունն՝ 'ի գիմաց հարսինն՝ առէ օ-

րիորդացն , հաստատեցէք զիս իւղով , և գեղեց-
կազարդ խնձորով յարկեալ ծածկեցէք , և 'ի-
պարտէզ իւղենեաց տածեալ դրդեցէք , եթէ ո՛չ
այսր ահա ընտրական նիւթիւ՝ հոգւովդ քո լը-
ցեալ՝ 'ի սոյն լոյս տեսցուք զանխմանալիդ 'ի մեզ
բարձրութիւն զովեալ : Նու արդ քե՛զ միայն՝ խը-
նամակալ , պատճառ բարի բնաւից եղելոց , ձե-
ռըն համբառնամ տարածմամբ բազկացս՝ եր-
կամանցս՝ գործակցութեամբ՝ սրտիս հեծութի՝
լեզուիս և շրթանցս ձայնարկութեամբ , լո՛ւր ո-
ղորմութեամբ տէր , պաղատանացս խնդրուա-
ծոց առ քեզ կարդալոյս . շնորհաւորեալ այսու
պարգևօք՝ գոհաբանութիւն քեզ մերընծայեմ՝
հզօր ահաւոր բարձրեալ անքննելի , անփակ փա-
փակմամբ միշտ համբուրեցեալ , սուրբ սուրբ և
միայն միշտ սուրբ , օրհնեալ հանապազ յաւէժ
անդադար երգաձայնութեամբ : Ընձեռեա՛ ա-
ռաւել բարերարութիւն՝ խաղաղ վրիպելոյս .
տուր յոյս քաղցրութեան՝ ոչ մասին միոյ մա-
տուցման լուսոյ՝ արժանաւոր լինել հանդիպելոյս,
լայնել քև բարի ընդրութիւն ծածուկ խոր-
հրդոյս՝ դրդութիւն խառնեալ ընդ աղերս՝
ասել ընդ դաւթի , ընկալաք մատուցած զո-
ղորմութիւն քո , և զծածուկս գաղտնեացդ
անտեսից՝ իմաստութեամբ
քով յայտնի ա-
րարեր :

Ժ. Եւ արդ՝ մեծութիւն քեզ՝ ամենակալ առատաձեռն աննուաղելի՝ ամենափոյթ առ ՚ի գըթութի՝ մշտայօժար ՚ի բժշկութիւն, զի միացուցեր խառնեցեր ընդ մերձաւոր զիւրադիւս ընտանի նիւթոյս՝ զհրաշս անճառս քում ըսքանչելեաց ահաւորութեան: Քանզի զոր երկին ամ բարձանց՝ երկրիս լայնութեամբ՝ և անդընդոց ներքնոց խորութեամբ՝ ծովուց բաղմութեամբ՝ ոչ զօրէ տանել, այլ իբր զդոյն ՚ի մեծէ բերի, ՚ի փոքր գոյս տեսականեցեր զօրութեամբ՝ սահմանեալ ճշմարտապէս անհրապուրելի. զի մի նորոգ իմն երեւելով յայլ էութէ՝ առ աշխարհանցի երեւականութիւն ինչ վարկանիցի, վերաւորել՝ քան թէ բժշկել անընտրաբար ըղկարծիս մտաց: Քանզի որպէս մարմին՝ քեզ հաւատարապէս՝ օրհնաբանեալ որդի քոյ, խոկութի և ոչ օրինակ՝ ՚ի յարդեանցն ցորենոյ արարչապէս միշտ հանդերձեցեր, և կայլակ կողիդ՝ զարիւն խաղողոյ, և արդանդ կենաց հոգեւոր ծննդեանն՝ զառատութիւն ջուրց յոլովութե, նոյնպէս և զհոգի անմահկէդ վիժման՝ սովոր և ՚ի սոյն արդիւնաւորեցեր. երկուսեք կենաց՝ որոյ կերպարան յառաջ եկելոյն՝ և ոչ հեթանոսութեամբ է փոխարկութիւն, որպէս ոչ տեսանողութե խաչական փայտի ինչ երկրորդութիւն, նստելոցս յերկրի խաւարի՝ ըստ նմանութեան քո տէր՝ ծագեցեր: Քանզի յայս կերպարան շնորհի՝ զանգական

լութիւն անհասից յայտնեալ աշխարհի լուսաւորեցեր, զի մի անանկն կարօտասցի՝ և մի ընչեղն բարձրամտեսցէ, ըստ օդոյ հաւասար բաշխման, և լուսոյ արեգական տարածման, և ջրերական վտակաց գնացման. զի հաւասարապէս բաշխիւր երկրածնաց մանանային զուգամանութեամբ՝ փոքունցն առաւել, քան մեծամեծացն:

Ժ.Ն. [illegible]ակ այս նիւթոյ տեսաւորութե՛ խորին խորհրդոյ՝ և ՚ի բնուստ անտուստ հրաշապէս ունի զթարգմանութե՛. որպէս զի ոչ երկմիտ լինի շութափութեամբ անհաստատապէս զանցի փոխէ, և ոչ նենգողարար զբնակութիւն յինքեան լքանէ. քանզի ոչ վերջնականօք աճառովք հերքի, և ոչ յընդդիմակցէ ումեքէ ողողեալ արտաքս ելանէ: Վասն զի որպէս պատահումն զունոյ յէութիւն մարմնոյ՝ անփոփոխ լինի և յանհրաժեշտ, որ զոլովն գոյացուցանէ՝ և ոչ զոլովն ապականէ, այսպիսեաւ լինի յարմարութե՛ խւզոյս զօրութե՛ անդասին ՚ի յիւրոց անտի կերպարան զանեալն ունողի՝ միասնական զուգութեամբ ընդ մեզ խակ կցորդեցեր՝ ուր յիսուս քրիստոս, ընդ երին գոյի՝ և զօրինակն ըծակցելով. քանզի զանխմանալին տեսութեան այսց և մաւս բզձից՝ ՚ի դէմս բերեալ կերպաւորեցեր. ՚ի պայզոյ երկրի ծնչեալ մկելով՝ զարմանալեօք հրաշագործութեամբ մատակարարել մեզ պատ-

բառեցեր: Մանաւանդ զի ոչ հոլովից խառնից 'ի մի եկելոց խմբակցութէ՛ զանազան ծաղկանց, բառ հնոյն և սուսերին բազմարութեան այլայլութենէ, զայս խուղ օծութեան հրամանատրեցեր, այլ երբ զօրինակ փոխեալ զայն առ այս՝ դու ինքըն խառնեցար 'ի նոյն մաքրութիւն վերնայոյս ձիթոյ: Որ թէպէտ անձառ են համեղութիւնք քումն անուշութե՛, և ընդ օրինակաց իւիք ոչ համեմատի, այլ ծաղկէ պաշտի՛ և շուշան հովտաց՝ և նարդոս ընտիր՝ և եղեգնախունկ խառնեալ հաղբէիւ՝ յարմարութեամբ հոտոյ քրքմոյ՝ փթթեալ ողկուզոյ և ալնիւ գինւոյ, ոչ սակ՝ քան թէ իւղոյ միութեամբ պատշաճապէս օրինակեցար փառաւորեալ անուանդ անքննելի, որ զմն ընուս, և յերի խմբէ ամենեքին ոչ կարոտանս: Ասաց ոչ շփոթեալք 'ի հակառակաց բռնադատութեանց՝ բաժանեալ կամաց՝ մեկին տակի, այլ 'ի սիրոյ հաւանութե՛ ածապէս 'ի մենջ պարարիս, վասն մեր ընդ մեզ՝ առ ամ՝ վայելչական նմանութե՛ օրինակեցեալ. առ որս լոյս բարի՝ և հուր ջեռուցիչ, տապ սիրոյ առանց մասին ինչ շնչման անգթական սառնացրութե՛ այս զանգուած նիւթոյ՝ կաթուածոյ ձիթոյ՝ մաքուր մնաց տեսեալ խմանի, որով յերաւի սովու 'ի յանձ է միանալի: Ընդ սղամնի օծելոյ պողեղբեցելոյ այ՝ երգեմ բերանով հարսինն՝ երկնաւոր փեսայից բարեբան դոհարանութիւն

համբուրեալ 'ի յիղձս մտաց՝ զհոտ իւղոյ քոյ քան զամենայն խունկս. և իբր զլանս կենաց յաւխտենականաց ունողն, ըստ հոգևոյն բանի իմաստնոյն՝ և ածարան աւետարանչին, զհետ քո 'ի հոտ իւղոյ քոյ ընթասցուք. լուացեալ զերես ջուրբք կենաց, որ 'ի վեր է քան զերկին օդոյ այսորիկ, և օծեալ զգլուխս անախտական իւղով երկնայնով՝ յանդիման եղէց քեզ ուրախութի, զուարթադէմ՝ և ոչ տխրարար:

ժՒ. Սոյս իւղ խնկելի՝ պաշտելի և երանելի, ոչ առակ օծումն իւղոյս սննեկի, և կամ հերաց վարսից գագաթան նպաստ ինչ մատուցանի, և թէ ոչ տէրունական կենսատու խաչիւդ տեառնագրեցի: Այն իւղ զարմանահրաշ օրհնութե լուսոյ՝ զհրէայն և զխուժն՝ զհնդիկն և զբարբարոսն՝ զսկիւթացին և զելլենացին՝ զդուժն զըննէարար՝ և զարհաւրատեսակ շանագլուխն սակավկեթխար, զտէրն ազատ՝ և զստրուկն ծառայածին՝ քրիստոնեան արարեալ՝ անուամբ քո կնքէ. և հոգւոյդ սրբոյ ընծայէ, և հօրդ երկնաւորի՝ հարազատ որդի հաստատէ: Նազովրինէն սափաւ արուեստից տեսմունք յարմարեցեալ նախ նիւթոյն՝ ապա զօրութեանն: Քանզի ինոթ փայտեղէն մինչև օծեալ իցէ՝ դիւրաբհերձի՝ և անօգուտ եղեալ անպատուի, նոյնպէ և մարդ՝ ոչ իւղեալ սափաւ՝ հեշտեաւ խորտակի և մեկուսի եղեալ առ 'ի քէն՝ ոչ լուսաւորի:

Մատն ատ քո՛ Յիսուս , որով զհրաշալիսն զօրմանագործես. քանզի իբր անդծելի կարողութեամբ կարծր պահպանակաւ՝ ամենապատրաստն շըրջարկութեամբ պաշտպանեալ՝ ծածկէ յայտգունակ խրթնի եկամտից. մինչ զի այսու մաքրութեամբ թաթաւեալն 'ի սմա՝ ոչ ներկի արեամբ և ոչ ախտատեսակ երփնիւ այլայլի: Այս զի և թափանցանց իմն խառնութեամբ հոգեպէս՝ ընդ թանձրութի մերոյս գոյութե մտեալ անցանէ. զի թէ անէծք սաղմոսողին՝ ձիթոյ սակաւ՝ ընդ ոսկերս չարին համայնիւ բաշխի , ո՛րչափ ևս հոգիդ սոյն ճարպով լուսոյ՝ զաներեւոյթ ներքնոյն տեսակս կենդանագործեալ ողջացուցանէ. ազդումն տուեալ 'ի խորոց անտի շնչմանն հագագին՝ մինչև 'ի սպառուած ծայրից եղերաց՝ ըներնաւն ընկղմէ զյիշատակ մարմնոյ մահուն արկածից. քանզի կենդանական զօրութի քո միշտ ահաւոր՝ Տէր Յիսուս Քրիստոս՝ 'ի սմին խառնեցեալ՝ ընդ սոյն իսկ բնակէ:

ծ.գ.. Սոյս օծումն բարեանոյն՝ և առ. բանամարտին մերկամիցանակ ընծիւ՝ իբր զօրաւոր հընարից կերպարան ճգնաւորական՝ անըմբռնելի ձեռաց ներհակին՝ օրինօք պաշտի , զիւաց և ախտից հզօր ահարկու: Քանզի յօրնապաճոյճ զըննութիւն բանին եղեւկեալի առ իմանալին փարաւօն , հեղինաւոր աստակադրութի՝ ողջակիզաց շարայարմանեալ , յորժամ՝ եղեր՝ աւէ , և հան-

դերձեցար ընդ օծելոյ քերովբէին, ուր արձանքըն հրեղէնք հաստատեալ կառուցան։ Օրհնաբանեալ ահաւորութի ամենափայլ ձեռընկալութեան, որ միշտ անճառ ես բանից՝ և գերազանցեալ քննութեանց. որ աւետարանաւն կենաց խնկէիս յարակայ՝ իբր նորածին օծեալ 'ի քաղաքի դաւթի. և 'ի քահանայապետին հարցմանէ, դո՞ւ ես օծեալն որդի օրհնելոյն. և յերանաւորն դաւանութենէ պետրոսի՝ օծեալ միայն որդի այ կենդանւոյ. և յապահաւատ քննողացն, եթէ դո՞ւ ես օծեալն՝ ասեն, ասա մեզ համարձակ. և 'ի կանոնականացն քոյ՝ հաւատամք յօծեալդ ուսուցիչ և տէր ամենայնի. և հերովդէս յառաջ քան զայն՝ զօծեալդ անուն յայտնապէս հարցեալ. և զիա՞րդ գրեն՝ դու իսկ ասացեր ; զօծեալն այ զտէրն դաւթի՝ զանսկիզբն որդի ժամանակաւ որդի։ Քանզի այսպէս ընկալաք վայելչաբար զայս թարգմանեցեալ, որ 'ի մեզ բերի ծայրն կատարման խորհրդական կոչմանն վիճակ քրիստոնէից նախապատուութե։

Ժ.Դ. Որքան ունի ահաւորութի՝ միանգամայն և սրբութի՝ իւղաւորական խնկաւորութի՝ սոսկալի անուանս օծութե, մինչզի որպէս ոչ է համարձակել ուրուք յերկրայնոցս ած անուանել՝ այլ ածային, նոյնպէս ոչ բերէ մարմին՝ զքրիստոսդ անուն անձին համարել, այլ զքրիստոնեայնանտանելի նախնւոյն մեծութե մկրտչին՝ Ջուր

զհողին հրաւիրողին. քանզի չեմ ես աստ՝ օծեալն, այլ առաքեալ առաջի նորա: Սովաւ շրջեսին՝ որպէս բանն ասէ աւետարանչին մարկոսի, առաքելականացն լծակցութիւք, իբր աղաւնից հարազատ ձևովն ոչ՝ այսու փարեցեալք. քանզի խաղով օծանելին՝ և առանց մարդկային հնարից՝ անուամբ քո բժշկեսին: Սանզի որպէս խաւար 'ի լուսոյ՝ և ցաւ յառողջութենէ, զիշեր 'ի տուընջենէ՝ և մահ 'ի կենաց, այսպէս և 'ի սոյն իրէ ախրապարդեէ՝ ամ չարին երևոյթք մերժին խափանին և բնաւին ամփոփին: Քանզի որպէս ձանձք զաղերք՝ և փոքր զեռունք սարդից և ունկնամոնից՝ իբր 'ի դեղոց մահու՝ յայս նիւթոյ սպառեալ պակասին, սոյնպէս լուսի շնորհի օրհնուն սոյն իւղ զօրացեալ՝ և զայս վանէ, և զմուրհակս չարեաց ջրէ, և զձեռն մահու պատառէ: Ոչ է աւաղան կատարեալ՝ առանց օծման օժանդակութեն: Եթէ աւաղակացն մահուխոցման զմարդն առաջին, այս դեղ փրկութեն մատուցեալ տուաւ. եթէ անձարակ վիրացն յակոբայ և խարայէլի, սոյն իր պատուական յիշատակեցաւ. այս իւղոյ փափաքեալ դաւիթ՝ իբր ձիթենի պտղալից 'ի տանն այ՝ յուսով յարակայի, լքեալ զթըւփատուէին անդստին, զմկրտութեան շնորհ գուշակէ: Ոչ զի՞է ինձ զայսմանէ ձառել, և համայնին կարծել հասանել, որև ոչ վերինքն զօրեն ձեռնարկութ ինչ բանի՝ զսոյն խորհուրդ 'ի մանաւորէ ինչ ձառելով նշանակել, թողում աստ՝ թէ յիշութ

ժե. Փառք քեզ միշտ և յաւէտ անմահ Թագաւոր՝ 'ի յայժմու երգեցեալ օրհնաբանութեանս, զոր արարեր և կատարեցեր առ իս՝ բազմախնամ գթած և երկայնամիտ , հարուստ և առատ ամենայաղթօղ . անդստին 'ի հարցն գծագրելով զօրինակն՝ մինչև 'ի լրումն ածեր զլիակութիւնն ճշմարտապէս ։ Դու լոյս իսկ բնութեամբ և արեգակն մշտապայծառ՝ և զաշակերտացն դաս՝ լոյս անուանեցեր , որով զարարածս ամ. երկրի՝ ճառագայթիւք երջանիկ շնորհի նոցին լուսցեր ։ Ընկալար զեւղն անուշութեան յումեմնէ՝ 'ի յոտըս , յօրինակ ընդունելութե՛ մաղթանաց առ քեզ . և 'ի միւսմէ պոռնկէ՝ 'ի գլուխ , նշանակ սիրոյ գթութեանդ առ մեզ . մշտափափաք բաղձանօք անսահմանելեդ 'ի սոյն հոտոտեալ , մինչ զի ուխտիւ անփոխադրելեաւ՝ օրէնս յարակայ օրհնաբանելիս՝ քոյինահրաման պատուէրս կենաց՝ ընդ համօրէն աշխարհ քարոզել զսակաձեռն իւղոյն յարդարութի , զարմանս հրաշից լռողացն՝ առ ապառնեացն յուսադրութիւն ։ Դուք օծութի՛ ունիք զսրբոյն՝ ասաց երջանիկն առաքելութեանց , մեկնեալ զխորհուրդն որ 'ի մեզ զեղեալ՝ յառաւելութէ՛ կենդանարարիդ անպակաս բովանդակութեան ։ Ուստի յաւէտ իմն յարմարաւոր և համդունատիպ՝ առ 'ի մանկաւորն նմանութի՛ լուսոյդ և հոգւոյդ սրբոյ՝ այկաթուած օրհնութե՛ 'ի վերնոյդ բարերարու-

թեանց՝ անսպառաբար սրսկեցեալ 'ի մեզ, և ասփ-
լոյս, երբ գնախաթիւ գոլ առեղծուածոց՝ և ա-
բարձրութեանց պատկերակից, որով զկատար մը-
թութեան մեղաց հալածես. իսկ հուր, զի յամ
տարր արարածոց հաստատապէս ունի զուգու-
թիւն՝ ըստ էականին կշիռ բաշխութեան, ծա-
ծուկ և յայտնի, լուեալ և ծանուցեալ. և եթէ
ոչ ընդ հարցի 'ի հակառակէն, ոչ յինքնասաստ
յօժարմունէ բաղձայ բորբոքիլ : Դարձեալ և օ-
ծումն, զի արքայաբար օրհնեցրեալ՝ ընդ քեզ 'ի-
ժառանգութի հօրդ մատուցես. ողորմութեդ
աղբակցաւ նկարեալ 'ի մեզ անեղծանելի՝ 'ի հան-
դերձեալ փառսն փայլեսցուք. դարձեալ և հո-
գի, զի մաքրեալ զարկածս խաբէութեն՝ որ 'ի-
բանսարկուին ներգործութե, նորաւ փոփոխ-
մամբ հոգւով և ճշմարտութբ՝ հօրդ երկնաւորի
երկրպագեսցուք, բեւեռեալ ընդ քեզ յուսոյն
հաստովք ամենապարգևե :

ԺԸ. Ահա արդարև յաւէտ խնկապէս՝ խուղս այս
լուսապատար խնկալիր՝ վերնականից սիրոյ տե-
սութիւն : Նման որոյ և պօղոս իսկ պատշաճ
վարկաւ 'ի ճառ գոհաբանութեն՝ ասելով յայտ-
նի, որ օծ զմեզ ձեօք հանդերձ 'ի քրիստոս յի-
սուս՝ ած է, որ և կնքեաց զմեզ՝ և ետ զառհա-
ւատչեայ հոգւոյն 'ի սիրտս մեր. և դարձեալ,
մի՛ առէ, տրտմեցուցանէք զհոգին սուրբ ած, ո-
րով կնքեցարուք յաւուրն փրկութե : Պատկա-

ռելի և անվանելի օծութեանս յորջորջութիւն՝ իբր 'ի նորումն՝ յաւէտ քան 'ի հնումն . քանզի բանն դաւթեան սաղմոսին՝ զոխրական անօրինականացդ սկզբնաւոր կրիցդ խորհուրդ՝ ճշմարտաբար վերասահմանէ , ժողովեցան կուտեցան իշխանք ժողովրդոց՝ վասն տեառն և վասն օծելոյ նորա : Մարգարէութի՛ մեծ ապաւորեալ զանսրբելի արեանդ պարտիս՝ հրէախումբ չար մաքդնութեանն՝ որ 'ի տէրդ յանդգնութի , ո՞վ է որ ձգիցէ զձեռն իւր յօծեալն տեառն՝ և քաւեսցի . քանզի թէև յաղգայնոյն սպանաւ սաւուղ, այլ ո՛չ խապառ մերժեցան յամօթ և 'ի նախատինս ազգաց օտարաց , մինչև արեանդ ոչ հաղորդեալ գտան : Դրաւական մեծ յիշատակի ապագայից ժառանգութի՛ աղօթանուէր աղերսարկութիւն սանդ սաղմոսիւն , վասն դաւթի սիրելոյ քոյ՝ մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ . և դարձեալ , նայեա և տես յերեսս օծելոյ քոյ , և արա

ողորմութի ընդ օծելոյ քոյ :

Ժ.Է: . Զեռանդ քո՝ քրիստոս , երկրպագեալ պարգևաւորութիւն՝ այս հիւթ լուսակիր . քանզի ո՛չ այլ մեծ բարձրութի՝ յարքայութեն ճոխութենէ՝ ասէ մարգարէն 'ի դիմաց քո տէր , քան թէ՝ գտի զդաւիթ ծառայ իմ , և իւղով սրբով իմով օծի զնա : Աստի կիրթ իմն յիշատակաւ՝ զքոյդ համբուրեալ լուսոյ օծութի՝ տէր յիսուս քրիստոս , ծանիցուք զքեզ անփոփոխ

մշտնջենաւորութիւն, թէ դու ես տէր՝ և յաւէ միայն թագաւոր թագաւորութեանց, և ճըշմարիտ օծեալ իւղելոյ, փառաւորեալ երկըրպագութեամբ, երէկ և այսօր։ Զանազան գիր օրինակ պատրոյկ թացեալ 'ի ճարպում՝ ոչ երևեցուցանէ լոյս նշոյլ՝ մինչև հուրբ լուցեալ վառիցի, այնպէս և այս օծութիւն լուսոյ առ 'ի մեզ հեղեալ՝ 'ի հանդերձեալն ջահաւորի։ Նոյն է կերպարանին մեկնաւոր բացերևութի, 'ի նախնեացն և այսր բերեալ բարենշան իմն յարմարութ՝ հրաշապայծառ երանգաւ գունեալ։

Ժ.Մ.. Սուրբ՝ այսոցիկ պատճառ վերադոյն մասանց կեցուցչաց ածականաց՝ արարչութեան հարազատաց, առանց որոյ ոչ է գրել քրիստոսեան, և ոչ նուիրեցի անուանել, և ոչ յիշատակել յորդիս յուդայի, և կամ խրախոյս բառնալ յանուն ևս յակոբայ, այս հիւթականութի օրհնութեան ձիթոյս, յորում այն երրորդութիւն խառնեցեալ միաւորի. ծառայայթ շնորհաց. շուք մերոց գլխոց. նկարագրութի երեսաց. բարեձևութի պատահմանց. լուսաւորութի աչաց. անառնազդութի բերաց. վայելչութի այտից. զարդ կերպարանաց. պահպանարան շրթանց. հանդերձիչ կրծից. յարմարիչ փարուց. շաղկապ հաւաքմանց. զօրութի անձանց. ուժգնութի գլխեցմանց. խափանիչ յաւաթից. քակիչ հմայեկաց. նահանջիչ ձեռնածուաց. խայտառակիչ կախարդաց. դածիչ աղանդից. բռնա-

խոյեան գիւաց . փարատիչ ցաւոց . կատարիչ կնքեցելոց . աննշանք երախայից . անշնչին արտաքնոց . հիացումն հեթանոսաց . նախանձարկու անհաւատից . մերկացուցիչ դաղտնեաց . յարդանք յեանոց . փառք սարկաց . պճնումն կանանց . աճեցումն տղայոց . հրճուանք ծերոց . ձեռնադրիչ նուիրելոց . զգուշութի՛ մաքրոց . պըսակ թագաւորաց . ճոխութի՛ արքայից . յառաջադրութի՛ կայսերաց : Քանզի զոր օրինակ առան ինչ կնքեալ՝ նշանակիչ իմն է ներքնայնոցն մեծագործութե՛ , նոյնպէս բարձրութի՛ շնորհին 'ի մեղ սոփա ծածկեցեալ յանուն քո՛ ա՛ծ տէր յիսուս քրիստոս , վայելչական իմն տեսակաւ ծանուցեալ նշանակի : Իսկ անուանն իւղոյն անդստին 'ի նոյն յորջորջեալ կոչմամբ , ըստ հոտելեաց արանց իմաստնոց՝ որ յեգիպտացւոց անուն սկսեալ , 'իգէմս ածելով զերկին կերպարան՝ ահաւոր խորհրդոց պատկեր :

ՎԱՍՆ ՍՐԲԱԶԱՆ ԻՒՂՈՅՆ ՄԵՌՈՆԻ :

Ժ.Թ. Քանզի մեռոնս այս օրհնաբանեալ , զոր մարգարէն կանխաւ լոյս աչաց՝ գրեթէ զոյն աղերսեալ խնդրէր , ըստ քերթութեանն բանի , որ ըստ խորութեան հոմերոսի թարգմանեալ իմանի , իւղ մայր . այսինքն է՝ առ 'ի յինքն ձգող զմերս բնութիւն զօրապէս , և կայուն հաստատել չքնաղ փոփոխմամբ զջուրց լուծականու-

թիւն՝ առ աւագանին լուսաւորութիւն . և իր-
րև զգեղ՝ մածուցիչ կաթին՝ 'ի նոյն ինքն յե-
զանակել զընդերս իմ վայրագութիւն , և զաղ-
բերց հեղեղեալ մշտահոսութիւն ։ Իսկ մանա-
մուռ՝ որ և այս միւռոն , ըստ այլում բառի ցու-
ցանի . այսինքն է՝ մթին , որ և խաւարչուտ գոլ
և ծածկեցեալ՝ կամ անտեսական . որ և սոյն կո-
չումն զխմառութեան չէ օտարացեղ . քանզի
արդարև յիրէ անուն անունն նշանակի . վասն զի
անքննին է այս խորութիւն յաւէտ՝ քան զամ
սրբութիւն սրբոց ։ Ոչ ոչ եթէ ջրոյ օրինակաւ
զաղտ ինչ լուանայ , և կամ հացի բնութեամբ
զսիրտն հաստատէ , այլ նորոգ իմն յարմարու-
թեամբ 'ի մասունս ազդողականացն անօրինա-
պէս տեառնադրի . սակայն անհասութիւն վեր-
նականաւ՝ և զանունն ունի անքննին ։ Քանզի
որպէս աստուած իսկ և իսկ 'ի լոյս անմատոյցա-
սի , իսկ անսահման փառաւորութեամբն՝ յե-
ղանակաւ իմն անբաւութեն՝ 'ի խաւար անքննին
ծածկեալ իմանի , փակեալ արտաքուստ 'ի ձեռ-
նարկութեանց մերոց իմաստից , նոյնպէս և այս
ծորումն լուսոյ՝ 'ի լեզուաց ամանց ճարտարաց 'ի-
ճահ ճնմութեանց՝ զրականապէս անուանադրու-
թեամբ՝ մայլ առ ձայնի , վասն ոչ զօրելոյ երկ-
րածին բնութեան զիսկն զիտելոյ ։ Իսկ զերկա-
քանչելիս ածականացն՝ անդստին յինքեան հա-
ըստարար տիպապէս ունի . քանզի 'ի կոչումն

անուան բարձրելոյն նմանակերպեալ՝ կրկին մե-
ծանայ Խւղս այս նուիրեալ ամենաբուրեան աղ-
նիւ կնդրկաւ․ վասն զի ած մեր՝ հուր ծախիչ է,
ըստ մովսէսի․ և դարձեալ լոյս է, ըստ յովհաննու․
ուստի և եսայի ճշմարտապէս զսոյն ակնարկէ, ե-
ղիցի՝ ասէ, լոյսն իսրայէլի ՚ի հուր։

Ի. Դարձեալ՝ այլ իմն կերպացուցանելով զբա-
նս՝ առ ՚ի նոյն պատկեր յայտնութեան իւր․ վասն
զի ոչ մատուցանէ զիմն նողկութի՝ ՚ի դժնութէ մե-
ծիդ քաղցրացաւ՝ վերստին գովեստիւ օրհնել․
քանզի՝ մեռայ, որ է դառնութի, այսինքն՝ նշա-
նակ իմն յարմարական չարչարաւոր կրից տաժան-
մանց, որ և միւռոն առուգարանեալ մեկնապէս
ըստ մեզ՝ մեռելութեան ազգախնութիւն։ Քանզի
այսու օծմամբ հոգևորականաւ՝ խզեալ կամ հա-
տեալ ՚ի մտոխանէր մահաբերպարան տաղտկա-
զազրական հեշտութեց հակառակողին, որ օձախո-
նաւ մեղկութ գքնարս ձայնաւորական՝ և կամ զարկ-
ուած վերածածկութե մինարհետ ուժգնաբար-
բառ խոռխատահնչական կոչմուածոյ թմբկիս զոր
ծակմանէ՝ ջրացիր իմն դիչութ՝ անվայելուչ թու-
լութաշնակեալ՝ ՚ի սաստիկ կորստեան քարշէ զօրի-
նակ մերս գոյութե, կայինք յուսով վերստին դար-
ձեալ ընդ անձառ խորհրդոյ խաչի քո՝ քրիստոս․
մկրտեալք ՚ի մահ կենդանութ՝ անմախձան կենա-
ցըդ առմաւ հաղորդիմք, ՚ի քեզ խնկ ած համայնիւ
խօրախուսեալ՝ խաղաղ ամենեքին անհաստածելի։

ԽԷ. Բայց իւղ՝ զդրօշեալն քաւակուսեան յա-
նուն քո յիսուս՝ նշանի բարձրելոյդ հաւատար
հաստէ. շնորհ ընծեռեալ զուգափառ և նմա-
նատիպ արեան կեցուցչիդ՝ նոյն անվանելի փա-
ռօք պսակեալ մեծացուցանէ: Փայտ անուանի
իւղոյ օրհնութեան, ըստ մարգարէին կանխա-
ձայնութեան, զի հաստատակից կայմեցեալ բու-
սոյ անտառաց զօրապէս ուղղեալ՝ 'ի խակութէ
չարին արկածից և օտար կարծեաց՝ 'ի սեղծողդ
վերաբերեալ առ նոյն նիւթս կենաց՝ հաստուն
ներգործէ: Զի և որ 'ի մեզ մոլիցն պատուհա-
նաց մշտաբացիկ թափանցանցութիւնք՝ յանուն
մեծութեան ահաւորիդ զօրութեան՝ 'ի խոհա-
կան իմն համեստութիւն քև տեսանողրեցեալ
առ 'ի յըղձակերտ օթեվան հոգւոյդ՝ անարգելի
պատրանաց չարին՝ խաւարահողմ խարդախօ-
ղին, այսու լուսով զայեալ ամփոփիմք 'ի նը-
ուագ գոհութեան երեկորեան պաշտաման՝ ընդ
երկնայնոցն զամբարաց՝ առ օրինակ վառման
շնորհիդ որ 'ի մեզ. 'ի սոյն յիշատակ միկութեն
բարեացն՝ սովա անկեցեալ ծաղի, և ծաղ-
կաւէտ եղեալ պտղածնի. 'ի սպաս ընթրեացն
պատրաստութեան յեանում գիշերի՝ 'ի մեծիդ
գալստեան. ահա զայս լոյս ճրագի համարեալ
'ի կեր արկանեմք:

ԻԲ. Դարձեալ՝ ըստ գծագրացն գումարութե՛ն քան և չորից շարադրութեան՝ որ յափափե- տաց անուի վերաթուի. մինչև 'ի քաններորդ երկ- րորդն կարգի, յորում զայս խորհուրդ խորու- թեան անտուստ թարգմանեալ՝ ճաշակ հեշտա- լի որոց հաղորդին՝ ջամբել պատրաստեմք ամե- նակաղմ յարմարութեամբ. քանզի յութանե- րորդէ անուի գլոյ՝ 'ի չորեքհարիւրն փոխարե- րեալ՝ ստուգարանօրէն քննութեամբ ընդ ձիթոյն անուան՝ նիւթ ճշմարտագրի. որ է կերպարան արդեան խմորոյ՝ յինքն բերողի զզանգուածն զօ- րեղապէս. որ ոչ սակաւն 'ի յոլովէն պարագայի, քան թէ 'ի նոյն կին դարձուցեալ, ըստ աւե- տարանական առակին, զամ առ ինքն վերարե- րեալ ամենայուն առնէ:

ԻԳ. Այն իւղ հեղութեան միշտ համբարձման՝ և խոնարհութեան օրինակ և նմանութիւն, առ- ման կակուղ պատուաւ մատուցեալ ջամբի, հար- թակչեա և բարեխառնար բանի կերպարան. իսկ համայնիցս լուծականաց՝ հոտանուտ և ստոյա- ծոբելի նիւթից՝ դերափառ վերաշրջական հրա- շափառ խորհրդոց պատկեր. քանզի և յաման ինչ մոլթոյ արկեալ՝ ոչ ըստ դինւոյ ձևոյ և կամ ջե- րոյ թացութեան՝ մեղկէ, այլ 'ի սահման պատ- շաճին պահէ: Նյապէս ընկալեալ դժոյոյդ բա- րեաց անհաւասար առաւելութիւն՝ որդի այ կեն- դանւոյ, զպրանուէր այս օծելութի՝ 'ի ճակատ

դիմացս արեամբ քո գրեմք. և 'ի բնութեն շնչոյս՝ հոգւով քո ապաւորեմք, հաստատացեալ խորհրդով մտացս, եթէ յաւէտ յայտնեսցի նորոգ փայլեցեալ բազմաճաճանչ ծայրարձակութեամբ՝ 'ի տարածութիւն յոգնատեսիլ զարմանահրաշ ընդարձակութեան՝ պտուղ խնդոյ ընծայեալ զլոյս՝ 'ի փառս ապառնեայն հանդերձելոցն: Այս ճարպ հոգեոր երջանիկ և վերնանըշոյլ՝ 'ի դէմս երեսաց իմս պատկերի՝ քումդ

նշանաւ ջահաւորեսցի:

ԻԴ. Ու քանզի՝ իբր անհաս ոչ ըմբռնական այս մեծ զօրութիւն՝ արագ սլացմամբ 'ի թեւս թեթեւս մտաց պայմանի, անդր քան զկարծիս ուշոյ իմաստից՝ անհուն հետեւման անհետ փախստեան՝ լայն իմն միջոցաւ խաղաղ ուռշեալ, փակեցաւ յինէն. ոչ օրինակեցաւ կցորդաւ. ոչ նըմանեցաւ զուգամանութեամբ. ոչ սահմանեցաւ ձեւակերպութեամբ. ոչ կշռեցաւ ընկերին չափով, այլ ահա ընդ ամենայն խաչիդ նշանի՝ հաւասարութեամբ արեան կեցուցչիդ՝ հողխաղէս գերազանցեցաւ: Իւ արդ՝ օրհնեալ զմեզ տէր սոխաւ և 'ի սոյն. եւ և անունդ քո ահաւոր, լուսաւոր, երկնաւոր, և զարմանաւոր, 'ի գովեստ փառաց անճառից մաքրակրօնից՝ բուրվառախնկեալ, սուրբ սուրբ, անքննելի, անպատում, բարձրեալ, ողորմած, վեր երդեալ՝ ճշմարիտ, բարերար և սուրբ, արա՛ սոխաւ փրկութի. առ...

և քաւութիւն. պարգևեալ բժշկութիւն. հանդերձաւորեալ շնորհ. առատաձեռնեալ երանութի Յօծումն այս ձիթոյ՝ երկնանձրև լուսոյ՝ անապառ գտայց. ջնջեալս այս թեղան բանաւորական՝ մի մացէ, և մի դրաւեսցէ ախտականութիւն աղտոյ մեղանաց՝ շաղախեալ երբեք զօդուցս կերպարան: Եղիցի սոյն ինքն որոց մատչին օծանիլ սովաւ՝ հարմնապածոյծ պանծանօք պճնել գեղայօրէն սուրբ փայլչութեամբ՝ երջանկապէս յօդի զարդարեալ: Եղիցի հուրս այս լուսափառ և ածաձիր՝ մերձեցելոցն 'ի սոյն բնութիւն՝ մաքս կրկնեալ և բարեփափաք ջերմութեան այլ յօրինուածոյ, որով ամփ անձնապատրաստ պնդութեամբ՝ 'ի կարծրականութիւն անսասան վիմին յարակայեցեալ մէջս արձանացայց՝ 'ի քեզ հաստատեալ աներկմտելի: Եղիցի նշանակ վերնամբոցանակ սոյր պարգևի սովաւ վառելոցն, ոչ որոգել ջուրբ. ոչ այրել հուրբ. ոչ ցրտանալ 'ի սառնութենէ. ոչ մխտականալ հողմով շնչանիլ. ոչ աղտեղել յաւրուական ինչ աղծութենէ. ոչ բռնաւհեալն՝ չարին մատնել, և ոչ 'ի սատրևելեացն զմթերս գանձուն կենաց՝ յիմարարար արտաքս հանել. ոչ անպատրաստար մնալ 'ի թեւոց քոց օղնականութենէ, և ոչ զէացեալն 'ի մեր օծութիւ անձանօթապէս 'ի բաց մերժանել: Այլ եղիցուք քե 'ի սոյն հրացեալ. սոփեալ պարարեալ. սովաւ իւսաւորեալ. սոյու արդարացեալ՝ աղատացեալ՝

պսակեալ և Թագաւորեալ : Դու քեզ միայնոյ միայն օծեալդ՝ յամենեցունց օրհնութիւնք եր-գոց, ալէլուք լեզուաց, հնչմունք ձայնից, յաղ-թականութիւնք գովեստից, բարեբանութիւնք շնոր-հաց, սրբաբանութիւնք սաղմոսաց, ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն :

ԵՑՆ ԻՄ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆ Ի ՍՐԲՈՒԹԻՒՆ. ԵՒ ԵՑՍ ԵՐՋԱՆԿ-ՐԵՒԹԻՒՆ Ի ՍՐԲՈՒԹԵԱՆՑ ՍՐԲՈՒԹԻՒՆ :

---

Սէրագին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն ալէլու մաղթանաց բանի :
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

## ԲԱՆ · ՂԳ

Ա. Աստուած յաւիտենական. բարերար և ամենակալ. ստեղծիչ լուսոյ, և յօրինիչ գիշե-րոյ. կեանք ՚ի մահու, և լոյս ՚ի խաւարի. յոյս ակն ունողաց, և երկայնմտութի տարակուսելոց, որ ամենարուեստ իմաստութեամբ քո՝ դարձու-ցանես յայգ զստուերս մահու, աննուաղ ծա-գումն և անմուտ արեգակն. քանզի ոչ զօրէ ծածկել զփառս աէրութեան քո խաւար գիշերոյ: Որում կրկնի ծունր երկրպագութեան ամ՛ ե-ղելոց՝ երկնաւորաց և երկրաւորաց, և սանդա-րամետականաց. որ լսես զհեծութիւն կարօտելոց, և հայիս յաղօթս խոնարհաց, և ընդունիս զ-խնդրուածս նոցա. Աստուած իմ և Թագաւոր

իմ. կեանք իմ և ապաւէն իմ. յոյս իմ և վստա-
հութիւն իմ. յիսուս քրիստոս աստուած
ամենայնի. սուրբ հանգուցեալ 'ի հոգիս սըր-
բոց. մխիթարութիւն վշտաց՝ և քաւարան մե-
ղուցելոց, որ գիտես զմեզ յառաջ քան զլինել նո-
ցա. առաքեա զպահպանողական զօրութի աջոյ քո,
և փրկեա զիս յերկիւղէ գիշերի և 'ի դիւէ չարէ:
Որպէս զի զյիշատակ սոսկալի և սր̃ քո անուանդ՝
միշտ համբուրեալ շրթամբք հոգւոյ՝ ըղձութ̃ե
շնչոյ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ կար-
դան զքեզ 'ի բոլոր սրտէ:

ժ. Ս՛ու 'ի դրօշմէ խաչի քոյոյ նշանիդ, զոր ա̃ծա-
յին արեամբ քո ներկեալ նորոգեցեր, և 'ի նոյն
շնորհ որդեգրութեան զմեզ մկրտեցեր, և 'ի փա-
ռս պատկերի քո նկարեալ՝ յօրինեցեր, այսու
պարգևօք ա̃ծականօք՝ ամաչեսցէ սատանայ.
քակտեսցին մեքենայքն. բարձցին որոգայթքն.
պարտեսցին մարտուցեալքն. պակասեսցին զէն-
քըն սայրասուրք. մերժեսցի մեղն. փարատես-
ցի խաւարն. մեկնեսցի մառախուղն: Նաղուկ
քո հովանասցի, և աջ քո կնքեսցէ. վասն զի
գթած ես և ողորմած, և անուն քո կոչեցեալ է
'ի վերայ ծառայից քոց: Եւ քեզ ընդ հօր՝ հո-
գւոյդ սրբոյ փառք և իշխանութիւն յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Մերտին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին
հոգւոյ, առ նոյն ողբերգ մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

## ԲԱՆ · ՂԵ

Ա. Արեգակն արդար. ճառագայթ օրհնեալ.
լուսոյ կերպարան. փափաք անձկութեն. բարձ-
րեալ անքննելի. զօրեղ անպատում. բարւոյ բերկ-
րութիւն. յուսոյ տեսութի. գովեալ երկնաւոր.
Թագաւոր փառաց. քրիստոս արարիչ. խոստո-
վանեալ կեանք: Նաւ արդ՝ զԹերութի վրիպանաց
բազմախառն ձայնի եղկելոյս՝ ամենազօրդ բանիւ
լցեալ, մատուցեա յաղերս հաճութե հօր քում
բարձրելոյ: Որ վասն իմ 'ի փորձ եկիր անխծից,
կերպարանեալ զիմ նմանութիւն՝ ամենեւին կե-
նաց օրհնութիւն, վերնոց և ներքնոց բարեխօ-
նամօղ տեսուչ համայնից: Զի թէ յանձն առեր
մեռանել վասն իմ՝ ած և տէրդ բոլորեցուն, որ-
չափ հաճեսցիս առաւել և այժմ վտանգաւորս
կրից կարեկցել, ընդ իմ պարտաւորիս միշտ ա-
ղօթելով աղաղակաւ մարմնոյդ առելոյ 'ի մէնջ առ
համապատիւդ քո հայր:

Բ. Նաւ վասն արեանդ պատուականի միշտ մա-
տուցելոյ 'ի հաճութիւն կամաց առաքչիդ՝ բարձ-
ցին վտանգք մեղուցեալ դատապարտելոյս. թող-
ցին պարտիքն. ապաքինեսցի ամօթն. մոռասցին

պատկառանքն . բարեգործեսցին դատաւորքն. սա
տակեսցին որդունքն. վերասցի լալն. հանդարտես-
ցէ կրճտումն ատամանցն . սպառեսցին ողբն . հատ-
ցին արտասուքն. մերժեսցի սուգն. հալածեսցի խա
ւարն. վատնեսցի հուրն սաստկութեն . հերքեսցին
տանջանարանքն բազմօրինակք :

Գ.. Նկեսցեն գթութիւնք կամօղին և պարգե-
ողին կենաց ամենից . ծագեսցի լոյսդ . արագեսցէ
փրկութիւնդ . հասցէ օգնութիւնդ . ժամանեսցէ
այցելութիւնդ . կանխեսցէ ցօղդ ողորմութեան.
յառաջեսցէ արբուսցէ զանդաստանս պասքեալ՝
անկեալ ոսկերաց թշուառութեամբ 'ի վիհն մա-
հու . ծաղկեցուսցէ պաղաբերեսցէ բաժակդ երկ-
նաւոր արեան կենարարիդ՝ զերկինս խնամեալ
աւուրն լուսոյ. որ անծախապէս միշտ պատարա-
գի յիշատակ կենաց փրկութե հոգւոց ննջեցելոց:
Զի ամիւ մահացեալ հոգիս մարմնովս մեղաց՝
շնորհօք քո գթած՝ 'ի քեզ զօրացեալ քև նորո-
գեցայց , զատեալ 'ի մեղաց անմահ կենդանութե
'ի յարութեն արդարոց , հօր քում օրհնեցեալ :
Ընդ որում քեզ փառք , և հոգւոյդ սրբոյ բա-
րեբանութիւն՝ վայելչական գոհութեամբ , այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

ՎԱԽՃԱՆ

## Յեղափոխական մասունք երկրագնդեան:

Իսա հոլովման ընթացից ամենակալ յառաջ-
շարժութեան, որ ըստ լրապատարն նշուլակե-
ղին արփիածածանց լուսակիրն օրակչեան մշտա-
փարատն ակնապարար՝ ականն արեւու՝ սանդ-
ծաղկանն արուսեկի, որ համբարէ հոլովէ կուռէ
ամաց յոլովութիւն 'ի շախս դարուց՝ շնչապատ
և կենդանանորոգ առուղեկան յաւիտենից, 'ի-
յաւարտումն կատարման ֆիններեակ յորեկենին,
'ի սկիզբն պատկերոյ մօր տասնեկին՝ Յարեթա-
կան առհմիս առւմարի. յետ երից ամաց անցե-
լոց՝ որ զենի գալստեան 'ի կայս և 'ի կոյս կողմանց
հիւսիսոյ դիմաց արեւելից՝ յաղթօղ և մեծ կայ-
սերն հռոմոց Նաւլի, յորժամ ընդարձակ և մա-
կաղաւիլթ կանոնաւ բափիռ տարածեր՝ լռասահ-
ման և անխարոյ 'ի սառուարակարկառ կոթողս
կարծր արձանաց՝ 'ի ձգումն ձեռին՝ և յանխոնելի
լարս պարանաց երկարաձգունից՝ անթարթափ 'ի-
նոյն վերապայցեալ 'ի յաջ և յահեակ՝ սեպհա-
կանել յաւելուլ բաժինս մասանց վեճակաց խոմ-
բից աշխարհաց 'ի ծոց իւր:

Արդ՝ 'ի յայնմ՝ անդորրութեն մեջոցի, յորում
եղեւեալ ընդոսնեյան թշնամիք եկեղեցւոյ, ըն-
տացեալ հինենցի, կառուցի, կարգեցի, կուսե-
ցի, արձանացուցի, զիղե, բարգեցի, կացուցի,
թուցի, հաստատելով 'ի հրաշակերտութե մեղաց

իրի՝ զաղմնատեղեան գրուագս գրութե՛, այսմ
սոփերի արգասաւորի, եւ Գրիգոր կրօնաւոր քա
հանայ, յետին բանահիւսաց, և կրասեր փար-
ժապետաց, գործակցութեամբ եղբօր իւրոյ ըստ-
րելոյ՝ Յովհաննէս կոչեցելոյ՝ նարեկայ մեծափառ
և բարձրապատիւ ուխտի վանականի. որք երբե
զմի մարմին բանական՝ 'ի յերկուց առ մի կեր-
պարան շինելոյ գիմաց կենցաղավարելով, ոչ մի-
այն հարազատք, այլև միաշունչք միակրօնք հա-
մապատիւք զուգահաւանք, 'ի քառից աչաց՝ առ
մի և նոյն շաւիղ խորհրդոյ տեսեալք:

Արդ՝ հայցեմք 'ի ճաշակողացդ յայսմ սեղանոյ՝
յորնօրէն և ախորժահամ հանդերձելոյ՝ յիշա-
տակել զմեզ 'ի մաղթանս աղերս և 'ի պատկանա-
ւոր խնդրուածս, սեան սիրով 'ի միտս բերես.
որով և զմեզ եղիցեք գրեալ 'ի մատեանս կենաց
վերին գրութեանն:

---

Յիշատակ վարուց հոգեկիր հայրապետի տեառն Գրիգորի

Ամենափայլ նշողիւք ճառագայթից շնոր-
հաց հոգւոյն ա՛յ՝ լուսապատար պայծառազար-
դեալ՝ հրեշտակն 'ի մարմնի սուրբն Գրիգոր՝ էր
յանձեւացեաց գաւառէ վասպուրական աշխար-
հին. որդի տեառն Խոսրովու անձեւացեաց եպիս-
կոպոսի. 'ի ժամանակս կայսրութեան յունաց
Վասլի և Կոստանդեայ. յաւուրս Սենեքարիմայ

հայոց արքայի. և 'ի Հայրապետութեան տեառն Վահանայ կաթուղիկոսի: Որ անեալ 'ի կարգ կրօնաւորութեան 'ի վանս Նարեկայ, որում և եղև առաջնորդ, ուստի և հռչակեցաւ Նարեկացի: Այն սա երկնահանճար վարդապետութեամբ գերափայլեալ՝ մեկնեաց զերգն երգոց Սողոմոնի. գեղգեղեաց զճառ խաչին, և զներբողեանս 'ի սուրբ Աստուածածինն, 'ի համօրէն դունդս առաքելոց, և 'ի սուրբն Յակոբ մծբընայ. և զ.քարոզս գանձից: Ապա բանապաճոյճ պերճաբանութեամբ գրեաց զայն զ(ղե) բանս աղօթից 'ի խնդրոյ հայցման հարց միանձանց, զոր թողեալ մեզ վերջին ժառանգութիւն անսպառ մթերից՝ փոխեցաւ յաստի կենաց՝ վախճանեալ յերիտասարդական հասակի, 'ի թուականիս հայոց՝ (դձծբ.) և ամփոփեցաւ 'ի նոյն վանս Նարեկայ: Իսկ յորժամ Սենեքարիմ արքայ փոխեաց զտէրութիւն 'ի փոքրն հայաստան, ապա և միանձանցն Նարեկայ գնեալ մերձ 'ի կողմանս՝ քաղաքին Անիոյ և Տիւրիկեայ, շինեցին վանս յանուն Նարեկայ, ուր բերեալ հանգուցին զպատուական մարմինն, թէև այժմ է աւերակ, և կոչի ուխտ Արաքայ, յորմէ լինին նշանք բժշկութե 'ի փառս այ: Որոյ անձախօս մաղթանաց օժանդակութեամբ արժանասցուք զմայլական տեսութեանն այ. որում պատիւ փառաց ծնրադրական երկրպագութեամբ յաւիտեանս. ամէն:

## Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ՝ Ներբողեան ի ս. Առաքեալսն :

Գումարք խմբից դասուց երջանկացն՝ պատուասիրեն բիւրաբերգուն բանիւք գովեստի՝ զսկզբնալոյսն կենաց գոյից 'ի կլիցս բանից ըղձաձայնութեանց . և որպէս փողովք տաւղօք և քնարիւք զգայական սրովի՝ շարժեալ զգործի՝ զգերազանցեալն 'ի լոյս անմատոյց ուրախութի՛ վերագրուածն : Նոյն զանձառ արարչութե՛ հրաշագործ ամենաստեղծն տէրութիւն օրհնելով , պատճառ փառաբանութե՛ խոկութեան հաստչին զհաստատածոյս առ նոյն գոյութիւն . որպէս և ճշմարիտն բան ցուցանէ , 'ի ստեղծանելն ինձ զայս ամ , բոյլք զօրաց դասուց երջանկացն օրհնեցին զիս մեծաձայն , և ամ հրեշտակք իմ գովեցին զիս : Նոյն արդ՝ եթէ հրափայլ և երագընթացն փառաբանչօք՝ վերնաթռիչ պատգամաւորօք՝ հաղխանիւթ և անեղծական կենդանեօքն նա օրհնաբանի . որ թէպէտ և նոքա վեհք են բնակութեամբ կայից ստորիցս , և նշոյլ երկրորդ լուսոյ առաջնոյն . այլ սակայն յոյժ անհասարար տպաւորութեամբ առ բնութիւն բարի բանին բարձրելոյ՝ բարեզարդարար բերկրանօք բերին . և որ գոհարանի առ 'ի նոցանէ սուրբ ածութի՛ լայնածիր հեռաւորութեամբ և ընդարձակ միջոցաւ յաւէտ անջրպետ նշուլիւքն ծածկի 'ի-

նոցունց ։ Արդ զայն՝ որ զանհատն հրեղինաց 'ի հօղեղէն յարկն պարունակեաց . և զանձառն 'ի սերովբէից զգալի մարմնոյ յօդիւն պատեաց . և զկերպարիչն դասուց հրեշտակաց՝ կաթնասուն ստեամբքն զինցոյց , ո՞ր երգ պատկանագիր 'ի ձայն գովեստից օրհնել պատուեսցէ ։ Ով մայրնարանն անտեսին՝ և զծնմարանն մեծին . զդաղաւարն տիրական՝ և զխորանն ամենական . զխառնարանն ճաշակման՝ անապական խրախճանութեան . զսրբարանն մաքրութեն՝ և զընդունակն զգաստութեն . զնպաստակն կուսութեան՝ և զօրինակն երանութեն . զհարսնարանն անլուծանելի՝ անժամանակականն փեսայի . զընակարանն հաճութեան՝ կամաց անեղն ածութեան ։ Ով այսքան փառաւորդ շնորհաց ընդունակն , և ոչ նոքին ածութեանն օրհնաբանք հրեշտակացն պարք՝ զպէս պատիւն է պատուել ժպրհին , թող թէ մարդ երկրայինն 'ի կշիռս չափոյ բերանոյ հողազանգուածս հիւթոյ մանզիս մարմնոյ . քանզի անձառութեամբ անհասականաւ վեհագոյն ամենեցուն փակեալ գտանի . և ոչ զօրէն երկնայինք զարդարեն անհաս անօրէնութեն զանքննին ծնող՝ արժանապէս վերաբերել ։ Քանզի թէ ըստ առաքելական ձայնին պօղոսի , մարդն անձնացեալ ոչ յումեքէ պատմի , ապա որ զլուխ բանին է ու և ածունն յղացեալ կրեաց 'ի մարմնի՝ զիա՞րդ գտցէ շարժուի շրթանց լեզու մարմնեղէն զնա ձայնել ։

Ո՜վ թէ դարք պետութեանց անմահից վե- հից վերնոյ բնակութեանն՝ եկեղեցեաւս ՚ի յայս խորհուրդ խորին յառեցան. ապա յայտ է, թէ մեծ է առ նոսա հիացումն սքանչելի գործոյս այ- սորիկ, քան զհասումն երկրաւորացս բանից պատ մութեան: Բայց սակայն երգեսցէ բանս որքան զօրեսցէ ՚ի բաղձանաց սրտի փափագման՝ նմին ընծայ օրհնառաք փառաց տեսչութե. նա՛ զի թէ երկինք՝ փառացն ոչ լինին պատմաբանք՝ և յանդ- րէն դարձ տարադրելոյ տոհմին յուդայի՝ ժողովք ժողովրդոց տեսլին զփառս անեղին, ապա այժմ յերևիլ բանին ՚ի մարմնի և լինել մարմին ադա- մեան կերպիւ, հարկ է յոյժ ճահողապէս ոչ մի- այն անմարմնոցն՝ այլ և զգայնոցս արժանաբար ըղձականութեամբ հնչել զձայն բերկրանաց բար- բառոյ բանից օրհնութեանց: Քանզի խոնարհե այս երկիր՝ եղեալ տիրակիր՝ գտաւ լծակից ընդ ամծակիր երկինն վերին. վասն որոյ խրախուսեալ հոգևորական հրճուանօք երկուցն դասուց ՚ի մի խումբ պարու՝ տօնս տարեկանս փրկչին փայլման կատարեն. զգայական սեռս եղականաց, և ան- մարմին դասք հրեշտակաց. յերևելիս տեսակա- նաց, և յիմանալեան ծածկեցելոյ: Ընդ որս և մեք կցորդք այսօր եկեղեցի զուարթ վերին յար- կի երկնայինն առագաստի, պարեմք հոգեպէս տարփմամբ՝ երգելով քեզ ընդ երկնայնոց ձայն սրբասաց:

Ո՜վ ամենասուրբ արարչընկալ տիրուհի և ածածին. որ զանտանելին երկնի բարձրութե և երկրի լայնութեան, ծովու խորութեան և անդնդոց անհասութե, զ'ի քէն մարմնացեալն իսկութի էութեան, յորովայն անձուկ սրբ. քում սննելի կրել զօրեցեր: Ո՛վ որ հայեցեալ երջանկին յոբայ՝ պատուարանեաց 'ի ձև տառից՝ զանբաւութիւն մեծին սքանչացուցեալ. յումեմն գիմաց ասելով, եթէ չունիմ զնա. և զայլմ՝, թէ չէ ընդ ինև: Որում երդակցեալ վեհին յովհաննու 'ի բանն յայտնութե ասէ հիացմամբ, փախեաւ երկին և երկիր 'ի մի սասանութի 'ի դիմաց էին, և տեղի ոչ գտաւ. քանզի արդարև յաւէտ անձկութեամբ ամփոփին 'ի բերումն բովանդակութե արարչական բանին հանգստեան:

Իսկ դու ընտրեալ 'ի զարմ՝ և 'ի զանգուածոյ մարդոյ զաւակի սուրբ ածածին. տարար զնա 'ի քեզ ամբողջ հանգստեամբ կամացն հաճութե, եղեալ երկիր անձնական՝ բանական բուսոյն. և զգայական անդաստան՝ կենացն հացի. և վառարան բորբոքման՝ անշէջ կայծական. և վայր գալարաբեր՝ հոյլական ծոցածին ծաղկին. և ծառ երկնաւղէշ՝ անթարշամ խնծորին. և գործարան գթութեան՝ լուսատու մարգարտին. և լեառն արձանունակ՝ երկրաւոր վիմին. և այգ արփիականըն՝ ասեղն առաւօտին. և յարկ գիտակետին՝ բանական հօտին. և ոլքայարան լուսա-

կերտ՝ անմահ թագաւորին. և մայր կաթնա-
մատոյց՝ բնաւից ստեղծողին. և հարսն սրբուհի՝
հօրն քրիստոսի :

Ընդ ամ ևս ուրախ լեր ձայնիւ երգոցս օրհնութե,
քում երանութեան բանաղօթութե. խրախա-
ցիր և ձայնիւ ողջունի գաբրիէլեան աւետեացն՝
բերկրեալդ 'ի կանայս. բնակարան արժանոյ բա-
նին խոնարհութեան. անկասագարթ մարմնոյ
մծութեն խառնարան. իւղարան օծելութեան
քրիստոսական անուանադրութե. որ նախ քան
զծնանիլ բանին առ 'ի քէն՝ անթերի լրականու-
թեամբ հրեշտակական թևոյն աքօղմամբ՝ ցանդ-
արկեալ պահէիր անաղտ անբծութեամբ : Սա որ
հաճեալ հաւանութեբ երրորդական փառք մծու-
թեանն՝ ճանապարհ ուրար հանդստեան. քանզի
հոգին սուրբ եկն 'ի քեզ՝ յօրինօղն անախտ սըր-
բութեան. և բարձրելոյն հօրն զօրութի՝ մօրդ
հովանացաւ. որդւոյն պատրաստեալ գեղ ըն-
դունակ : Եւ որ բնակիցաւն էակիցն հօր բարձ-
րելոյ՝ էր անժամանակ. և որ յօդաւոր մարմնով
'ի քէն ծնաւ՝ սկիզբն ունի էութեան նախ քան
զարբուսեակ. ուստի և գյօդաւոր մարմինն միակ,
խառնեալ ընդ մծական բնութեանն իւր ան-
քակ. և սերպհականեալ զանթառն հօր իւրոյ գա-
թի յաւիտեան. թագաւորեալ տանս աշխարհի
և երկրիս քաղաքի. արկեալ սոցա ուղ ճանա-
պարհի զփայտակերան գործի՝ հանել 'ի կամարն

երկնից տաճարի. և կանգնեաց զխորանն կործանեալ արամեան մարմնոյն՝ 'ի նորոգութիւն շինութեան քրիստոսական ուխտին դաշնաւորութեան.

Որդ՝ այսպիսեաց բազմաթիւ և բարձրագոյն բարեաց ընդունակ և մատակարար՝ միայն դու. մաքուր կուսութիւն էին խնկարան տիրուհի օրհնեալ սուրբ անձանն. քանզի երբեք զձնշումն խառնութեան խնկոց կնդրկի և զմռսի ընդ աշխին և կասիայի՝ բոլորեալ հրով մաքրութեան բարդեցեր զծուխ բուրման անուշահոտ սրբութեան 'ի հաստատելիս այ և հօր հաճութեան. փարուք մաքրեալ, բարութեամբ լցեալ, հեզութեամբ արձանացեալ, տարփմնութեամբ կատարեալ, քաղցրութեամբ աղբիւրացեալ ոգ անձամբ:

Անդամ և ուրախլիր յարկ անճառ ծնելոյդ 'ի քեն անեղդ այ. որ 'ի նմին յորդւոյն քո խնամոց՝ հրաշալարդ փառօք ամբարձար 'ի կատար ապառման վերնայինն երկնի լուսաւէս. և թեօք թեթեւուն հոգւոյն սլացեալ՝ յիմանալին վերաջուեցեր 'ի կայանս հանգչել: Աստի և զանհասանելին իշխանական խմացման՝ զանկարգելին լըդայութեան սրտինկատման՝ զվայելս անտեսիցն անձնալէս հոգեպարկեալ, զանեղծին փառաց ճոխութի՝ քեզ սեպհականեցեր որ անձանն:

Այերրորդեալ ես մաքուրդ փայլումն, կրօղ աբարչին տարփնութեան. որ զքանչելարուեստ հրաշիւք նկարոծեալ քև 'ի մեղ զկերպարումն

մեծ արդասեաց փառացն ընդ փոքուն յեղանա-
կեցեր. քանզի զանհայլն մանուկ՝ մայրդ որդե-
ղէս գերադգունեցեր. և ըմբռնեալ բարձողաց
ձեռացդ բազկօք՝ զանպարագիրն էակ մարդա-
ցեալ՝ 'ի համբոյր հպելոյ մատուցման շրթանցդ
ողջագուրեցեր. որում գտաք մեք ժառանգա-
կիցք՝ աբբայ հայր զնծ առ ձայնել՝ 'ի ձեռն քումդ
միջնորդութեան սուրբ ածամայր:

Բարեհամբաւեալ ես մաքրութե շաւիղ նախ-
ընթաց կուսից. որ զկրութք ունողն գոյից՝ կարօ-
տաբար կաթամբ լցուցեր. և աչաց մարդկութե
զանտեսն՝ 'ի մարմնի եսաուր նկատել. վասն որոյ
զնամ բերան գոհութք՝ ստացար քեզ օրհնաբա-
նըս՝ անձկով տարփման սուրբ ածածին:

Երանեալ ես դու 'ի լեզուս անբիծս ընտրական
շրթանց ծաղիկդ յեսսեայ պտղոյն մեր կենաց.
որ 'ի գլրութենէ խառնութեան քաւից յեղա-
նակեալ տարերաց՝ անկցորդ մնացեր 'ի մանէ
հողածնելոցս հասարակաց. ոչ բերող ծանրու-
թեան ընակակիր համաստեղծս կարեաց, այլ
քերովբէօրէն հրաբերան բղխող նշուլից: Ուս-
տի երաժ ընթացիք հեառց հեռացեալ 'ի վայրն
անմատոյց, յարփին վերին ընծայեցար սուրբ
աստուածամայր:

Խրախացիր յաւէտ հրճուանօք բերկրեալդ 'ի-
կանայս. որ գժտարընտել դատափարակաւ խա-
չին վարժեալ կրթեցար, որդւոյ քո նշորդակ-

ցութեամբ , միատեակն ժուժկալութեամբ՝ կրելով զերաշխեաց վշտաց ծնկցելոյդ 'ի քէն տեառն. մշտաչարչարն մեռելութեամբ անձնատուր տօթով խորտակեալ . երբե զորոջ անարատ քահանայական նուիրմամբ 'ի վերայ սրբոյ սեղանոյդ մատուցեալ՝ սարարոյս և տեառնախառն գեղմնարարձ մաքուր պատարագ . 'ի ճգնաւորական փառս ողջակիզեալ , քան թէ 'ի սրոյ հանդէպ խողխողեալ: Վասն այսորիկ 'ինուէր քոյ զենման՝ հրեշտակայն պարք պաշտպանեալ , ընդ առաքելոցն դումար դասակցեալ՝ զմիայն արժանիդ պատուեալ

զովելին սուրբ ածածին:

Ուրախացիր համայն տարփանօք բերկրեալդ 'ի-կանայս. որ 'ի կոյս և յանարօր արգանդէ բան բեղմնաւորեցեր. ցաւոց անխծից՝ արմատ օրհնութե. հօրն ադամայ՝ որդի բերկրուն: Վասն որոյ շնորհ ունելով քեզ օրհնեալքս 'ի հօրդեդ քո փրկիչ

աշխարհի , երանեմք քեզ ով ածածին:

Ուրախացիր անբաւ բերկրանօք հարսն լուսոյ , ոսկեզարդ զգեստուք պաճուճեալ . որ յօրէնս երկրայինս աղցաւոր կրից , զերկնայինն ածեալ մատուցեր. և զանձնմանն նմանեաց մատաղանդուածազգի մարդկութեանս՝ 'ի չարի հասակի գեղոյ՝ գեղեցիկ զաւեղն փայելուչ 'ի լերանանէ մեզ պարգեւեցեր : Ուստի զպատկեր նախահօրն 'ի քէն սուացեալ նորոգ հաստատեալ՝ դոհարանեմք ըզ-

սուրբ տիրամայրդ:

Ուրախացիր յողջոյն նախընծայ երկնային աւետաւորին՝ առմայր սրբափայլ. որ լուսով անճառնաւ ուռճացեալ լցար. և երկնաւոր մարմնով՝ երկնայնոյն աթոռ կազմեցար. և արեգակնայէս հոլովմամբ՝ առ արուսեակն երագ ընթացար: Վասն որոյ բացեալ զբերան պատաւոյն՝ ամլածին որդւոյն՝ օրհնէր զօրհնեալդ 'ի-

կանայս՝ սուրբ ածածին:

Այժ և դու լցեր զաւուրն զաջափայլ բարբառովըն գոհութեան. յօրինակ հանրական եկեղեցւոյ՝ որ է քո միշտ օրհնարան. զի երանեն ահեղ յայնմ հետէ քեզ ամ ազգք՝ ըստ բանի ած ընդզակից քում դաւանութեան. սկզբնարար կուսից անարատութե. 'ի բերկրեալ լեզուս շրթանց կուսարթնոց միշտ բարբառեալ սուրբ ածածին: Քանզի արդ եկեղեցի դասուց անդրանկաց՝ զ'իքէն մարմին 'ի բանէն անանջատ՝ համապատիհօր փառաւորէ յերկս սրբասացս. առ որ հպաւոր քո գոլով ահաւոր խորհրդոյդ տեսող՝ զանճառն ուրախութիւն յաւէտ վայելես: Զի զոր նորա թեւաբօղելով զինաց ծածկութիւ 'ի բացուստ անհարկեն, դու յաւէտ համարձակ նմին կաթնածիր մայր ցուցեալ ծանուցար. և 'ի մէջ զատատակաց ձևոց՝ որպէս զմանուկ զծերն հիւսուրց գզուանօք ընկալար. եղեալ կառք անճնաւոր կայից՝ բազմելոյն յաթոռ քրովբէից: Վասն զի ոչ ընդ քեզ միայն, այլև 'ի քեզ. ոչ

միայն փարեցաւ բաղմեալ, այլ և բնակեցաւ տաղա-
ւարեալ. ոչ միայն միացաւ 'ի զանգուած մարմնոյ,
այլ և մարդացաւ, առեալ զկերպարան 'ի քէն սկսե-
լոյ. ոչ միայն մի գտեցաւ քրիստոս յերկուց դրու-
թեց, այլ և ընկղմեցաւ յանապական անօսր էուին՝
մարմնոյն վերբերումն. ոչ միայն միջնորդաւ ան-
ձինն ընդ հողոյ միաւորեցաւ զիմակ տեսակօք,
այլ եռամասն խառնեալ էութեք՝ միաւորեցաւ անշ
փոթելի: Ո՛ր որդի մերովս բնութբ՝ յաթոռ հօրն
իւր աջոյ՝ յերկնաւորացն միշտ պաշտպանեցաւ:
Յաղագս որոյ և մեք երկրաւորքս՝ զմատակա-
րարդ և զպարսաւոր մեծս խորհրդոյ՝ երանեմք
բղձական երգօք զանժամանակն էութեան երջա-
նիկդ ծնօղ. որ զմին և ամենեցունց պատկառելին՝
հոգեշունչ երգօք 'ի քեզ ընկալար. ոչ 'ի մասնէ,
այլ 'ի լրութենէ. ոչ հատուածմբ, այլ հաստատու-
թեամբ. ոչ բաժանարար, այլ ամբողջապէս. ոչ
փոփոխմամբ, այլ փոխատրութեամբ. ոչ 'ի ծի-
րըս սահմանի տեղւոյ, այլ 'ի անեղանակ լայնատարր
ողւոյ: Քանզի զերրօղն 'ի կշիռ ձեռին զերկիր
և զերկինս՝ տարար յարգանդի. և ոչ միայն 'ի տես
նկատման աչաց նայեցար 'ի նա, այլ և շօշափմամբ
ձեռացդ ծանեար. ոչ միայն ողջունեալ զան-
հուպն շրթանց, այլ և ըմբռնեալ. ոչ միայն զըն-
նեալ զհասարակաշէն խորան մարդացեալ բա-
նին, այլ և անուանեալ կոչմամբ յիսուս քրիս-
տոսն այ. ոչ միայն սատամբքդ սնուցեր զանմա-

մանաւկն յաւա աւուրց , այլեւ անձամն հաստակերտ-
նոյն ընծայեցեր : Ո՜վ որ խոստովանիս հանրական
եկեղեցի զծնեալդ 'ի քէն՝ ած ճշմարիտ , ընդ նա-
խեղակ գոյակն միացեալ , 'ի տեսութէ իմաստից
քննութեան մեր փակեալ : Յորոյ տիպն ապա-
ցուցի խաբողն յակոբ՝ ըմբռնեաց զմարտուցեալն
ընդ իւր սնդապէս . եւ զանխուլ խորհրդով զած-
տեսեան անուն ընկալաւ : Այսպէս եւ որ 'ի քէն
ծնեալդ մարմին՝ 'ի յարգանդ սրբոյդ սեննէ՛
ընդ ած խառնեցաւ . եւ խաբեալ զեդումն մարդ-
կան թշնամին՝ մարմնով գերաղանց նմին բարձ-
րացաւ . վասն որոյ ոչ տեսօղ ած , այլ՝ ճշմարիտ
ած անուանեալ , զամենեսեան յիսրայէլ անուն
փոխադրեաց : Սակս որոյ լի բերանով զպաշտ-
պանդ փրկութեն այսմ մեծս խորհրդոյ՝ երանեմք
զխորուհրդ սուրբ ածածնին :

Որոյ անեղութեամբն ած՝ նախագիծ 'ի ծովէ քա-
րըն պատուական հրափայլ՝ եւ ազնուակ մարգար-
տին մաքուր կերպարան գոյացեալ ցուցաւ :
Քանզի արդարեւ՝ դու ես այն պատուական յաշ-
խարհի ծովէ ընտրութեան , որ զածային հր-
րոյն տարար կերպարան : Ո՞վ որքան մեծ է 'ի-
քեզդ աստուածեալ խորհուրդ՝ սրբուհի . զի թէ
տասանջք մարգարէից հոգեկիր յղացմամբ՝ ի-
րայէլի ծնօղդ աստյան . ապա դու որ զբանն ած
անձնաւոր՝ հայրենի բնութեանն հպաւոր՝ 'ի սե-
նեկի քում մաքրական՝ մարմնապէս բացած-

նուէրք, զո՞րպիսի արժանապատիւ գովութիւն ըն-
ընդունիցիս ։ Ո՛վ շնորհաշուք գեղով՝ տրփաւոր
ծածկութիւ՝ յանմատոյց գեղեցկութեան պաճոյճ
փաղփաղեալ . ո՛վ համեստ հեզութի խոնարհ ան-
բծութեան կերպասիւք լուսոյ 'ի հոգւոյն սրբա-
քօղեցեալ . ո՛վ զարդուք երկնայնովք ոսկեղօծ
սրբութեան, արծաթափայլ մաքրութեան , ականակապ
պսակ քեզ փառաց զարմանալեացն հովանի 'ի գլուխ
ընկալեալ . ո՛վ քառեակ մաննեաւ նշուլափայլ
մաքուր ուլանցն յեւմամբ՝ այս հոգւոյն և մարմնոյ
խառնմամբ 'ի մի էութիւն երկուն հիւսմամբ 'ի յորդ-
ւոյն՝ լանջք սի քո շնորհօք առլցեալ ։

Օրհնեալդ միայն 'ի կանայս՝ շնթամբք քահա-
նայուհւոյ մօր մարգարէին յովհաննու փառա-
ւոր. և 'ի դասուց համազարմ նմանացեալցս՝ ցան-
կալի երգօք ներբողականս տաւղօք ։ Ո՛վ թէ բա-
նականս մարդոյ գոյութիւն՝ 'ի պատկեր այս 'ի-
մկղքանն ստեղծաւ , և այսր աղագաւ ստեղծո-
ղին զշնորհս կալաւ . ապա և առաւել քեզ պար-
տականս եմք երկրպագութեամբ ունել շնորհ ան-
բաւմայր . որ այս 'ի ծառայի կերպարան ստեղծման
եղեր պատճառ . առ որ 'ի լրումն աւարտման՝
մարգարէական կտակն հասանիւր . այն զոր ասէ,
եղիցի 'ի վերայ առն ձեռն քո , և աջ քո 'ի վերայ
որդւոյ մարդոյ 'ի քեզ խոստովանելոյ ։ Որ և կա-
րողութիւնն և բազուկն հօր միածինն 'ի քեզ
հանգուցեալ , և զամ որդիս մարդկան՝ վկայս -

և երկրպագուս իւր զօրացուցեալ ։ Այսմ նկարագրի՝ և կերպարանն հօր դրութեան ՚ի քեզ բնակելոյն՝ սրբութիւն և արդարութիւն լրման աշխարհի ընծայեաց ։ Ապա յիրաւի արժանապէս հոգեշարժ քնարիւք դքեզ բարեհամբաւեմք

սուրբ ածածին ։

Ո՜ մարդկային զարմ՝ հրեշտակ երկնային ։ յեղծականաց սեռիցս՝ անմահ սերովբէ ։ ՚ի հողային նիւթոյ՝ ոսկի սափորայ ։ ՚ի ծովային բերմանց՝ շնորհալոյս մարգարիտ ։ ՚ի յեսեանն բուսոյ՝ քաղցր բարապտուղ ծաղիկ ։ ՚ի հաւուց նախնեացն՝ ծիլ օրհնութեան ։ ցօղոյն հանգարարի՝ ամպ անձրեւաբեր ։ արեւուն ծագման՝ ակն արփիափայլ ։ մերկացելոյ այգոյն՝ սաստ առաւօտի ։ գիշերային մթոյն՝ խափանակ բերկրանաց ։ օրինի ստուերին՝ տառ ճշմարտածնու ։ Սակս որոյ երր զնիւթ գործօնեայ այսքաննեաց բարեաց օրհնեալ ես դու ՚ի կանայս ։ նախաստեղծին մերկացելոյ՝ փառք անկապտելի ։ վշտացելոյ անիծապարտ մօրն՝ սփոփիչ քաւութեան ։ որդւոց նոցին խռովութե՝ խաղաղութեան ձայնատու ։ Իսկ արդ՝ ո՞ր բան բաղդատելով զանհամեմատ քո մեծութիւդ լեզու կարօղ գերահռչակել ։ արարչին մայր ։ անհասին ծնող ։ անբաւին դրկարան ։ ամենակալին յանձանձիչ ։ փառապարգողին զգեցուցիչ ։ վերօրհնելոյն գրկիչ ։ Ահա յաղագս այսորիկ ըստ անսուտ քոյ բանի՝ յիրաւի տացուք քեզ երանի

մայրդ քրիստոսի: Ընկերհելն ղիտամամբ լուսալից աչօք նկատեալ տեսակ. կառակ մակաղին, անեղծ պայմանաւ արձան հաստատեալ. սահման յարակայ՝ մեծութեն կցորդութեան. երկուց միութեանն անայլայլականի՝ կառ պատկանակիր. վեհին պատկեր կերպիւ կշռորդեալ. թեթև պարզութիւն հիւթիւ բաղկացեալ. տառ սարբերական, տողիւ ձևացեալ. տումար անջնջալի, անախալ դրոշմեալ. մատեան մեծութե, շնորհիւ նկարեալ. նաւակ ընտրութե, բանիւք բարդեցեալ. արձան անձնական, իմաստիւք զօդեալ. կնիք մատանւոյ, տերամբ կերպագրեալ: Օգնեալ լուսանիւթ, երկնից արքային. օթոց սրբութեան, անմահ բնակողին. յարկ վայելչութեան, անեղ շինողին. ատիթ մարդկութե, բանի անեղին. գործի մարմնութեան, վեհին բնութեան, պատճառ պատշաճից, անպատկառ ծննութեանց. օրինակ ուղղութեան, անայլայլակ վկայութե. անպակաս անձնութի, լրման թերութեան. խաւուհի երկնային, կենդանեաց դաւառին. մանանկից շնորհընկալ, հայրական գթութեանն. անպարտակերն աղաչութեան, երկնից վերատին. անժամանակն արդանդի ծանուցող ծննդեան:

Դու ըշօրն լուսոյ զորդի հարազատ՝ 'ի ստորինըս կոյս աշխարհի՝ մայրենի կաթամբ ջամբեալ դիեցուցեր. և որպէս թևովք խնայական պաշ-

պանութեամբ զպարունակօղն պարփակեցեր ։ Դու զկենցաղոյս ընթացս՝ ընդ լուսազարդ կենացն շաւիղ ձգեցեր. և ըստ նմանութեան արագման օդային թռչնոյ՝ 'ի յանցաւորաց աստի փոխեցար. և 'ի մէջ դասուց հրեշտակաց՝ ունօղ ծայ յայտնեալ ծանուցար։ Դու լուսարփի ամպով առ 'ինոցանէ պատուեալ համբարձար. և հողեղէն հաստուած՝ 'ի քերովբէից աղէ հանդուցար. և 'ի կանանց աղանցն կերպից՝ արուսեկին տեսակատեսար. և զննելի բնութեամբ մարդկայնոյ՝ յանձառաշնորհ խորհուրդ ծածկեցար. և 'ի ստեղծողէն քո և համայնից՝ հպատակօրէն ձեռօք պաշտեցար. և հաստողին ծառաց աշխարհի՝ մայր օրինակ անուամբ ձայնեցար. և մեղուցելոյ կնոջըն առաջնոյ՝ առանց յանցանաց զաւակ գովեցար. և ծով անբծաց ընտրութեան՝ պսակ սրբութեան դու. դաւանեցար. և իբրեւ զհանդարտ երինջ անարատ՝ արարչաւանդ լծոյն մատուցար. և իբր յաւանակ կամաց անբանին՝ ծնութեանն հեծեալեցար. և 'ի խորոց ծովէ աշխարհի՝ շուշանակեան շաւղօք ամբարձար. և իբր 'ի դժնեայ փըշոց խստութեանց յաշխարհիս զբաղմանց ծաղկեցար. և իբր 'ի դառն արմատոյ երկրի՝ քաղցրաճաշակ պտուղ յայտնեցար. և երրորդութեան անտես թաքնութեան՝ խորհրդակից սիրոյ կոչեցար. և ծածուկ հաւատոյն բանին՝ իբր լուսատու ձորձով պատեցար. և անբաւ էին տէրութեան՝ սահ-

մամն սկսման վերականգնեցար. և 'ի սրբասնեալ միջոց քո ստեանց՝ զանկէտն 'ի տաշխին ծրար թափուցեր. և 'ի կուսական քում բարունակէ՝ զանմահարարն ողկոյզ հասուցեր. և միջնորդ կենաց երկոցունց՝ սքանչելապէս համարձակեցար. և համօրէն 'ի խաղաղութի՝ մրրկածուփ շարժմանց կացուցեր. և խրախակից վերնոյն բարձրութեան անկապտելի անուամբ պատուեցար:

Արդ՝ յայսքանս, և 'ի սոյնպիսիս, և յես ընտրելական երգս բանահիւսից գերահռչակեալ ես. վսեմական փառուց նախընթաց և յառաջաշաւիղ սուրբ ածածին: Ան զի որպէս երևալն 'ի քէն միածին անդրանիկ՝ բնութեն հօր՝ սկիզբն առի հետևման խաշունակ մահակիր ծղանց. այսպէս երանեալդ և բարերանեալդ, գերօրինակ ցուցման տեսակի ածակրօն կարգաց ծաղեցար: Քև զանմառոյց հուրն կիզանօղ՝ անապական ծաքմամբ ծախեցար. քև զարագեալն 'ի թեւս օդային՝ 'ի քառընթաց կենդանիս տեսաք. քև զանկցորդն տեսականաց, 'ի մարդկային կերպ նկատեցաք. քև զգովեալ բարձօղն մեղաց, իբր զգառն ճաշակ ընկալաք. քև զատելոյն 'ի չարագործաց, որպէս ած ճշմարտի երկրպագեցաք. քև զանծանօթըն հօր էութիւն, ազգակցապէս օրհնաբանեցաք. քև զմուրհակ պարտուց անիծիցն, 'ի յաւազանին ջուր ընկղմեցաք. քև զանտէսն աչաց հրեշտակաց, տղայական տիոք գգուեցաք. քև

զանահման բանին բնութե՛, 'ի հասարակածին
ուղիղ համբուրեցաք. քեւ զԱդամն նոր հոգեղէն,
'ի չափ հասակի առաջնոյն տեսաք. քեւ զարեգակն
արդարութե՛ն, կենցաղակից մեր կցորդ ստացաք.
քեւ զանժամանակ բանին էութիւն, սկսեալ 'ի-
գաւթայ պատմեցաք. քեւ զանհամեմատն մար-
դոյ պատկերի, մեզ 'նմանատիպ գործով դրեցաք:
Արդ՝ այսքաննեաց սքանչական մասանցս ճառե-
ցելոց՝ դու միայնակ պատճառ՝ անպարտ կուսից
'նպատակ կրօնից՝ անրամայր սուրբ ածածին:
Քանզի թէ չէր 'ի քէն առնեալ ուղէշն երկնային,
ոչ էր պարգեւեալ զանճաշակելին 'ի շրթանցն
մեր հաղորդութե՛ի. եւ թէ չէր երեւեալ հօրն ար-
դարութիւն 'ի յերկնից, չե՛ էր սկսեալ ճշմար-
տութիւնն 'ի յերկրէ. եւ թէ չէր յղացեալ յան-
փորձականդ քումդ արգանդի, ոչ էր մարմնացեալ.
եւ թէ չէր յայտնեալ մերով բնութիս, ոչ էր շօ-
շափեալ եւ ըմբռնեալ անհասն իմաստից. եւ թէ
չէր կրեցեալ 'ի գիրկ բարձողաց հողեղէն բաղ-
կաց, ոչ էր ծանուցեալ. եւ թէ չէր համբուրեալ
երկրաւոր շրթամբք՝ ոչ էր ճառեցեալ. եւ թէ չէր
հնարեալ 'ի մարդկան ընթացս, ոչ էր քարոզեալ
էակն 'ի յէից. եւ թէ չէր թափեալ իւղն անա-
պական 'ի վէհաղունէն, ոչ էր զմեզ օծեալ. եւ
թէ չէր խառնեալ զմերս ընդ իւրումն, ոչ էր մե-
կրեալ. եւ թէ չէր խախտուսեալ մարդն 'ի յերկ-
նայնումն, ոչ եւս էր սրբեալ. եւ թէ չէր խառնար-

Հեռալ բարձրն 'ի յերկնային փառացն, ոչ եւ մի-բայել 'ի սատանայնոցս ամեհեայն :

Լայց մարմնոյս, որքան մարդկայս . նոյն եւ յայտնեցաւ, բառ որում ծանուցաւ . անճառաբանեցաւ, ու ամի փառաւորեցաւ . խեղ մարդկեցաւ, որպէս երգեցաւ . խեղ մկրտեցաւ, որ եւ մկրտեցաւ . նոյն խեղ պատուեցաւ, որպէս ձայնեցաւ . խեղ որնաձեկայաւ, որով ձախեցաւ . խեղ հնազանդեցաւ, որով պաշտեցաւ . երկրպագեցաւ, որով խոցեցաւ . խեղ կենդանացաւ, որով թաղեցաւ . խեղ պատուեցաւ, որով պատժեցաւ . խեղ անմահեցոյց, որով պատկառեաց . խեղ բերկրեցոյց, որով տրտմեցաւ . խեղ զգեցոյց, որով մերկացաւ . խեղ ողջացոյց, որով բեւեռեցաւ . խեղ կանգնեցաւ, որով վտանգեցաւ . եւ սպայաւ որպէս մկրտայլին, թաթաւ որպէս հրեղէն, ծածկեցաւ որպէս զանգըն, փախեաւ որպէս զանհառ, 'ի յամպս երկնից եւ գնայս, գալեցաւ որպէս մթածին, բառարարուխ կայլակօք նորհեաւ, անկեց մկրացն բոյով հարցաքննեցաւ, 'ի մեհեկ անման հրեշտակայն հաստատեցաւ . յաղթող մրցման եւ մարտի փառաւորեցաւ, զասաւոր արդարակշիռ յանձնայն աղղաց մերասպասեցաւ : Հանդէս 'ի քեն հիմնադրեալ զսկիզբն մարդկութեան անեղն խոհութիւն . եւ յլնորեալ անպատում ճոխհէ գայր ամենայն անխոխա-

՚նորգելի պարգեւական ձիրս ընկալար . և քեւ ամենայն այս պատրաստութիւն բարերարութեան բազմերանեան յուսոյ հրճուանաց մեզ հանդերձեցաւ : Զի՛ զամենայն փառս երանական լուսոյ նշուլեց վերնոյ և ՚ներքնոյ ծածուկ խորհրդոյ բազմազգեստ պայծառ յօրինման նոր պարածոց անճառ շինուածոյ սուրբ եկեղեցւոյ, ՚ի քէն ծնեցելոյ կերպիւ մերոյ և բարձրացելոյ անուանն Յիսուսի ծնկովք կրկնելովք մատուցանեմք : Սուրբ և քեզ բերկրեցելոյդ զսփոբականն օրհնաբանութիւն բանիս երկրորդեմք :

Օրհնեալ ես դու ՚ի կանայս , գլուխ նոցին պանծանաց , և պայծառ պսակ : Պսակ կուսութեան մաքուր հարսնութեան , պսակ ընտրութեան անփորձ դալարութեան , պսակ անեղծութեան , լուսոյ նմանութեան , պսակ շնորհանորդ էին ծնելութեան , պսակ երանական բանին հօր մայրութեան , պսակ սուրբ պանծանաց կենացն բարձրութեան , պսակ պայծառափառ վարուց իմաստութեան , պսակ անդրապատուաստ երկնահանճարն գիտութեան , պըսակ պետականն եկեղեցւոյ գեղեցկութեան , պսակ պաշտելութեան Սիօնի նորոյ զարդարման , պսակ յօբնանկար յարփից եօթանց փայլատակման , պսակ առաջնորդական վերնոցն ազգակցութեան , պսակ անբծութեան շաւղացն արդարութեան :

Արդ ամենեցուն փերակարգելոց Թուղթս այ-տոցիկ բնակարան բաղձալի , և երանելի , և ըն-դունարան ընտրական կամաց անուանի զքեզ խոստովանիմք երկրաւոր ծնունդքս ստորաստեղ-ծական Ադամայ . որոց անհամար և անթի-ալանց ամբական և պաշտպանական պարիսպ կա-ռուցար : Քանզի յարժանահայց և յամենա-զօր քոյ բարեխօսութիւնդ միշտ ապաւինեալ մնամք ՚ի հաստատութեան, խնամեալք և հան-գուցեալք ընդ հովանեաւ պաշտպանութեան ա-մուր պատուարի սուրբ աստուածածնիդ : Պատ-ուար ողճնայօրէն ՚ի զանազան մաքրապարդ ա-կանց յարմարեալ . պատուար հրապարփակ ան-մատոյց ընդդիմաղացն հինից . պատուար բոցա-նշոյլ անհուպ և անհաս մատուցման գժնեայ դժողաց . պատուար ամենահրաշ ըստ Եզեկի-էլի , որ աղխեալ դրան քո ճշմարտապատումն գրեաց . պատուար շրջապարփակ ըստ Դաւ-թայ , որոյ հիմն անշարժութեան ՚ի բարձրե-լոյն հաստատեցաւ . պատուար ամրակառոյց քաղաքին մերոյ ըստ Պօղոսի որում՝ զհանու-րըս բնակիչս արարեր : Քանզի զաստուած ծը-նար ՚ի մարմնի , և զծնունդս մարմնաւոր Ադա-մայ որդիս արարեր վերնումն հօգեւորի : Այ-լոյ ադաղաւ օրհնեցաւ արդարդ քո կուսութիւն ՚ի շրթունս նոցին , և խոստովանեցար յամենե-

ցուց մարմնարան և տաճար հօր խնկակցին ։

Որով արդարապէս 'ի քեզ ընծայեալ զբան պատմողին, եղեր մեր օգնական և տուն ապաւինի յուղխից հեղեղաց յաւուր անձկութեան. մաքրութիւն կուսից և սկզբնաշաւիղ դասուց երջանկաց, մայր հիմնադրութեան հաստատութեան եկեղեցւոյ, և ծնող անարատ բանին աստուծոյ ։ Զքեզ յաւէտ օրհնութեամբ միշտ պսակեմք 'ի նուիրեալ տեղիս սրբութեան քում տաճարի, և 'ի թևս պահպանութեան լայնատարած քում մաղթանաց ապաւինելով, ըզձեռս մեր 'ի սմա տարածեմք. և աներկբայ յուսով հաւատամք ապրիլ ։ Արդ աղաչեմք ընկալ զերգարան օրհնութիւն մերում լեզուի. և հաճեալ տացես սմա զձիրս շնորհաց Սիովնի և Բեթղեհեմի ։ Ուստի արժանացուք ընդունել մասն փրկութեան յաւուր գալստեան մեծի յայտնութեան փառաց անեղծի, փրկչին անմահի քում միածնի, միոյն աստուծոյ, տեառն Յիսուսի ։ Եւ երբ զպատճառ սկզբնաշաւիղ այսքանեաց բարեաց՝ 'ի սոյն կամարի գեղապճնելոյ զքեզ պատուեսցուք, անաժամանակ էին բարձրացեալ ծնող ։

Նորին վերստին ի վերայ գրոյ անուան իւրոյ:

ԳԵՐԱԶԱՆՑ չափոյ կշռման երկրային բնութեան, և քրովբէականն նախագասութեան եղեալ մեծական. սրբուհի պայծառ առագաստ փրկչին Քրիստոսի, և նորուն իսկ տեսաւորիչ մասն մեր. ծունր կրկնեսցի արժանապատիւ քումդ պատկերի. հայցեմք մասն մեր առ ծնեալդ 'ի քէն աստուած 'ի մարմնի:

Րոպէից յօգնաթիւ մասանց բերկրութիւն, ազգաց և ազանց արմատ օրհնութեան. 'ի ծագմանէ փառացն երկնայնոց անստուեր նշոյլ տարփալի շողեալ 'ի ստորինս տեղի. անորիշ հպմամբ մերձաւոր անմատոյց լուսոյ, անճառ խոստմամբ ապառնեացն յուսոյ 'ի մահու պարտեացն զերծո զառ քեզ ապաստան ծառայքս քումդ որդւոյ:

Ի յեկրաւոր նիւթոյ մարմնաւոր փառուցն՝ երկնայնոցն կրօնից եղեր հպաւոր, Մարիամ առիթ տեսութեան նոցին զանզնին որդւոյն կերպարան: Սաստի տեսին զանկէտն սկսեալ, և երանեցին զարմաց և զպատճառ. յորմէ և մեք հայցեմք զնորոգութիւն կենաց, և պաշտպան զտիրամօրդ ձեռնտուութիւն:

Գլխաւորեալ այսօր 'ի քեզ զիմանալին փարթամ մեծութիւն. որ սլացեալ հասեր 'ի բարձունս երկնից, իբր անընդունակ ապականութեան և մահու լուծման մարմին, յորմէ պատկառեաց ամօթով պարտիքն մահու. և ցուցար բնակիչ արժանապատիւ

կենդանեաց երկրին՝ տեառնդ կենակից սուրբդ տիրամայր · արգահատեա միշտ զողորմութիւն որոց պանդխտիմք 'ի վիհս ներքին ։

Անող հրճուանաց անթիւ խրախութեանց աստուածային անկէտն խոստմանց 'ի բուրաստանս անդաստանաց տիրական տնկոյն, որոյ առեղունք շառաւիղացն երկրային հնարից գերազանց · անդր մուծցես զքո դաւանողքս, սուրբ տիրուհի մայրդ Յիսուսի ։

Բառնեմք 'ի քէն աղերսիւ բանի, որ ես քաղցրալուր դրաւ աշխարհի · միայն երանեալ և բարերանեալ, հօրն համութեամբ հովանաւորեալ · որդւոյն ծնող, հոգւոյն վերընդունող, Երրորդութեան փառացն տարող · վերանկարեա զառ յաւազանէն անախտ արգանդէ զկարդացեալս անուն 'ի գիր մատեանի վերնում դպրոցին ։ Եւ զերգագրութիւն սակաւամանեայ այսր գովեստի՝ արձան հաստատեա միշտ անկործան սրբոյդ առաջի · ընծայեալ մարմնոյս զմրաշարս գիծ. և զգայական շնչոյս զպատկեր բանիս · Զի իբր 'ի դոյից երկուց զուգելոց 'ի մի խառնութիւն միոյ կենդանւոյ, միշտ փառաւորեսցիս դու սովին օրհնութեամբ, որպէս անեղծ պաշտօնէիցդ օրհնաբանութեամբ ։ Թերեւս 'ի ձեռն զօրեղ քոյին հայցուածոց լիցի մեզ անդատապարտ համարձակութիւն յատենի մեծ և ահաւոր սուրբ դատաւորին ։ Եւ գտցուք արժանի անբիծ վարուք, և ուղիղ դաւանութեամբ՝ հաւատոցն հաստատութեամբ հանդիպիլ և անդանօր ընծայիւք բանից քումդ երանութեան · փառաւորել ընդ քեզ և ընդ քոյին յան-

դիմաւ դիմաց պաշտելի և պանծելի քում աստուածային և լուսանշոյլ մեծ պայծառութեանդ գեղեցկութիւն անքակ և անքննելի սուրբ Երրորդութեանն 'ի միում տէրութեան և արարչութեան : Որում վայելչական պատիւ, և գովեստ անդադար երգոց այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Համառօտութիւն աղօթից եռամեծի եւ քաջ վարդապետի Մխիթարայ գոշի խստակրօն ճգնաւորի եւ քանիբուն ճռետորի ասացեալ ի սուրբ Պատարագին :

Տէր աստուած իմ Յիսուս Քրիստոս բան Հօր և կերպարան, կենդանի և կենդանարար, լոյս և փրկութիւն ամենեցուն որ կարդան առ քեզ : Որ շնորհես առաւել քան զարժանն, և տաս խնդրողացն զպիտոյս կարեաց : Ո՜վ ոչ միայն արարեր և ստացար 'ի վերստին յանցանելն մեր՝ չարչարանօք խաչի քո, այլև միշտ զքեզ ետուր փրկանս կենաց մարդկան : Վասն որոյ մեծ եղեւ մինչեւ յերկինս ողորմութիւն քո, և յամենայն երկրի ցուցաւ փառք քո : Եւ այնքան գերազանցեաց պարգեւաց քոց նշանակ, մինչ զի ոչ միայն մարդկայինս հիանան ազգք, այլ և երկնային զօրքն և առաւել մերձաւորքն . ընդ որս սովորեալ փառաւորեն անլռելի ձայնիւ ասելով, սուրբ՝ սուրբ՝ սուրբ՝ տէր զօրութեանց . զորս և ուսեալ մեր՝ երգեմք 'ի ժամ անմահին զենման՝ կցորդելով անմարմնոցն երգանկայ :

Ո՜վ զառ մեզ զանճառն տեսանելով զխորհուրդ

զօրինակ մահուն ճշմարտի, ընդ մեր եղեալ մարդկապէս ընդ մեզ եղանակեն զերգս օրհնութեան ։ Ո՜վ եթէ զօրինակն անգիտմնան փոխասանութեան՝ միայն զսուրբն կարդան զանուն, ուստի զերեսն ծածկեն և զոտն. մեք զո՞ր ասասցուք զօրհնութիւն և զգովութիւն, բայց միայն զ.քեզ օրհնեսցուք սաստիւմամբ, և հաւատովք մերձեսցուք յանտեսանելիդ և 'ի տեսանելիդ անճառութիւն ։

Օրհնեմք զհայր՝ զառաքող փրկողին ։

Օրհնեմք և զհոգին սուրբ՝ զկատարիչ և զսրբիչ զգալւոյն օրինակի ։

Օրհնեմք զանիմանալի զ.քո խոնարհութիւնդ ։

Օրհնեմք և զմեծ քո քաղցրութեան կամսդ ։

Օրհնեմք՝ որ զկենդանարար մարմին և զարիւն քո սուրբ շնորհեցեր մեզ 'ի քաւութիւն ։

Օրհնեմք՝ որ հուր աստուածութեան քոյ՝ ոչ կիզու զբնութիւնս հողեղէն ։

Օրհնեմք՝ զոր ոչ տանէին երկինք ամենայն, այլ տանին նիւթական և նուաստական եկեղեցիք ։

Օրհնեմք՝ որ նստիս 'ի քերովբէս, և բազմիս 'ի սեղան սրբութեան ։

Օրհնեմք՝ զոր ոչ ունին երկինք վերին՝ և իննեակ դասք անմարմնոցն, բառնում մատունք քահանայից ։

Օրհնեմք՝ զոր և սերովբէն ունելեօք մատուցանէր 'ի բերան մարգարէին. իսկ աստ ձեռամբ բաշխի հողեղինաց և մատամբ մատչի ճաշակողաց ։

Օրհնեմք՝ որ ոչ դարձի յաղտեղութենէ մարմնական կրից, այլ մաքրես սրբութեամբ քով ։

Օրհնեմք՝ որ զպէսպէս յանցանսն անտես առնես

զազգի մարդկան՝ որք հաւատով ապաւինին 'ի քեզ ։
Օրհնեմք՝ որ միջնորդութեամբ կենարար մարմնոյ և արեան քոյ՝ հաշտեցուցանես զհայր քո ընդ օտարացեալս մեղօք , տալով մձիս անտեղի , ոչ ուտողացն և ոչ ըմպողացն ոչ ունել կեանս , և ուտողացն և ըմպողացն զբնակիլն 'ի քեզ , և զքեզ 'ի նոսա ։

Քանզի տիրապէս մարմին և արիւն քո սուրբ կատարեալ արձակումն է և ազատութիւն 'ի կապանաց մեղաց ։

Օ՜ք եթէ սուրբք ամենայն առ հասարակ յիշէին , և քոյոցդ բարեաց կարօտին , զկա՞րդ և ոչ ես անկեալս 'ի շնորհաց և ունայնս 'ի բարեզարդութեանց։

Օ՜ք եթէ այժմ ոչ ողորմիս , յորում բացեալ ես զդուռն անճառ ձրից , երբ տայցես յայլում ժամու . քանզի անվրէպ յայսմ ժամու է առնուլ 'ի քէն զխնդիրս , որպէս և սուրբք 'ի քաղցրութեան ժամանակի ։

Օ՜ք եթէ յորժամ ընդհանուր երկինք և երկիր առ հասարակ բարեխօսեն՝ ոչ լսես , այլ յորում ժամու զամենեսեան ժողովեսցիս ։

Օ՜ք եթէ մինչ հիանան անմարմնոցն դասք ընդ առատութիւն պարգևաց քոց , և զօրհնութիւնս մատուցանեն , ոչ առնուս . յորժամ 'ի կշիռ դնես՝ զկա՞րդ ընկալայց ։

Օ՜ք եթէ յորժամ դասք հրանիւթիցն գոչեն սուրբով՝ ողորմեա քո արարածոց , մասն ինձ ոչ տացի . ընդ որո՞ց այլոց առից ։

Աղաչեմ զքեզ տէր , մի՛ ունայն դարձուցանէր զիս

յամենասուրբ Երեսաց քոց, անչափ պարգեւացդ իշխան։

Յորժամ յարդեալ է իբրեւ զգեստ 'ի լրութենէ ծովու մեծիդ պարգեւօք, ուստի եւ ինձ կաթիլ մի բաւական է. զի սակաւն քո անչափ ունի մեծութիւն, եւ առաւելեալ է քան զխորս ծովու։

Ո՜վ եթէ 'ի ծագիլ լուսոյ արեգականդ ոչ լուսաւորիմ, 'ի գիշերի որպէս պայծառացայց։

Իսկ եթէ ձրի բժիշկդ մերձ ես՝ եւ զցեղդ կենաց ոչ տացես, այլ ո՞ւր գտից բժիշկ զի բժշկեցայց։

Եթէ յարուցեալդ պատահեալ մեռանիմ, եւ ո՞ զիս յարուսցէ։

Եթէ բնութեամբ ճոխացուցիչդ զաղքատութիւնս ոչ բարձցես, առ այլ ո՞վ երթայց 'ի փարթամաց։

Ընդ խաղաղութեան աշխարհիս զոր շնորհես, տուր եւ ինձ խաղաղութիւն յամբոխից կրից. ընդ հաստատութեան եկեղեցւոյ՝ հաստատեա եւ զշարժեալ անձինս։

Ընդ քահանայապետաց եւ քահանայից՝ սարկաւագաց եւ դպրաց՝ եւ ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ պահպանութեան, զօրութեամբ քո եւ զիս ընդ հովանեաւ քով ամրացո։

Ընդ թագաւորաց եւ իշխանաց՝ զօրավարաց եւ զօրականաց յաղթող եւ զիս 'ի վերայ աներեւոյթ թշնամւոյն արասցես։

Ընդ ննջեցելոցն հաւատացելոց յիշեա եւ զիս տէր զմեռեալս մեղօք. զորս 'ի խորոցն հաներ անդնդոց, ընդ նոսին հան եւ զիս 'ի չարին բանդէ՝ միջնորդութեամբ կենարար մարմնոյ քոյ եւ արեան, արժանա-

պէս գոհանալ զողորմութենէ քումմէ ։

Գոհանամ զքեն Տէր՝ որ արժանի արարեր զիս տեսլեան սուրբ խորհրդոյ քոյ ։

Գոհանամ՝ զի զսոսկալին և զահաւորն լուայց զօրհնութեան ։

Գոհանամ՝ զի զաստուածախօսութիւն քո լսել արժանացայ ։

Գոհանամ՝ որ զհոգիս յուսով լցեր, և զսիրտս ուրախութեամբ ։

Ո՞ր օրհնութիւն կամ գոհութիւն քեզ մատուցանեմ՝ աստուած իմ Յիսուս, զի արժանի եղէ կենաց հացիդ և անմահարար բաժակիդ ։
Գիտեմ զի չար է ինձ մերձենալն չարեօք, և տարակուսանք հեռանալն. մանաւանդ զի անսուտ սահմանեցեր, եթէ որ ոչ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, կեանս ոչ ունիցի յանձին իւրում ։
Ահա յայտնապէս խոստովանիմ, զի ես մեղաւոր եմ, և քեզ է յարուցանելն. զի փառաւորեսցից զքեզ ընդ հօր քում ամենազօրի, և ընդ ամենասուրբ հոգւոյդ ճշմարտի, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն ,

Ամենակալ ամենախնամ աստուած՝ յամենայնի օրհնեալ. որ յամենայնի ես և ամենեցուն անհաս՝ և բովանդակեալ պահես զամենայն արարած՝ զհոգեղէնս և զհողեղէնս, զաննիւթս և զնիւթեղէնս. զի մահկանացուաց կեանք ես և անմահութեան յարամնացութիւն ։ Բաց զդուռն ողորմութեան քոյ՝ գթած, և ծագեա լոյս խաւարելոյս ։ Ո՛ ծանրացեալս բեռամբք մեղաց՝ թեթեւացո. զսեւացեալս ազ-

տեղեաւ կրից՝ ապխտակացս. զսառուցեալս յաս-տուածային սիրոյդ՝ ջերմացո. զմթացեալս անասնական սահեցմամբ՝ զգաստացո: Զըմբռնեալս 'ի ծուղակ որսողին՝ փրկեա և ազատեա. զմնրեալս 'ի ժանեաց կերչին՝ կորզեա և կենդագործեա, և զհոգիս խա-ւարեալ մեղօք՝ անձառ լուսով քով լուսաւորեա, և միշտ առ քեզ հայեցո: Զգերեալ խորհուրդս 'ի գերողէն՝ առ քեզ դարձո. զըմբռնեալ կամս 'ի խարդախողէն՝ զերծո. զյօժարութիւնս՝ քաղցրու-թեամբ 'ի քեզ միացո. զբանական մասն հոգւոյս՝ խոհեմացո. զսրտմտականն արիացո. զցանկականն ողջախոհացո, և առ քեզ դարձո. զերիս մասունս՝ արդարութեամբ ամրացո. զնսեմացեալ միտս՝ պայ-ծառացո:

Զներտամադրեալ ընութիւն բանիս՝ հոգւով քո խառնեա. զարտաբերեալս յօդուտ լեզուաց՝ շնոր-հօք քո նորոգեա. զզգայարանս կարկառման մտացս՝ առ քեզ հայեցո. զզգայութիւն պատուհանացս՝ ազդմամբ քո լցո: Տեսանելեացս՝ ցոյց զողորմու-թիւն քո. լսելեացս՝ լսելի արա զձայն քո. ճաշա-կելեացս՝ քաղցրասցին բանք քո. հոտոտելեացս՝ բուրեսցի հոտ կենաց քոց, միշտ առ քեզ պաղա-տիլ և աղաչել և երկիրպագանել՝ բաղխմամբ կըր-ծից, տարածմամբ ձեռաց, տատանմամբ մատանց, կականմամբ ձայնից, հառաչմամբ սրտից, հեծու-թեամբ ողբոց արտասուօք աչաց, յայտնութեամբ գաղտնեաց, խոստովանութեամբ մեղանաց, և 'ի քէն ընդունիլ թողութիւն սխալանաց, քաւութիւն յան-ցանաց, հանգիստ փառաց, և զուարճանալ տեսու-

թեամբ աչաց, և փայլել 'ի փառս երրեակ անձնաւորութեանդ յաւիտենից յաւիտեանս. ամէն։

---

### Տէր Առաքել վարդապետի ասացեալ ներբողեան ի սուրբ Գրիգոր Նարեկացին։

ՍՐՓԻԱԿԱՆ լոյս երկնային, Յիսուս Քրիստոս Հօր միածին, լցեր շնորհիւ քո անքնին, զսուրբ Գրիգոր Նարեկացին։

Ուղխեալ աղբիւր անհունական, անճառ հոգևոր աստուածական, մեղուցելոց լոյս փրկութեան, յանցաւորաց ազգի մարդկան,

Գանձ անսպառ անապական, աննիւթ նիւթով շարագրական, զի որք առնուն փարթամանան, շահով երկնից արքայութեան,

Դեղ խոցելոց 'ի բանսարկուէն, և անջատումն 'ի չար ախտէն, մեզ օգնական լինի և զէն, ընդդէմ այսոց նետաձգողէն,

Սքանչելի տէր սուրբ Գրիգոր, դուռըն բացեր մեզ հոգևոր, ուղղս ցուցեր մտաց բոլոր, բանիւ քոյին արդիւնաւոր։

Զարքայն երկնից աչօք տեսար, զհոգին աստուած սուրբ ընկալար, հօրըն լուսոյ ա՛ռ կազմեցար, յորթըն Քրիստոս պատուաստեցար։

Ի՛ն հրովըն մաքրեցար, անտես բոցովըն վառեցար, ընդ աստուծոյ խօսակցեցար, մեղուցելոց ցուցեր դու ճար։

Շնորհեալ ծաղիկս 'ի սուրբ գրոց, հաւաքեցեր 'ի
մի շարոց, դեղ կազմեցեր հիւանդ հոգւոց, պար-
գեւեցեր ձիր մարդկայնոց.

Թախանձանաց բանս լալագին, բարբառեցար դու
'ի խորին, խորտակեցեր զժանիս չարին, զգլուաց գըն-
դին Լէգէօնին:

Ժամանակաւ յետին ցուցար, քան զառաջինսըն պա-
տուեցար, յերեկոյիս լոյս ծագեցար. քան զմիջօր-
եայ պայծառացար:

Իմաստութեամբ քո անքնին. անլիծ վարուքդ իսկ
'ի մարմին, եղեր պարծանք տանս Արամին, ասքա-
նազեան Հայկ արմենին:

Լուսաւորչին համանըման, Գրիգորիոս արթուն ան-
ուան, զի որք նմաւ 'ի լոյս դարձան, եւ առա-
ւել քեւ ցնծացան:

Խաչեալ մարմնով ընդ Քրիստոսի, զօրհանապազ
միշտ յաղօթի, Գրիգորիոս լոյս գերարփի, լուսա-
ւորիչ մեզ 'ի հոգի:

Ծաղիկ յաշնան ժամ յայտնեցար, անմահութեան
հոտ բուրեցար, Գրիգորիոս ծառ ծաղկեցար, պըտ-
ուղ կենաց պարգեւեցար:

Կեանք մեղուցեալ մարդկան ցուցեր, յուսահատից
յոյս կանգնեցեր, Գրիգորիոս բանս երգեցեր, յան-
ցաւորաց կանոնս եդեր:

Հաղբըն չարին անխըղճելի, որ ընդ մարդկան պա-
տուտեսցի, Գրիգորիոս սուր երկսայրի, սուրբ ա-
ղօթիւքդ խորտակի:

Ձայնիւ քոյին հըսկողական, սանդարամետքն աշխ
գողան, Գրիգորիոս դու անման, հողանիւթեայ

ընութեանս մարդկան ։

Լամբարափայլ ճաճանչ փառաց, 'ի գաւառին ռըշ-տունեաց, քան զարեգակն ընդ աստեղաց, նոյնպէս բան քո ընդ այլ կտակաց ։

Ճըրագ եդեալ յաշտանակի, ըստ հրամանի տեառն Յիսուսի, Գրիգորիս մարմնով յերկրի, հոգւով 'ի դասս հրեղէն գընդի ։

Աշտահոսան հոգւոյն անձաւ, յարմարեցեր բանին մեզ ճառ, Գրիգորիս մըտօք պայծառ, փարատեցեր զմեղաց մըրայլ ։

Յանեղ լուսոյդ լոյս կոչեցար, յաշտանակի մարմնոյդ եդար, եկեղեցւոյ ջահ վառեցար, խաւար հոգւոյ դու լուսարար ։

Նախանձաւոր հարանց վարուց, ճգնաւորաց նախնի դասուց, Գրիգորիս ցանկ խրատուց, բանս խօսեցար վասըն նոցունց ։

Ճառաւիղօք բարունական, առեր շնորհս և զաւազան, քարոզ լինել որդւոց մարդկան, կոխելով զօձն անդընդական ։

Սըրախանան յաւէժական, ազգըս Հայոց թորգոմական, յորժամ լսեն զքո խօսեալ բան, որ դեղ կենաց է փրկութեան ։

Զարին յաղթեմք քոյին երգով, և զնա ուժգին խոցոտելով, զըսպիս մեղաց մեր մաքրելով, քաղցրանուագ այսու դեղով ։

Պարուց վերինցըն հրակերպեան, եղեր մարմնով համանըման, Գրիգորիս կանգնեալ արձան, ռըշտունեաց ծովն յանդիման ։

Ցնծեալ 'ի մէնջ զաղտս մեղաց, սուրբ աղօթիւք

քո յաղթկաց, Գրիգորիոս տեղ պանծանաց, ակըն լուսոյ Հայաստանեայց ։

Ուտելին կենաց մեզ կազմեցեր, առատապէս մեզ բաշխեցեր. Գրիգորիոս կոչ արարեր, զքաղցեալս Հոգւով կերակրեցեր ։

Սուրբ և մաքուր բանից քոյին, այլասեաց աղ-ցանկալին, եռափափաք սիրով եկին, և ծարաւեալ առեալ գնացին ։

Սքանչելեաց դու մխիթար, և նեղելոց անդորրարար, տէր սուրբ Գրիգոր Հայր բարերար, այսահարից դեղ և հընար ։

Տաղանդ շնորհաց զոր ընկալար, բազմապատիկ զայն շահեցար, Գրիգորիոս կատարեալ այր, աստուածութեանըն կամարար ։

Բամից սանդղեզին դու խօսակից, ճգնաւորաց աղօթակից, վարդապետաց Հանուրց վարժից, Գրիգորիոս պետ բաղձալից ։

Ընծան մանկունք սուրբ Հռոմայ, ընդ լուսակիր աղօթս քո, Գրիգորիոս դու սիւն լուսոյ, Հայաստանեայց եկեղեցւոյ ։

Հիւանդ Հոգւոցս մարդկային, բարեխօսեա տեառն Յիսուսին, սուրբ աղօթից քոց կցորդին, բանք տիրամօր աստուածածնին ։

Փայտըն կենաց սրբոյ խաչին, և ձայն սրբոյ Կարապետին, Ստեփաննոսին՝ սուրբ Գրիգորին ։ յոր-դեր լուսոյ զմեզ ծնողին ։

Քեւ ըզՔրիստոս փառաբանեմք, ընդ Հօր Հոգւով երկըրպագանեմք, Երրորդութեանն փառս վերերգեմք, աստուածութեանն մի դաւանեմք ։

# ԱՒԵՏԱՐԱՆՔ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի։

## ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն Գալիլեացւոց. ուսուցանէր ՚ի ժողովուրդս նոցա՝ եւ քարոզէր զաւետարանն արքայութեան, եւ բժշկէր զամենայն հիւանդութիւնս՝ եւ զամենայն ախտս ՚ի ժողովրդեանն։ Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն Ասորւոց, եւ մատուցին առ նա զամենայն հիւանդս՝ որ նեղեալ էին ՚ի պէսպէս ցաւս եւ ՚ի տանջանս, եւ զդիւահարս եւ զլուսնոտս եւ զանդամալոյծս, եւ բժշկեաց զնոսա։ Եւ երթային զհետ նորա ժողովուրդք բազումք ՚ի Գալիլեէ եւ ՚ի Դեկապոլեայ եւ յԵրուսաղեմէ եւ ՚ի Հրէաստանէ, եւ յայնկոյս Յորդանանու, եւ բժշկեաց զնոսա։

Եւ իբրեւ էջ ՚ի լեռնէ անտի, գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք։ Եւ ահա մատուցեալ բորոտ մի, երկիրպագանէր նմա, եւ ասէր. Տէր, եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել։ Ձգեաց զձեռն իւր եւ հասոյց ՚ի նա Յիսուս՝ եւ ասէ. կամիմ, սրբեաց. եւ վաղվաղակի սրբեցաւ ՚ի նմանէ բորոտութիւնն։ Եւ ասէ ցնա Յիսուս, զգոյշ լեր՝ մի ու-

մեք ասիցես. այլ երթ ցոյց զանձն քո քահանային. և մատո զպատարագն, զոր հրամայեաց Մովսէս, 'ի վկայութիւն նոցա :

Եւ մտեալ 'ի Կափառնաում, մատեաւ առ նա հարիւրապետ մի, աղաչէր զնա, և ասէր. տէր, մանուկ իմ անկեալ կայ 'ի տան անդամալոյծ՝ չարաչար տանջեալ : Ասէ ցնա Յիսուս. ես եկից՝ և բժշկեցից զնա : Պատասխանի ետ հարիւրապետն և ասէ. տէր, չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտցես. այլ ասա՛ բանիւ, և բժշկեսցի մանուկն իմ : Քանզի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինև զինուորս, ասեմ սմա երթ՝ և երթայ, և այլում թէ եկ՝ և գայ, և ծառայի իմում թէ արա զայս՝ և առնէ : Իբրև լուաւ Յիսուս՝ զարմացաւ, և ասէ ցայնոսիկ՝ որ ըզհետն երթային. ամէն ասեմ ձեզ՝ և ոչ յԻսրայէլի այսպիսի հաւատս գտի երբէք : Բայց ասեմ ձեզ, զի բազումք յարևելից և յարևմտից եկեսցեն՝ և բազմեսցին ընդ Աբրահամու և ընդ Իսահակայ՝ և ընդ Յակոբու յարքայութեան երկնից : Եւ որդիքն արքայութեան ելցեն 'ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճել ատամանց : Եւ ասէ Յիսուս ցհարիւրապետն. երթ, և որպէս հաւատացեր եղիցի քեզ. և ողջացաւ մանուկն նորա յաւուր յայնմիկ : Եւ եկեալ Յիսուս 'ի տուն Պետրոսի, ետես զի զոքանչ նորա անկեալ դնէր տապացեալ. կալաւ զձեռանէ նորա՝ և եթող զնա ջերմն. յառն եկաց՝ և պաշտէր զնոսա : Իբրև եղև երեկոյ՝ մատուցին առ նա դիւահարս բազումս, և եհան զայս-

սըն թանիւ. և զամենայն հիւանդսն բժշկեաց։ Զի լցցի բանն, որ ասացաւ ՚ի ձեռն Եսայեայ մարգարէի. նա զհիւանդութիւնս մեր վերացոյց, և զցաւս մեր եբարձ։ Եւ իբրև անց յանկոյս յերկիրն գերգեսացւոց, պատահեցին նմա դիւահարք երկու՝ ելեալք ՚ի գերեզմանացն, չարաչարք յոյժ. որպէս զի չէր հնար անցանել ումեք ընդ այն ճանապարհ։ Եւ ահա աղաղակեցին և ասեն. զի՞ կայ մեր և քո Յիսուս որդի աստուծոյ, եկիր տարաժամ տանջել զմեզ։ Եւ էր հեռագոյն ՚ի նոցանէ երամակ մի խոզից արօտական։ Եւ դեւքն աղաչէին զնա և ասէին. եթէ հանես զմեզ աստի, հրաման տուր մեզ երթալ յերամակ խոզիցն։ Եւ ասէ ցնոսա. երթայք. և նոքա ելեալ գնացին յերամակն խոզից. և դիմեաց ամենայն երամակն ՚ի դարէ անտի ՚ի ծով, և մեռան ՚ի ջուրսն։ Եւ խոզարածքն փախեան, և երթեալ ՚ի քաղաքն պատմեցին զամենայն, և զիրս դիւահարացն։ Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդառաջ Յիսուսի. իբրև տեսին զնա՝ աղաչեցին զի գնասցէ ՚ի սահմանաց նոցա։

Եւ մտեալ ՚ի նաւ անց յայնկոյս, և եկն ՚ի քաղաք իւր։ Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի, որ դնէր ՚ի մահիճս. և տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ ահա ոմանք ՚ի դպրացն ասեն ընդ միտս. հայհոյէ դա։ Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. ընդէ՞ր խորհիք դուք չարիս ՚ի սիրտս ձեր։ Զի՞նչ դիւրին է. ասե՞լ՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել, ա-

րի և շրջեաց ։ Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս . յայնժամ ասէ ցանդամալոյծն . արի՛ առ զմահիճս քո՛ և երթ 'ի տուն քո ։ Եւ յարուցեալ գնաց 'ի տուն իւր ։ Իբրև տեսին ժողովուրդքն , զարմացան և փառաւոր առնէին զաստուած զտուիչն այնպիսի իշխանութեան՝ մարդկան ։

Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա , ահա իշխան մի մատուցեալ երկիրպագանէր նմա՝ և ասէր . դուստր իմ արդ ևս վախճանեցաւ . այլ եկեալ դիցես զձեռն քո 'ի վերայ նորա՝ և կեցցէ ։ Յարեաւ Յիսուս՝ և գնաց զկնի նորա աշակերտօքն հանդերձ։ Եւ ահա կին մի տեռատես երկոտասանամեայ՝ մատուցեալ յետոյ մերձեցաւ 'ի դրօշակ հանդերձի նորա ։ Քանզի ասէր 'ի միտ իւրում , թէ միայն մերձենամ 'ի հանդերձս նորա՝ փրկիմ ։ Իսկ Յիսուս իբրև դարձաւ և ետես զնա՝ ասէ . քաջալերեաց դուստր , հաւատք քո կեցուցին զքեզ . և փրկեցաւ կինն 'ի ժամէն յայնմանէ ։ Իբրև եկն Յիսուս 'ի տուն իշխանին , և ետես զփողահարսն և ամբոխ յոյժ , ասէ ցնոսա . 'ի բաց գնացէք . զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ ։ Եւ ծաղր առնէին զնա ։ Եւ իբրև ել ամբոխն 'ի բաց , եմուտ՝ կալաւ զձեռանէ նորա , և յարեաւ աղջիկն ։ Եւ ել համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն ։

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս , զհետ եղեն նորա կոյրք երկու , աղաղակէին՝ և ասէին . ողորմեաց մեզ որդի Դաւթի ։ Եւ իբրև եկն 'ի տուն , մատեան առ նա կոյրքն . և ասէ ցնոսա Յի-

սուս. Հաւատայք՝ եթէ կարող եմ առնել ձեզ զայդ. ասեն ցնա՝ այո, տէր։ Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա՝ և ասէ. ըստ հաւատոյ ձերոց եղիցի ձեզ։ Եւ բացան աչք նոցա. և սաստեաց նոցա Յիսուս՝ և ասէ. զգոյշ կացէք՝ մի որ գիտասցէ։ Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն։ Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ նա այր մի համր դիւահար։ Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն. և զարմացան ժողովուրդքն՝ և ասեն. թէ և ոչ երբէք երեւեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի։ Իսկ փարիսեցիքն ասէին, թէ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս։

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս և ընդ գիւղս. ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա, և քարոզէր զաւետարանն արքայութեան. և բժշկէր զամենայն ախտս և զամենայն հիւանդութիւնս 'ի ժողովրդեանն։ Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ 'ի նոսա. զի էին աշխատեալք և ցրուեալք իբրեւ զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ։ Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր. հունձք բազում են՝ և մշակք սակաւ։ Արդ՝ աղաչեցէք զտէր հնձոց՝ զի հանցէ մշակս 'ի հունձս իւր։ Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն իւր, ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա, և բժշկել զամենայն ցաւս և զամենայն հիւանդութիւնս։

Եւ գնացեալ անտի Յիսուս եկն 'ի ժողովուրդն նոցա։ Եւ անդ էր այր մի որոյ ձեռն իւր գօսացեալ էր. հարցին ցնա՝ և ասեն, եթէ պարտ իցէ 'ի շաբաթու բժշկել. զի չարախօսեսցեն զնմանէ։

Եւ նա ասէ ցնոսա. ո՞վ է 'ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, և անկանիցի այն 'ի խորխորատ 'ի շաբաթու. միթէ ո՞չ ունիցի և յարուցանիցէ զնա. Իսկ արդ՝ ո՞րչափ ևս առաւել է մարդ քան զոչխար. ապա ուրեմն պարտ է 'ի շաբաթու բարիս գործել. Յայնժամ ասէ ցայրն. ձգեա զձեռն քո, և նա ձգեաց՝ և եղև ողջ իբրև զմիւսն. Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս խորհուրդ առին զնմանէ՝ թէ ո՞րպէս կորուսցեն զնա:

Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի կոյր և համր, և բժշկեաց զնա. որպէս զի համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ. Զարմացան ամենայն ժողովուրդքն՝ և ասէին. միթէ սա՞ իցէ Քրիստոսն որդի Դաւթի. Բայց փարիսեցիքն իբրև լուան՝ ասեն. ոչ իւիք հանէ դա զդևս՝ եթէ ոչ Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց:

Եւ ելեալ անտի Յիսուսի գնաց 'ի կողմանս Տիւրոսի և Սիդոնի: Եւ ահա կին մի քանանացի 'ի սահմանաց անտի նոյա ելեալ, աղաղակէր և ասէր. ողորմեայ ինձ, տէր, որդի Դաւթի, դուստր իմ չարաչար այսահարի. Եւ նա ոչ ետ նմա պատասխանի. և մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա և ասէին. արձակեա զնա զի աղաղակէ զհետ մեր. Նա պատասխանի ետ և ասէ. ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի. Եւ նա մատուցեալ երկիրպագանէր նմա և ասէր. տէր, օգնեա ինձ: Պատասխանի ետ նմա և ասէ. ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց: Եւ նա ասէ. այո, տէր, քանզի

և շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց ։ Յայնժամ պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. ով կին դու՝ մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս և կամիս ։ Եւ բժշկեցաւ դուստր նորա 'ի նմին ժամու ։

Եւ գնացեալ անտի Յիսուսի, եկն 'ի ծովեզրն գալիլեացւոց. և ելեալ 'ի լեառն նստէր անդ ։ Մատեան առ նա ժողովուրդք բազումք որ ունէին ընդ իւրեանս՝ կաղս կոյրս համերս միակողմանիս, և այլ բազումս. և ընկեցին զնոսա առ ոտս նորա՝ և բըժշկեաց զնոսա ։ Մինչև զարմանալ ժողովրդոցն՝ որ տեսանէին, զի համրքն խօսէին, կաղք գնային, միակողմանիք բժշկէին, կոյրք տեսանէին, և փառաւոր առնէին զաստուած Իսրայէլի ։

Եւ իբրև եկն 'ի ժողովուրդն, մատեաւ այր մի՝ 'ի ծունր իջանէր և ասէր. տէր, ողորմեաց որդւոյ իմում, զի լուսնոտի՝ և չարաչար հիւանդանայ. բազում անգամ անկանի 'ի հուր՝ և երբեք 'ի ջուր ։ Եւ մատուցի զնա աշակերտացն քոց՝ և ոչ կարացին բժշկել ։ Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ. ով ազգ անհաւատ և թիւր, մինչև ցե՞րբ իցեմ ընդ ձեզ՝ մինչև ցե՞րբ անսայցեմ ձեզ. ած զնա առիս և ածին զնա առ Յիսուս ։ Եւ սաստեաց զնա Յիսուս՝ և ել 'ի նմանէ դևն, և բժշկեցաւ մանուկն 'ի ժամէն յայնմանէ ։ Յայնժամ մատեան աշակերտքն առանձինն՝ և ասեն ցՅիսուս. մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա ։ Եւ նա ասէ ցնոսա. վասն թերահաւատութեան ձերոյ ։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ունիցիք հաւատս քան զհատն մանանխոյ, ա-

սասջիք լերինս այսմիկ՝ փոխեաց աստի անդր, եւ փոխեսցի, եւ ոչ ինչ անհնարին լինիցի ձեզ։ Բայց այս ազգ ոչ ելանէ՝ եթէ ոչ աղօթիւք եւ պահովք։

Եւ յելանելն նոցա յԵրիքովէ, գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք։ Եւ ահա կոյրք երկու նստէին առ ճանապարհաւն. իբրեւ լուան թէ Յիսուս անցանէ՝ աղաղակեցին եւ ասեն. ողորմեաց մեզ, Յիսուս, որդի Դաւթի։ Եւ ամբոխն սաստեաց նոցա՝ զի լռեսցեն. եւ նոքա եւս առաւել աղաղակէին եւ ասէին, տէր, ողորմեաց մեզ, որդի Դաւթի։ Օտեցի առ Յիսուս, կոչեաց զնոսա եւ ասէ. զի՞նչ կամիք՝ զի արարից ձեզ։ Ասեն ցնա. տէր, զի բացցին աչք մեր։ Եւ գթացեալ Յիսուս մերձեցաւ յաչս նոցա, եւ վաղվաղակի տեսին. եւ գնացին զհետ նորա։

## Սրբոյ Աւետարանին Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մարկոսի։

## ՏԵՐԱՄԲ ՄԵՐՈՎ. ՅԻՍՈՒՍԻՒ ՔՐԻՍՏՈՍԻՒ

Եւ մտանեն ՚ի Կափառնաում, եւ իսկ եւ իսկ ՚ի շաբաթուն մտեալ ՚ի ժողովուրդն, ուսուցանէր ըզ նոսա։ Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի ուսուցանէր զնոսա իբրեւ իշխանութեամբ՝ եւ ոչ որպէս դպիրքն։ Եւ էր ՚ի ժողովրդեանն նոցա այր մի, յորում այս պիղծ դոյր ՚ի նմա. որ աղաղակեաց՝ եւ ասէ։ Թո՛յլ տուր, զի՞ կայ մեր եւ քո՝ Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ.

գիտեմք զքեզ՝ ով ես սուրբդ Աստուծոյ։ Սաստեաց 'ի նա Յիսուս և ասէ, կարկեաց և ել 'ի դմանէ։ Եւ զարկոյց զնա այսն պիղծ և աղաղակեաց 'ի ձայն մեծ., և ել 'ի նմանէ։ Եւ զարմացան ամենեքին, մինչև հծծել ընդ միմեանս՝ և ասել. զի՞նչ է այս նոր վարդապետութիւն, զի իշխանութեամբ և այսոց պղծոց սաստէ՝ և հնազանդին սոմա։ Եւ ել լուր նորա ընդ ամենայն կողմն գալիլեացւոց։

Եւ վաղվաղակի ելեալ 'ի ժողովրդենէն, եկն 'ի տուն Սիմոնի և Անդրեայ՝ Յակոբու և Յովհաննու հանդերձ։ Եւ զզօքանչ Սիմոնի դնէր ջերմացեալ, և վաղվաղակի ասեն ցնա վասն նորա։ Մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա. և եթող զնա տենդն՝ և պաշտէր զնոսա։

Եւ իբրև երեկոյ եղև 'ի մտանել արեգականն, բերէին առ նա զամենայն հիւանդս և զդիւահարս. և էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դրունսն։ Եւ բժշկեաց բազում հիւանդս 'ի պէս պէս ախտից, և դևս բազումս եհան, և ոչ տայր խօսել դիւացըն, զի գիտէին զնա թէ Քրիստոսն է։

Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ ել և գնաց յանապատ տեղի, և անդ կայր յաղօթս։ Եւ գնաց զհետ նորա Սիմոն՝ և որ ընդ նմայն էին։ Եւ իբրև գտին զնա՝ ասեն ցնա, թէ ամենեքին խնդրեն զքեզ։ Եւ ասէ ցնոսա. եկայք երթիցուք և յայլ մօտաւոր գիւղաքաղաքսն, զի և անդ քարոզեցից. զի յայս իսկ եկեալ եմ։ Եւ քարոզէր 'ի ժողովուրդս նոցա ընդ ամենայն գալիլեացիս, և

դեւս հանէր ։ Գայ առ նա բորոտ մի, աղաչէր՝ 'ի ծունր իջանէր՝ և ասէր. տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել ։ Իսկ Յիսուս գթացեալ ձգեաց ըզ ձեռն մերձեցոյց 'ի նա՝ և ասէ ցնա, կամիմ, սրբ-եաց ։ Եւ իբրեւ ասացն ցնա, վաղվաղակի գնաց 'ի նմանէ բորոտութիւնն՝ և սրբեցաւ ։ Եւ սաստեալ նմա՝ եհան զնա արտաքս վաղվաղակի, և ասէ ։ Զգոյշ լեր՝ մի ումեք ինչ ասիցես. այլ երթ ցոյց զքեզ քահանային. և մատո վասն սրբութեան քո զպատարագ՝ զոր հրամայեաց Մովսէս, 'ի վկայութիւն նոցա ։ Եւ նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ՝ և հռչակ հարկանել զբանն, մինչ ոչ եւս կարող լինել նմա յայտնապէս 'ի քաղաք մտանել, այլ արտաքոյ յանապատ տեղիս էր. և գային առ նա յամենայն կողմանց ։

Եւ մտեալ դարձեալ 'ի Կափառնաում յետ աւուրց, լուր եղեւ եթէ 'ի տան է ։ Եւ ժողովեցան բազումք՝ մինչեւ տեղի եւս ոչ լինել՝ և ոչ առ դըրանն. և խօսէր նոցա զբանն ։ Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ մի բարձեալ 'ի չորից ։ Եւ իբրեւ ոչ կարէին մերձենալ առ նա յամբոխէ անտի, քակեցին զյարկն՝ ուր էր Յիսուս, և բացեալ զառաստաղն իջուցին զմահիճսն յորում կայր անդամալոյծն ։ Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն. որդեակ, թողեալ լիցին քեզ մեղք քո ։ Եւ էին ոմանք 'ի դպրաց անտի՝ որ անդ նստէին. և խորհէին 'ի սիրտս իւրեանց. զի՞նչ է այս որ խօսի սա զհայհոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ ըզ մեղս, եթէ ոչ մի աստուած ։ Եւ գիտաց Յիսուս

յօգնի իւր՝ թէ այնպէս խորհին 'ի միտս իւրեանց , և ասէ . զի՞ խորհիք զայդ 'ի միտս ձեր ։ Զի՞նչ դիւրին է . ասել ցանդամալոյծն՝ թողեալ լիցին քեզ մեղք քո , եթէ ասել՝ արի , առ մահիճս քո և երթ 'ի տուն քո ։ Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ 'ի վերայ երկրի թողուլ զմեղս . ասէ ցանդամալոյծն . քեզ ասեմ , արի , առ զմահիճս քո՝ և երթ 'ի տուն քո ։ Եւ յարեաւ վաղվաղակի առեալ զմահիճն , ել առաջի ամենեցուն . մինչդեռ զարմանալ ամենեցուն՝ և փառաւոր առնել զաստուած և ասել , թէ այսպիսի ինչ երբէք ոչ տեսաք ։

Եւ եմուտ միւսանգամ 'ի ժողովուրդն , և էր անդ այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր ։ Եւ սպասէին նմա՝ եթէ բժշկիցէ զնա 'ի շաբաթուն՝ զի չարախօսեսցեն զնմանէ ։ Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսացեալ էր . արի , անց 'ի մէջ ։ Եւ ասէ ցնոսա . զի՞նչ արժա՛ն է 'ի շաբաթու , բարի՞ ինչ գործել՝ եթէ չար առնել , ոգի մի ապրեցուցանե՞լ՝ եթէ կորուսանել . և նոքա լռեցին ։ Եւ հայեցեալ Յիսուսի զնոքօք լի ցասմամբ , տրտմեալ վասն կուրութեան սրտից նոցա՝ ասէ ցայրն . ձգեա զձեռն քո . և նա ձգեաց , և ողջացաւ ձեռն նորա ։ Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսեցիքն հերովդիանոսօքն հանդերձ , խորհուրդ առնէին վասն նորա՝ թէ զիա՞րդ կորուսցեն զնա ։

Իսկ Յիսուս աշակերտօքն իւրովք գնաց 'ի ծովեզրն և բազում ժողովուրդ 'ի գալիլեացւոց երթային ըզհետ նորա . և 'ի Հրէաստանէ , և յԵրուսաղէմէ , և յայնկոյս Յորդանանու , և որք 'ի Տիւրոսէ և 'ի

Աիգոմնէ. բազում ժողովուրդ իբրեւ լսէին՝ որչափ
ինչ առնէր, գային առ նա, Եւ ասէ ցաշակերտսն
իւր, զի նաւակ մի պատրաստական կայցէ նմա վասն
ամբոխին՝ զի մի՛ նեղեսցեն զնա ։ Քանզի զբազումս
բժշկեաց. մինչ գալ խռնել զնովաւ՝ զի մերձեսցին
առ նա, որք ունէին ախտս ինչ ։ Եւ այսք պղծք
յորժամ տեսանէին զնա, անկանէին առաջի նորա,
աղաղակէին եւ ասէին. Թէ դու ես որդին Աստու-
ծոյ. եւ նա յոյժ սաստէր նոցա, զի մի՛ յայտնի առ-
նիցեն զնա ։

Եւ եկն յայնկոյս ծովուն յաշխարհն Գերգեսա-
ցւոց եւ ընդ ելանելն նորա ՚ի նաւէ անտի, պատահ-
եաց նմա այր մի ՚ի գերեզմանացն՝ զոր ունէր այս
պիղծ. որոյ եւ բնակութիւն իւր իսկ ՚ի գերեզմանս
էր. եւ ոչ շղթայիւք ոք եւս կարէր կապել զնա.
վասն բազում անգամ ոտնակապօք եւ շղթայիւք կա-
պելոյ, եւ խզելոյ ՚ի նմանէ շղթայսն, եւ զոտնա-
կապսն խորտակելոյ. եւ ոչ ոք կարէր պարտել զնա.
քանզի հանապազ զցայգ եւ զցերեկ ՚ի գերեզմանս
եւ ՚ի լերինս աղաղակէր, եւ կոծէր զանձն իւր քա-
րամբք ։ Իբրեւ ետես զՅիսուս ՚ի հեռաստանէ, ըն-
թացաւ եւ երկիրպագ նմա ։ Աղաղակեաց ՚ի ձայն
մեծ՝ եւ ասէ, զի՞ կայ իմ եւ քո՝ Յիսուս որդի Աս-
տուծոյ բարձրելոյ. երդմնեցուցանեմ զքեզ յաստ-
ուած, մի՛ տանջեր զիս ։ Քանզի ասէր ցնա. Ել
այսդ պիղծ ՚ի մարդոյ այտի ։ Եւ հարցանէր ցնա՝ Թէ
զի՞նչ անուն է քո. եւ ասէ ցնա. Լեգէոն անուն
է իմ, քանզի բազումք եմք ։ Եւ աղաչէին զնա
յոյժ, զի մի՛ առաքեսցէ զնոսա արտաքս քան զաշ-

խարհն ։ Եւ անդ էր առ լերամբն երամակ մի խո-
զաց արօտական մեծ ։ Աղաչեցին զնա ամենայն դեւքն
և ասեն. առաքեա զմեզ 'ի խոզսն, զի մտցուք 'ի
նոսա ։ Եւ հրամայեաց նոցա. և իբրեւ ելին այսքն
պիղծք՝ մտին 'ի խոզսն, և դիմեաց երամակն 'ի դա-
րէ անտի 'ի ծովն. էին իբրեւ երկու հազարք, և
հեղձնուին 'ի ծովուն ։ Եւ խոզարածքն փախեան,
և պատմեցին 'ի քաղաքին և յագարակս, և ելին
տեսանել զի՞նչ իցէ՝ որ գործեցաւն ։ Գան առ Յի-
սուս, և տեսանեն զդիւահարն զի նստէր զգեցեալ
և զգաստացեալ, որ ունէր զլէգէոնն, և զահի
հարան ։ Եւ պատմեցին նոցա՝ որոց տեսեալն էր, թէ
զի՞նչ եղեւ այսահարին, և զի՞նչ վասն խոզիցն ։
Եւ սկսան աղաչել զնա գնալ 'ի սահմանաց նոցա ։
Եւ իբրեւ եմուտ նա 'ի նաւն, աղաչէր զնա դիւա-
հարն՝ զի ընդ նմա իցէ. և Յիսուս ոչ ետ նմա
թոյլ, այլ ասէ ցնա. երթ 'ի տուն քո առ ընտանիս
քո, և պատմեա նոցա, որ ինչ միանգամ տէր ա-
րար քեզ՝ և ողորմեցաւ քեզ ։ Եւ չոքաւ՝ և սկսաւ
քարոզել 'ի Դեկապօլիս, զոր ինչ արար նմա Յի-
սուս՝, և ամենեքին զարմանային ։

Եւ իբրեւ անց Յիսուս միւսանգամ յայն կողմն՝
ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր առ
ծովեզերբն ։ Եւ ահա մի 'ի ժողովրդապետացն գայր
որում անուն էր Յայրոս. և իբրեւ ետես զնա՝ ան-
կաւ առ ոտս նորա. աղաչէր զնա յոյժ և ասէր,
թէ դուստր նորա մերձ է 'ի մահ, զի եկեալ դնիցէ
նմա ձեռն, որպէս զի ապրեսցի և կեցցէ ։ Եւ գը-
նաց ընդ նմա. երթայր և ժողովուրդ բազում ըդ

հետ նորա, և նեղէին զնա։ Եւ կին մի էր ՚ի տեռատեսութեան արեան զերկոտասան ամ. և յոյժ վշտացեալ ՚ի բազում բժշկաց, և ծախեալ զինչս իւր զամենայն՝ և չէր ինչ օգտեալ, այլ ևս առաւել զայրացեալ։ Իբրև լուաւ զՅիսուսէ՝ եկն ՚ի մէջ ամբոխին յետոյ՝ և բուռն եհար զհանդերձէ նորա. քանզի խորհէր ՚ի միտի, թէ միայն մերձեցայց ՚ի հանդերձս նորա, փրկեցայց։ Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր արեան նորա. և գիտաց ՚ի մարմին իւր թէ բժշկեցաւ ՚ի տանջանացն։ Եւ անդէն վաղվաղակի գիտաց Յիսուս յանձն իւր զզօրութիւնն որ ել ՚ի նմանէ, դարձաւ յամբոխն և ասէ. ո՞վ մերձեցաւ ՚ի հանդերձս իմ։ Եւ ասեն ցնա աշակերտքն, տեսանե՞ս՝ զի ամբոխդ նեղէ զքեզ, և ասես՝ թէ ո՞վ մերձեցաւ ՚ի հանդերձս իմ. Եւ շուրջ հայէր տեսանել՝ թէ ո՞վ զայն արար։ Եւ կինն զարհուրեալ և դողացեալ վասն որոյ գաղտն արար. քանզի գիտէր զինչ եղեւ նմա, եկն անկաւ առաջի նորա, և ասաց զամենայն իրսն ստուգութեամբ։ Եւ Յիսուս ասէ ցնա. դուստր, հաւատք քո կեցուցին ըզքեզ. երթ ՚ի խաղաղութիւն, և եղիջիր ողջ ՚ի տանջանաց քոց։

Մինչդեռ նա զայն խօսէր, գան ոմանք ՚ի տանէ ժողովրդապետին, և ասեն՝ թէ դուստրն քո մեռաւ, զի՞ ևս աշխատ առնես զվարդապետդ։ Իսկ Յիսուս իբրև լուաւ զբանն ասացեալ, ասէ ցժողովրդապետն մի՛ երկնչիր, բայց միայն հաւատա։ Եւ ոչ զոքեթող ընդ իւր երթալ, բայց միայն զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս՝ զեղբայրն Յակոբայ։ Գայ ՚ի

տուն ժողովրդապետին , և տեսանէ ամբոխ յոյժ և լալականս , և աղաղակ յոյժ ։ Եւ մտեալ ՚ի ներքս՝ ասէ ցնոսա . զի՞ խռովեալ էք և լայք , մանուկն ոչ է մեռեալ , այլ ննջէ ։ Եւ ծաղր առնէին զնա . և Նորա հանեալ արտաքս զամենեսեան , առնու ընդ իւր զհայր մանկանն և զմայր , և զնոսա որ ընդ նը-մայն էին , և մտանէ ուր դնէր մանուկն ։ Եւ կալ-եալ զձեռանէ մանկանն , ասէ ցնա . տալիթա կումի , որ թարգմանի , աղջիկ դու՝ քեզ ասեմ , արի ։ Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն և գնայր , քանզի էր ամաց իբրև երկոտասանից . և զարմացան մեծաւ զարմանալեօք ։ Եւ պատուէր տայր նոցա յոյժ , զի մի՛ ոք գիտասցէ զայն . և ասաց տալ նմա ուտել ։

Եւ իբրև անցին յայնկոյս , եկին յերկիրն Գեն-նեսարէթ ։ Եւ իբրև ելին ՚ի նաւէ անտի՝ իսկ և իսկ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ . և ընթաց-եալ այսր անդր ընդ ամենայն գաւառն , սկսան մահ-ճօք բերել զհիւանդս , ուր լսէին՝ թէ անդ իցէ ։ Եւ ուր և մտանէր ՚ի գեօղս կամ ՚ի քաղաքս կամ յա-գարակս , ՚ի հրապարակս դնէին զախտաժէտս , և ա-ղաչէին զնա՝ զի գոնէ ՚ի քղանցս հանդերձից նորա մերձենայցեն . և որ միանգամ մերձեցանն՝ փըր-կեցան ։

Եւ անտի յարուցեալ՝ եկն ՚ի սահմանս Տիւրոսի և Սիդոնի . և մտեալ ՚ի տուն՝ ոչ ումեք կամէր յայտնել , և ոչ կարաց ծածկել ։ Լուաւ կին մի ըզ-նմանէ , որոյ դուստր իւր նեղեալ էր յայսոյ պղծոյ. եկն անկաւ առաջի նորա ։ Եւ կինն էր հեթանոս՝ փիւնիկ Ասորի յազգէ . և աղաչէր զնա՝ զի զդեւն

հանցէ 'ի դստերէ նորա ։ Եւ Յիսուս ասէ ցնա. Թոյլ տուր՝ նախ յագեսցին մանկունք. զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց ։ Նա պատասխանի ետ և ասէ. տէր, և շունք 'ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին ։ Եւ ասէ ցնա. վասն այդր բանի երթ, ել դեւն 'ի դստերէ քումմէ ։ Գնաց 'ի տուն իւր, և եգիտ ելեալ զդեւն, և զդուստրն, զի անկեալ դնէր 'ի մահիճս ։

Եւ ելեալ միւսանգամ 'ի սահմանացն Տիւրոսի և Սիդոնի, և եկն 'ի ծովեզրն Գալիլեացւոց 'ի մէջ սահմանացն 'ի Դեկապոլիս ։ Եւ բերին առաջի նորա խուլ մի և համր. և աղաչէին՝ զի ձեռն դիցէ 'ի վերայ նորա ։ Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի, արկ զմատունս իւր ընդ ականջս նորա՝ և եթուք անգր. և կալաւ զլեզուէ նորա. հայեցաւ յերկինս՝ յոգւոց եհան՝ և ասէ. Եփփաթայ՝ որ է բացիր ։ Եւ նոյնժամայն բացան լսելիք նորա, և լուծան կապանք լեզուի նորա. և խօսէր ուղիղ ։ Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛ ումեք ասիցեն. և որչափ նա պատուիրէր նոցա, նոքա եւս առաւել քարոզէին. և եւս քան զեւս զարմանային և ասէին. զամենայն ինչ բարւոք գործեաց սա, զի խլից լսել տայ՝ և համերց խօսել ։

Գնան 'ի Բեթսայիդա. և ածեն առաջի նորա կոյր մի, և աղաչէին զնա՝ զի մերձեսցի 'ի նա ։ Եւ առեալ զձեռանէ կուրին՝ եհան արտաքոյ շինին, եթուք յաչս նորա, և ձեռն եդ 'ի վերայ նորա. և հարցանէր զնա՝ թէ տեսանիցէ՞ ինչ ։ Նայեցաւ՝ և ասէր. տեսանեմ զմարդիկս՝ զի շրջին իբրև զծառս ։ Դարձ-

եալ եդ ձեռս 'ի վերայ աչաց նորա՝ եբաց , և տեսանէր · ողջացաւ՝ և տեսանէր համարձակ զամենայն ։ Արձակեաց զնա 'ի տուն իւր՝ և ասէ · 'ի շէնդ մի՛ մտանիցես , այլ երթ 'ի տուն քո · և յորժամ 'ի շէնն մտանիցես՝ մի՛ ումեք ասիցես 'ի շէնին ։

Եւ եկեալ առ աշակերտսն , տեսին ամբոխ շուրջ զնոքօք , և զդպիրսն՝ զի վիճէին ընդ նոսա ։ Եւ վաղվաղակի ամենայն ժողովուրդն իբրեւ տեսին ըզնա՝ զարմացան , և ընդ առաջ ընթացեալ ողջոյն տային նմա ։ Եւ եհարց զնոսա՝ թէ զի՞նչ վիճէիք ընդ նոսա ։ Պատասխանի ետ մի ոմն 'ի ժողովրդենէն և ասէ · վարդապետ՝ ածի զորդի իմ՛ առ քեզ , զոր ունի այս համր , և ուր հասանէ՝ զարկուցանէ զնա . և փրփրէ՝ և կրճտէ զատամունս իւր և ցամաքի · և ասացի ցաշակերտսն քո զի հանցեն , և ոչ կարացին հանել զնա ։ Պատասխանի ետ նոցա և ասէ · ո՛վ ազգ անհաւատ՝ մինչեւ յե՞րբ իցեմ առ ձեզ · մինչեւ ցե՞րբ անսայցեմ ձեզ · ածէք զնա աստ ։ Եւ ածին զնա առ նա · իբրեւ ետես զնա այսն , վաղվաղակի շարժեաց զնա , և անկեալ յերկիր թաւալէր և փրփրայր · Եհարց ցհայր նորա և ասէ · քանի՞ ժամանակք են՝ յորմէհետէ այդ եղեւ դմա ։ Եւ նա ասէ · 'ի մանկութենէ · բազում անգամ 'ի հուր արկանէ զդա և 'ի ջուր՝ զի կորուսցէ · արդ՝ եթէ կարող ինչ ես , օգնեա մեզ տէր՝ գթացեալ 'ի վերայ մեր ։ Եւ Յիսուս ասէ ցնա · ասացեր թէ կարող ես · ամենայն ինչ հնարաւոր է այնմ , որ հաւատայ ։ Եւ վաղվաղակի աղաղակեաց հայր մականն՝ և ասէ · հաւատամ , տէր՝ օգնեա անհաւա-

տուլթեանս խմբում ։ Իբրեւ ետես Յիսուս՝ եթէ կուտի ժողովուրդն 'ի վերայ , սաստեաց այսոյն պղծոյ և ասէ , Համր և խուլ այս՝ ես տամ քեզ հրաման , ել 'ի դմանէ , և այլ եւս մի՛ մտանիցես 'ի դա։ Եւ աղաղակեաց՝ և յոյժ լլկեաց զնա , և ել . և եղեւ պատանեակն իբրեւ զմեռեալ , մինչեւ բազմաց խօսել թէ մեռաւ ։ Եւ Յիսուս կալաւ զձեռանէ նորա՝ յարոյց զնա , և կանգնեցաւ ։ Եւ իբրեւ եմուտ նա 'ի տուն , աշակերտքն առանձինն հարցին զնա . մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա ։ Եւ ասէ ցնոսա . այդ ազգ ոչ ելանէ , եթէ ոչ պահովք և աղօթիւք ։

Եւ գան յԵրիքով . և ընդ ելանելն նորա յԵրիքովէ աշակերտօքն՝ և բազում ժողովրդով ,՝ որդի Տիմէի Բարտիմէոս կոյր նստէր մուրացիկ յանց ճանապարհի ։ Իբրեւ լուաւ՝ թէ Յիսուս Նազովրեցի է , սկսաւ աղաղակել և ասել , որդի Դաւթի Յիսուս՝ ողորմեաց ինձ ։ Եւ սաստէին նմա բազումք զի լռեսցէ . և նա առաւել եւս աղաղակէր . որդի Դաւթի ողորմեաց ինձ ։ Զտեղի առ Յիսուս՝ և հրամայեաց կոչել զնա , կոչեն զկոյրն՝ և ասեն ցնա. քաջալերեաց , արի՛ կոչէ զքեզ ։ Եւ նորա ընկեցեալ զձորձս իւր , յարեաւ և եկն առ Յիսուս ։ Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ . զի՞նչ կամիս՝ թէ արարից քեզ . ասէ ցնա կոյրն . րաբբունի՛ զի բացայց ։ Եւ Յիսուս ասէ ցնա , երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ . և վաղվաղակի բացաւ , և երթայր զհետ նորա 'ի ճանապարհին ։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի որ ըստ Ղուկասու։

## ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ էջ 'ի Կափառնաում 'ի քաղաքն Գալիլեացւոց և ուսուցանէր զնոսա 'ի շաբաթուն։ Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի իշխանութեամբ էր բան նորա։ Եւ էր 'ի ժողովրդեանն այր մի, զոր ունէր այս դիւի պղծոյ, և աղաղակեաց 'ի ձայն մեծ, ասէ. Թուլացո, զի՞ կայ մեր և քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմ զքեզ՝ ով ես սուրբդ Աստուծոյ։ Սաստեաց 'ի նա Յիսուս և ասէ. պապանձեաց և ել 'ի դմանէ. զգետնեաց զնա դեւն 'ի միջի անդ՝ և ել 'ի նմանէ, և ինչ ոչ վնասեաց նմա։ Եւ եղեն զարմանալիք 'ի վերայ ամենեցուն, խօսէին ընդ միմեանս և ասէին. զի՞նչ է բանս այս, զի իշխանութեամբ և զօրութեամբ սաստէ այսոց պղծոց՝ և ելանեն։ Եւ երթայր հռչակ զնմանէ ընդ ամենայն տեղիս շուրջ զգաւառաւն։

Եւ յարուցեալ 'ի ժողովրդենէ անտի, եմուտ 'ի տուն Սիմովնի։ Զոքանչ Սիմովնի տագնապէր ջերմամբ մեծաւ, և աղաչեցին զնա վասն նորա։ Եկաց առ նմա՝ սաստեաց ջերմանն, և եթող զնա. և վաղվաղակի յարեաւ՝ և պաշտէր զնոսա։ Եւ ընդ արեւուն մտանել՝ ամենեքեան որոց էին հիւանդք 'ի պէս պէս ցաւս՝ բերէին զնոսա առ նա։ Եւ նա ի-

րաքանչիւր ումեք 'ի նոցանէ դնէր ձեռս՝ և բժշկէր զնոսա ։ Ելանէին դեւք 'ի բազմաց, աղաղակէին և ասէին . եթէ դու ես որդի աստուծոյ . և նա սաստէր՝ և ոչ տայր նոցա թոյլ խօսել, զի գիտէին զնա թէ Քրիստոսն է ։

Եւ եղեւ 'ի հասանելն նորա 'ի մի քաղաքացն, ահա այր մի լի բորոտութեամբ իբրեւ ետես զՅիսուս՝ անկեալ 'ի վերայ երեսաց աղաչեաց զնա՝ և ասէ . տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել ։ Ձգեաց զձեռն իւր՝ հասոյց 'ի նա և ասէ . կամիմ՝ սրբեաց . և վաղվաղակի գնաց 'ի նմանէ բորոտութիւնն ։ Եւ նա պատուիրեաց նմա մի՛ ումեք ասել, այլ թէ երթ, ցոյց զանձն քո քահանային . և մատո պատարագ վասն սրբութեան քո՝ որպէս և հրամայեաց Մովսէս, 'ի վկայութիւն նոցա ։ Եւ յորդէր առաւել բանն զնմանէ . և ժողովէին ժողովուրդք բազումք լսել՝ և բժշկել 'ի հիւանդութենէ իւրեանց ։ Եւ նա խոյս տայր յանապատ տեղիս, և կայր յաղօթս ։

Եւ եղեւ 'ի մում աւուրց՝ և ինքն ուսուցանէր՝ և փարիսեցիքն և օրինացն վարդապետք նստէին, որ ժողովեալ էին յամենայն քաղաքաց Գալիլեացւոց՝ և Հրէաստանի և Երուսաղէմի . և զօրութիւն տեառն էր 'ի բժշկել զնոսա ։ Եւ ահա արք բերէին մահճօք զայր մի՝ որ էր անդամալոյծ, և խնդրէին զնա մուծանել 'ի ներքս՝ և դնել առաջի նորա ։ Եւ իբրեւ ոչ գտանէին թէ ընդ որ մուծանիցեն զնա 'ի ներքս վասն ամբոխին, ելին 'ի տանիս և 'ի ցուցն կախեցին զնա, և իջուցին մահճօքն հանդերձ 'ի մէջ

առաջի Յիսուսի : Եւ տեսեալ զհաւատսն նոցա՝ ասէ ցնա . այր դու՝ թողեալ լիցին քեզ մեղք քո : Սկսան խորհել դպիրքն և փարիսեցիքն , և ասեն . ո՞ է սա՝ որ խօսի զհայհոյութիւնս , ո՞վ կարէ թողուլ զմեղս՝ բայց միայն Աստուած : Իբրև գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա , պատասխանի ետ և ասէ ցնոսա . զի՞ խորհիք 'ի սիրտս ձեր : Ո՞ր դիւրագոյն է . ասել՝ թողեալ լիցին քեզ մեղք քո , եթէ ասել՝ արի և գնա : Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս . ասէ ցանդամալոյծն , քեզ ասեմ՝ արի առ զմահիճս քո՝ և երթ 'ի տուն քո : Եւ առժամայն յարուցեալ առաջի ամենեցուն՝ եառ զիւրև յորոյ վերայ անկեալ դնէր , գնաց 'ի տուն իւր , և փառաւոր առնէր զԱստուած : Զարմանք կալան զամենեսեան , և փառաւոր առնէին զԱստուած . լի եղեն ահիւ , և ասեն , եթէ տեսաք այսօր նոր նշան :

Եւ եղեւ 'ի միւսանգամ շաբաթուն մտանել նմա 'ի ժողովուրդն՝ և ուսուցանել . և էր անդ այր մի՝ և ձեռն իւր աջ գօսացեալ էր : Եւ սպասէին նմա դպիրքն և փարիսեցիք՝ թէ 'ի շաբաթուն բժշկիցէ , զի գտանիցեն չարախօսութիւն զնմանէ : Եւ նա գիտէր զխորհուրդս նոցա , ասէ ցայրն՝ որոյ ձեռնն գօսացեալ էր . արի անց 'ի մէջ . և նա յարուցեալ եկաց : Ասէ ցնոսա Յիսուս . հարցից ինչ զձեզ . զի՞նչ արժան է 'ի շաբաթու , բարի՞ ինչ առնել եթէ չար գործել , ոգի մի ապրեցուցանել . թէ կորուսանել : Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք զայրագին՝ ասէ ցնա . ձգեա զձեռն քո . և նա ձգեաց , և

հաստատեցաւ ձեռն նորա իբրեւ զմիւսն ։ Եւ նոքա
լցան յիմարութեամբ , և խօսէին ընդ միմեանս՝ թէ
զինչ առնիցեն Յիսուսի ։

Եւ իջեալ նոքօք հանդերձ 'ի տեղի մի տափա-
րակ . և ժողով աշակերտացն նորա՝ և բազմութիւն
յոյժ ժողովրդեանն , յամենայն Հրէաստանէ և
յԵրուսաղէմէ և յայնմ կողմանէ՝ և 'ի ծովեզերէն
Տիւրոսի և Սիդոնի . որ եկին լսել 'ի նմանէ՝ և
բժշկել 'ի հիւանդութեանց իւրեանց . և նեղեալքն
յայսոց պղծոց բժշկէին ։ Եւ ամենայն ժողովուրդն
խնդրէր մերձենալ 'ի նա , զի զօրութիւն բազում
ելանէր 'ի նմանէ՝ և բժշկէր զամենեսին ։

Եւ իբրեւ կատարեաց զամենայն զբանս իւր 'ի լը-
սելիս ժողովրդեանն , եմուտ 'ի Կափառնաում ։
Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդա-
ցեալ՝ մերձ էր 'ի վախճանել , որ էր նմա պատուա-
կան ։ Եւ իբրեւ լուաւ զՅիսուսէ , առաքեաց ըզ-
ծերսն 'ի Հրէից , աղաչէր զնա՝ զի եկեսցէ և ապ-
րեցուսցէ զծառայն նորա ։ Եւ նոքա եկեալ առ
Յիսուս՝ աղաչէին զնա ստէպ՝ և ասէին , թէ արժա-
նի է՝ որում զշնորհս զայս առնես ։ Զի սիրէ զազ-
գըս մեր , և զժողովրդանոցն նա շինեաց մեզ ։ Եւ
Յիսուս գնաց ընդ նոսա . իբրեւ ոչինչ կարի հեռի
էր 'ի տանէն , յղեաց առ նա հարիւրապետն բարե-
կամս , և ասէ ցնա . տէր մի՛ ինչ աշխատ լինիր ,
զի չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտա-
նիցես ։ Վասն որոյ և ոչ զանձն համարեցայ ար-
ժանի՝ առ քեզ գալոյ . այլ ասա բանիւ՝ և բժըշ-
կեսցի մանուկս իմ . քանզի և ես այր մի եմ կարգ-

եալ ընդ իշխանութեամբ. ունիմ ընդ ինեւ զին-
ուորս, և ասեմ սմա՝ երթ, և երթայ. և այլում
թէ եկ, և գայ. և ծառայի իմում թէ արա զայս,
և առնէ։ Եւ իբրեւ լուաւ զայս Յիսուս՝ զարմա-
ցաւ, դարձաւ առ ժողովուրդն որ երթային զհետ
նորա՝ և ասէ. ամէն ասեմ ձեզ՝ թէ ոչ յԻսրայէլի
այսչափ հաւատս գտի։ Եւ դարձան անդրէն պատ-
գամաւորքն 'ի տուն, և գտին զծառայն հիւանդ՝
բժշկեալ։

Եւ եղեւ 'ի վաղիւն երթայր 'ի քաղաք մի, ո-
րում անուն էր Նային. երթային ընդ նմա և աշա-
կերտք նորա և ժողովուրդք բազում։ Իբրեւ մերձ
եղեւ 'ի դուռն քաղաքին, և ահա հանէին մեռեալ
մի՝ որդի միամօր մօր իւրոյ, և նա էր այրի. և ժո-
ղովուրդ բազում քաղաքին էր ընդ նմա։ Իբրեւ
ետես զնա տէր՝ գթացաւ 'ի նա և ասէ. մի՛ լար։
Եւ մատուցեալ մերձեցաւ 'ի դագաղն. և որք
բարձեալն տանէին՝ զտեղի առին. և ասէ, պատա-
նի դու՝ քեզ ասեմ՝ արի։ Կանգնեցաւ և նստաւ
մեռեալն, և սկսաւ խօսել. և ետ զնա ցմայր իւր։
Եւ ահ կալաւ զամենեսին, և փառաւոր առնէին
զաստուած՝ և ասէին. թէ մարգարէ մեծ յա-
րուցեալ է 'ի միջի մերում, և եթէ այց արար աստ-
ուած ժողովրդեան իւրում 'ի բարութիւն։ Եւ ել
զրոյցս այս ընդ ամենայն Հրէաստան վասն նորա. և
ընդ ամենայն կողմանս աշխարհին։

Եւ պատմեցին Յովհաննու աշակերտքն իւր վասն
ամենայնի այսորիկ։ Եւ կոչեաց առ ինքն երկուս ո-
մանս յաշակերտացն իւրոց՝ Յովհաննէս, առաքեաց

առ տէր և ասէ. դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք: Եւ եկեալ արքն առ նա՝ ասեն, Յովհաննէս Մկրտիչ առաքեաց զմեզ առ քեզ՝ և ասէ դո՞ւ ես որ գալոցն ես՝ եթէ այլում ակն կալցուք: Եւ 'ի նմին ժամու բժշկեաց զբազումս 'ի հիւանդութեանց և 'ի հարուածոց և յայսոց չարաց, և կուրաց բազմաց շնորհեաց տեսանել: Պատասխանի ետ Նոցա և ասէ. երթայք պատմեցէք Յովհաննու՝ զոր տեսիք և լուայք. զի կոյրք տեսանեն, և կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղքատք աւետարանին. և երանի իցէ՛ որ ոչ գայթագղեսցի յիս:

Եւ նաւեցին իջին յաշխարհն Գերգեսացւոց. որ է յանդիման Գալիլեայ: Եւ ընդ ելանելն Նորա 'ի ցամաք, պատահեաց այր մի 'ի քաղաքէն յորում էին դեւք. և բազում ժամանակս չէր հանդերձ զգեցեալ՝ և ոչ 'ի տան բնակեալ, այլ 'ի գերեզմանս: Եւ տեսեալ զՅիսուս, աղաղակեաց և անկաւ առաջի Նորա, և ասէ մեծաձայն. զի՞ կայ իմ և քո Յիսուս որդի աստուծոյ բարձրելոյ, աղաչեմ զքեզ մի՛ տանջեր զիս: Վասնզի հրամն տայր այսոյն պղծոյ ելանել 'ի մարդոյ անտի. քանզի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա. և կապէր 'ի շղթայս, և պահէր յերկաթս, և խզէր զկապանսն, և վարէր 'ի դիւէն յանապատ: Եհարց զնա Յիսուս և ասէ. զի՞նչ անուն է քեզ. և նա ասէ, Լէգէոն. զի դեւք բազումք մտեալ էին 'ի նա: Եւ աղաչէին զնա՝ զի մի՛ հրաման տացէ նոցա երթալ յանդունդս: Եւ էր անդ երամակ մի խոզից

բազմաց արտաքսան 'ի չերինն, և աղաչեցին զնա զի հրաման տացէ նոցա մտանել 'ի նոսա. և հրամայեաց նոցա ։ Եւ ելեալ դևքն յառնէն՝ մտին 'ի խոզեանն. և դիմեաց երամակն 'ի գահէ անտի 'ի ծովակն՝ և հեղձաւ ։ Իբրև տեսին խոզարածքն զիրսն որ եղեն՝ փախեան, և պատմեցին 'ի քաղաքին և յագարակսն ։ Եւ իբրև ելին տեսանել զգործսն, և եկին առ Յիսուս, և գտին զայրն՝ ուստի դևքն ելեալ էին, զգեցեալ և զգաստացեալ նստէր առ ոտսն Յիսուսի, և երկեան ։ Պատմեցին նոցա որոց տեսեալն էր՝ թէ զիարդ փրկեցաւ դիւահարն ։ Եւ աղաչէր զնա ամենայն բազմութիւնն շուրջ զկողմամբքն Գերգեսացւոց՝ գնալ 'ի սահմանաց նոցա, քանզի ահիւ մեծաւ տագնապէին. և նա մտեալ 'ի նաւ՝ դարձաւ անդրէն ։ Աղաչէր զնա այրն՝ ուստի դևքն ելեալ էին՝ շրջել ընդ նմա, արձակեաց զնա՝ և ասէ. դարձ 'ի տուն քո, և պատմեա՝ զոր միանգամ արար քեզ Աստուած. գնաց 'ի քաղաքն և քարոզէր զոր ինչ արար նմա Յիսուս ։

Եւ իբրև դարձաւ անդրէն Յիսուս, ընկալաւ զնա ժողովուրդն. քանզի ամենեքեան ակն ունէին նմա ։ Եւ ահա եկն այր մի՝ որում անուն էր Յայրոս, և նա էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտսն Յիսուսի՝ աղաչէր զնա մտանել 'ի տուն նորա. զի դուստր միամօր էր նորա՝ ամաց իբրև երկոտասանից, և էր մերձ 'ի մահ. և ընդ երթալն նորա ժողովուրդքն նեղէին զնա ։ Եւ կին մի էր 'ի տեռատեսութեան արեան ամաց երկոտասանից, որ 'ի բժիշկս ծախեալ էր զամենայն ինչս իւր. որում ոչ

էր լեալ հնար յումեքէ բժշկիլ ։ Մատուցեալ յետոյ մերձեցաւ ՚ի քղանցս հանդերձի նորա . և նոյնժամայն եկաց բղխումն արեան նորա ։ Եւ ասէ Յիսուս . ո՛վ է՝ որ մերձեցաւն յիս ։ Իբրև ամենեքեան ուրանային , ասէ Պետրոս՝ և որ ընդ նմայն էին . վարդապետ , ժողովուրդք պնդեն և նեղեն զքեզ ։ Եւ ասէ Յիսուս . ոմն մերձեցաւ յիս , քանզի գիտացի՝ եթէ զօրութիւն ել յինէն ։ Իբրև ետես կինն՝ եթէ ոչ ծածկեցաւ ՚ի նմանէ , եկն դողալով և անկաւ առաջի նորա , թէ վասն որոյ իրաց մերձեցաւ ՚ի նա՝ պատմեաց առաջի ամենայն ժողովրդեանն . և թէ որպէս բժշկեցաւ առժամայն ։ Եւ ասէ . քաջալերեաց , դուստր . հաւատք քո կեցուցին զքեզ , երթ ՚ի խաղաղութիւն ։

Եւ մինչդեռ նա խօսէր , գայ ոմն ՚ի տանէ ժողովրդապետին՝ և ասէ ցնա . մեռաւ դուստրն քո , մի՛ ինչ աշխատ առներ զդա ։ Իսկ Յիսուս իբրև լուաւ , պատասխանի ետ նմա՝ և ասէ . մի՛ երկնչիր , միայն հաւատա՝ և կեցցէ ։ Եւ մտեալ ՚ի տունն՝ ոչ զոք եթող մտանել , բայց միայն զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս , և զհայր մանկանն և զմայր նորա ։ Լային ամենեքեան՝ և կոծէին զնա ։ Եւ նա ասէ . մի՛ լայք՝ զի չէ մեռեալ՝ այլ ննջէ ։ Եւ նոքա ծաղր առնէին զնա , զի գիտէին թէ մեռաւ ։ Եւ նորա հանեալ զամենեսին արտաքս , կալաւ զձեռանէ նորա՝ բարբառեցաւ և ասէ . արի , կաց մանուկ դու ։ Եւ դարձաւ ոգի նորա , և կանգնեցաւ վաղվաղակի , և հրամայեաց տալ նմա ուտել . և զարմացան ծնողքն նորա ։ Եւ նա պատուիրէր մի՛

ումեք ասել՝ որ ինչ եղեւն ։

Եւ եղեւ 'ի վաղիւն մինչ իջանէին նոքա 'ի լեռնէ անտի, ընդ առաջ եղեւ նմա ժողովուրդ բազում ։ Եւ ահա այր մի 'ի ժողովրդենէ անտի աղաղակեաց եւ ասէ. վարդապետ, աղաչեմ զքեզ հայեաց յորդի իմ, զի միամօր է ինձ ։ Եւ ահա այս հարկանէ 'ինմա, եւ յանկարծ գոչէ՝ եւ զարկուցանէ եւ թաւալեցուցանէ զնա եւ փրփրեցուցանէ, եւ հազիւ մեկնի 'ինմանէ խորտակեալ զնա. եւ աղաչեցի զաշակերտսն քո զի հանցեն զնա, եւ ոչ կարացին ։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. ո՜վ ազգ անհաւատ եւ թիւր, մինչեւ յե՞րբ եղէց ընդ ձեզ՝ եւ անսայցեմ ձեզ. մատո այսր զորդին քո ։ Եւ մինչդեռ մատչէր, զարկոյց զնա դեւն՝ եւ շարժլեաց ։ Սաստեաց Յիսուս այսոյն պղծոյ, եւ բժշկեաց զմանուկն. եւ ետ զնա ցհայր իւր ։ Եւ զարմանային ամենեքեան 'ի վերայ մեծամեծացն աստուծոյ. եւ 'ի զարմանալ ամենեցուն 'ի վերայ ամենայնի զոր առնէր, ասէ ցաշակերտսն իւր. դիք դուք 'ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ. զի որդի մարդոյ մատնելոց է 'ի ձեռս մարդկան ։

Եւ հանէր դեւ մի համր. եւ եղեւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն, եւ զարմացան ամենայն ժողովուրդքն ։ Եւ ոմանք 'ի նոցանէ ասեն. Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս ։ Եւ այլք փորձէին՝ եւ նշան յերկնից խնդրէին 'ինմանէ ։ Իսկ նորա գիտացեալ զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա. ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն աւերի, եւ տուն բաժանեալ յանձն՝ կործանի. Արդ՝ եթէ եւ սատանայ բաժանեցաւ յանձնէ, զիա՞րդ կայցէ

թագաւորութիւն նորա . զի ասէք զինէն եթէ Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս : Եթէ ես Բէեղզեբուղաւ հանեմ զդեւս , որդիքն ձեր իւ՞ հանիցեն . վասն այդորիկ նոքին եղիցին ձեր դատաւորք : Իսկ եթէ մատամբ Աստուծոյ հանեմ զդեւս , ապա հասեալ է 'ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ : Յորժամ հզօր վառեալ՝ պահիցէ զտուն իւր , 'ի խաղաղութեան են ինչք նորա : Այլ եթէ հզօրագոյն քան զնա 'ի վերայ եկեալ յաղթեսցէ նմա , զսպառազինութիւնն հանէ՝ յոր յուսացեալ էր , և զաւար նորա բաշխեսցէ : Որ ոչ է ընդ իս՝ հակառակ իմ է , և որ ոչ ժողովէ ընդ իս , ցրուէ : Յորժամ այսն ելանիցէ 'ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս , խնդրէ հանգիստ . և իբրև ոչ գտանէ , ասէ . դարձայց անդրէն 'ի տուն իմ ուստի ելի : Եւ գայ գտանէ մաքրեալ և յարդարեալ : Յայնժամ երթայ և առնու եօթն այլ այսս չար ևս քան զինքն՝ և մտանէ բնակէ անդ , և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն : Եւ եղև մինչդեռ խօսէր զայս , ձայն երբարձ կին մի 'ի ժողովրդենէ անտի և ասէ . երանի՛ է որովայնին՝ որ կրեացն զքեզ , և ստեանցն՝ որ դիեցուցին զքեզ : Եւ նա ասէ . նա երանի այնոցիկ է , որ լսեն զբանն Աստուծոյ , և առնեն :

Եւ ուսուցանէր 'ի միում ժողովրդանոցացն 'ի շաբաթու : Եւ ահա կին մի՝ զոր ունէր այս հիւանդութեան ամս ութուտասն . և էր կորկամեալ , և ոչ կարէր ամենևին 'ի վեր հայել : Եւ տեսեալ զնա Յիսուսի՝ կոչեաց առ ինքն՝ և ասէ ցնա . կին

դու՝ արձակեալ ես 'ի հիւանդութենէ քումմէ ։ Եւ եդ 'ի վերայ նորա ձեռն, և առժամայն ուղղեցաւ, և փառաւոր առնէր զԱստուած ։ Պատասխանի ետ ժողովրդապետն ցասուցեալ՝ թէ ընդէր 'ի շաբաթու բժշկեաց Յիսուս, և ասէ ցժողովուրդն ․ վեց օր է՝ յորս արժան է գործել, յայնս եկայք բժշկեցարուք, և մի՛ յաւուր շաբաթու ։ Պատասխանի ետ նմա Տէր՝ և ասէ ․ կեղծաւորք, իւրաքանչիւրոք 'ի ձէնջ 'ի շաբաթու ո՞չ արձակէ զեզն իւր կամ զէշ 'ի մսրոյ՝ և տանի տայ ջուր ։ Իսկ այս՝ դուստր Աբրահամու էր ․ զոր կապեաց սատանայ ահաւասիկ ութուտասն ամ, ո՞չ էր արժան արձակել 'ի կապանաց անտի 'ի շաբաթու Եւ զայս իբրեւ ասէր, յամօթ լինէին ամենեքին որ հակառակին կային նմա ․ և ամենայն ժողովուրդն ուրախ լինէր 'ի վերայ ամենայն փառաւորութեանցն որ գործէին 'ի նմանէ ։

Եւ եղեւ 'ի մտանելն նորա 'ի տուն ուրումն իշխանացն փարիսեցւոց 'ի շաբաթու ուտել հաց, և նոքա սպասէին նմա ։ Եւ ահա այր ումն էր անդ ջըրգողեալ առաջի նորա ։ Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցօրինաւորսն և ցփարիսեցիս ․ եթէ արժան իցէ 'ի շաբաթու բժշկել ։ Եւ նոքա լուռ եղեն ․ և բուռն հարեալ զնմանէ՝ բժշկեաց զնա, և արձակեաց ։ Եւ ասէ ցնոսա ո՞յր ուրուք 'ի ձէնջ էշ կամ եզն՝ անկանիցի 'ի ջրհոր, և ոչ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու ։ Եւ ոչ կարացին տալ նմա պատասխանի առ այն ։

Եւ եղեւ մինչ երթայր նա յԵրուսաղէմ, և ինքն անցանէր ընդ մէջ Սամարիոյ և Գալիլեացւոց ։

Եւ մինչդեռ մտանէր ՚ի գեօղ ուրեմն, պատահեցին նմա տասն այր բորոտ՝ որք կացին ՚ի հեռաստանէ, բարձին զձայնս՝ և ասեն. Յիսուս վարդապետ, ողորմեաց մեզ: Եւ իբրև ետես զնոսա, ասէ ցնոսա. երթայք ցուցէք զանձինս քահանայիցն. և եղեւ իբրև գնացին, առ ժամայն սրբեցան: Մի ոմն ՚ի նոցանէ իբրև ետես՝ թէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն՝ ՚ի ձայն մեծ փառաւոր առնէր զաստուած. անկաւ ՚ի վերայ երեսաց իւրոց առ ոտս նորա, և գոհանայր զնմանէ. և ինքն էր սամարացի: Պատասխանի ետ Յիսուս և ասէ. ո՞չ տասն սոքա սրբեցան, իսկ արդ՝ ինունքն ո՞ւր են: Զի ոչ գտան դառնալ տալ փառս աստուծոյ, բայց միայն այլազգիս այս: Եւ ասէ ցնա. արի, գնա. զի հաւատք քո կեցուցին զքեզ:

Եւ եղեւ ՚ի մտանելն նորա յԵրիքով, կոյր ոմն նստէր առ ճանապարհաւն մուրացիկ: Իբրև լուաւ զանցանել ժողովրդեանն, հարցանէր՝ թէ զի՞նչ իցէ այն: Եւ պատմեցին նմա, թէ Յիսուս Նազովրեցի անցանէ: Աղաղակեաց և ասէ. Յիսուս, որդի Դաւթի՝ ողորմեաց ինձ: Եւ որ առաջին երթային՝ սաստէին նմա զի լռեսցէ. և նա եւս առաւել աղաղակէր, որդի Դաւթի. ողորմեաց ինձ: Զտեղի էառ Յիսուս, և հրամայեաց ածել զնա առ իւր և իբրև մերձ եղեւ առ նա, եհարց զնա և ասէ, զի՞նչ կամիս դու՝ զի արարից քեզ. և նա ասէ. տէր, զի բացցին աչք իմ՝ և տեսից: Եւ Յիսուս ասէ ցնա. հայեաց, հաւատք քո կեցուցին զքեզ: Եւ առժամայն ետես, երթայր զհետ նորա՝ և փա-

ռաւոր առնէր զաստուած . և ամենայն ժողովրդեանն տեսեալ , տայր օրհնութիւն աստուծոյ :

Սրբոյ Աւետարանին Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու :

ՏԷ՛ՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ յետ երկուց աւուրց ել անտի և գնաց ՚ի Գալիլեա : Զի ինքն իսկ Յիսուս վկայեաց՝ եթէ մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի : Իսկ յորժամ եկն նա ՚ի Գալիլեա , ընկալան զնա գալիլեացիքն . զի տեսեալ ևս էր զամենայն նշանսն , զոր արար յԵրուսաղէմ ՚ի տօնին . քանզի և նոքա եկեալ էին ՚ի տօնն : Եկն դարձեալ ՚ի Կանա գալիլեացւոց՝ ուր արար զջուրն գինի . և անդ էր թագաւորազն մի , որոյ որդի նորա հիւանդ կայր ՚ի Կափառնաում : Նա իբրև լուաւ եթէ Յիսուս եկեալ է ՚ի Հրէաստանէ ՚ի Գալիլեա , եկն առ նա՝ և աղաչէր , զի իջցէ և բժշկեսցէ զորդի նորա . քանզի մերձ էր ՚ի մեռանել : Ասէ ցնա . եթէ ոչ նշանս ինչ և արուեստս տեսանէք՝ ոչ հաւատայք : Ասէ ցնա թագաւորազն . տէր , էջ մինչչև մեռեալ իցէ մանուկն իմ : Ասէ ցնա Յիսուս . երթ՝ որդին քո կենդանի է . և հաւատաց այրն բանին՝ զոր ասաց նմա Յիսուս , և գնաց : Եւ մինչդեռ իջանէր , ընդ առաջ եղեն նմա ծառայքն նորա . աւետիս ետուն

և ասեն , թէ մանուկն նորա կենդանի է ։ Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում ապաքինեաց . և ասեն ցնա . երէկ յեօթներորդ ժամուն եթող զնա ջերմն ։ Գիտաց հայրն նորա՝ եթէ յայնմ ժամու՝ յորում ասացն ցնա Յիսուս՝ թէ որդին քո կենդանի է . և հաւատաց ինքն և ամենայն տուն իւր ։ Զայս դարձեալ երկրորդ նշանս արար Յիսուս եկեալ ՚ի Հրէաստանէ ՚ի Գալիլեա ։

Յետ այսորիկ տօն էր Հրէից , և ել Յիսուս յԵրուսաղէմ ։ Եւ էր յԵրուսաղէմ ՚ի Պրոպատիկէ աւազանին , որ կոչէր եբրայեցերէն Բեթհեզդայ՝ հինգ սրահ ։ Յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց՝ կուրաց կաղաց գօսացելոց , որ ակն ունէին ջրոցն յուզելոյ ։ Եւ հրեշտակ տեառն իջանէր ըստ ժամանակի յաւազանն՝ և յուզէր զջուրսն . և որ նախ ՚ի շարժումն ջուրցն իջանէր յաւազանն՝ բըժշկէր , ոչ ունելով նշան հիւանդութեան ։ Եւ անդ էր այր մի , որոյ երեսուն և ութ ամ էր ՚ի հիւանդութեան իւրում ։ Զնա իբրև ետես Յիսուս՝ զի անկեալ դնէր , և գիտաց եթէ բազում ժամանակք են այնուհետև , ասէ ցնա . կամի՞ս ողջ լինել ։ Պատասխանի ետ նմա հիւանդն . տէր , ոչ զոք ունիմ , թէ յորժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս յաւազանն . և մինչ ես դանդաղիմ , այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ ։ Ասէ ցնա Յիսուս . արի , առ զմահիճս քո՝ և գնա ։ Եւ ողջացաւ այրն , և յարեաւ՝ էառ զմահիճս իւր՝ և շրջէր . և էր շաբաթ յաւուրն յայնմիկ ։ Ասեն հրէայքն ցբժշկեալն . շաբաթ է՝ և ոչ է արժան քեզ առնուլ զմահիճս քո

Պատասխանի ետ նոցա և ասէ . որ բժշկեաց զիս , նա ասաց ցիս , առ զմահիճս քո՛ և գնա : Հարցին ցնա և ասեն . ո՞վ է այրն՝ որ ասաց ցքեզ , առ ըզմահիճս քո՛ և շրջեաց : Եւ բժշկեալն ոչ գիտէր թէ ո՞վ իցէ . քանզի Յիսուս խոյս ետ վասն ամբոխին ՚ի տեղւոջէ անտի : Յետ այսորիկ գտանէ՝ ըզնա Յիսուս ՚ի տաճարին , և՝ ասէ ցնա . ահաւադիկ ողջացար , մի՛ եւս մեղանչեր՝ զի մի՛ չար եւս ինչ լինիցի քեզ : Գնաց այրն՝ և պատմեաց Հրէիցն , եթէ Յիսուս էր՝ որ բժշկեաց զիս : Եւ վասն այնորիկ հալածէին զՅիսուս Հրէայքն , զի զայն առնէր ՚ի շաբաթու : Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա . Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ , և ես գործեմ : Վասն այնորիկ առաւել խնդրէին Հրէայքն սպանանել զնա . զի ոչ միայն լուծանէր զշաբաթս , այլեւ Հայր իւր կոչէր զաստուած , և հաւասար առնէր զանձն աստուծոյ :

Եւ մինչդեռ անցանէր՝ ետես այր մի կոյր ՚ի ծնէ , և հարցին ցնա աշակերտքն նորա՝ և ասեն . ռաբբի , ո՞ր մեղաւ է , սորա՞ թէ հօր և մօր իւրոյ , զի կոյր ծնցի : Պատասխանի ետ Յիսուս . ոչ դորա մեղաւ է , և ոչ հօր և մօր իւրոյ . այլ զի յայտնի լիցին գործքն աստուծոյ ՚ի դմա : Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ՝ որ առաքեացն զիս , մինչ օր կայ . գայ գիշեր՝ յորժամ ոչ ոք կարէ գործել : Մինչդեռ յաշխարհի եմ , լոյս եմ աշխարհի : Զայս իբրեւ ասաց , ձեթուք ՚ի գետնի՝ և արար կաւ ՚ի թքոյն , և ծեփեաց զկաւն ՚ի վերայ աչաց կուրին : Եւ ասէ ցնա . երթ , լուա յաւազանին Սելովմայ . որ թարգ-

մանի առաքեալ ․ չոքաւ տեսեալ էր զնա յառաջագոյն՝ թէ մուրացիկ էր , ասէին ․ ո՞չ սա էր՝ որ նստէրն և մուրանայր ․ կէսքն ասէին ․ նա է ։ Այլքն ասէին ․ ո՛չ այլ նման է նմա ․ և ինքն ասէր՝ թէ ես եմ ։ Ասեն ցնա ․ իսկ զիա՞րդ բացան աչք քո ։ Նա ետ պատասխանի ․ այր մի՝ որում Յիսուս ասեն , կաւ արար՝ և ծեփեաց զաչս իմ , և ասէ ցիս ․ երթ 'ի Սիլովամ , և լուա ․ չոքայ լուացայ՝ և տեսանեմ ։ Ասեն ցնա ․ ո՞ւր է նա ․ ասէ ցնոսա ․ ոչ գիտեմ ։ Ածին առ փարիսեցիսն զնա , որ երբեմն կոյրն էր ։ Եւ էր շաբաթ՝ յորժամ զկաւն արար Յիսուս ․ և եբաց զաչս կուրին ։ Դարձեալ հարցանէին զնա փարիսեցիքն , թէ զիա՞րդ տեսանես ․ և նա ասէ ցնոսա ․ կաւ եդ 'ի վերայ աչաց իմոց , և լուացայ՝ և տեսանեմ ։ Ասեն ոմանք 'ի փարիսեցւոցն ․ ոչ է այրն այն յաստուծոյ , զի զշաբաթս ոչ պահէ ։ Կէսք ասէին ․ իսկ զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր այսպիսի նշանս առնել ։ Եւ էին հերձուածք 'ի մէջ նոցա ։ Ասեն դարձեալ ցկոյրն ․ դու զի՞ասես վասն նորա՝ զի եբաց զաչս քո ։ Եւ նա ասէ՝ թէ մարգարէ է ։ Եւ ոչ հաւատային հրէայքն զնմանէ՝ եթէ կոյր էր՝ և բացաւ ․ մինչև կոչեցին զծնողս բացելոյն ․ հարցին ցնոսա և ասեն՝ սա՞ է որդին ձեր , զորմէ դուքն ասէիք , եթէ կոյր ծնաւ ․ արդ՝ զիա՞րդ տեսանէ ։ Պատասխանի ետուն նոցա ծնողքն նորա՝ և ասեն ․ գիտեմք զի սա է որդին մեր , և զի կոյր ծնաւ ․ բայց զիա՞րդ այժմդ տեսանէ՝ ոչ գիտեմք ․ կամ թէ՝ ո՞ եբաց զաչս դորա՝ մեք ոչ գիտեմք ․ ցդա իսկ հարցէք , ինքնին 'ի չափ հաս-

ալ է · ինքն իսկ խօսեսցի վասն իւր ։ Զայս ասացին ծնողքն նորա , զի երկնչէին ՚ի հրէիցն · քանզի ուխտ եդեալ էր հրէից , եթէ որ խոստովանեսցի զնա Քրիստոս՝ ՚ի բաց կացցէ ՚ի ժողովրդենէն ։ Վասն այնորիկ ասացին ծնողքն նորա թէ ինքնին ՚ի չափ հասեալ է , զնա իսկ հարցէք ։ Դարձեալ կրկին անգամ կոչեցին զայրն՝ որ կոյրն էր · և ասեն ցնա · տուր փառս Աստուծոյ , մեք գիտեմք՝ զի այրն այն մեղաւոր է ։ Նա ասէ · թէ մեղաւոր իցէ ես ոչ գիտեմ · բայց զայս գիտեմ , զի կոյր էի՝ և արդ տեսանեմ ։ Դարձեալ ասեն ցնա · զի՞նչ արար քեզ , զիա՞րդ եբաց զաչս քո ։ Պատասխանի ետ նոցա · այժմ ասացի ձեզ՝ և ոչ լուայք · զի՞ կամիք միւսանգամ լսել · միթէ և դո՞ւք կամիք աշակերտել նմա ։ Նոքա հայհոյէին զնա՝ և ասէին · դու լիջիր նորա աշակերտ · մեք Մովսէսի աշակերտք եմք ։ Մեք գիտեմք՝ զի ընդ Մովսէսի խօսեցաւ Աստուած · զսա ոչ գիտեմք ուստի իցէ ։ Պատասխանի ետ այրն և ասէ ցնոսա · այդ իսկ են սքանչելիք · զի դուք ոչ գիտէք՝ ուստի իցէ , և զիմ զաչս եբաց ։ Գիտեմք զի Աստուած մեղաւորաց ոչ լսէ , բայց եթէ աստուածապաշտ ոք իցէ՝ և զկամս նորա առնիցէ , նմա լսէ ։ Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ եթէ եբաց ոք զաչս կուրի ՚ի ծնէ կոյր ծնելոյ ։ Եթէ ոչ յԱստուծոյ էր այրն այն՝ ոչ կարէր առնել ինչ ։ Պատասխանի ետուն և ասեն ցնա , ՚ի մեղս իսկ ծնեալ ես ամենեւին , և դու վարդապե՞տ լինիս մեր ։ Եւ հանին զնա արտաքս ։ Լուաւ Յիսուս՝ եթէ հանին զնա արտաքս , և իբրև եգիտ զնա՝ ասէ ցնա · դու հա-

ւաւոր յորդի աստուծոյ։ Նա պատասխանի ետ և ասէ․ տէր, ով է՝ զի հաւատացից ՚ի նա։ Ասէ ցնա Յիսուս․ և տեսեր զնա, և որ խօսիդ ընդ քեզ՝ նա է։ Եւ նա ասէ․ հաւատամ, տէր, և երկիրպագ նմա։

## ԳՐՈՒԹԻՒՆՔ ԳԼԽՈՑ ԱՂՕԹԻՑ

Աղօթք [illegible]։ ՌԱՆ․ Խ․ ՁԴ․ ՁԵ․ ՂԲ․
Աղօթք [illegible]։ ԺԲ․ ԽԱ․ ՂԱ․ ՂԴ։
Աղօթք [illegible]։ Է․ Ը․ ԻԲ․ ԻԶ․ ԻԷ․ ՀԱ։
Աղօթք [illegible] և [illegible]․ Դ․
ԺԵ․ Ի․ ԻԴ․ Լ․ ԼԲ․ Խ․ ԽԷ․ ԽԹ․ Ծ․ ԾԷ։
Մաղթանք [illegible]։ Ժ․ ԺԱ․ ԺԳ․ ԼԴ․ ԽԳ․ ՀԵ։
Մաղթանք [illegible] և [illegible]։ Բ․ ԺԲ․ ԼԳ․ ԼԷ․ ԽԲ․
ԽԹ․ ԿԵ․ ՁԸ։
Աղօթք [illegible]։ Դ․
Ե․ ԻԴ․ ԼԳ․ ԽԷ․ ԾԲ․ ԾԴ։
Աղօթք [illegible]։ Ա․ Ե․ ԻԴ․ ԿԷ․ ՂԵ։
Աղօթք [illegible]։ ՀԷ․ ԻԸ․ ԼԶ․
ԼԷ․ ԽԴ․ ԾԲ․ ԾԸ․ ԿԶ․ ԿԷ․ ՀԶ․ ՀԸ․ Ղ։
Աղօթք [illegible]։ ԻԶ․ Ձ։
